

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՈՒԹԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՊՐԵՍԻԱ

ԱՌԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՆՉ

ԵՐԿԵՐԻ
ԺՈՂՈՎԱԾՈՒ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌԻ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ

1964

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ЛИТЕРАТУРЫ ИМ. М. АБЕГЯНА

ЕГИШЕ ЧАРЕНЦ



ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1964

Խմբագրական կոլեգիա

**Ս. ԱՂԱՐԱՅԱՆ, Ա. ԶԱՔԱՐՅԱՆ,
Է.Դ. ԹՈՓՉՅԱՆ, Ա. ԻՆՃԻԿՅԱՆ, Գ. ՄԱՀԱՐԻ**

**Տեքստը պատրաստեց և ծանոթագրեց
Ա. Գ. ԶԱՔԱՐՅԱՆ**

**Հանդերձի Խմբագիր .
Ա. Մ. ԻՆՃԻԿՅԱՆ**



1922



Երբ

Դուք

Արնոտաժ շրթունք ու բերան

Գիտեք լոկ դառնորեն ոռնալ —

5 Ես արև՛ր բերի հուրհրան,

Որ շինեմ խնդովյան զուռնա...

Տեսե՛լ եք՝

Դուք

Ծրբե՛կ։

Աչքերով ձեր մույր, անոթի —

5 Ոսկեզօծ զուռնան արևի՝

Կախված ամառվա զենիթից...

Հսե՛լ եք

Նրա ձայնը՝

Ձեր՝

10 Աչքերով չար ու տանջող —

Երբ արևը ձե՛զ,

Ձե՛զ գուցե՝

Կանչել է իր բորբ զողանջով...

Դուք,

15 Մարդիկ,

Որ գիտեք կոպեկնոց սիրով

Ձեր կակուղ սրտերը հալել —

Հսե՛լ եք արևի հուր երզը բորբ,

Ծրբ արևն է — զուռնաչի Ալեք...

20 Լսե՛լ եք...

Ձե՛ք լսել:

Չէ՛:

Իսկ ես —

Ձեր պոետը խոնարհ,—

25 Իսկ ես —

Ձեր պոետը լուսե —

Այդ երգը ոսկերառ

Ինչքա՛ն եմ ես լսել...

Լսե՛լ եմ,

30 Լսե՛լ եմ —

Ե՛ս...

Նա —

Ե՛րգ է եղել,—

Իսկ

35 Դուք,

Իսկ դուք,

Մարդիկ,

Հասկացե՛լ եք այդ երգն հրեղեն...

Օգոստոսի շոգին

40 Ես —

Ձեր պոետը խոնարհ,

Ես —

Ձեր պոետը լուսե —

Այնքան պա՛րզ եմ տեսել

45 Ձեր բառաչող հոգին...

Տեսե՛լ եմ,

Տեսե՛լ եմ —

Ես...

Նա եղել է —
50 Դուքան,
Ցուցանակ.
Նա կքել է կոպեկի ներքո:
Որպեսզի ձեր գանգը չշոգի,
Որպեսզի ձեր սիրտը հովանա —

55 Դուք
Ծածկե՛լ եք արևը ձեր ծեր
Ձեռքով...

Վա՛յ
Ձեզ,
60 Վա՛յ բռնորիդ...
Ձեզ, որ գուրգուրում եք ձեր սիրտը սև:
Ինչ շահ ձեր գանգի դճուղին
Երգերից իմ՝ լույս ու լուսե...

Չգիտե՞ ձեր սիրտը սև,
65 Որ աշխարհը կարող է փոխվել
Խնդության խո՛ւ ալիքի —
Եթե մի անգամ գեթ լսեք
Այն վերի՞, վերի Ալեքին...

Հ. Ս. Խ. Հ.

Նո՛յն էր մինչև երեկ
Նստեի
Վերը՝
Ձյունե Թրարատի գլխին:

5 Էսօր վա՛ր ենք բերե,
Որ թևերը քշտե
Եվ խողերը սրբե աշխատավոր խալիխ:

Էսօր —
Ե՛ս եմ կեցել,
10 Ինձ հետ —
Եռա՛նդը ձեր՝
Հաղո՛ւ
Մկո՛ւ,
Հարե՛թ:
15 Կեցել եմ մեյդանում. —
Ե՛ս եմ —
Յվ դո՛ւ,
Եվ դու.
Բոռում եմ բերանբաց,
20 Բոռում եմ՝ բե՛ր...

- Եվ...
 Ահա խուղերը խուլ,
 Փողոցները քոսոտ,
 Կորած բոսոր հողում
 25 Խճուղիները սև —
 Հորդում են հորդահոս,
 Փողոցը ողողում,
 Լցվում են աչքերիս դռներից
 Ներս...
- 30 էստեղ —
 Քաշում են մաճ:
 Մաճը ճեղքում է սիրտս—վարում:
 էստեղ գործում են կտավ:
 Նա:
 35 Նա:
 Նա:
 Ո՛ւր է:
 Գտա՞ր —
 Չգտա՞ր...
- 40 էստեղ մեյդան է, շայխանա,
 էստեղ կիները մազերին դեռ դնում են հինա:

 էշը ահա —
 Չո՛ւ-չո՛ւ —
 Աստաֆյանի միջով:
 45 Ավտոն նրան բռթում —
 Բառաշում է բոսոր:

 Մի երկաթե թռչուն
 Մեր նայիրյան տոթում
 Թպրտում է էսօր:

50 Շաշո՛ւմ հն,
Շաշո՛ւմ հն
Քւեբը բրկաթե:
Երկաթե թւերը քաշում հն—վե՛ր:
Այս ի՞նչ է՝

55 Օրերո՛ւմ
Մի եռ կա,
Քե՞ —
Գալիքն է երգերիս
Սավառնականեր տվել...

60 Երգերս,
Իմ երկի՛ր,
Քո շաֆրանով ներկած,
Քո արևով,
Տոթով

65 Փողոցների ցեխով —
Փռե՛լ եմ դաշտերիդ
Հեռաներին շարքաշ,
Սիրտս—զուռնա՛ շինել,
Գալիքների դհով...

70

Երկի՛ր իմ արևի ու փռշուռ,
էսօր
Ես

2 ուլված ամեն ինչիդ՝
75 Ուզես—ե՛րգ եմ լուսե,
Ուզես—կապված մի շուն,
Ուզես—մժեղ շնչին...

* *

Արևի նարնջե ֆոնին .

Տեսնո՞ւմ եք

Դուք

Քեք —

5 Երկաթե պրոֆիլը իմ։...

Ի՞նչ է՝

Սովո՞ր էիք

Կոպեկնոց դրամի վրա

Արքայի դեմք տեսնեի...

10 Հիմա ե՛ս եմ՝

«Որդի բանվորի» —

Իմ դեմքն է հիմա հուրհրան

Քանդակվել արևին լուսե։

Ի՞նչ է՝

15 Մթամած նաշերում ձեր թեն

Վահրե՞ց ձեր հոգին հաղթական

Երբ տեսաք իմ դեմքը երկաթի՝

Արևի ֆոնին քանդակած։...

Ա Ղ Ջ Ի Կ Ը

Շատ սիրով՝ Շադունցի՛ն

Աչքերը...:

Այդ ի՞նչ էր.

Կանգնել էր—նայում էր խոսողին:

Աչքերում... նստել էր գյուղի կոմբջիչը՝

5 Տագնապը,

Գրգիռը,

Կամքը հողի:

Եկել էր գյուղից:

Հագիվ ունենար. նա—տասնըյոթ տարի:

10 Գյուղի կոմբջիչը

Ղրկել էր աղջկան

Համագումարի:

Աղջիկը շիկնել էր:

Կարծում եք՝ սիրո՞ւց էր նրա կարմրությունը...

15 0, ո՛չ.

Նա լսում էր շուրջի շշուկները,

Զգում էր, որ սիրտը ուռչում է,

Պայթո՞ւմ է...

Բանվոր էր խոսողը:

20 Ու խոսքը—նման էր երգի:

Հսում էր աղջիկը — և տաք կողերում իր
Զգում էր մի քաղցր գրգիռ:

- Այդ ի՞նչ էր,
Այդ ի՞նչ էր,
25 Այդ ի՞նչ էր վերջապես...
Հսում էր ճոխնչը մաճի:
Սրտի մեջ
Հույզը
Կտրել էր կապից.
30 Սրտի մեջ—անմուկը տագնապի:
Թվաց թե՛ մի բան կա՝
Հուզո՛ւմ է, հուզո՛ւմ է, հուզո՛ւմ է կողերը —
Ուզում է աճի...

- Նման էր
35 Նո՛ր
Օրորի...
Տեսնում էր՝
Հերկը,
Առուն...
40 Արևը—լծվել էր արորին,
Արևը—ե՛ղ ահագին —
Քաշում էր արորը արևածագի:

- Ու սիրտը—պայթում էր:
Տագնա՞պ էր,
45 Տա՞պ էր,
Գրգիռ.—
Օ, ոչ. մոտենում էր նրան—մայրությունը...

Մնվում էր—նո՛ր մի երկիր...

Ք Ե Զ

- «է — Կա»-ում նստած
 Վստահ.
 Նայում ես ինձ:
 Եվ.
 5 Դեպի սիրտս
 Հաստատ
 Արշավում է հայացքդ --
 Զի...

 Զկա —
 10 Սենյակիլը «է — Կա»-ի:
 Տոթ է:
 Եկած գարավից
 Մի
 Շոֆեր —
 15 Արջ ահագին —
 Կարդում է՝
 «Ագիտ —
 Բաժին»:

 Այստե՞ղ է,
 20 Օրին'րդ,

Հա՛...

Օրիորդ չկա՛...

Ընկե՛ր...

Ու ծածկեց, որպես նե վահան —

25 Հայացքդ,

Դեմքդ,

Քեզ:

Հետո...

Մոտեցար վստահ:

30 Ասացիր:

Եվ ես —

Ահագին —

Աչքերիդ նժույգին նստած

Սրընթաց թռա միտինդ...

35 Ուրիշ ի՞նչ...

Ոչինչ:

Խնդում:

Եվ

Մեկ էլ այն,

40 Որ դու —

Այնքան լա՛վն ես,

Զորեղ ի ծնե,

Որ կարող ես — գարա՛ծն ամբողջ.

Աչքերիդ նժույգով թոցնել...

Գ Յ Ո Ւ Մ Ր Ի

Սիրելի Արտաշես Տեր-Մարտիրոս-
յանին, գյումրեցի պոետին

I

Դեռ երգում է այստեղ զուռնան,
Դեռ դհուլը սիրտ է հուզում:
Թող հոգիդ դառնորեն ոռնա —
Միևնույնն է՝ կմեռնի անլեզու:

5 Օ, զուռնա՛, զուռնա՛, զուռնա՛...
Տխրություն:
Թախիծ դեղին:
Օրերը ցնորք կդառնան,
Աշխարհը — անդուռ փակուղի:

10 Ստվերի պես կանցնես անհետ,
Ստվերի պես կյանքդ կմարի,
Ու, մռայլ, կխնդա մահիդ —
Գյումրին...

II

Դու մի օր կանցնես այստեղից:
15 Կուղեկցե քեզ երգը զուռնայի:

Ու Գյումրին, գորշ ու դեղին,
Անտարբեր, մռայլ կնայի:

Դու կանցնես հարթած ու անտարբեր,
Քայլերով տարտամ, անիմաստ:
20 Բուլվարը մշուշ կպատեմ,
Կժպտա «Ապոլլո» սինեման:

Ու, ծուլ, աչքերի տակով
Կհեզնե՛ գյումրեցի Վաղոն
Օրերիդ ցուքը վարդագույն,
25 Որ կորավ կյանքիդ դագաղում:

Առավոտ կընկնես կիսամեռ,
Կկանգնի սիրտդ հանկարծ:
Իսկ Գյումրին դեռ օղի կքամե,
Ու էլի զվարթ կզնգա:

30 Լոկ երգերդ շների նման
Ծտեիցդ երկա՛ր կոռնան,
Ու վրադ պատարագ կան՛: –
Զուռնան...

Ս Ր Ի Ն Գ Ը

Սրինգը,
Կալյր ու ծեր,
Անցնում էր փողոցով:
Սրինգը երգ էր գուցե.
5 Ելնում էր դեպի վեր,
Իջնում էր կոր գծով:

Իջնում էր —
Ծալ էր դառնում.
Հասնում էր աստղերի ծերին,—
10 Ու նորից, որպես վաշխառու,
Աշխարհում փնտրում էր—ի՞նչ...

Աստաֆյանի միջով
Անցնում էր երգը սրինգի,
Ծեծում էր դռները շոր:
15 Դռների նստում
Մարդիկ
Ուզում էին «Ռանգի»,
Ուզում էին—«Տասշորս»:

Մնում էր —
20 Դռների առաջ:

Դառնացած, որ չեն թողնում ներս:
Եվ նորից, որպես մասխարա —
Թռչում էր—կոր գծով —
Վեր...

25 Ի՜նչ խղճուկ էր այդ ծեր վանեցին...
Այդ երգը, երգը սրինգի...
Այդ երգը՝ աստղային, անծի՛ր...
Այդ երգը—անոգ, անգին...

Քեզ խրատ, պոե՛տ, այստեղից.

30 Օ, երբե՛ք չերգես անտեղի:

Հավ է—կորչե՛ս անհետ,
Հավ է—մա՛հը դեղին:

Օ, լավ է՝ կոտրես հանգիստ
Սրինգըդ, որպես թևեր,—

35 Միայն թե, պոե՛տ, կյանքից
Սրինգի պես վեր չթևես...

Փրերի
Շեկ
Վիտրինում
Դրել եմ սիրտս հրե:
5 Տալիս եմ մի բաժակ գինու:
Ուզո՞ւմ եք.
Տամ,
— Առե՛ք:

Ինչի՞ս է
10 Հիմա
Հարկավոր
էդ կակուղ Կիկոն մասխարա...
Թող լինի—թիթեղե երգեհոն,
Թող լինի—զուռնա-նաղարա՞:

15 Էնպես որ՝
Աւքերից ձեր շար
Զոռղա,
Զլա,
Զմաշի.—

20 Էնպես որ՝ ցավի՛ց չճշա—
Երբ կգաք
Դուք
Փամաշի...

Ը Ն Կ Ե Ր՝

Հիշում եմ մազերդ գանգուր,
'Իեմքդ՝ փողոցի պես փողոտ,
Ծիծաղդ՝ զվարթ Ջանգու,
Նվ աչքերդ՝ վառ ու խոշոր:

5 Հիշում եմ, հիշում եմ, Կարո՛ւ,
Հիշում եմ, թե ի՞նչպես քեզ հետ —
Հիշում ես՝ աղբի տակառում
Հավաքում էինք թուղթ ու գաղեթ:

Հավաքում էինք մենք լուցկու
10 Նոր տուփեր, կլեպներ սեխի —
Ու խաղում էր մեր կապույտ հոգում:
Արևի լույսը դեղին:

Հիշում եմ, թե ինչպես հաճախ,
Կառքերի հտեխն կպած,
15 Մանկական խնդությամբ մի շար
Մենք թռչում էինք Հինդ ու Հաբաշ....

Եվ ահա մի օր այդպես
Երբ թռչում էինք մենք սրբեթաց —
Կառապանը մտրակով շաշեց
20 Եվ դու պոկվեցիր ու ընկար...

Ու հիշում եմ... դեմքդ հողագույն,
Ուլեղդ՝ գորշ, մխրճած...
Հետո հայրս մոլթ սենյակում
Մինչև լույս ինձ խփեց ու փնչաց՝

25 Մինչև լույս թքեց դեմքիս,
Մինչև լույս հայհոյեց կատաղի,—
Ու նայում էիր դառը դու ինձ
Քո հեռու, մոլթ դագաղից...

Բայց հիմա ինչքան է փոխվել
30 Այն օրից աշխարհը—գիտե՞ս...
Ինչպես մի մարդ անտրեխ
Վերցնի դառնա կառքի տեր...

Արդյոք դու իմացե՞լ ես, Կարո՛ւ,
Որ ընկերդ հիմա այն բոբիկ
35 Եվ ուրիշ ընկերներ բյուրավոր
Պալատները կապել են թոփի...

Ախ, սիրտս, Կարո՛ւ, մի բազե,
Թպրտում է՝ վահրով լեցուն:
Եթե այս երգս լսես —
40 Քաջիով տուր աստծուն:—

Թող թռչի, ամպերից նա վար,
Հետույթով զարնըվի թող հողին...

Ես հիմա եկել եմ Մոսկվա,
Ես հիմա պոետ եմ հաղթողի...

Ե Ր Ե Վ Ա Ն

I

- Ինչ որ չի՛, չի՛ երազել
Դեռ ո՛չ մի պոետ-աստղաբիր.
Ուզո՞ւմ եք՝ որպես գնդասեղ
Արե՛լը խրեմ փողկապիս:
- 5 Առնեմ, որպես սինի,
Երկինքը աստղերի խաղով —
Ու տանե՛մ այն հարսանիք,
Որպես միրգ՝ մի ճութ խաղող:
Ինձ համար ի՞նչ կա, որ չկա.
- 10 Կանե՛մ, ինչ որ կամքս ջոկի:
Ուզո՞ւմ եք՝ դարձնեմ «Ձեկա»
Թաղանթի պես քնքուշ հոգիս...

II

- Ես ո՛չինչ, ո՛չինչ չգիտեմ:
- Բայց կարող եմ ես, պոետ,
15 Երգերիս մասններով երկաթե
Ձեր կակուղ սրտերը շոյել:
Կարող եմ, եթե սիրտս ուզե,
Կտրելով վերստեր անթիվ,

Երկարել դեպի սիրտը ձեր
20 Տողերիս լուսե գերանդին:
Ես կարող եմ, որպես նետաղեղ
Թե կուգե՞ք՝ ե՛րգս թեքել
Եվ թողնել, որ նա, հետապնետ,
Ձեր դեմքին երազներ թքե...

25 Բայց ի՞նչ,
Ի՞նչ դրանից...
Միևնույնն է՝ սրտիս կիշնի
Ձանձրույթը, որպես գրանիտ
Ու թախիծը՝ պուղ ու դժնի:

30 Օ, գիտեմ, որ սիրտս հետո,
Որպես հին մի, բեկված Թերսիդես —
Իր թունոտ բողոքի նետով
Ջարկելու է թե ինձ, թե ձեզ...

III

Բայց էլ ի՞նչ, էլ ի՞նչ ես ուզում
35 Անհատնում սի՛րտ իմ երգահան...

Գրաստի նման անլեզու
Քնել է Երևանն ահա:
Գլուխը դրած Քանաքեռ՝
Ոտքերը Մասիս է երկարել:

40 Երևա՛ն, ես սիրում եմ քեզ,
Գորշավազ շենքերդ քարե:

Սիրում եմ տեսքդ գրաստ,
Ինչպես ճորտը սիրում է խանին,
Ինչպես սեզ պարսիկը բարեպաշտ

45 Սիրում է մտնել բաղանիք...
 Կարո՞ղ է արդյոք նեղորը սև
 Հրաշքով սպիտակել հանկարծ:—
 Երևա՛ն, ես էլ ի՞նչ ասեմ,
 Որ դու ավելին չցանկաս...

IV

50 Ռայց էլի՛, բայց էլի՛, բայց էլի՛,
 Հայացքը մշուշին գամած,
 Կախվում է ուղեղիս թելից
 Երևանը որպես խեղդամահ:

Կախվում է:
 55 Կախվել է ուզում:
 Ձանձրացել եմ, ասում է, կյանքից:

Դու գիտե՞ս, ասում է,—բազում
 Քաղաքներ կան՝ եռուն, անհանգիստ...
 Փայլում են, կոշիկի պես սրբած,

60 Նրանք լամպերի լույսից.
 Ավառ՝ է այնտեղ արաբան,
 Փողոցի լապտերը՝ լուսին:
 Շարել են իրենց զիստերին
 Կամուրջները, որպես օղեր...

65 Ախ, նրանք—պայծառ, ոսկերիզ,
 Իսկ ես—գաղթական Շողեր...

Հասկանո՞ւմ ես, ասում է, Չարե՛նց,
 Ես ուզում եմ նրանց պե՛ս լինեմ...

Եթե դու պետքական ես, պոե՛տ,
 70 Երգերի տեղ երկրնե՛ր շինե՛:

Տողերդ կամուրջներ թող լինեն,
 Օղակեն գետերը զնգուն,
 Որ անցնեն հազա՛ր տարիներ
 Եվ հազա՛րն էլ թափվեն Զանգուն։

75 Թե կարող ես—այնպե՛ս արա դու,
 Որ այստեղ... նոր քաղաք բուսնի...

Բայց դու... դեռ նստել ես արթուն
 Եվ նայում ես այդ լիրբ լուսնին...

— Ախ, լուսինն ահա վերևում,
 80 Արախչինն արծաթ մազերին,
 Նրբալույս աստղերի քեֆում
 Հեզանազ պարում է «էնզելի»...

Իսկ Մասիսը՝ քնում թմրած՝
 Երևում տեսնում է ինձ։

85

Ես սիրում եմ քեզ, Երևա՛ն,
 Ինչպես մեր այն հին հեքիաթում
 Դավիթին սիրում էր իրա ձին։

Շ Ո Գ Ե Գ Ա Լ Ո Ւ Ս Տ

Նորից՝ Արտաշես Տեր-Մարտիրոս-
յանին, գյումրեցի պոետին

I

Հսո՞ւմ է ձեր սիրտը այսօր
Անողորմ երգ մի երկաթե
Օրերի մասին այն բոսոր,
Որ գալու են՝ բորբոք ու թեժ...

5 Ամենո՛ւր, ամենո՛ւր, ամենո՛ւր
Հիմա այդ երգն է անողորմ
Պատգամի նման մի անհուն
Շեփորում արևն իր փողով:

Իմ հեռու, խուլ աշխարհից
10 Ահա ես, հին մի պոետ,
Տեսնում եմ հեռուները հիր,
Որպես նոր մի Ռոբերտ Օուեն:

Հասկանո՞ւմ եք՝ հողմակոծ ու ժխբ-
Օրերի գծերով երկաթե
15 Գնացքի նման մի դղորդ
Մոտենում է Գալիքը թեժ:

Մոտենում է նա, երկաթե,—
 Իսկ այստեղ, խանդով անտեղի,
 Գյումրեցի, հարբած մի Ալեք
 20 Դեռ փչում է իր զուռնան դեղին...

II

Դեռ փչում է հին եռանդով
 Ալեքը իր զուռնան թմրիչ
 Ու լսում է նրա հրգն անթով —
 Գորշաքար, մռայլ Գյումրին:
 25 Նրա խուլ նվագին ունկնդիր,
 Հնամյա օրերի շախով,
 Ելնում է դիմացի խանութից
 Ճռնվելով, գյումրեցի Վաղոն:
 Բռունցքը արծաթ քամարին
 30 Անցնում է փողոցի մեջտեղից,—
 Ու փռում է մռայլ Գյումրին
 Նրա դեմ իր թախիժը դեղին...

III

Դեղին
 Փողոցները
 35 Ձանձրույթ են անձրևում:
 Հորանջում են՝ ծուլ ու դեղին:
 Ու կանչում է թախիժը հեռու,
 Դեպի մութ մի, խավար փակուղի:
 Հեռունները՝ խիստ ու խոժոռ,
 40 Կայարանը, որպես զառանցանք:
 Ու երգում է զուռնան քոսոտ
 Ձանձրալի, տխուր, միաձայն...

Միթե սա՞ է երկիրը նայիրի,
 Միթե սա՞ է, սի՛րտ իմ հիմար:
 45 Միթե չի՞ զգում օրերի
 Բոցակեզ շունչը նա՛ հիմա:

Մի՞թե չի՞ զգացել նա դեռ,
 Ու՛ր արդեն մի հաղթ Մեքենա
 Ցնցում է ձեռքով երկաթե
 50 Այս խուղերը խանդով մի անահ:

Ցնցում է ձեռքով անշեղ —
 Եվ տիղմի նման անտեղի
 Կորչում են կառուցման փոշում
 Ալեքն ու իր զուռնան դեղին...

IV

55 էլ ինչո՞ւ, ինչո՞ւ է նա փչում.
 Կուրացած՝ չգիտե՞ միթե նա,
 Որ գալիք հողմերի բոցում
 Հաղթելու է ջերմ Մեքենան:

Զգիտե՞, որ վաղը կրքի
 60 Ու մահվան երգի փոխարեն
 Պիտի թեժ երկաթը երգի
 Դաշտերում այս խուլ, մոխիրե...

Ու զուռնի փոխարեն—շողի՛ն,
 Պիտի տաք զոլորշի՛ն ուռչի,
 65 Եվ նրա էլե՛կտրա-հոգին՝
 Պիտի տոթ զնգա ու թռչի:
 Պիտի գա՛, պիտի գա՛, պիտի հա՛
 Երկաթի հզո՞ր զնգոցով —

Դեպի մեր խուղերը գորշաքար,
70 Դեպի մեր երկիրը քոսոս:

Նա պարզել է ձեռքը անշեղ,
Տալիս է զարթնումի նշան:—
Ծա տեսնում եմ դեմքը նրա շեկ
Եվ աչքերը նրա դրոշակ...

V

75 Իսկ դո՞ւ, պոե՛տ Աշնուտի,
Քո գլուխը ինչո՞ւ ես կքել
Ու թողել ես, որ մուժը մթին
Մշուշն թե՛ սիրտդ, թե՛ քեզ:

Սի՛րտդ, սի՛րտդ ինչո՞ւ է սև...
80 Թե՛ կտրել է արդեն անթիվ
Գետնահար զոհերի հետ քեզ էլ
Օրերի անդարձ գերանդին...

Օ, մզլած մրգի՛ նման մի
Դու գլուխդ գետին ես թեքել,
85 Եվ թողել ես, որ աշնան քամին
Մագերիդ անձրևներ թքե:

Օ, ինչո՞ւ, ինչո՞ւ, ինչո՞ւ...
Միթե դու Ալե՞քս ես հիմար,
Որ անցած հեռուներն ես տենչում
90 Մորմոքող քո սրտով հիմա:

Օ, հիմա՛ր, խեղճ մասխարա...
Չգիտե՞ս, որ թախիժը ձյունն
Թևերով իր պաղ-անկրակ
Դեպի հինը քեզ չի՛ թռցնե:

95 Անողորժ է երթը Գալիքի.
Եվ գիտեմ՝ քե՛զ էլ, քրքիչով.
Ինչպես այն հիմար Ալեքին:
Կճմիկ երկաթը շոր:

Իմ մե՛ջ է

Ձեր

Իջևանը.

Պիտի գաք—ուզեք շուզեք:

5 Աչքերս—Սևան ու լիճ Վանա,

Գլուխս—Մասիս սեպածէ:

Թեիս մեկը—Զանգու զնգան,

Մյուս թևս—Արաքս համբեր,—

Ու առե՛լ եմ գլխիս հայկական

10 խորթ երկինքը, որպես գմբեթ:

Հիմա ձեզ կանչում եմ՝ եկե՛ք.

Բոլորի՛դ իմ եղեմը տեղ կանի.

Ձեր հազար կյանքերը հենել

Կարող եք իմ մե՛կ մկանին:

15 Բայց սրտին ձեր՝ ծեր,

Անոթի,

Ո՞վ կտա

Թև

Թո՛ղք անահ.—

20 էն ո՞ւր է նոր Պարրոտը, որ պիտի

Իմ անհաս Մասիսը բարձրանա...

Հասկանո՞ւմ եք՝ եկավ հզոր,
Շտկելով մեջքը վաստակած
Եվ բերեց աչքերում բոսոր,
Արնաժոր դրո՛շ հաղթական:

5 Երեկ

Նա

Նստում էր մեյդանում,

Երեկ

Նա

10 Երկաթ էր ծեծում:

էսօր

Նա —

Արև՛ն է երթ անում՝

Թափելով վահրը կծու:

15 Եվ

Գիտե՞ք՝

Թափով թիկնեղ

Երկրագունդը երբ նա բեկանի —

Պիտի բյո՛ւր հսկանե՛ր ծնվեն

20 Նրա մե՛կ, մե՛կ մկանից...



Զանգուն ու Արաքսը սեգ
Գալիս են—մեջս թափվում:
Ես նրանց հայրը լուսե,
Ես նրանց որդին չափւում:

5 Գինով հմ ես նրանց ջրով,
Նրանք իմ երգով են գինով:
Եփվում ենք արևի հենձերում.
Գնում ենք.
Ո՛ւր ենք գնում...

10 Ցերեկները զուռնան արևի,
Գիշերները սրինգը լուսնի.
Էսպես—հազար ո՛ր կարևի
Ու հազա՛ր սերունդ կբուսնի:

Կթափվի Արաքսը նրանց մեջ,
15 Զանգուն ջղերը կլցվի,
Մինչ մի օր—բուռն մեկ —
Կհասնենք Կարմիր Մծբին...



(Դասագրքի)

I

Մի հոգնած, տխուր տրուբադուր,
 Օրերի գորշ ճամփեքին
 Երգում էր հարվածը հստուռ,
 Մահացու հարվածը իր տեգի:
 5 Երգում էր նրանց երգը լուսե,
 Մարմինները նրանց ալ-կրակ,
 Երգում էր սե՛րը նրանց սև
 Ու վերքի արյունն ալվլան:

II

Երգում էր կարոտն իր արթուն,
 10 Երգում էր ամո՞թը այն սև,
 Որ կարող է դարձնել մարդուն
 Գետնահար ստվեր մի նսեմ:
 Իր մռայլ օրերի բանտում,
 Աշխարհի գո՞րշ ճամփեքին
 15 Երգում էր հեգ մի տրուբադուր
 Մահացու հարվածն իր տեգի...

III

«...Հոգնած ու թույլ մի խաշակիր՝
 Ես մի օր այն դղյակը մտա.
 Ասպետի լաթեր էր հագիս,
 20 Զրահներս՝ ժանգոտած ու թաց:

Ես դառնում էի սուրբ Քաղաքից
Եվ սրտիս թագուհուն նվեր
Ես տանում էի ցա՛վք վերքիս
Ու կարոտս՝ բա՛րձր ու վեհ...

IV

- 25 Դարբասը շոինդով բացվեց.--
Մի զինվոր էր մառ ու մթին: Լ
— Կտանես ողջո՛ւյնս ձեր վեհ
Ու խիզախ, անհա՛ղթ ասպետին:
Ասացի. ու կրկին փակվեցին
30 Դարբասները մութ ու մռայլ:
Հոգնած խրխնջում էր իմ ձին
Այն օտար ճամփեքի վրա:

V

- Ու նորից մռայլ շոինդով
Բացվեցին դարբասները վեհ...
35 Եվ ասաց.—Ալֆոնս Անդոն
Ձեզ, խոնարհ, խնդրում է վեր:
Ու բռնեց ձիուս սանձից,
Հանեց զրահներս թաց:
Եվ ահա, ես՝ թողած իմ ձին՝
40 Այն մռայլ դղյակը մտա:

VI

- Ողջո՛ւյն պիլիգրիմ ասպետին.
Ձեզ ծառա՝ Ալֆոնս Անդոն:
Ու իջավ գլուխս գետին
Մի անհուն ու խոր եռանդով:
45 Եվ երբ, շարժումով մի անփութ,
Բարձրացրի աչքերս լուռ —

Ես տեսա աչքե՛րը նրա մութ
Ու մութութիւն՝ ճերմակ ու սուր:

VII

- Ծերունի էր Ալֆոնս Անդոն՝
50 Իննսուններեք տարեկան...
Բայց աչքերը՝ չոր ու անթույ՛
Դեռ նայում էին շար ու ազահ:
Նա կարող էր լինել արքա
Մովրերի, կամ՝ ցեղին Արաբ:
55 Նա կարող էր լինել բռնակալ —
Ամբո՛ղջ աշխարհի վրա:

VIII

- Ծերունի էր Ալֆոնս Անդոն,
Բայց իրանը, պիրկ ու խիզախ՝
Նա պահում էր անմար խանդով
60 Բարձրահետ, որպէս սուր մի նիւակ:
Նա իր կուրծքը պահում էր հաստատ,
Պղնձե վահանի նման թեք,
Եվ իր քայլքը՝ բիրտ ու վստահ —
Նժույգի քա՛յլք էր երկաթե:

IX

- 65 — Ընդունե՛ք հարկը դղյակիս
Որպէս ձեր հարկն հարազատ...
Եվ տվեք մեզ սուրբ Քաղաքի
Օրհնությունը, իբրև ընծա:—
Ես չեմ դրախտ ցանկացա,
70 Ես նրան տվեցի երկու խաչ,—
Եվ հանկարծ լսեցի երգի ձայն,
Հնչեցին քնար ու ծնծղա:

X

- ...Ու մտան երկու գեղանի
Աղջիկներ՝ հուր-հրեղեն... ✓
- 75 Մոտեցան կլոր սեղանին,
Դրեցին գավաթներ հողե:
Ու ճկուն շարժումով մի պարե՛
Իրենց սեգ ողջունը տվին...
Ուխտավո՛ր, նման մի արև
- 80 Մի՛ անգամ Թող կյանքդ արևի:

XI

- Ուխտավո՛ր, մի՛ անգամ կյանքիդ
Օրերում տխուր ու մռայլ
Թող ցոլա հրահուր ու անգին
Այդպիսի մի բախտ քո վրա:
- 35 Թող բացվի այդպիսի մի լույս
Երկրային կյանքում քո խավար —
Եվ ապա՝ տանջանքին հլու՝
Թող սիրտդ հավիտյա՛ն նվա:

XII

- Երկու լույս էին վառ նրանք... ✓
- 90 Երկու բոց՝ սպիտակ ու սև,
Երկու խոլ արև հուրհուրան,
Երկու հուր հրաշքներ լուսե...
Մեկի բոյը—սեգ մինարեթ,
Մյուսինը—սև՝ մի սոսի.
- 95 Մեկը վառ, պայծառ մի արև,
Մեկը կաթ, արծաթ մի լուսին:

XIII

- Բեղվինի խարույկներ էին խոչ
Սևամած աչքերը մեկի,

Մյուսի աչքերը—տխուր

100 Միրաժներ էին անմեկին:

Մեկի կուրծքը մզկի՞թ էր սպիտակ,

Մյուսինը—սե՛գ մի տաճար.

Մեկը բիլ գազե՛լ էր կապուտաշ,

Մեկը հուր նժո՛ւյգ սևաշյա...

XIV

105 Մեկը թիւ քայլում էր թեթև,

Թռչկոտում էր, որպես բիլ գազել...

Մյուսի քայլքն հրաթև —

Թռի՛չք էր դաշտեքում ավազե...

Աշխարհում դեռ չի՛ երազել

110 Նման բախտ և ո՛չ մի արքա,—

Բայց այդ վառ բախտին տիրացել,

Տիրացե՛լ էր Անդոն շարկամ:

XV

Ու հոսում էր հուր-հրահուր,

Թափվում էր գինին սեղանին:

115 Ու տարփում էին բո՛ց մի մահոռ

Մարմինները նրանց գեղանի:

Ու քամում էր գավաթը հողե,

Ու նայում էր Անդոն շարկամ —

Կույսերին հո՛ւր-հրեղեն՝

120 Աչքերով շա՛ր ու ազահ:

XVI

Ու իջավ, որպես սև գիշեր

Իմ սրտին թախիժը մռայլ:

Ու մի ամպ՝ մութ-մշուշն՝

Ծանրացավ հողումս վրա:

- 125 Ու ոռնաց մրրի՛կը իմ հոգում,
Ուրագանը շաշե՛ց ավագե —
Մի վա՛գր էր իմ սրտում մորմոքում,
Վիրավոր էր շա՛ր մի բազե:

XVII

- Մոռացել էի արդեն ես
130 Իմ սրտի թագուհուն լուսե,
Որի դեմքը կյանքում հողմածեծ
Տարինե՛ր էի երազել:
Մոռացա կարոտը իմ վառ,
Մոռացա թագուհուն իմ անդին,
135 Որի մի՛ հայացքի համար
Ես դարձել էի խաշակիր:

XVIII

- Հանգի՛ստ ասպետիդ՝ վաստակած —
Ու ոտքի ելավ Անդոն:
Մռայլ՝ բարձրացավ ու գնաց,
140 Հեռացավ, որպես հուշ անթով:
Ու նրա ետևից գնացին
Աղջիկները հո՛ւր-գեղանի...
Իսկ ես... մինչև լույս մնացի՛
Կռթնած կլոր սեղանին:

XIX

- 145 Մինչև լույս մնացի կիսաքուն՝
Կռթնած կլոր սեղանին,
Մինչև լույս պարեցին իմ հոգում
Այն կույսերը հուր-գեղանի:
Մինչև լույս, ինչպես ավլան
150 Երկու բոց, սպիտակ ու սև՝

Իմ հոգում պարեցին նրանց
Մարմինները լույս ու լուսե:

XX

- Եվ, ինչպես հավաքվում է քամին
Դաշտերում մառ ավազե,
155 Կամ ինչպես շար թշնամուն
Մոտենում են քայլերն հովազի,
Կամ ինչպես բեղվինը շարկամ
Հարձակվում է հեռվից հանկարծ —
Մի կարոտ խո՞ր ու ագահ
160 Իմ հոգում շաչեց ու ընկավ:

XXI

- Մինչև լույս աղմկեց իմ հոգում
Այդ կարոտը, որպես ուրագան,
Մինչև լույս մոնչաց անքուն
Այդ կարոտը չա՛ր ու ագահ:
165 Մինչև լույս իմ հոգում շաչեց
Այդ կարոտը, որպես է՛գ մի հովազ,—
Ու ծեգին իմ սիրտը հողմածեծ
Անապա՛տ էր արդեն գորշավազ:

XXII

- Անապատ էր արդեն գորշ ու շոգ
170 Իմ հոգին՝ տապ ու մթին,
Ուր անբավ կարոտը ճնշող
Հղանում էր տենդեր անմեկին:
Կախված էր իմ գլխին կարծես
Անշարժ ու շոգ մի արև —
175 Ու ծարավ արշավում էի ես
Դաշտերում անջուր—մոխիրե...

XXIII

- Ու թվում էր, թե նորի՛ց, նորի՛ց ✓
Ահա ես՝ խոլ մի խաշակիր —
Թողում եմ դաշտերով մոխիրե՛մ՝
180 Ժանգոտած զրահներ հագիս:
Արշավում եմ անխոնջ ու ծարավ
Ու նորից եռանդ եմ ու վազք,—
Դաշտերով տոթ, գորշավազ
Արշավո՞ւմ եմ դեպի Դամասկ:

XXIV

- 185 Այն գիշերը ուշ լուսացավ,
Այն գիշերը տևեց մի դար:
Այն գիշերը անթի՛վ անգամ
Ես Կարմիր Քաղաքը մտա:
Այն գիշերը խեղդամահ արի
190 Իմ սրտում հազա՛ր սարացին,—
Նվ նայում էին ինձ խավարից
Այն կույսերը հուր-հրածին...

XXV

- Առավոտը, մռայլ, բացվեց: ✓
Դուրսը մութ էր, մրրիկ ու քամի:
195 Գլխիկոր՝ դեռ նստած էի ես՝
Կռթնած կլոր սեղանին:
Իմ սրտում անապատ էր արդեն,
Իմ սրտում կեսօ՛ր էր արդեն շոգ —
Երբ դղյակը դանդաղ զարթնեց.
200 Լսեցի հեռու մի շշուկ:

XXVI

- Ու վագրի նման վիրավոր
Ցատկեցի իսկույն ես տեղից.

- Ու թռա անհուն ծարավով,
 Ինչպիս նետ՝ պոկված աղեղից:
 205 Ու իշա ես դղյակի
 Ներքնահարկը մոայլ ու մութ.
 Ու խեղդում էր արդեն իմ հոգին
 Մի կարոտ՝ համր ու անգութ:

XXVII

- Եվ ահա աչքերով բոցակեղ ✓
 210 Ու սրտի վազրային խանդով —
 Ես տեսա՝ դանդա՛ղ այնպես,
 Լուռ, գնում էր Ալֆոնս Անդոն:
 Ու նրա քայլերին դանդաղ
 Հետևում էին հեզանազ,
 215 Որորուն քայլերով խանդոտ —
 Այն կույսերը փայլ ու երազ...

XXVIII

- Իս նայում էի անկյունից:
 Հեռանում էին համրաքայլ...
 Ու թվաց, թե հո՛ւր մի գինի
 220 Լցվում է սիրտս ազահ:
 Եվ ահա ես տեսա, որ թեթև
 Այն կույսերը հուր-գեղանի
 Ծերունի ասպետի ետևից
 Հեզանազ, մտան բաղանիք...

XXIX

- 225 Մի առյուծ էր, որ— իմ սրտում
 Վիրավոր՝ խոլ մռնչաց:
 Իմ հոգում փոթորիկ էր պայթում.
 Ճարճատում էր մորիկ մի շարժ:

Ես կանգնել էի քարացած,
 230 Ես զգում էի, որ հիմա
 Կծալվեն ոտքերս հանկարծ
 Հողմածեծ շամբերի նման:

XXX

Եվ ես էլ շիմացա — ինչպես
 Հաջորդ Կայրկյանին, խանդոտ —
 235 Քարացել էի արդեն ես
 Այն մռայլ, այն մութ դռան մոտ:
 Եվ զգում էի ես միայն
 Մի կարոտ՝ հուր-խելագար,
 Որ մի էգ բորենու նման
 240 Ուտում էր սիրտս ագահ:

XXXI

Ես կանգնել էի դռան մոտ,
 Բայց տեսնում էի արդեն ես
 Մարմինները նրանց խանդոտ,
 Մարմինները լույս ու հրկեզ:
 245 Եվ տեսնում էի, որ մռայլ
 Ծերունու անկար խանդով
 Հրեղեն մարմինները նրանց
 Չարշարո՛ւմ է Ալֆոնս Անդոն...

XXXII

Ես տեսնում էի կուլաների
 250 Մարմինները՝ երկու ա՛լ-կրակ,
 Որ ծերի մութ գիշերին
 Գալարվում էին ավլվան:
 Ես տեսնում էի ծերունու
 Մարմինը՝ շոր-հողագույն:

255 Մի ճիվա՛ղ էր սև-լորենի,
 Մի կարիճ էր Ալֆոնս Անդոն...

XXXIII

Ու փարվել էր Ալֆոնս Անդոն
 Գալարուն ու տոթ կույսերին,
 Ու խմում էր անհագ հոանդով
 260 Քրտինքները նրանց ուսերի:
 Քրտնքոտ ծնկերին էր փաթում,
 Ձեռքերով մարում էր երկու բոց,
 Գրկում էր մեջքերը գալարուն,
 Փարվում էր՝ չար ու անթով:

XXXIV

265

 270

XXXV

Ես տեսնում էի մշուշում
 Տարփանքով վառվող երկու բոց,
 275 Երկուսի մեջտեղում — ծեր մի շուն...
 Ու լալիս էր հոգիս հողմակոծ:
 Որպես հուր երկու ժապավեն,
 Երկու օձ՝ սպի՛տակ ու սև —
 Մերունու մարմինը փաթաթել,
 280 Գալարվում էին օձսձև:

XXXVI

- Ես նայում էի հուսահատ
 Ու ճշում էր հոգիս խանդից
 Եվ ուզում էր հոգիս—նզովված՝
 Տիեզերքն ու կյանքը քանդի:
 285 Կուտակվում էր կրծքում իմ տոչոր
 Ահռելի ու սև մի սամում,—
 Ես արդեն — մի վա՛գր էի չար,
 Փոթորի՛կ էի ես անհուն:

XXXVII

- Ես կարող էի բյուրավոր ✓
 290 Ոսոխներ խեղդել, հոշոտել,—
 Հորդահոս արյան ծարավով
 Արնահամ դիակներ ուտել:
 Որպես չար, արնախում բորենի
 Ես կարող էի սի՛րտը հանել —
 295 Թե ընկած լինեիր ծերունին
 Իմ ճանկերը պիրկ ու անել:

XXXVIII

- Բայց կանգնել էի ես քարացած՝
 Ու խղճուկ էի, որպես շուն:
 Հսվում էր ներսից երգի ձայն,
 300 Ու պարում էին մշուշում:
 Ու պարում էին երկու հուր,
 Երկու բռ՜ջ՝ սպիտակ ու սև —
 Ու փարվում էին ծերունուն
 Գալարքով խո՛ղ-օձաձև...

XXXIX

- 305 Պայթե՛ց փոթորիկը գլխիս
 Եվ սիրտս ահեղ մռնչալի:

- Մրրիկի պես շաշով մտա ներս,
 Բորենու պես ագա՛հ ու շար:
 Ու իջավ տեգս երկաթե
- 310 Նրա շոր կրծքին ծերուկ,—
 Ու հաջորդ վայրկյանին արդեն
 Թափալվում էր նա ա՛լ լճերում:

XL

- Ու լցվեց բաղանիքը հանկարծ
 Կանացի սուր ճիչերով:
- 315 Զգացի, որ կրծքիս ընկան,
 Բռնեցին ինձ երկու ուրու:
 Երկու բոց՝ սպիտակ ու սև,
 Երկու հուր հրեշներ է՛գ:
 Ե՛րկու շար ոստիաներ օձաձև,
 320 Երկու խոլ շարքե՛ր հուսաբեկ:

XLI

- Ու վայում էին կատաղի,
 Ու ծեծում էին ինձ նրանք:
 Նրանց դեմքը դարձել էր դեղին
 Ու հայացքը՝ օձ ալվլան:
- 325 Այդ վայրկյանը հուր-արյունի
 Զառանցանք էր՝ խո՛ւ միստերի:
 Ու հոսում էր ալ մի գինի
 Դեպի սիրտս նրանց զիստերից...

XLII

- Ճանկոթում էին նրանք ինձ,
 330 Գազազած՝ ձեռքերս կծում,
 Ու թքում էին դեմքիս
 Վահրով՝ դառն ու կծու:

Ու լուսե մատներով շարկամ
Իմ աչքե՛րն էին փորփրում:
335 Օ, մահու քա՛ղցր վայրկյան,
Օ, նզո՛վք, անե՛ծք, աններում:

XLIII

Զառանցանք էր, տենդ էր թվում
Այդ վրեժը շար էգերի:
Ու տրվել էի ես հլու
340 Նրանց շար, տանջող կամքերին:
Ու խփում էին երեսիս
Նրանք հուր-թեթև ոտքերով:
Ու անհույս, սև մի կսկիծ
Լցվում էր սիրտս խռով...

XLIV

345 Եվ հանկարծ թողեցին նրանք ինձ
Ու հասան մեռած ծերուկին:
Կախվեցին նրա չոր դեմքից,
Փարվեցին կրկի՛ն, կրկի՛ն:
Ու ներկում էր արյունը նրա սև,
350 Ծերունու արյունը մութ —
Մարմինները նրանց լուսե,
Մարմինները՝ դառն ու անգութ:

XLV

Համբուրում էին ծերուկի
Սպիտակ շրթերը նրանք:
355 Ու ճշում էին դառնագին,
Ու կանչում էին—նրան:
Ու սրբում էին վերքի
Արյունը մազերո՛վ իրենց սև:—

Ու ընկած էի ես մեջքիս՝
360 Մերժված, խեղճ ու անսեր...

XLVI

Ո՛վ երկինք, պայթի՛ր գլխիս,
Փոթորի՛կ, մազերիս տեղա՛.
Տատասկնե՛ր թող բացվեն ճամփիս,
Կայծակնե՛ր գլխիս թող շողան:
365 Կուրանա՛ն թող աչքերն իմ դաժան,
Չորանա՛ թող ձե՛ռքը իմ շար,
Թող գգվի ինձ մա՛հ տարածամ,
Թող հոգիս դժոխքո՛ւմ ճշա...

XLVII

Ինձ գցին բանտը դղյակի,
370 Ինձ համար սուսեր սրեցին:
Բայց էլի լիքն էր հոգիս
Այն սիրով հուր-հրածին:
Ու մոռալ բանտից ես փախա,
Որ կյանքի գո՛րշ ճամփեքին
375 Երգեմ իմ այս սե՛րն արնահամ
Ու հատու հարվածը իմ տեղի:

XLVIII

Չուզեցի մեռնել բանտում
Ու թաղել սերս անհետ:
Ուզեցի լինել տրուբադուր,
380 Դղյակից-դղյակ թափառել:
Ուզեցի, որ լուռ չմնա,
Չմարի սիրտս հրկեզ,—
Ուզեցի ապրե՛լ մշտական,
Որ նրանց գովքը երգեմ:

XLIX

- 385 Երկու լույս էին վառ նրանք,
Երկու բոց՝ սպիտակ ու սև,
Երկու խող արև հուրհուրան,
Երկու հուր-հրաշքների լուսե:
Մեկի բոյը — սեգ մինարեթ,
390 Մյուսինը — սև մի սոսի.
Մեկը — վառ, անմար մի արև,
Մեկը — կաթ, արծաթ մի լուսին:

L

- Քեզմինի խարույկներ էին խող
Սևամած աչքերը մեկի,
395 Մյուսի աչքերը — տխուր
Միրածնե՛ր էին անմեկին:
Մեկի կուրծքը մզկի՛թ էր սպիտակ,
Մյուսինը — սե՛գ մի տաճար,
Մեկը — բիւ գաղե՛լ էր կապուտաչ,
400 Մեկը — հուր-նժո՛ւյզ սևաշյա:

LI

- Մեկը թիռ քայլում էր թեթև,
Թռչկոտում էր, որպես բիւ գազել.
Մյուսի քայլքն հրաթև —
Թռի՛չք էր դաշտերում ավազե:
405 Աշխարհում դեռ չի՛ հրազել
Նման բախտ և ո՛չ մի արքա,
Բայց այդ վառ բախտին տիրացել,
Տիրացե՛լ էր Անդոն շարկամ...

LII

- Ծն կարող էի նրանց հետ
410 Աստծու գահին տիրանալ,

- Դամասկի վրա հարձակվել
 Մեն-մենակ՝ հա՛ղթ ու անահ:
 Ես կարող էի, որպես շուն,
 Հավիտյան նրանց ո՛տքը լիզել.—
- 415 Օ, նրանց ոտքերի՛ փոշում
 Ինձ համար դրա՛խտ էր լուսե:

LIII

- Բայց ահա — հոգնած մի տրուբադուր.
 Օրերի գորշ ճամփեքին
 Երգում եմ հարվածը հատու,
 420 Մահացու հարվածը իմ տեգի:
 Երգում եմ նրանց երգը լուսե,
 Մարմինները նրանց ա՛լ-կրակ,
 Երգում եմ սե՛րը նրանց սև
 Ու վերքիս արյո՛ւնն ավլլան:

LIV

- 425 Երգում եմ կարոտն իմ արթուն,
 Երգում եմ աւճո՛թը այն սև,
 Որ կարող է դարձնել մարդուն
 Գետնահար ստվեր մի նսեմ:
 Ուխտավո՛ր, լսի՛ր հիմա դու.
- 430 Աշխարհի գո՛րշ ճամփեքին
 Երգում է հե՛գ մի տրուբադուր
 Մահացու հարվա՛ծը իր տեգի...»:

1923



(Թամաշա)

Տեսարանը բեմ է, բեմի վրա — թամաշա շանց տվողը՝
Ղարան:

ՂԱՐԱ

Ընկերներ:

էս ես եմ սարքե ձեզ համար:

Աջողել եմ կամ շատ, կամ քիչ:

Ոչինչ:

5 Բավական է ինչքա՛ն ձեզ խաղան

Անտիգոնե,

Նամուս,

Օթելլո,

Քին:

10 Ինչերի՞դ է էսօր հարկավոր

«Դատաստան»,

«Զանգ ջրասույզ»:

էդպիսի խոսքեր ճոճուան,

էդպիսի շորեր մե թավուր,

15 Ձեր պա՛պն է տեսե երազում:

Հասկանո՞ւմ եք.

Ասենք թե մե օր

էդպես են պաշե-պաշպշե,

էդպես են համոզե իրար.

20 Սիրեկանն ասել է՝ հա,

Աղջիկը՝ չէ՛:

- է՛.
 էլ ինչո՞ւ են շանց տալիս հիմա
 էդ բոլորը Փափազն ու Օրին.
- 25 Որ ի՞նչ:
 Թո՛ղ,
 Թող լիզեն իրար,
 Թող պաշեն-պաշպեն ոնց կուզեն,
 Հասկանո՞ւմ եք.
- 30 Կյա՛նքը
 էդպես էր առաջ.—
 Ուտել,
 Պաշել,
 Բզել:
- 35 Կյանքը:
 Հա՛ւ:
 էդպես էր առաջ:
 Ծորում էր՝ յուղ, պանիր, շոկոլադէ, շաքարե
 հրեշտակ՝ մեջը սեր-
 Բայց ո՞ւմ,
- 40 Ո՞ւմ կյանքն էր էդպես շաքարած.—
 Իհարկե՛ն՝ ո՛չ իմ, ո՛չ ձեր:
 Իհարկե,
 Չասեք թե չկա
 էդ բոլորը կյանքում մեր էսօր:
- 45 էդպես է սիրում,
 Համոզում,
 էդպես է պաշում էսօ՛ր էլ իր սարտի սիրած՝
 աղջկան» —
 Ամեն մե կնյազ,
 Դուքընչի,
- 50 Ամեն մի գիմնազիստ քոսոտ:
 Հենց նա՛ էր,

Կամ իրա քեռին,
 Կամ ախպերը,
 Կամ քեռու տղեն,
 55 Որ երեկ թքում էր մեր ռեխին,
 Ասում էր՝ մեռի,
 Կամ գաթա թխե, որ ուտեմ:
 էդպե՞ս էր.
 չէ՞.

60 Իսկ էսօր —
 Ծակն է մտե:
 էլ չկա:
 Hery.
 Յոխտուր:

65 Փաս: —
 էդ մասին է հենց սա գրած:
 Բա՞ս:
 — ՅԱՇԱՍԸՆ ԿԱՊԿԱԶ —

(Ինտերնացիոնալ) ՂԱՐՎ. Ինտերնացիոնալից հետո
 խոսում է ձեռով-ոտով.

Ընկերներ՝:

70 Մեր,
 Հենց էս մեր
 Կապկաղում — հիշո՞ւմ եք ոնց էր — չէ՞.
 Որ ասեմ—վախենամ խնչեք:
 Ընչի՞.

75 Զունքի որ տեր էին էստեղ՝ հայ, ռուս, թուրք,
 վրացի կնյազը, խանութպանը, տերտե-
 րը, աղամեղիքը, վարժապետը, մոլլան,
 հարբած դուքընչին:

Կամ —
 Հենց էս մեր թառռոնը պետական.

Ի՞նչ էր առաջ.

Հիշո՞ւմ եք «պառ-լա՛-մե՛նտ»:

80 Այսինքը...

Ո՞նց ասեմ...

Նո՛ւ.

«Երկու տիրոջ ծառա» —

Համ է՛ս, համ է՛ն:

85 Հիմի՛:

Հիմի, դե, էս շենքում — պետական.

Թառռոն է, Կապկազում — սավետ.

— Ո՞նց եղավ բա էդ.

էս բոլորը ո՞նց եղավ աբա:

90 Հենց է՛ս է, որ շանց պիտի տանք.

Բա՛:

Թող նայե հիմի ով կուգե.

Թող նայեն թե մարդ, թե կին:

Բավական է էստեղ ձեզ հուզեն

95 Միմոսով, քինով, անհայտ տիկինով, ծծերով՝
տկլոր մի էգի:

Հասկացա՞ք:

Ձեզ համար հիմի

Մեյմունի պես էստեղ կխաղան —

Հայ,

100 Ռուս,

Թուրք,

Վրացի,

հանութպան,

Տերտեր ու փաշա:

105 — Թառռո՞ն:

Չէ մի չո՛ռ:

Կախաղա՛ն:

- Տի՛րկի
 Թամա՛մ թամաշա:
 110 Ի՞նչ է.
 Սովո՞ր էին
 էւ բեմում երևալ թագով:
 Թո՛ղ,
 Թող զան փափազն ու Օրին
 115 Ձեզ համար իսաղան դարագյոզ...

(էստեղ տալիս է զանգը Ղարան, հետո՝ նու գալիս կանգնում է ժողովրդի առաջ):

ՂԱՐԱ

- էստեղից սկսվում է թամաշեն:
 Զորս աչքով աշե՛ք:
 Տեսնո՞ւմ եք.
 Բեմը —
 120 Դատարկ է, բան չկա.
 Ոչ անտառ,
 Ոչ օթաղ,
 Ոչ էլ ուրիշ դեկոր:
 Մենակ մե զանգ վերից քաշ է տված թոկով:
 125 Դեմը մեկ էլ—մե չարիս,
 Որ դառնում է հաճախ.
 Փոխում է գույնը՝
 Սև է,
 Դառնում է ալաճա,
 130 Հետո — կապույտ,
 Դեղին —
 Նայած տեղին:
 Ամա թե էդ չարիք ներկած —
 Դեպի աջ շուռ գա՛՝ կդառնա ճերմակ,
 135 Դեպի ձախ — կարմիր.

Մե խոսքով՝ շուռ գալն էլ չարխի —
 Մեկ է թե շուռ գալն աշխարքի:
 Ընկերնե՛ր:
 էս մեկը լա՛վ հասկացեք:
 140 Աշխարքում — էրկու ունգ կա միշտ.
 Մեկը —
 Նրանցը —
 Բող, կապույտ, դեղին, ալաճա, գինեռանգ
 կամ սև

Մե՛կ է:—
 145 Մերը — կարմիր:
 Հասարա՞կ է:
 Ըլի՛ հասարակ:
 Աշխարքն էլ էսպես է միշտ էղե:
 Ի՞նչ.

150 Ուրի՛շ մասալ են ձեզ արած...
 Սո՛ւտ է:
 Զեր գլուխն են եղե:
 Մենք հիմի շանց կտանք խալխին
 էդ բոլոր խաղերը լկտի...

Դեպի բեմը

155 է՛յ,
 Փաշա՛,
 Տերտե՛ր,
 Խանութպա՛ն,—
 Բե՛մ ելե՛ք դե:

էս խոսքերի վրա չարխը դառնում է արագ:—Դրսում՝
 աղմուկ, հարայ-հրոց, ուռուա: Ղարան քաշվում է մե
 կողմ. մտնում են աղմուկով — հայ, թուրք, ռուս,
 վրացի, կնյազ, աղամենլիք, չարչի, մուլա, գյուղացի,

ադական, կոշկակար, վարժապետ, մուսավաթ, դաշ-
նակ, մենշեիկ, կազետ — ամեն տեսակ մարդիկ։ Մե
խոսքով՝ ով որ կար, չ՛յա, կա դեռ։ Ղարան բերում
դնում է մի դատարկ տակառ, ինքը կանգնում է վրան։

160 Ընկերնե՛ր։

Ծրեկ

Մեր թագավոր Կոլին թոցրել են թախտից։

Ընկել է գլխիվեր, ոնց որ լիկած դդում։

Ընտրված է ժամանակավոր կառավարու-

թյուն։

Թուրը մեքերան՝ աղմուկ, հարայհրոց, ուռուս։
ՂԱՐԱ ժողովրդին.

165 է,

Հիմի ես գնամ էստեղից՝ թող իրենք

խաղան։

ՄենՇեվիկ թռչում կանգնում է տակառի վրա։

Ես—նախագահ։

Լսեցե՛ք։

Թագավորը չկա.

170 Մենք

Հիմի

Ամենքս

Տնով — տեղով

Ընտրելու ենք էստեղ սահմանադիր ժողով։

175 Ընկերնե՛ր։

Ո՛ւմ պիտի ընտրեք։

Իհարկե նրան, ով խոստանում է ձեզ տալ

Հաց, ջուր, տուն, 8 ժամվա աշխատանք,

տոն օրերին փստա։

Ամխանագերո՛ւ—չվենի՛—
180 Ձայն տվեք Պ առաջինի՛ն...

ՄՈՒՍԱՎԱԹ հրում գցում է սրան՝ ինքը կանգնում է
տակառի վրա:

Յուդաշլա՛ր,
Չհավատաք իթին:
Ինչների՞դ է փստան:
Փըս-տա՛...

185 Չէ մի զար-զահար-զահրումար-ֆլան-
ֆստա՛ն:
Ուղո՛ւմ եք ձեզ տան լո՛ւ-լա՛-քյա-բա՛բ,
փի՛-թի՛,—

Ձայն տվեք Մուսավաթի՛նի՛ն:
Յա՛,

Մուսուլման յուդաշլա՛ր:

190 Յաշասըն հուրիաթ,
Մուսավաթ,
Ադալաթ —
Յաշասըն միլլա՛թ:

ԴԱՇՆԱԿ գցում է սրան, ինքը կանգնում է տակառի
վրա:

Է՛յ,

195 Սիրելի մուլլա՛—
Ուզո՛ւմ ես սիլլա՛
Փի՛-թի՛...
Է՛ս է կզա քթիդ:
Ի՛նչ.

200 Ադալա՛թ...
Թուրքին քշենք հալա—

Հետո աղալաթ:
 Ընկերնե՛ր,
 Առաջ հալա տանք ուխտին դրսի,
 205 Հետո ներսի.—
 Զա՛յն տվեք Ռ շորսի՛ն...

էս ժամանակ կողքից գալիս են հայ, թուրք, ռուս,
 վրացի խոխեք՝ բանվոր-զինվոր տղեք: Կրժքները բաց,
 ամեն մեկը Մասիս կամ Ղարադաղ, ձեռքներին կարմիր
 բայդադ: Կնյազ, մոլլա, աղամեղիք, շարշի, վարժապետ,
 մենեչիկ, մուսավաթ, դաշնակ:

Ա՛խ —

Վախից թափվում են գետին, հետո կամաց-կամաց բաշվում
 կանգնում են մեդի:

ԲԱՆՎՈՐ թռչում կանգնում է աթոռի վրա:

Տավարիշի՛,
 Ընկերնե՛ր,
 210 Ամխանա՛գբո,
 Յոլդաշլա՛ր:
 Թագավորը հե՛շ:
 Թագավորը որ կար —
 էդ մեկ է թե—մոլլա մուլսի,
 215 Կնյազ Բեբութով,
 Դուքընշի Մարգար:
 Այո՛:
 Թագավորը որ կար—ինչո՞վ էր թագավոր.
 Նրանով, որ ուներ՝
 220 Կնյազ քեռուտղա,
 Մոլլա խնամի,
 Դուքընշի քավո՛ր:
 էդպես չի՞...

ԲՈՒՈՐԸ մերերան.

ԿՈՐ-ԶԻ՝ —

225 ԿՈՐ-ԶԻ՝ — ԿՈՐԶԻ՝:

ՄԵՆՇԵՎԻԿ մոտենում է կամաց, ձեռաց խառնվում է:
բանվոր տղերանց:

ԳԱՇՆԱԿ ետևից գալիս բռնում է Մենշևիկի թևից:

ՄՈՒՍԱՎԱԹՆ էլ կամաց մոտենում է իբրև թե ակամա:

ԲԱՆՎՈՐ ուզում է շարունակի ճառը:

ՄԵՆՇԵՎԻԿ, ԳԱՇՆԱԿ, ՄՈՒՍԱՎԱԹ

Ուռռա՛, ուռռա՛, ուռռռռա՛ա՛ա՛ա՛:

ԲԱՆՎՈՐ միամիտ, հալած յուղ կարծելով դրանց փչած
քամին.

Ճի՛շտ է...

Դրանք մերերան.

Ճի՛շտ է, ճի՛շտ, ճի՛շտ է:

ԲԱՆՎՈՐ ոգևորված

Տավարիշի՛:

230 Էսպե՛ս:

Թագավորը չկա:

Հիմի պետք է, որ մենք

Թոցնենք—

Նրա քեռուն, տղին, թոռին, ծոռին,

քավորին, քավորի աղջկան:

235 Տավարիշի՛,

Կորչի՛ն

Մոլլան, տերտերը, կնյազը, բուրժուազին,

չարչին:

ՊՈԼՈՐԸ մեքերան

ԿՈՐԶԻՆ—ԿՈՐԶԻՆ—ԿՈՐԶԻՆ:

ՄԵՆՇԵՎԻԿ էստեղ սիրտ առնելով մե քիչ՝ խոսու է Լ,
Չպիտը դեմքին:

Ընկե՛ր բանվոր,
240 Ե՛ս եմ:
Կարելի՞ է խոսեմ...

Քռանց սպասելու որ ասեն՝ սկսում է խոսել:

Տավարիչի՛.
Ճիշտ է.
Թագավորը որ կար —
245 Ընկեր բանվորի ասածի նման՝ լիրք էր, մեր
արյունն էր ծծում, բորենի էր ագահ:
Թագավորը չկա:
Բայց ի՞նչ—
Ընկեր բանվորի ասածի նման՝ կենդանի են
կնյազը, վաճառականը, աղամեղիքը,
չարչին:

Ճի՛շտ է. նրանք են մեր թշնամին հիմի:
250 Բայց դուք—
Մոռանում եք, որ կա—արտաքին թշնամի՝
Նեմե՛ց,
Թուրք:
Ղուբ դիտե՛ք, որ դրանք թե գան՝
255 Թագավորին նորից կնստացնեն թախտին:
Ի՞նչ կմնա —
էլ ի՞նչ...
Ոսկի ձկնիկի առակը գիտե՛ք.—
Նո՛ւյնը կլի:

էս խոսքերի վրա՝ չարշին, վարժապետը, ազվակատը,
կնյազը, աղամեղիքը հավաքվում են էլի, հառնվում են
իրար. աղմուկ, հարայ-հրոց, ուռա:

№ 5 ալսինքը ԲԱՆՇԵՎԻԿ

260 Տավարիշի՛:

Սո՛ւտ է.

Թե որ թողնենք՝ սրանք մեզ հենց հում-հում
կուտեն:

էստեղ ԳԱՇՆԱԿԸ

Հայրենակիցնե՛ր:

Սո՛ւտ է:

265 Առաջ դեռ հալա թուրքին քշենք Իզմիր—

Հետո,

Կամաց-կամաց,

Թե կուզեք—կհասնենք սոցիալիզմի:

էստեղ դրսից աղմուկ, Գալիս է զինվորի ձենը՝ զիլ, ոնց
որ ձեն քամու:

Տավարիշի՛:

270 էլ չե՛մ ուզում կովեմ:

Դալո՞ւյ—դալո՞ւյ—դալո՞ւյ:

ՁԱՑՆԵՐ

Ո՞նց թե...

ՁԱՑՆԵՐ

Ընչի՞...

ՁԱՑՆԵՐ

Հա-իլ-լահ-ուլ-Ալլահ:

ԱՐՁԱԳԱՆՔ

275 Հայ—հո՛ւո՛ւո՛ւ...

էստեղ գիմացեն իմացեք գալիս է զիմվորը ոռւս. էն որ
առեւ էր Վան, Քիթլիս, Երզնկա, Տրապիզոն, էրզրում:

ՋԻՆՎՈՐ

Տա՛վարիշի՛,

լսե՛ք.

Հիմի գնում եմ ես,

Որ խշտիկով քշեմ բուրժուազին թախտից.

ՋԱՅՆԵՐ

280 Լսե՛ք—լսե՛ք—լսե՛ք:

ՋԻՆՎՈՐ

Ամեն՝ ազգ ինքն է տեր

Հիմի իրա բախտի:

էս խոսքերի վրա՝

ԿԵՅԱԶ

Յաշասը՛ն:

ԱՂԱՄԵԼԻՔ

Գառնամարշո՛ւ:

ՄՈՒՍԱՎԱԹ

285 Ուռուռա՛ւա՛ւա՛ւ:

ԿԱԴԵՏ

Հայ զահրումա՛ր:

ՋԱՅՆԵՐ

Ի՞նչ է որ...

ՋԱՅՆԵՐ

Ի՞նչ...

ՋԱՅՆԵՐ

Էլ ի՞նչ...

ՋԻՆՎՈՐ

290 Տավարիշի՛,

Ես

Գնում եմ է՛ստեղից՝

Թողնում եմ ձեզ էլի՛:

Կյուղ, քաղաք, հող, թոփ, թվանք, թուր,
երկաթուղի:

ՋԱՅՆԵՐ

295 Հե՛ք, լսե՛ք, լսե՛ք:

ՋԻՆՎՈՐ

էս բոլորը մենք—զոռով ենք վերցրեմ,

էս բոլորը—ձեզ.

Ձե՛րն է հղեմ:

ԿՆՅԱԶ

Կեցցե՛ք:

ԱՂԱՄԵԼԻՔ

300 Կեցցե՛ք տղեն:

ՋԻՆՎՈՐ

Եղբայր ենք մենք հիմի:

Ամեն ազգ ի՛նքն է տեր իրա կալին, կթինք

էստեղ վազում է շուրը—մուլի, կնյազի, աղամեղիքի,
մուսավաթի քթից:

ՋԻՆՎՈՐ

Տավարիշի՛:

Դե,

305 Մնաք բարո՛վ հիմի:

Պողոսում ենք, ոնց որ կա, ձերը ձեզ:
Խնդրում ենք լավից-վատից ձեր եղբայր
զինվորին—ներեցե՛ք:

Վերցնում է զենքը միամիտ, գառնում է, որ գնա Ռու-
սեթ. ետեից մոլլան ու մեկի՞ր նայում են խեթ:

ԱՂԱՄԵԼԻՔ

Խփե՛նք...

ՄՈԼԼԱ

Խփե՛նք:

ԿՆՑԱԶ

310 Խփենք:

ՄՈԼԼԱ նշան է անում,

Լա-իլ-լա՛հ:

ԿՆՑԱԶ

Գլխին տանք՝ մայրիկը լա:

էստեղ աղամեկի՞րը զինվորին խփում է քացով, խլում է
զենքը ձեռից. նրան օգնում է ետեից իրա կնյազ-քեռին:

ՔԱՆՎՈՐ թռչում է վրա.

Ո՛ւմ եք խփում, լրբե՛ր:

ԿՆՑԱԶ ձեռքով խփում է գլխին.

Յի՛ց, մասխարա՛,

315 Քո գործը չէ՛.

Լռի՛ր:

ԱՂԱՄԵԼԻՔ ինքն էլ խփելով բանվորի գլխին.

Լա՛վ է ասում քեռին:

էստեղ մեր ընկեր բանվորին օգնության են գալիս մյուս
տղերը՝ զեմից, բայց մոլլան, վաճառականը, կնյազը,

գութանչին՝ մե խոսքով մենշեկը, դաշնակը, մուսավա-
թը նրանց քշում են բեմից:

ԿՆՅԱԶ Ինքը հաստ ու կոլոս, բեղերը ցից ու սուր, խո-
սելիս գինու պես կկլկում է լեզուն:

Ամխանագեբո՛ մոլլա ու շարշի:

Տավարիշի՛:

320 Ռուսը ա՛րարիս—մեռավ:

Քուրը մեքերան

Ուռռա՛, ուռռա՛, ուռռա՛ա՛ա:

ՄՈԼԼԱ

Հա-իլ-լահ:

ԿՆՅԱԶ

Խոսքը ձերն է, ամխանագո՛ մոլլա:

ՄՈԼԼԱ Ելնում կանգնում է տակառի վրա:

Աղալա՛ր:

325 Ուռռաը որ կար—հերն էր մեր մեծ.

Մեռավ:

Ժառանգություն թողեց.—հողեր, գյուղեր,
տեղեր, թոփ, թվանք, զենք:

Մենք —

Որդիներն ենք նրա.

330 Եկեք էդ բոլորը կիսենք:

ԴԱՇՆԱԿ գլխի գեռ չի բնկել, խոսելիս մոլլին ասում է
բնկեր:

Ո՞նց թե, ընկե՛ր մոլլա:

ՄՈԼԼԱ

Դո՛ւ ես ընկե՛ր, հայվա՛ն:

ԱՂԱՄԵԼԻՔ

Շո՛ւն:

Գլավո՛ւր:

335 Ի՛թ:

Ձեռքը վեր է քշտում՝ ուզում է խփի դաշնակի քթին:

ՄԵՆՇԵՎԻԿ աղամեկիքի թևը քաշելով.

Վախտը չի՛, կացո՛, վախտը չի՛:

Մոլլին քաշում է վար՝ ինքը կանգնում տակառի վրա:

Ամխանա՛գեբո՛,

Չարչի՛, մոլլա՛, մեկի՛ք,

**Ինչքան էլ գզգզենք իրար—եղբայրներ ենք
էլի:**

340 Հիմի լսեք—ասեմ.

էս բոլոր դավին դառաբեն վճռելու համար

Եկեք կառավարութիւն հիմնենք՝

Անունը Սեյմ:

ԴԱՇՆԱԿ

Ո՞նց թե, ընկեր կնյազ:

ՄԵՆՇԵՎԻԿ

345 Շա՛տ հասարակ:

Մեզնից — ես,

Ձեզնից—դու,

Նրանցից մեկիքը կամ մոլլան...

ԲԱՆՎՈՐ, որ նորից եկել է առաջ.

Բաւ մե՛նք,

350 Տավարիչչի՛,

Հնկերնե՛ր,
Յողաշլա՛ր:

ԱՂԱՄԵԼԻՔ խփում է գլխին,
էլի՜...

ԿՆՑԱՋ օգնում է նրան.
Կեցցե՛ս, աղամեղիք:

ԴԱՇՆԱԿ խփում է բանվորին քաջով:
ՄԵՆՇԵՎԻԿ ոգևորելով դաշնակին.
355 Գա՛ումարջոս, կացո՛ւ:

Բանվորին քշում են դուրս: Հետո եճում է մենշեկը՝
սկսում է կարգալ:

ՄԵՆՇԵՎԻԿ կարգում է.

Հանուն փորի մեր մեծ,
Հանուն մոլլի միրքի,
Վարժապետի քթի,
Խանութպանի ձիւքի,
360 Որպեսզի ինչ որ կա մեր մեջ հալալ կիսենք՝
Հիմնում ենք կառավարություն—Սեյմ:
Ես—նախագահ,
Երկուսդ—օգնական,
Բանվորներին քիշմիշ, ժողովրդին կակալ:

ԴԱՇՆԱԿ
365 Կարեղի՜ է խոսեմ, ընկ. նախագահ:

ՄԵՆՇԵՎԻԿ
Չէ՛:

Ի՞նչ պիտ ասեք հիմի դուք կասարված
փաստին.

Կուզեք—գնա՛ւք նիստի՛:

Թուրը մերերան.

Գնա՛նք, գնա՛նք նիստի:

Երևում են դուրս: Չարիք՝ սե, դեղին, ալաճա՝ դառնում
է արագ: Գալիս է Ղարան:

ՂԱՐԱ գնացողներին.

370 Մի սրա՛նց:

Սրա՛նց մի մտիկ:

Թուղում նստում է շարխի վրա գոռում է էնտեղից.

Ընկերնե՛ր:

Ռուսեթում իշխանությունն անցել է
սավետին:

Իսկ սրա՛նք—

375 Տեսա՞ք ոնց թխեցին բանվորների քթին:

Թուղում է ցած. ժողովրդին.

Բա՛ս:

Սե՛յմ:

Հիմի լսե՛ք ասեմ:

18 թվին

380 Հիշո՞ւմ եք՝ դաշնակը, մենշևիկը,
մուսավաթը

Կարսը թուրքին տվին —

Բաթումն էլ ետևից:

Թուղում նստում է տակառին: Երգում է.

Ծս նստե՛լ եմ բռնկին,

Բռնկեն կա՛թն՝ տէ:

385 Զխենկելին Պուլիս գնաց՝

Մախեց Բա՛թումը:

Է՛խ՝ Կա՛ր-Ճիկյա՛ն,

էդ ուր գը-նում ես.

Կարսը տվիր, ձեռիդ մնաց

390 Լիկած դը-դումը.

— Կարսը տվիր ձեռիդ մնաց

Լիկած դը-դումը:

Շուրջը նայելով.

Գեգեչկորին սոցիալի՛ստ է,

Զխենկելին— բո՛ղ,

395 Ժողովրդին էս երկուսը

Մախեցին անփող:

Կե-ցէ՛ր, սպասի՛ր,

Կգա բալշէիկը.

Կը-տա, կըկտրի

400

Երկուսիդ շլինքը:

էստեղ դրսից տոնաձայն: ՂԱՐԱՆ լռում է վախեցած:

ՓԱՇԱ մտնում է ուռած-փքված, ասես թե մարդ է կուլ
տվե. ոտքերին՝ շաքմա, գլխին— ֆես:

ՓԱՇԱ

Ի՞նչ ձեն էր էս,

Ո՞վ կա էստեղ:

ՂԱՐԱ

Ե՛ս...

Համեցեք նստե՛ք:

ՓԱՇԱ

405 Ցնդե՛լ ես, ի՛թ մասխարա:

Դուն ո՞վ ես, որ քեզ հետ նստեմ:

Ի՞նչ— է՛— էս— տե՛ղ:

ՂԱՐԱ

էստեղ... Սե'յմ:

Այսինքը, ներողութիւն, փաշա,--

410 Թառոռն է, թամաշա:

◆ԱՇԱ բարկացած տալիս է մի սիլլա ռեխին. Ղարան
թռչում է տեղից: Էստեղ մտնում է ԳԵՐՄԱՆԱՆԵՐ
(սպա):

ԳԵՐՄ. ՍՊԱ

Շա':

Վա՛ս մախենն զի, փաշա':

◆ԱՇԱ գլուխ տալով.

Ես... ոչի'նչ.

Խրատում եմ մե քիչ:

ԳԵՐՄ. ՍՊԱ

415 Զե'յո գութ:

Ալզո', հե'ռո,

Աբա մի քիթդ դեսը բե'ր:

Պփում է Ղարայի ռեխին:

Է՛ս քեզ խրատ ինձնից:

Կանչի'ր մեծիդ:

◆ԱՇԱ խփելով ետեից.

420 Դե շո'ւտ:

Հայդե':

Կորի':

ՂԱՐԱ կանչում է զախեցած.

Գե՛-դե՛չ-կո՛րի:

Վաղում է դուրս: ԳեԳեճկորի մտնում է սոսա ու փռա:
խոնարհ, շոքում կանգնում է ետևի ոտքերի վրա:

ԳԵԳԵՅԿՈՐԻ

Խորի՜ն հարգանքներս, հե՛ռ ու փաշա՛:

425 Վաղուց է սպասում էինք ձեզ:

Թե որ չէիք եկե՛՛ վա՛յ մեզ:

Նս,

Հանուն սոցիալիզմի,

Պատրաստ եմ, թե կուզեք, թու՛նլ Կարսից
Իզմիր:

430 Միայն թե ուրքը ձեր,

Հե՛ռ ու փաշա՛,

Բայլշևիկին ճզմի:

ՎՍՇԱ քարկացած-վախեցած.

Իզմիր՜... Ի՞նչ Իզմիր, րի՛շի՜ Իզմիր:

ԳԵԳԵՅԿՈՐԻ

Հե՛ռ գեներալ,

435 Փաշա՛,

Հսե՛ք մեզ մի...

ԳԵՐՄ. ՍՊԱ խիստ.

Հե՛ռ,

Ոտքի՛,

Վախտը չէ լացի, կոծի, սոցիալիզմի,

ուշացած աղոթքի:

Քաշում կանգնեցնում է ոտքի:

440 Ի՞նչ է էստել:

Ասե՛ք:

ԳԵՂԵՉԿՈՐԻ

Հստեղ...

Սեյմ:

ԳԵՐՄ. ՍՊԱ

Ի՞նչ:

445 Ի՞նչ սեյմ:

ԳԵՂԵՉԿՈՐԻ

Այսինքը...

Ե՛ս եմ:

Մեկ էլ...

Մեկ էլ...

ԳԵՐՄ. ՍՊԱ

450 էյ, հե՛տ:

Մեկեկ-մեկեկ չկա:

Հասկացա՞ր:

Ո՛չ սեյմ,

Ոչ Կապույտ,

455 Ո՛չ էլ Խուրդա-մուրդա...

ՓԱՇԱ

Ճի՛շտ է:

Ի՞նչ սեյմ, օղբա՛շ,

Մեզ համար թե՛ սեյմ; Թե՛ բարդա՛կ...

ԳԵՐՄ. ՍՊԱ

Հա՛վ:

460 Վե՛րջ:

Դու լռի՛ր, փաշա՛:

Իսկ դու,

Ձկա.

Քամի՛:

Մենք,

ես ու փաշեն,

470 Եկել ենք ձեր գործերին աշենք:

Հիմի լսե՛ք—ասեմ.

Դուք էգուց սեյմը կցրեք,

Կդառնաք տերություն երեք,

Կամ, կուզեք—չորս, հինգ, վեց, յոթ, ութ

475 Մենակ թե Ռուսը—կափո՛ւտ:

Հասկացա՞ք,

էսպե՛ս:

էգո՛ւց:

Իսկ մենք —

480 Գալիս ենք—զնանք Բաբու:

Գո՛ւթ:

Թխեցի՞նք:

ԳԵԳԵՉԿՈՐԻ

Շա՛տ գեղեցիկ:

Օգուտ:

485 Մեզ օգուտ,

Ձեզ ծգուտ,

Փաշին օգուտ,

Բալշևիկին—կափո՛ւտ:

ԳԵՐՄ. ՍՊԱ

Գո՛ւթ, գո՛ւթ, գութ:

ԳԵԳԵՉԿՈՐԻ

490 Մենակ թե ազատեք կարմիրներից մեզ էն...

ԳԵՐՄ. ՍՊԱ սեղմելով ձեռքը.

Ալզո՛,

Հե՛ռռ,

Աուֆ-վիդերզեհ՛ն:

ՓԱՇԱ նույնպես սեղմելով ձեռքը: Ինքներեն.

Չո՛խ սալամաթ:

495 — Սոսիալիստ դի թամա՛մ:

ԳԵԳԵՉԿՈՐԻ մենակ.

Շենի ճիրիմե՛, կա՛ցո:

Էգուց,

էնպես տանք բայլշէկին քացով,

Որ թռչի մինչև սպիտակ ծով:

500 Բա՛ս:

Ծագ է տալիս. կանչում է Ղարալին.

Աբա՛:

ՂԱՐԱ ներս է վազում.

Էստի՛ հմ, պարո՛ն,

Էստի՛:

ԳԵԳԵՉԿՈՐԻ

Կանչի՛ր նիստի՛:

ՂԱՐԱ դուրս.

505 Է՛ս սահաթիս, պարո՛ն:

Գեգեկորուն

Արդե՞ն...

Գեգեզյորի

Արդեն, աղա՛:

Հիմի,

510 էս սահաթից,

Տերություն հնք մի-ի...

Ես—Սաքարթվե՛լո,

Ի՞նչ—Ազրբայջա՛ն,

Դաշնակը...

ՌՓՁԻՔԱՇԵՎ մատների կոմբինացիա.

515 Բո՛ւ...

Գեգեզյորի

Էզուց...

ՌՓՁԻՔԱՇԵՎ

Յաշա՜ր՛ն Բաքու:

ԿԱՐՃԻՅԱՆ էս խոսքերի վրա՝ մտնում է արագ. հուզ-
ված:

Ի՞նչ կա էլի...

Գեգեզյորի

Ոչինչ: Նի՛ստ:

520 Նստեցե՛ք, պարո՛ն մինիստր:

ՔՈՓՁԻՐԱՇԻՆ

Դ՛ւր էլ:

ՔՈՓՁԻՐԱՇ *Կարճիկյանին. ինքնիրոն.*

Քիչ է ա՛նուժ. թքե՛:...

Նստում են:

ԳԵԳԵՉԿՈՐԻ

*Նիստը հայտարարում եմ բացված:
Առաջին հարց.*

525 Կապկուզի բաժա...

ԿԱՐՃԻԿՅԱՆ *վսեցա՛:*

Բաժա՞ ..

ԳԵԳԵՉԿՈՐԻ

...նումը:

ԿԱՐՃԻԿՅԱՆ *դողահար*

...նե՞մը...

ՔՈՓՁԻՐԱՇԵՎ

...նե՛մը:

ԳԵԳԵՉԿՈՐԻ *աբազ*

530 Ընդունո՞ւմ եք:

ՔՈՓՁԻՐԱՇ *աբազ*

Այո՛, դասավադին մինի՛ստը:

ԳԵԳԵՉԿՈՐԻ *Կարճիկյանին.*

Իսկ դո՞ւք:

ԿԱՐՃԻԿ. գլուխը կորցրած.

Ընկերներ...
էս... երա՞ղ է, թե նի՞ստ է:

535 էրզրում...

Կարս...

Բաթում...

Նեմեց...

Թուրք...

ԹՈՓՉԻՐԱՇ զգվանքով.

540 Դդո՛ւմ:

ԿԱՐՃԻԿՅԱՆ

Դդո՛ւմ...

Ընչի՞ դդում...

Ի՞նչ դդում...

ԳԵԳԵՉԿՈՐԻ

Ընկերներ,

545 էս սահաթից ես ինձ

Հայտարարում եմ Սաքարթվիլոյի

կառավարութուն:

ԹՈՓՉԻՐԱՇ

Ես—Ազրբեյջանի:

ԿԱՐՃԻԿՅԱՆ շվարած.

Իսկ ե՞ս...

ԳԵԳԵՉԿՈՐԻ

Ձեզ,

550 Պարոն Կարճիկ ուստա՛,

Մենւմ է հայտարարել ծովից-ծով

Հայաստան:

ԿԱՐՃԻԿՅԱՆ *ոգևորված*։

Հաստա՛տու։

Հայտարարում եմ ծովից-ծով Հայաստան։

ԳԵԳԵՋԿՈՐԻ

Ուրեմն, գա՛ումարջոս Սաքարթ...

ԹՈՓՁԻՐԱՇ

555 *Ազր...*

ԿԱՐՃԻԿՅԱՆ

Հայաս...

ՂԱՐԱ *բևեի եսեից*։

Յա՛շասըն Կապկազ։

ԳԵԳԵՋԿՈՐԻ

Ընկերնե՛ր,

նիստը հայտարարում եմ փակված։

*Դուրս։ Վազում են գազեթ ծախողները՝ հայ, թուրք,
ռուս*։

560 — *Գազե՛թ, գազե՛թ, գազեթ...*

— *Հորիզոն...*

— *Սա՛քարթվելո...*

— *Մշա՛կ...*

— *Թուրքերը հասել են Ղարաբախ...*

565 — *Բալլերիկները Գանձակ...*

— *Գերմանացիք շարդվել են*

Վերդենի տակին...

Վազում են դուրս։ Գալիս են նորերը։

— *Վեչե՛րնի, վեչե՛րնի, վեչե՛րնի...*

— *Լեհաստանի նոտան Զիչե՛րինին...*

- Ապստամբութիւնն Կարմիր Բանակում...
 570 — Բալշէիկները թողե՛լ են Բաքուն...
 — Բիշերախո՞ւ...
 — Համազու՛սպ...
 — Այո՛ւր...
 — Լիո՛ւր ա՛լլո՛ր ո՛ր...

Վազում են դուրս: Փալիս են նորերը:

- 575 — Սենսա՛ցիա,
 — Սենսա՛ցիա...
 — Սենսա՛ցիւ...
 — Պերեմիրի՛ն՝,
 — Պերեմիրի՛ն՝,
 580 — Պերեմիրի՛ն՝...
 — Ահարոնյանը գնում է Վերայ...
 — Քաջագնունին պրեմյեր...

Վազում են դուրս: Փալիս է. վազելով Ղարսն ձեռքին
 թուր:

ՂԱՐՍ Խփում է օդին աչքւ ձախ,

- Մե՛կ, երկո՛ւ,
 Իա՛զ, դվա՛,
 585 է՛րթի, օրի՛,
 Ա՛յն, ցվա՛յ,
 Ե՛ք, դո՛ւ,
 Рєжє,
 Վո՛ւր,
 590 Կտրի՛,
 Քցի՛,
 Տա՛ն,
 Տա՛ս,
 Տո՛ւր:

Կանգ առնելով խոռով.

595 Հետո՞...

Հասկանո՞ւմ եք՝
Չո՞րս տարի կովե՛ն՝
Հիմի եկել են թե —
Պեր-րե-միր-յե՛ն:

600 Ընչի՞.

Չունքի ուր առուտուր չունի Բեռլինի,
Փարիզի, Լոնդոնի. Նյու-Յորքի
դուքընչին:

Ամա թե Ռուսեթում տեսա՞ք. —

Մեկ, երկու, երեք —

Բուրժուազին թռավ ի վերին վերև:

605 Իսկ էստե՞ղ.

էստեղ էս պարոնները նստե

Համոզում են մեզ թե

Լսենց-ընենց,

Ռուսեթում հեղափոխությունը քնեց,

610 Լեռ էր մուկ ծնեց,

Մեռավ...

էս խոսքերի վրա

Քիչ է մնում գոռամ՝

Յաշասրն, Գեգեչկորի, ուռռա՞ւ,

615 էսպե՞ս էլ մասխարա—դուռա՞կ:

Չէ՛,

Քո՛ւռակ,

Կատարյա՛լ քուռակ.

էս էլ—ջեր քնքուշ ասած.

620 Իսկ թե ճիշտը կուզեք —

Ավազա՛կ,

Թամա՛մ ավադակ:

Ընչի՞.

Այ ասեմ՝ աշեք.

625 Մինչ հիմի ո՞վ էր էստեղ,—

Հաստափոր դուքընչին,

Գերմանացի սպան,

Ֆեսավոր փաշեն:

Իրենք վերը նստած,

630 Զեքներին կանֆետ ու փստա,

Ժողովրդին դղում —

Անունը դեմոկրատիկ հանրապետություն....

Լա՛վ:

Ինչ որ տեսանք—ջեր հեշ:

635 Գլխավորը առաջն է հալա:

էստեղ հեռախոսի զանգ: ՂԱՐԱՆ մոտենում է չարխին,
ձեռքը դնում է ականջին, իբր ուզում է խոսա. սկսում է
հազալ.

Ալո՛.

Ո՞րտեղից է:

Փարիզի՞ց...

Պոլսի՞ց...

640 Բաթումի՞ց...

Ի՞նչ...

Նորությո՞ւն...

Հեռախոսի տրուրկեն իբր նետում է ցած. գոռում է վա-
խեցած.

— Անգլիացիք մտեւ են Բաթո՞ւն տ՞ւմ...

ԿԱՐՃԻԿՅԱՆ էս գոռոցի վրա մտնում է արագ.

Ի՞նչ...

645 Ո՞վ...

Անգլիացի՞ն...:

ՊԱՐԱ

Այո՛, պ. մինիստր:

ԿԱՐՃԻՅԱՆ

Ո՞ւր է...

Շո՞ւտ կհասնի մէզ, թե՞...

ՊԱՐԱ վազելով դուրս.

650 Հիմի կզա էստեղ:

ԿԱՐՃԻՅԱՆ ուրախությունից գլուխկոնծի՝ երգում է,

— Վերջապես հա՛մ-սա ես իմ մուրազի՛ն...

Պարում է էս խոսքերի վրա. կանգնում է ոտքի. խոսում է ինքնիրան.

էսպե՛ս:

Անգլիացին:

Մեր հզոր,

655 Խելացի,

Դաշնակից-դրացին:

Ցույց կտա բոլորին:

Կթռչեն,

Կկորչեն —

660 Ռուսը,

Թուրքը,

Ազրբեյջանցին,

Կակուլի-վրացին:

էստեղ—ե՛ս կմնամ նստած,

665 Կե՛ր, խմի գինի ու փոտա,

Վերջապես, Կարճիկ ուստա՛,

Կունենաս Թիֆլիսից—Պոլիս ծովից-ծով

Հայաստան:

Ողորդե՛ր Վ.

Հա՛յ,

Հո՛ւ.

670 Ո՞վ կա էստեղ,

էլ ո՞վ:

Տա՛մ,

Զարկե՛մ,

Կրակե՛մ,

675 Թոցնե՛մ,

Ծովից-ծով Հայաստան ժնեմ—

Թռչելով,

Պարելով,

Օրգելով...

ԱՆԳԼԻԱՅԻՆ. մտնում է հանդիսա, կամացուկ: ՂԱՐԱՆ.
է՛՛ անգլիացի հագած: Չեռին կարդոնե մի ձու, խնձոր
կամ ներկած շաքար: Կարճիկյանին.

680 Ալո՞,

Մի՛ստր-նախագահ՝ հ...

ԿԱՐՃԻԱՅԱՆ

Ծ՛ս եմ, մի՛նիստր-գեհեբուլ:

Քարի՛ եկաք:

Հավ եկաք:

685 Ժամանակի՛ն եկաք:

Էնքան սպասեցինք՝ դարձանք ջարդած

կակալ..

ՂԱՐԱՆ-ԱՆԳԼ.

Գո՛ւղ: Գո՛ւղ:

Հասկանում եմ մե խոսքից հենց ձեր:

Է՞է՞է՞...

690 Ասացի՛ք, պ. Կարճեկյան,
Դուք...

Ինչքա՛ն ունեք —

Թոպի,

Թվանք,

695 Թվանքի պատրոն,

Թվանքի ձեթ:

ԿԱՐՃԻԿՑԱՆ

Ինչքա՛ն որ կուզեք, տե՛ղի:

ՂԱՐԱ-ԱՆԳԼ.

Գո՛ւղ: Գո՛ւղ:

Շա՛տ գեղեցիկ:

700 Էդ բոլորը դուք կտտը հալա —

Կքշենք բալշեիկի վրա —

Լա՛վ:—

ԿԱՐՃԻԿՑԱՆ ոգևորված.

Յ՛լն,

Ցա՛ն,

705 Ցի՛ն:

Շա՛տ գեղեցիկ.

Հենց է՛ս...

ՂԱՐԱ-ԱՆԳԼ.

Այո՛:

Առայժմ — էս:

710 Իսկ ձեզ, պ. մինիստր,

Մերոնք ուզում են ձեզ տան:

Միացյալ ու անկախ Հայաստան:

ԿԱՐՃԻԿՅԱՆ

715 Վրացի՞ն... .

ՂԱՐԱ-ԱՆԳԼ.

Դրան էլ կքշենք՝

ԿԱՐՃԻԿՅԱՆ

Ազրբեյջանը բա՞... .

ՂԱՐԱ-ԱՆԳԼ.

Նրա՛ն էլ:

ԿԱՐՃԻԿՅԱՆ գլուխկոնծի.

Տա՛շ-տա՛շ-տա՛շ.

720 էսպիսի բաներ:

էստեղ Գեգեկորին ու Թոփշիրաշը մտնում են արագ,
գալիս կանգնում են անգլիացու առաջ, հրհրում են՝
իրար.

ԳԵԳԵՉԿՈՐԻ

Նախ հ'ս...

ԹՈՓՉԻՐԱՇ

Նախ հ'ս...

ԳԵԳԵՉԿՈՐԻ

Մի՛ստր-գենեկոս... .

ԹՈՓՉԻՔԱՇ

Մի'ստը-գենեհրալ...

ԳԵԳԵՉԿՈՐԻ

725 Բարի' հ'կաք...

ԹՈՓՉԻՔԱՇ

Բարի' հ'կաք...

ԳԵԳԵՉԿՈՐԻ

Դուք տեղ ունեք, գենեհրա'լ...

ԹՈՓՉԻՔԱՇ

Դուք տեղ ունեք, գենեհրա'լ...

ԳԵԳԵՉԿՈՐԻ

Մեր սրտերի...

ԹՈՓՉԻՔԱՇ

730 Մեր գլխի...

ԳԵԳԵՉԿՈՐԻ

Մեր հոգու...

ԹՈՓՉԻՔԱՇ

Մեր աչքերի'...

ԳԵԳԵՉԿՈՐԻ

*Մեր ռեխի',
Մոռութի, երեսի...*

ԹՈՓՉԻՔԱՇ

*735 է',
Մեր փեղամբարի մորուսի' վրա...*

ԿԱՐՃԻԿՅԱՆ կանգնել է մե գի, խորումանկ ժպտում է,
ոնց որ մի բան գիտի, ոնց որ խղճում է գրանց, մեռ-
նում է ամոթից.

Սրա'նց մի մտիկ,
Սրա'նց.

Քիչ է մնում սողան փորոտիքի վրա'...

740 Որ ի՞նչ.

Բո'լորիդ էլ քշելու ենք.

Բո'լո'րիդ:

ՂԱՐԱ-ԱՆՂԼ.

Ը'սսս:

Սո'ւս:

745 Ըզգացված եմ:

Ելե'ք:

Նս

Ձեզ

Հա'վ իմացե'ք

750 Հաշտություն եմ բերե.

Դրա համար սակայն

Դուք պիտի տաք —

Թոփ, թվանք, թվանքի պլաստոն,

Մե խոսքով՝ ինչ Դր կա, միացել է հալա,

ունեք—պետական, հնուց, ուսական:

755 Հասկացա'ք:

Պիտի տաք,

Ինչ որ թողել են հալա՝ գերմանացին ու

փաշեն.

Ընչի'.

Որ աշխարքի ոեխից բալշևիկին քշենք:

Բուրբ մեքերան.

760 Յաշասը՛ւ,
Գա՛ումարջոս,
Կեցցե՛ս:

ՂԱՐԱ-ԱՆՔԼ

Իսկ ձեզ,
Պ. մինիստրներ,
765 էս—(ցույց է տալիս ձեռի ձուն)
Ով որ ձեզնից խլեց —
Նա կլի Կապկազի միահեծ:
Արա բռնե՛ք:

Ինքնիրեն.

Հե՛նց որ իրանք կռվին
770 Ես
Ինչ որ կա-չկա էստեղ —
Կհանեմ էն անուշ դռնեն...

Նետում է ձուն դրանց. դրանք հասնում գզգզում են
իրար:

ՂԱՐԱ ել՛ում կանգնում է տակառի վրա. խոսում է
ինքնիրեն.

Վայրենիներ՛ր:
Ցեղե՛ր:

775 Եվ էսպես հե՛շտ է մի թե ձեր գլուխը եղել...
Հիմի կուտեն իրար՝
Հալը թուրքին,
Թուրքը հային,
Հալը վրացուն,
780 Վրացին ետ նորից թուրքին —

է՛սպես էլ խելս ցի՛ երկի՛ր.

է՛սպես էլ դրկից...

Օ, երկի՛ր, երկի՛ր...

Կանչի՛ր,

785 Գլխին տո՛ւր,

Առ կեր...

Ա՛յ քեզ բարքեր...

Օ տե՛մպորա, օ մո՛ռես,

Օ Զանգեզուր, օ Գո՛րիս...

Էս խոսքերից հետո ՂԱՐԱՆ դեմքի դիմադր դեն է գցում փութով. ետ նորից դառնում է ՂԱՐԱ, երգում է մաս խարա.

790 Այ դարագյո՛ղ, դա՛րագյող,

Վա՛յ մռութիդ, դա՛րագյող,

Սրանց մտի՛կ, դա՛րագյող,

Զեռաց գտի՛, դա՛րագյող:

Թռչում է ցած. ձեռաց գլուխներին տալով բաժանում է դրանց. ետ նորից ձեռնում է հաշտարար գեներալ.

Մե՛կ, երկո՛ւ, երե՛ք:

795 Պատ-բա՛ստ:

Երեքը մերերան.

Մենք—մի՛շտ—պատրաստ,

Տե՛ր—գեներալ:

ՂԱՐԱ

Շագոմ—ա՛յլ:

Ինքը բնկնում է առաջ, Դրանք—հետևում են նրան: Ել-
նում են դուրս: Սուս: Բեմը դատարկ է, բան չկա:

Զարիս Սև է, դեղին է, կապույտ, դառնում է ալաճա:
ՂԱՐԱՆ հտ գալիս կանգնում է ժողովրդի առաջ.

ՂԱՐԱ

Բա՛ս:

800 Տեսա՞ք սրանց կերած կարագը:
Ինչքան էլ հաստ մանեմ սրանց՝

Կասեն բարակ է:

Ընչի՞.

Սրանց կարող է սաստի բալշեկի ղամչին:

805 Կամ չէ՝

Սրանց մեկ-մեկ կանչես,

Իհիսներին խնչես,

Ասես՝ տերությունը թան չէ,

Ամեն ավազակի բան չէ.

810 Բա՛ս:

Սրա՛նց մի մտիկ հարա —

Ինքը վազում է դուրս: Դրսից—աղմուկ, տրաք-տրաքոց,
ուռաւ, լցվում են ԶԻՆՎԻՌՆԵՐԸ բեմի ետեի կողմից՝
հայ, վրացի, թուրք,—հռչոտում են իրար: Ամեն ազգի
զինվորի ետեից գողեգող դրանց մեծերը՝ քշում են
դրանց առաջ, քշում են իրար վրա, սիրտ են տալիս.

«Յաշասըն»

«Գառամարչոս»

«Ուռոս»:

815 — Տո՛ւր:

— Վո՛ւր:

— Զա՛ն:

— Շե՛նի:

— Զվենի՛:

820 «Գառամարչոս Սաքարթվի՛լոս»

«Յաշասըն Ադրբեյջան»

«ԱՄԷ՝—բ—հայրե—նի՛ք»...

էս հարայ՝ րոցում մի կողմից ծակից երևում է ունիսը
անգլիացու, կամ, կուզեր, խտաւցու, ամերիկացուն՝ մեկ
է. մենակ թե խաղալիս ունիսը դեղին ներկեք: Նայում է
ուրախ-ուրախ, ձեռքերը քսում է իրար. կնյազը, տեր-
տերը, մեկիքը, շարշին, վարժապետը շրջապատել են
նրան, նայում են հարայ՝ րոցին, ուրախ են, շատ են
ուրախ, ուտում են, լճում են արալ. բեմի վրա—աղ-
մուկ, հարայ՝ րոց, թոփ, թվանք, թուր, կրակոց ու կրակ:

էս ժամանակ բեմը ԲԱՆՎՈՐՆԵՐՈՎ լցվում է պրագա:
Գալիս խոտնվում են կուվոզներին, համոզում են դրանց-

— Խի՞ եք կուվո՞ւմ:

— Ընչի՞:

Յույց տալով մեկնում եկին:

825 — Տո՛ւ, տո՛ւր դրա ղնչին...

— Ո՞ւմ համար եք կուվում...

— Չարչո՞ւ—մեկիքի՞—աղի՞...

ԶԻՆՎՈՐՆԵՐ

— Լսե՛ք, լսե՛ք տղին,

— Տվե՛ք Գեգեչկոյու ունիսին...

830 — Կարճիկյանի քթին.

— Մուսավաթի միլիթին:

ՄԻ ԲԱՆՎՈՐ ԲԱՆՇԵՎԻԿ

— Ընկերներ՛ր,

— Ինտերնացիոնալ երլի՞...

(Սկսում է)

— Տվե՛ք, տվե՛ք դրանց...

835 Կորչի՛ն...

— Դալո՞յ...

— Դալո՞յ...

Քեմից քշում են դրանց՝ մոռութենքին տալով. բեմը
չցվում է ժողովրդով:

Դրոշակներ, Պլակատներ, Լենինի, Մարքսի նկարներ

ՂԱՐԱՆ գալիս է բեմ. պատիճ-պատ քաշում է պլակատ՝
Ֆոնը սե, տառերը—կարմիր—

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵՔ

էս ժամանակ ահա շարիք դառնում է էլ ավելի արագ.
Փայլում է, ոնց որ ալ կրակ վառվի—դառնում է—ԿԱՍ-
ԿԱՐՄԻՐ

ՂԱՐԱ թռչում նստում է շարիքի վրա. գեպի ետ հանում
է լեզուն. հետո ճառ է ասում.

— ԸՆԿԵՐՆԻՐ,

Տեսա՞ք Կապկազի թամաշեն.

Տ40 Ես կուզեի միայն, որ ոչ թե մենակ աչքերով,

Այլ խելքով է՛լ աշեք —

Ու էն լրբերի կերած թանապույր հիշեք:

Ընկերեն՝ր.

էս ե՛ս եմ գրե ձեզ համար,

Տ45 Աջողել եմ կամ շա՛տ, կամ քի՛չ:

Ոչինչ:

Բավական է ինչքան ձեզ խաղան —

Անտիգոնե,

Նամուս,

Տ50 Օթելլո,

Քին:

Քիչ էլ թող մեր խալիքը նայե

Դաշնակի ջարդած քթին,

Մենշևիկի մրոտած խելքին,

Տ55 Մուսավաթի միրքին:

Բավական է թառուռնը պետական

Օթելլոներ ծրի.

Տեսա՞ք մեր խոխեքը դրանց
Ո՞նց թոցրին...

860 Ընկերներ՝

Աջողած էր, թե չէ էս թամաշեն —
Մե՛կ է.

Բանն էն է որ բռնենք մեր թշնամու բկեն,
Հասկացա՞ք,

865 աջա՞ք,

աք,

քը, —

Հիմի ո՞ւր են դրանք —
Մկի ծԱԿԸ...

870 էլ չկան:

Մտե՛լ են ծա՛ղը մկան:

էլ յո՛խտուր:

Ա՛րարիս:

Нету.

875 Փա՛ս.

Բա՞ս.

Յ Ա Շ Ա Ս Ը Ն Կ Ա Պ Կ Ա Զ...

էստեղ ՂԱՐԱՆ չաբխից թռչում՝ կանգնում է ժողովրդի՝
առաջ. գոռում է—

Ի Ն Տ Ե Ր Ն Ա Յ Ի Ո Ն Ա՛ Լ...

Բեմը և ժողովուրդը երգում են միասին.—

— Ելի՛ր, ում կյանքը անիծե՛լ է,

Ով ճորտ է, մերկ է և ստրուկ:

Արդեն վառվում են մեր սրտերը,

Արդեն կռվի ենք մենք ձգտում:

5 Այս հին աշխարհը կփորենք մենք.

Մինչև հիմքերը— և հետո

Մեր նոր աշխարհը կշինե՛նք մենք,,

Ուր ոչ ստրուկ կա, ոչ դժգոհ:


Սա՛ է վերջին կոիվը
10 Եվ պայքարը մեր մեծ:
Ինտերնացիոնալը
Աշխարհը կփրկե:

Ոչ-ո՛ք չի տա՛ մեր փրկությունը,
Ո՛չ խենթ հերոսը, ոչ արքա՛ն.
15 Մենք պետք է մեր ազատությունը
Կռենք ձեռքով մեր սեփական:
Որպեսզի շուտ փշրենք մեր լուծը
Եվ ետ խլենք ողջ հողը մեր —
Խփե՛նք մուրճերը, տանք մեր ուժը,
20 Քանի երկաթը տաք է դեռ:

Սա՛ է...

Նոկ մե՛նք, ճորտեր ու բանվորներս,
Ունենք անխախտ մի իրավունք
Ասել, որ հողը մե՛րն է, մե՛րն է—
25 Կորչի՛ հարուստը թող տղրուկ:
Եվ երբ պայթի մեծ փոթորիկը
Եվ կուշտ շները չքանան,
Նորից երկիրը և երկինքը
Մերն են՝ ու մերը կմնան:

30 Սա՛ է վերջին կոիվը
Եվ պայքարը մեր մեծ:
Ինտերնացիոնալը
Աշխարհը կփրկե:



(Կինո-ֆեյլետոն)

Անցքը պատահում է էսօր:
Ասելով էսօր՝
Խնդրում ենք հասկանալ՝ էս տարի:
Այսինքն՝ Հոկտեմբերյան հեղափոխության 6-րդ տարին:
էսքան:
Հիմի—
Անցնենք կինոպոեմին:

ՄՆՈՈՒԴԵՆ ԱՄՈՒՍԻՆՆԵՐ

ԿԱՄ

ԻՆՔՆԻՐԵՆ ԿՈՆՈՒՆԻՋՄ

Կինոպոեմ երեք մասից պրոլոգով և էպիլոգով:

Лондон, 17 июля (Роста). Вчера в палате общин возобновились дебаты по резолюции Сноудена, предлагающей замену капиталистического строя строем, основанным на отмене частной собственности. В результате прений резолюция Сноудена была отклонена большинством 362 против 121 голосов.

«Известия В. Ц. И. К.» № 160 (1897).

ԳԼԽԱՎՈՐ ԱՆՁԻՆՔ

Միսիս Սնոուդեն

Միստր Սնոուդեն

Ոչիլը

Միստր Մակդոնալդ

Գործողություն տեղը—Անգլիա—

P. C. Φ. C. P.

Ոչիլի դերը կատարում է
Չուլի Չապլինը (Շաբլոն)

ՊՐՈԼՈԳ

ՄԻՍՏՐ ՍՆՈՈՒԴԵՆԻ ԱԲԱՎՈՏԸ

Ննջարան:

Մահճակալ:

Միստր Սնոուդենը ննջում է:

Աղախինը ներս:

Ըստ...

Դուրս:

Միստր Սնոուդենն արթնանում է:

Սեղմում է կողքի կնոպկան—

Թռչում է գրասենյանից «Թւյմսը»:

Միստր Սնուդենը կարդում է,
Դեն է նետում:
Թռչում ք բուֆետից օփսեն:
Վրան՝ ձու,
Պանիր,
Կարագ,
Շոկոլադ,
Սիր:
Միստր Սնուդենը բանում է բերանը,
Բաժակը սահում է.
Շոկոլադը խմվում է:
Բուտերբրոդը վեճ.
Ինքնիրեն ուսվում է:
Խավական է:
Ափսեն թռչում է բուֆետը:
Միստր Սնուդենը բարձրանում է:
Թռչում է վարտիկը —
Ինքնիրեն լազնվում է:
Շապիկը:
Նույնպես:
Լվացարանը դեպի նա:
Սապոնը — երեսին:
Ածելին ինքնիրեն ածիլում է:
Համբուրում է պուդրան,
Պովվերիզատորը ծիծաղում է:
Սանրը սանրում է:
Պատրաստ է:
Թռչում է ֆրակը,
Մտնում է թեքը —
Հազնվում է:
Խոզանակը մաքրում է փոշին:
Հուշիկ —

Մտնում է միսիս Սնոուդները:
 Ոնց որ փերի:
 Սնոուդեն ամուսիններն համբուրվում են:
 Երկուսն էլ առողջ են:
 Գոհ են:
 Հավ են քնել:
 Կրկին համբույր:
 Միստր Սնոուդները—դուրս:
 Հիֆտ:
 Ավտո:
 Լոնդոն:
 Հայդ-Պարկ,
 Սիտի:
 Թեմզա:
 Պալա:
 Ամեն տեսակ բաներ:
 Միստր Սնոուդները գնում է պարլամենտ:

ՄԱՍ ԱՌԱՋԻՆ

ՄԻՍԻՍ ՍՆՈՈՒԴԵՆ ԵՎ ՄԻՍՏՐ
 ՄԱԿԴՈՆԱԼԻ

Բուզուլար:
 Միսիս Սնոուդները:
 Մեկնվել է փափկաթողին:
 Ոտքերի մոտ—դոգ:
 Գրկին—կատու:
 Երազում է:
 Աղախինը:
 Նամակ:
 Կոնվերտը դեն:

Արագ:
Կարգում է.

Թանկագին մխիս,

Հինգշաբթի երեկս գործազուրկների օգտին կայու-
նալու է շքեղ պարահանդես: Ներկա կլինի Լոնդոնի ամ-
բողջ և սոցիալիստական բոմոնդը: Կանցնեմ ձեր և-
տեղից:

Համբուրում եմ:

Ձեր՝ Մ.

ՊԱՐԱՀԱՆԳԵՍԸ

Շոգ:

Շեք:

Բլճակ (Խմբ.)

Լոնդոնի սոցիալիստական բոմոնդը:

Սնոուդեն ամուսինները:

Մակդոնալդը:

Աուշարկում է թևը:

Ախ —

Ուխ —

Օխ —

Միսիս Սնոուդենն ընդունում է:

ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԷԿՎՈԿ

Միսիս Սնոուդենը և միստր Մակդոնալդը
պարում են:

Հարևան ֆոյեն:

Միսիս Սնոուդենը և միստր Մակդոնալդը
մտնում են թեմայից:

Համբուր:

Գրկախառնում:

Դուրս:
 Ավտո:
 Ավտոյի ներսը:
 Սոցիալիստ սիրահարներն օրորվում են:
 Համբույր:
 Քրկախառնում:
 Փողոց:
 Ավտոն թռչում է:
 Միստր Մակդոնալդի պալատը:
 Լիֆտ:
 Լակեյ:
 Կարիներ:
 Ննջարան:
 Միսիս Սնոուդենը քնքուշ դիմադրում է:
 Միստր Մակդոնալդը՝ շոքած:
 Համբույր:
 Գրկախառնում:
 Մահճակալ:
 Մշուշ:
 Մնացածը—մշուշում:
 Հնդունված չէ:
 Ամոթ է:

ՀԱՋՈՐԻ ԱՐԱՎՈՏԸ

Միսիս Սնոուդենի ննջարանը:
 Միստր Սնոուդենը:
 Հարցապնդում:
 Միսիսը թռչում է անկողնից:
 Ոտիկը պարկետին՝
 — Դո՛ւրս:
 Հեկեկում է:

Միստր Սնոուդենը շոքում է:
Միսիսը մեկնում է մի մատը —
Միստրը համբուրում է:
Հայացք՝ իրար:
Ժպիտ:
Համբույր:
Գրկախառնումն:
Հաշտություն:
Շոյվում են, ոնց որ մի զույգ կատու

ԵՐԿՈՒ ԱՄԻՍ ՀԵՏՈ

Միստր Մակդոնալդի կաբինետը:
Միստր Մակդոնալդը:
Հակեյը ներս:
Նամակ:

Հոգյակս,

Ես ճետաբերի՜ր դրության մեջ եմ... ես կորած եմ...
Միստր Սնոուդենը կարող է իմանալ... Ախ, այն երե-
վոն... Ի՞նչ կասի Լոնդոնի սոցիալիստական կարծիքը...
Փրկի՛ր... Սպասում եմ այս երեկո: Շո՛ւտ, շո՛ւտ, շո՛ւտ...

Քո՛՛ Ս.

Միստր Մակդոնալդի կաբինետը:
Միստր Մակդոնալդը:
Նամակը նետում է գետին:
Քայլում է պատեպատ:
Պոկում է մազերը:
Աչքերը:
Վախ:
Սարսափ:

Շփոթ:
Հակելը ներս:
Նամակ:

Ամենահարգելի միստր,

Մի շաբաթից, ինչպես գիտեք, մեկնում ենք Սով-
դեպիա: Անարխիայի երկիրը: Չմոռանաք հրահանգ-
ները: Երեկոյան ձեզ մոտ կանցնենք:

Ձեր՝ (ստորագրություններ):

Միստր Մակդոնալդի կաբինետը:

Թաղվել է թիկնաթոռում:

Կանգնում է:

Նստում:

Կանգնում:

Ճմլում է նամակը:

Մատները մազերին:

Աչքերը:

Աչքերում—հարցական:

Սարսափ:

Տեղատվություն:

Ա՛...

Գտավ:

Գրում է:

Հակել:

Նամակը նրան:

Միսիս Սնուդենի ննջարանը:

Աղախինը ներս:

Նամակ:

Թանկագին միսիս,

Իզուր եք խուճապի ենթարկվում: Ես ձեզ համար-
ամեն ինչ կանեմ: Բացատրություններն հետո: Իսկ

առայժմ—ուզո՞ւմ եք ճանապարհորդել Սովդեպիա...
ճանապարհին—ուբորտ։ Հետո—բալշևիկներ, լենին
...ա՞...ցը։

Զեր՝ Մ.

Միսիս Սնոուդենի ննջարանը։
Գիշեր։
Կիսամշուշ։
Լուսնի լույսը պատին։
Միստր Սնոուդենը—նրս։
Մոտենում է մահճակալին։
Համբուրում է։
Միսիս Սնոուդենն արթնանում է։
Զեռքով ծածկում է բերանը՝
— Զի՛ կարելի։
Միստր Սնոուդենը շոքում է։
Աղաչում է։
Միսիս Սնոուդենի աչքերը։
Աչքերում՝ «ցիպկա՛, ցիպկա՛,
Յի՛ պո՛ղկա, գնա՛ ա՛մ Ռուսաստան...
էլ չեմ սիրի։
Ա՛յ...»։
Միստր Սնոուդենի աչքերը։
Աչքերում՝ «ես ձեզ սիրո՞ւմ եմ...
Այնտեղ ա-նա՛ր-իս է...
Հոգյակս,
Կկորչեք...»։
Միսիս Սնոուդենի աչքերը՝
— Զէ՛։
Քնքուշ հայացք իրար։
Համբույր։
Գրկախառնում։

Միստր Մնուղենը համաձայն է:
Մշուշ:
Հնտանեկան բաներ:

ԴեՊԻ Ք. Շ. Փ. Շ. Ք.

Հոնդոն:
Կայարան:
Էքսպրեսս:
Կուպե:
Մնուղեն ամուսիններն համբուրվում են:
Մակդոնալդը:
Համբուրում է ձեռքը:
Դուբս:
Էքսպրեսսը թռչում է:
Դուվր:
Շոգենավ:
Համանշ:
Շոգենավն օրորվում,
Հեռանում է:
Հեռու է:
Երևում է հազիվ:

Վերջ առաջին մասի

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

ՄԻՍԻՍ ՍՆՈՈՒԴԵՆԸ ՔՇՓՇՔ-ՈՒՄ
ԿԱՄ
ՋԱՐԱՐԱՍՏԻԿ ՈՋԻԼԸ

Ք. Շ. Փ. Շ. Ք.

Դաշտեր:
Դաշտեր:
Դաշտեր:

Սովզեւայք:
 Գնացքը սողում է:
 Ներսը:
 Պրոլետկուպե:
 Զոր:
 Տախտակ:
 Միսիս Սնոուդենը:
 Վլին-բոա:
 Փաթաթվել է:
 Մրսում է:
 Յուրտ է:
 Դուրսը:
 Գնացքը սողում է:
 Զյուն:
 Բուք:
 Քամի:
 Զմեռ:
 Լ. Շ. Փ. Շ. Ք.
 Ներսը:
 Միստր Սնոուդենը նիրհում է:
 Միսիս Սնոուդենի բռան:
 Վրայից սողում է ոչիլը:

Ո Ջ Ի Լ Ը

Սողում է:
 Սողում է:
 Սողում է:
 Բարձրանում է դեպի վիզը:
 Հասավ:
 Ուզում է վիզը մտնի:
 Կուպե:

Միսիս Սնոուդենը վեր է թռչում:
 Մատը վզին—
 Բռնում է.
 Տեսավ:
 Վեր թռավ:
 Կանգնեց:
 Աչքերը չիռ,
 Նետում է ոջիլը —
 Ոջիլը հտ նորից դեպի մատը:
 Նետում է—
 Ետ նորից դեպի մատը:
 Սեղմում է մատով ոջիլը—
 Ոջիլը մեծանում է:
 Վազում է կուպեով:
 Ետևից— ուղեկիցները:
 Կոնդուկտոր. կոնչուկտոր.
 Կոն-դուկ-տոր.
 Միսիս Սնոուդենը խելագարվում է.
 Վագոնից-վագոն,
 Հասնում է շոգեկառքին—
 Ոջիլը դեռ ձեռին է:
 Նետեց հնոցը—
 Ոջիլը դեպի հտ,
 Թռչում է դեպի միսիս Սնոուդենը:
 Փախչում է:
 Ոջիլը ետևից:
 Վագոնից վագոն,
 Կուպեից կուպե,
 Վերև,
 Ներքև
 Հեխհե, հե,
 Հևում է:

Նորից շոգեկառքը՝
 Նետում է դեպի բոցը—
 Զի օգնում.
 Ոչիլը նրան հետևում է,
 Օգնեցեք. օգնեցեք. օգնեցեք,
 Նուռ են:
 Ամենքը իր գործին:
 Մարդիկ,
 Կանայք,
 Կոմիսարներ,
 Զինվորներ—
 Ոնց որ շեն նկատում.
 Հանգիստ են.
 Կամ կարդում,
 Կամ խոսում,
 Կամ լսում են:
 Ետ—
 Նորից դեպի կուպե:
 Պատեպատ.
 Զարհուրած.
 Խելագարված.
 Ցնցված —
 Աչքերը դեպի ետ —
 Աչքերով չի նայում—հետում է.
 Ոչիլը նրան հետևում է.
 Հասնում է ետևից —
 Մեծացել է.
 Հրեշ է:
 Է՛յ՝
 Փրկեցեք, փրկեցեք, փրկեցեք:
 Հասավ —
 Կրճնի՛, կրճնի՛, կրճնի՛ —

Դեպի դուռը.
 — Աստված:—
 Գնացրը կանգնեց:
 Դուրսն է:
 Կայարան:
 Մոսկվա:
 Զորք:
 Զինվոր:
 Լիքը:
 Դրոշներ,
 Պլակատներ,
 Դրոշներ:
 Միտինգ է:
 Վազում է ամբոխում:
 Արդեն ջուր է կտրել:
 Ոնց որ շոգ է:
 Ծտեից—պլակատներ.
 «Կեցցե՛ սովետական իշխանությունը».
 «Դալոյ Դենիկինը».
 «Կոլշակը»:
 Փողոց:
 Ավտո:
 Նստում է մեջը:
 Դեռ էլի—հեռում է:
 Նայում է դեպի ետ.—
 Ոչիլը թռչում է ետեից,
 Ոչիլը նրան հետևում է:
 Կրեմլ:
 Իլյիչի կաբինետը:
 Միսիս Սնոուդենը—ներս:
 Ոչիլը—ետեից:
 Միսիս Սնոուդենը սարսափահար է:

Իլլիշը հանգիստ է՝
Նստում է՝
Ցույց է տալիս ոջիլը՝
Իլլիշը ծիծաղում է.
Իլլիշը—մատը հեռուն,
Մշուշ,
Զէ'.
Ոնց որ ուրազան է՝
— Ուրվակա՛ն է թափառում
Նվրոպայում —

ԿՈՄՈՒՆԻՉՄԻ ՈՒՐՎԱԿԱՆԸ

Նվրոպա՝
Քալտեզը—վերից՝
Ֆրանսիա,
Անգլիա,
Գերմանիա,
Ավստրիա —
Ողջը ալ է՝
Վրայից—ուրվականը՝
Բանվոր.
Հեծել է դրոշին.
Դրոշին՝

Կեցցե

ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ
ԻՆՏԵՐՆԱԳԻՈՆԱԼԸ

Միսիս Սնոուդենի ուղեղը՝
Ուղեղում—թուշում է ոջիլը՝
Ֆրանսիա,
Անգլիա,

Հոնդոն.

Միսիս Սնոուդենի ննջարանը,

Ինքը քնած:

Ողիւը բարձրանում է —

Բարձին է:

Ելնում է իր Վզին:

Սողում է դեպի իր շրթունքները —

Ուզում է քիթը մտնի —

Ախ: —

Իլյիշի կաթինետը:

Միսիս Սնոուդենը թռչում է աթոռից:

Վազում է.

Փախչում է.

Չկա:

Լուբյանկա:

В. Կ. К.

Միսիս Սնոուդենը. — ներս, —

Ողիւը ետևից:

Հնկեր Ձերժինսկին:

Ցույց է տալիս մատով:

Աչքերով աղաչում է.

— Ձալպ տվեք — էջ. —

Ձերժինսկու աչքերը.

Աչքերում — հարցակսն.

— Ողիւ,

— Ճիշտ է.

Դենիկին,

Կուլակ,

Յուդենիչ,

Սկորոպոսկի --

Ո՞րը թվես...

Դուրս:

Ոչիլը ետեից:
Աստուծոնկա:
Նարկոմպրոս:
Ընկ. Լունաշարսկու կաթինետը:
Միսիս Սնոուդենը—հերս:
Փրկեցեք. փրկեցեք. փրկեցեք.
Գոնե դուք,
Միսսր Լունաշարսկի.
Խնայեցեք Դանտեն.
Շեքսպիրը.
Միսիս Սնոուդենը մատը դեպի դուռը.
Ընկ. Լունաշարսկին, իհարկե, տեսնում է:
Վերցնում է միսիս Սնոուդենի բլոկնոտը:
Գրում է.

Հիշատակ միսիս Սնոուդենին

ԴԻԿՏԱՏՈՒՐԱ

(Սոնետ)

Օ, Մի'սիս Սնոուդեն, օ, հրեշտակ,
Ձեզ սարսափեցնում է մեր ոչիլը:
Քայց, հասկանում եք—HJH—HJH
Կամ կոմունիզմ, կամ շղթա:

Մենք կհաղթենք. օ, այն ժամանակ
Դուք կտեսնեք մեր ոսկեդուրը:
Մեր դատը սուրբ է և արդար է:
Մեր գործը մի'շտ, մի'շտ կմնա:

Օ, մեծ ոգի դու, քնքուշ փերի.
Այն, ինչ տգեղ է ու արատ է—
Հավետ մնալու է էս ափերին:

Ո. հաղթելու է պրոլետարիատը.
Ի՞նչ նոր Շեքսպիր ու Դանտեն
Գրան. չգն' նոր կանաեմիր...

Բնկ. Լոճնաշարսկու կաբինետը:
 Միսիս Սնոուդենը սարսափահար է:
 Դուրս:
 Նտեկից ոչիլը:
 Ոչիլը — արդեն թևավոր է.
 Պեզաս է.
 Հասավ,
 Բռնեց,
 Նստեցրեց մեջքին —
 Դեպի բացը.
 Ջոնն:
 Բուք:
 Քամի:
 Չմեռ:
 P. C. Փ. C. P.
 Ներքևում — Ուկրա՛յնան,
 Ադեսը.
 Ոչիլը վար.
 Ա՜ —
 Ծանոթներ են...
 Ֆրանսիացիներ:
 Կհասնի,
 Կգգվի,
 է՛ս է,
 է՛ս է,
 է՛ս է —
 Բրախիլ. —
 Թոփ,
 Թունդ,
 Թնդանոթ,
 Բալշևիկներ,
 Եկան,

Կրակում են,
Ա՛հ,
Օդ-նե-ցեք. —
Բարբարոսներ.
Նրա՞նց —
Սպանե՞րին —
Մո՞վը...
Միսիս Սնոուդենը սարսափից յինով է,
Ոչիլը թռչում է,
Արխանգելսկի,
Բանակի,
Հազարավոր խոսակցություն,
— Ա, մերոնք են.
Նորից բալշեխիկներ,
Թուփ,
Թունդ,
Թնդանոթ —
Ախ.
Թոցրին —
Փախչում են,
Չկան —
Սարսափ է ընդհանուր,
Ք. Շ. Փ. Շ. Ք.
Ոչիլը թռչում է,
Միսիս Սնոուդենը վրան,
Փարվել է վզին —
Ոչիլը ոնց որ դե է,
Ջյուն,
Բուք,
Քամի է,
Ուրագան,
— Մնացին կտիլ:

Ահա սահմանն անցան։
 Ահա իջան։
 Զառանցանք էր—
 Չկա։
 Ռիզա։
 Էքսպրեսս։
 Կուպե։
 Միսիս Սնոուդենը։
 Դեմը —
 Գերմանիա,
 Ֆրանսիա,
 Պադեկալե,
 Համանշ,
 Դուվր, .
 Լոնլոն —
 Ավտո,
 Լիֆտ,
 Բնակարանը,
 Ննջարանը...
 Մշուշ։

ՆՈՐԻՑ ՏԱՆԸ՝

Միսիս Սնոուդենի, ննջարանը։
 Միսիսը ներս։
 — Ահ,—
 Միստր Սնոուդենը։
 Գրկախառնում։
 Համբույր։
 Միստր Մակդոնալդը։
 Հայացքը նման է երազի։
 Վերջ երկրորդ մասի։

ՄԱՍ ԵՐՐՈՐԴ

ԻՆՔՆԻՐԵՆ ԿՈՄՈՒՆԻՉՄ

Միսիս Սնոուդենի ննջարանը:
Միսիսն հիվանդ է:
Քլուկսը բարձին:
Քնած է:
Գլուկսը—բարձից վար.

ՋԱՌԱՆՔԱՆՔԸ

Լ. Շ. Փ. Շ. Ք.
Կոմունիզմի ուրվականը:
Ոչիլ:
Սողում է դեպի ինքը:
Բարձրանում է բարձին:
Եռտենում է վզին:
Այտերին:
Շրթերին:
Մտնում է բերանը...

Տ Ա Ն Ն է...

Ա՛,
Արթնանում է:
Ճշում է:
Փախչում է անկողնից:
Միստր Սնոուդենը—նեղու:
Աղախին:
Լակեյ:
Ցույց է տալիս բարձր:
Բարձին ոչինչ չկա:
Հանգստանում է:

Պառկում է:

Միստր Սնոուդենը մնում է մոտը:

Մշուշ:

ՀԱՋՈՐԴ ԱՌԱՎՈՏԸ

Միստր Մակդոնալդի կաբինետը:

Միստր Մակդոնալդը:

Թերթ է կարդում:

Հակեյը ներս:

Նամակ:

Հոգյակ:

Ես հիվանդ եմ... ես խելագարվում եմ... ինձ հետապնդում է բալշեխիկյան ոչիլը... Կոմունիզմի ուրվականը... Այն ամենից հետո, որ աս ձեզ պաուզմենցի, միայն ասուշները կարող են կողմնակից լինել դասակարգային կռիվին... Այդ բանի առաջն լսոնելու համար ես մի հանճարեղ միտք հղացա... բայց լավ կլինի, եթե դու հայտնես միստր Սնոուդենին... Ա՛յ թե բանն ինչումն է... Համոզեցե՛ք միստր Սնոուդենին, որ նա վաղնեկեթ առաջարկ մտցնի պարլամենտ—Անգլիայում կոմունիստական կարգեր ստեղծելու մասին... Քանի ուշ չէ, քանի դեռ չի եկել Մեծ Ոչիլը, թող Անգլիայում կոմունիզմ մտցվի... միայն թե պարլամենտը մնա: Բազավորն էլ թող մնա: Հնդկաստանն էլ: Ի՞նչ պիտի անի մեր ամայի կղզին առանց Հնդկաստանի... Եվ միստր Սնոուդենը—առանց պարլամենտի... Հասկանո՞ւմ եք՝ միայն թե անպայման, անպայման, կրճատենք ինի... Չայնեթի մեծամասնություն—և վերջ... Թող վաղնեկեթ մտցվի: Սպասում եմ քեզ:

Քո՛ Ս.

Միստր Մակդոնալդի կարիները:
Նամակը ձեռին:

Համբուրում է:

Ոտքի:

Ոգեորված է:

Մոտենում է հեռախոսին:

Մշուշ:

Ծրկու լուսավոր շրջանակ

Մեկի մեջ—միստր Մակդոնալդը,

Մյուսում—միստր Սնոուդենը:

Երկուսն էլ հեռախոսի առաջ:

Նրանց միացնում է թելը:

Թելը ոնց որ հոսում է:

Խոսում են:

Գլխով են անում:

Ա՜.

Միստր Մակդոնալդը բղավում է:

Ա՜

Միստր Սնոուդենը ցնցում է գլուխը:

Զարմանում է.

Չի հասկանում.

Ա՜...

Հասկացավ:

Էլի:

Էլի:

Էլի:

Մշուշ:

Միսիս Սնոուդենի ննջարանը:

Միստր Սնոուդենը—ներս:

Գրկում է:

Համբուրում:

Աչքերը,

Քիթը,
Ճակատը:
Միսիս Սնոուդենի աչքերը:
— Կանեփ, հոգյակս...
Միստր Սնոուդենի աչքերը,
— Այսօրենք:

ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՊԱՆԱՏԸ

Անգլիական պարլամենտը:
Ներքեի պալատը:
Վիճակախաղ:
Միստր Սնոուդենը:
Հանում է վիճակը:
Մոտենում է ամբիոնին:
Մտցնում է առաջնորդը:

Ա Ռ Ա Ջ Ա Ր Կ

Առաջարկում եմ մտցնել կոմունիդա:
Եթե ոչ—սպառնում է ոջիլը:
Զե՞ք հավատում,—
Վկա է կինս:
Համայնքների պալատը:
Միստր Սնոուդենը:
Հենդերսոնը,
Մակդոնալդը —
Եվ այլն:
Աղմուկ:
Իրարանցում:
Հարայհրոց:
Շփոթ:
Անգլիական դալոյ:

Դուրս են անում միստր Սնոուդենին՝
վզակոթին տալով:

ՆՈՐԻՑ ՏԱՆԸ

Միսիս Սնոուդենի ննջարանը,
Միսիսը:
Միստրը:
Միստր Մակդոնալդը:
Միսիսը հիվանդ է:
Պոկում է մազերը,
Կապվել է լեզուն:
Ծեծում է բարձը:
Կոմսնիզմ է ուզում:

Է Պ Ի Լ Ո Գ

ՄԻՍՏՐ ՄԱԿԴՈՆԱԼԴԻ ՆԱՄԱԿԸ

Հոգյակս,
Մի՛ք հուսահատվի:
Ես նոր ելք եմ գտել:
Մեր
Տեր
Թագավորը գիտե՞ք —
Գնում եմ մոտը:
Ոտը կհամբուրեմ:
Մեր Գեորգը բարի՛ է:
Նա կհասկանա՝ մեզ:
Նա կգթա:
Կոմսնի՞զմ եք ուզում.
Պարլամենտը շտվեց —
Թագավորը կտա:
Վ Ե Ր Զ

ՅՈՒՅԱՄԱՏ

Պ Լ Ա Կ Ա Յ

— Տեսա՞ք Մնոուզենների պատմութիւնը...

Մոռալ.—

Կեցցե՛ք Հոկտեմբերյան Հեղափոխութիւնը:

1923 - 1924



ԴՈՒՈՐ ՊՈԵՏՆԵՐԻՆ

Հեշտ է ձեզ,
Սիրում եք սեր սերել դուք միշտ:
Թոքերդ շվի շինել՝
Երգում եք սեր:

5 Առիթը գա՝ կարող եք գործարան էլ սիրել
Առիթը գա՝ պայքար էլ կսիրեք:
Իսկ ես,
Ոնց որ տրիբուն,
Ոնց որ ըմբոստ ըմբիշ —

10 էդ բուլդոզին թքե՛լ եմ դեռ երեկ:

Երեկ
Դուք
Երգում էիք սերը:
Երգում էիք՝ սիրուն գարուն, առու:

15 Բայց... եկավ Հոկտեմբերը —
Ու ցամաքեց «առուն»:

Հոկտեմբերը եկավ —
Ուզեց մկան:
Կա՛մք ուզեց Հոկտեմբերը —

20 Որ աշխարհում հորդի:
Հոկտեմբերը

Մասսաների ճակատը հակադրեց հեին-
Հոկտեմբերը բռնեց մեր կոկորդից —
Հրամայեց՝
25 — Շինի՛:

Լսո՞ւմ ես,
է՛յ,
Դո՛ւ.

Շի՛ն շինի՛ հիմա դու:
30 Ռե՛լս շինի՛ մաշինի, թե կարաս:
Երգել աղջիկ, թե շոգի—օգուտ չկա.
Մեկ է:
Շինիր փողոց քարած:
Շինիր կանալ:

35 Հոկտեմբերը բերին կրակով:
Հոկտեմբերը բերին սովորական մարդիկ:
Նրանք, որ—գիտեին՝
Առաջ դեռ —հա՛ց տուր ուտենք,
Առաջ դեռ—կերակուր,

40 Հետո—ինքնիրեն կհասնենք
Թե գարնանը,
Թե առվին,
Թե վարդին:

Հասարա՞կ է:

45 Իհա՛րկե:
Ոնց որ աքսիո՛մա:
Ինչքան էլ երկիրնք համբառնաք —
է՛ս է,
է՛ս է,
50 է՛ս է:

Հասկանում եք՝

— Ո՛չ մի պառնաս.

Թեկուզ պրոլետպառնաս:

Թեկուզ պրոլետպոեզիա:

55 Էսպե'ս է:

Է'ս է,

Երգը երգ է:

Թեկուզ շոգի գրեք:

Թեկուզ պրոլետսոնետ:

60 Լսո՞ւմ եք.

Լավ է—լո՛ւ արածե՛յ,

Լավ է ոռնալ,

Քան երգով գործարան սնել:

Երկնքից չենք ընկել մենք:

65 Ոչ էլ թռչունն է մեզ բերել:

Ոչ էլ քամին:

Երկիրն է մեզ ծնել:

Հողը,

Փողոցը,

70 Հանքը,

Գործարանը:

Հոկտեմբերը բերեց մեզ դինամիտ:

Հիմի պայթենք պիտի:

Բայց ո՛չ թե երգում միւսմիտ —

75 Այլ դուրսը,

Դաշտում,

Ձեր գռանը:

Լսո՞ւմ եք.

Է՛յ,

80 Դուք,

Ամեն ոանգի,
Բաւական է քերթեք մեր նյարդերի կաշին,
էլ անպե՛տք է:
Դե՛ն նետեք ձեր շվին:

85 Իսկ քս —
Լավ է Չեկա գնամ,
Լավ է — ագիտբաժին,
Ծս — զինվոր,
Տրիբուն,
90 Բալշէիկ:

III Ի Ն Տ Ե Ր Ն Ա Ց Ի Ո Ն Ա Լ — Ք. Կ. Ո.

է՛յ,
Բարձրացիր.
Գնա՛նք—գնա՛նք—գնա՛նք:
Հայաստանից—Թունիս:

5 Դոն:
Լոնդոնից—Դունայ:
Միլիոն տոնն ուժ,
Միլիարդանոց տոննաժ:

Երկաթից ու կամփից է մեր շոգենավը:
10 Մեր շոգենավը—մե՛նք ենք:
Մեր կամփը միլիարդի—մեր դինամոն է:
է՛յ—է՛յ,
Ո՛վ կա վրեն:
Ով որ կա—պատրա՛ստ միշտ:
15 Ով որ կա—թող չքնի:
Դեռ հեռու է ցամաքը:
Փոթորիկը դեռ ընդդիմանում է:
Ցամաքը դեռ ո՛ւր է.
Ահա իողանը,
20 Ահա Ռո՛ւրը:

Մեր նավը կոչվում է դիկտատոր։
Ռեյսը—էստեղից կոմունիզմ։

- Մեր դեմ ոչինչ չկա որ դիմանա։
Երկինքը.
25 Երկինքը ծեր կանանց խաբի թո՛ղ,
Կրո՞նք.
Աստվածային կապե՛ր...
Մեր կրոնը կոչվում է—«Կապիտալ»,
Մեր կապը —Ք. Կ. Ս.
30 Մեր դեմ—եղե՛մը Մարքսի գծած,
Մեր դեմ—Կոմունը։
Մե՛րն է,
Կիսաբա՛ց է։
էն, որ երազե՛լ ենք.
35 Սավետական կարգեր՝ էլեկտրիֆիկա՛ցիա։

- Մեզ գտե՛լ —
Նետե՛լ է Հոկտեմբերը։
Հոկտեմբերը —
Ջնդանն էր մեր զնդերի։
40 Հոկտեմբերը կապեց Հնդուշին ու Դոնայ։
Հոկտեմբերը բերեց մեզ—ռումբ։
Հոկտեմբերը բերց մեզ—թնդանոթ։
Միլիոն տոնն ուժ։
Միլիարդանոց տոննաժ։
45 Հոկտեմբերը մեր տոնն էր ընդհանուր։

Կամք։
Ձգված մկա՛ն էր Հոկտեմբերը։
Ռումբ։
Թմբուկ։

- 50 Թնդո՛ւն էր Հոկտեմբերը,
 Հոկտեմբերը — շրապնե՛լ էր,
 Գնդացի՛ր էր,
 Հոկտեմբերը զնգաց —
 էյ,
- 55 Բարձրացի՛ր էլ,
 Դեպի բուրգեր ցրտի,
 Դեպի բերդեր արյան ---
 էյ,
 Բարձրացի՛ր,
- 60 Պրոլետարիատ:
- Ելա՛վ:
 Թնդաց,
 Պայթեց:
 Ելա՛վ հաղթեց:
- 65 Հազար Քերզոն թող գւո՛ւ,
 Հազար ոսոխ —
 Մեր դեմ էլ ի՞նչը կդիմանա:
 Մեր մի թեւ — Մոսկով է,
 Զգլե՛լ է Երևան,
- 70 Անցե՛լ է Շահթախտից —
 Մայրը ո՞ւր է.
 — Պերո՛ւ է,
 Ռո՛ւր է.
 Անցե՛լ է Յելլոնը,
- 75 Սինգապուրը —
 Հասե՛լ է Հիմալայ:
- է՛յ — է՛յ,
 Հիմի՛ պատրա՛ստ,
 Ընկե՛ր,

80 Մեր վառուրդը թող շթացանա՛ էլ.
Նէպը թող մեր թափը չկապե:

Մեր դրոշն է—III Ինտերնացիոնալը,
Մեր կապը — Բ. Կ. Ս.-են:

ԱՆՏԱՆՏԻՆ—ՄԵՆՔ

Անտա՛նտա,
Տե՛ս,
Քեզ՝ լիզում է էսօր
Երկաթե,

5 Թեժ մի քրքիջ:
Ես կրկին երգում եմ քեզ—մահ:
Ոնց որ ոխ ցնդած բանվորի—
Զգո՛ւմ ես կամքը ճզմած
Ռուրի:

10 է՛սսեն,
Քեզ
Երկաթե թաթով
Մինչև ե՛րբ,
Ե՛րբ ճզմե նա:

15 Լսո՛ւմ ես՝ երկաթո՛ւղ գա թող,
Թող թոփի քանդո՛ղ հեքիաթով,
Որ լոկ ոխ քեզ մնա:

է՛յ,
Ռա՛ւր
20 Կամ մեզ հետ, կամ սա՛.

Հսո՞ւմ ես՝ կամ կոիւ, կամ կոշիկ...—
Հիլֆերդինգ —
Վեյս վաքսով վաքսած
Գարշապար Ստիննեսի—Ֆոշի:

25 Թո՛ղ, .
Ռո՛ւր,
Թող հո՛ւր քեզ մնա բաժին:
Ռո՛ւր,
Էգուց —

30 Կիրիսվի հացի նա:
Հսո՞ւմ ես.
Կա՛նք.
Կքանդենք:
Հսո՞ւմ ես,

35 Ստիննեսի հանդեպ —
Կա
Ծրրորդ
Ինտերնացիոնալ:

Մե՛նք կանք:

40 Կա կամք:
Կա միլիոն, տրիլիոն Հանսիվանհաբե՞ր:
Հսո՞ւմ ես՝
Լե՛ —
նի՛ն կա,

45 Կամ
Կա
Ք.
Կ.
Ո.

50 Վերջապես կա՛մքը կա քո զորեղ,
Ռո՛ւր,
Հո՛ւր դու,
Զսպած զսպանակ:
Դու գիտե՞ս,

55 Գիտե՞ս թե նրանց
Մինչև ո՛ւր կարող ես թոցնել —
Երկաթե շղթադ թե բանաս:

Մինչև ո՛ւր...

Բեռլինից,

60 Փարիզից —

Մինչև Մա՛րս,

Ուրա՛ն,

Թե լուսին —

Իզութողը Բեռլինի բողի

65 Ու Ֆոշի փոշին:

Լ Ե Ն Ի Ն

Всем, всем, всем...

Ռադիո:

Մոսկվա:

Կրեմլ:

...Վախճանվել է Իլյիչը...

Ի՞նչ.

Ճառե՞ր,

Հեռագի՞ր.

Սո՞ւգ գուցե կամ:

5 — Իհարկե չէ...

Սուգը —

Առե՛լ է դեմ —

Սառե՛լ է բանվորի կոկորդում:

Տեղը —

10 Ոխ մի պղորդ

Հորդում է դուրս:

Է՛՛՛՛՛,

Զգա՛ք,

Զմոտենա՛ք.

15 Հազա՛ր հն,
Բյո՛ւր են,
Միլիա՛րդ են,
Ավելի՛ն են.—
Ու էդ

20 Բոլորը
· Մեքերան —
— Լենին՛ն,
— Lenin,
— Ленин...

25 Գիտե՛ք թե աշխարքի արգանդից
Ինչքա՛ն հանճարեղ մարդիկ,
Ինչքա՛ն, ինչքա՛ն Կրոմվիկ,
Կամ հնդիկ Գանդի —
Անթիվ

30 Եղեւ են,
Կան դեռ, ·
Ու կգան.—
Այնինչ Իլյիշը—մեկ է,
Ուրիշ Իլյիշ—դժվար թէ,

35 Ուրիշ Իլյիշ—չկա:

Դասակարգը
Դար դարի ետեից
Սեւ է Իլյիշին:
Դասակարգը

40 Դար դարի ետեից —
Հյուսիս է նյութիկ:
Անգամ ջրկիրը Տիբեթի
Տվեւ է Իլյիշի ուղեղին —
Մի թեւ:

- 45 Թեւ-թեւ,
 նյարդ-նյարդի ետեւից,
 նյարդից թե քո, թե իմ —
 Առեւ է դասակարգը —
 Տվեւ է լենինին:
- 50 Թեւ-թեւ,
 նյարդ-նյարդի ետեւից
 Հյուսեւ է —
 Բարդ
 Կանվաւ:
- 55 Եւ հիմա
 Իլլիչը —
 Վախճանվա՞ծ...
 Մեռա՞ծ կամ.
 Կամ չկա՞...
- 60 Ձէ՛, պրոլետար.
 Իլլիչը—իմ մե՛ջ է,
 Քո մե՛ջ է,
 Նրա մե՛ջ է,
 Իլլիչը—կա...
- 65 Կա—դասակարգը:
 Դասակարգը
 Պարզե՛ւ է լենինին, իբրեւ դեիզ:
 Դասակարգը հակադրե՛ւ է հնին —
 Իր
- 70 լենինին:
 Ու կպարզե՛ հնին
 Լ Ի Ն Ի Ն Ի Ձ Մ:

75 Ռոկֆե'լլեր,
Ստի'ննես,
Մորգան կամ.
Հսո՞ւմ եք՝

Մենք դեռ կգանք՝

80 Մեր բանակը կանցնի՝ դեռ ձեր աշխարհով:

Դեռ կգա Իլլիշը,

Որ մտնի համաշխարհային Սովնարկոմ:

Մ Ա Ր Շ Ա Շ Խ Ա Ր Հ Ա

Աշխարհ, հարթել ենք արդեն քեզ:

Առել ենք,

Առ ենք:

էյ —

5 Ճա՛նա՛ն-պա՛րհ.

Ինչքան հանճար կա—գա:

Ինչքան ձեռ կա—ձե թող ծռե:

Ձիտայից մինչև Միշիգան —

Կռենք,

10 Կռե՛ք,

Կռե՛ն...

Ձե՛ռ, դու եռա՛,

Մի՛տ, դու գտի՛.

Կյանքը—կռան,

15 Կամքը—գինամիտ:

Հանճա՛ր, էլ թո՛ղ դու անճարի՛.

Անճար չկա՛ էլ:

է՛յ —

Ճա՛նա՛ն-պա՛րհ:

20 Աշխարհ, կարո՞ղ ես՝ մեզ ճարի՛:

Մենք քեզ ճանկել ենք էլ —
Առույգ,
Արագ,
Արի՛:

- 25 էլ մեր հատու
Կամքը կտանք —
Քե՛զ, գիտութիւն,
Քե՛զ, աշխատանք:

Մեր մեջ եռում է տիեզերքը:

- 30 Մեր կրօնքերո՛ւմ է:
է՛յ,
Դողացե՛ք.
Մեր կյանքը—կա՛մք է,
Զիրք է,

- 35 Զեռք է:
Կարող ենք հողը սղոցել:

Կյանքն—աերո,
Կամքն—օդաշու:
Ուզենք —

- 40 Կուզե՞ք ուզեք —
Արե՛ւը զենիթից մեզ կտա շու:

էյ, ցնդածնե՛ր,
Մարս, Լուսին, Ուրան.
Մե՛զ խնդացե՛ք,

- 45 Ուռռա՛, ուռռա՛, ուռռա՛:

Մենք—պրոլետար,
Կամքը մեր—ոռմբ:
Ա՛-ռ ռ ռ ռ...
— Միշտ հեռուն, հեռուն, հեռուն, հեռուն:

Ե Ս Ե Վ Ի Լ Յ Ի Ձ Ը

Մի էպիգրդի իմ ճանապարհորդությունից՝ կատարված
Ուելսի ժամանակի մեքենայով դեպի 2500 թ.

Դեպի ժամանակը...

Մկան չկա հոգնած.

Ես էլ,

Դու է՛լ,

5 Նա է՛լ:

Սղոցում են օդը,

Տարիները՝,

Կամքս—մեքենա,

Միտքս—Ուելս:

10 Թռչում եմ:

Թռչում է միտքս:

Անցնում են տարիները:

Անցնում են տարիները—20,—50,—100...

էս ի՞նչ է.

15 Ոնց որ արթնանում եմ:

Նայում եմ շուրջս՝

Ո՞ւր եմ.

Շուրջս—անժանոթ է.

Ինչ որ մի բան դեմից մոտենում է փութով...

20

Դեմս—աշխարհն է,

Յրկրագունդը —

X տարի հետո...

.

25

Ներքեր —

Ցանցեր, ցանցեր, ցանցեր:

Ներքևում հեռում են:

Հեռում է հովը:

30 Հովը ոնց որ թև է:

Սահում հմ:

Ոնց որ ինձ պահում են:

Իջնում հմ:

Թռչում հմ:

35 Ես թեթև հմ:

Բայց չէ:

Ես անշարժ հմ:

Հեռում է սիրտս:

Թևում է դեպի ինձ —

40 Այն ի՞նչ է —

Վարը —

Բարձրանում է...

Արև է.

Աշխարհ է.

45 Ելնում է ներքևից:

Ոնց որ լիֆտ —
 Ելնում է արևը:
 Գալիս է դեպի ինձ:
 Բարձրանում է:
 50 Ճառագայթը — թև է ետևից նևռած,
 Ետևից — երկրագունդը.
 Մոտ է.
 Մոտենում է.
 Սահում է դեպի ինձ.
 55 Ձգվում է դեպի վեր —
 էտաժին էտաժ:

Վեր,
 Վեր,
 Վեր —
 60 Ահա ներքևը Կիվը,
 Ահա Մոսկվան...
 Այդ ի՞նչ է.
 Ոնց-որ ճոխն է.
 Դադարում է շունչս...
 65 — Շնչում եմ:
 Թեթև եմ:
 Ես կամ:

Թրա-խկ.
 Հասա:
 70 Իջնում եմ:
 Կարծես Մոսկվան է:
 Է՛յ,
 Ո՞վ կա էդտեղ --
 Տարե՛ք ինձ P. K. Մ.

- 75 Զեն հասկանում:
 Զգույշ նայում են ինձ:
 Ես վախից դողում եմ:
 Թեաթափ եմ:
 — Ի՞նչ.
- 80 Չկա՞.
 Ո՞նց թե չկա...
 Կալ:
 Տարե՛ք ինձ B. Վ. K.
 Էնտեղ ինձ խինդով կընդունեն:
- 85 Կընդունեն, ոնց որ հարկն է:
 Տեսնո՞ւմ եք գլխարկս.
 Վրան ա՛ստղ է.
 Ոչինչ, որ մաշված է կոշիկս.
 Զե՛ք հավատում.
- 90 Ինչո՞ւ:
 Ահա տոմսս.
 Ես—բալչեիկ եմ.
 Զեն լսում:
 Ծիծաղում են:
- 95 Գնում են:
 Չէ՛.
 Կանգնած են.
 Ընթանում է—գետինը.
 Գետինը սողում է.
- 100 Խփում է ուղեղիս արյունը.
 — Ա՛,
 Հասկանո՞ւմ եմ.
 Էսպես էր գուշակում դեռ Կամիլ.
 Ֆլամարիոնը...
 Նայում եմ շուրջս —
- 105 Հիանում եմ:

- Ահա —
 Երկնքից իջնում է մի քաղաք.
 Ահա մարդիկ.
 Մարդիկ.
- 110 — Մա՞րդ է թե սարդ.
 Մոտենում է մեկը.
 Ոնց որ ծեր է.
 (Ես նրան մի գրքում կարդացել եմ). —
 Չէ՛.
- 115 Փոքր է.
 Երեխա է.
 Փախա՛ւ:
 Ահա ուրիշն եկա՛ւ:
 Նայում է աչքերիս:
- 120 Աչքերը սուզվում են մեջս:
 Աչքերը ոնց որ ինձ քերում են:
 Քորում են ուղեղս:
 Ի՞նչ.
 Ազգանո՞ւնս...
- 125 Ազգանունս — Չարենց է.
 Իսկ Չարենցը
 Դուք
 Հասկանո՞ւմ եք...
- հա-խա-խա-խա-խա... —
- 130 Ծիծաղում է:
 Ուրախ է,
 Իհա՛րկե նա ինձ հասկանում է:
 Մեքենա միտք ունի երեխա.
 էն, որ կարդացել եմ:
- 135 Ահա —
 Սահում է դեպի ինձ..

- Բռնում է թևս.
 Բարի է.
 Երևի—պրոֆեսոր է.
 140 Մեր է:
 — Ի՞նչ.
 Լուսնի՞ց.
 Չէ՛, ես երկրացի՛ հմ,
 Մանո՞թ.
 145 — Ո՛չ մի ծանոթ:
 Սա ի՞նչ է.
 Ախ, հա —
 Մեր ժամանակ, գիտե՞ք, սա—գնդացի՛ր էր:
 Բայց ներեցեք պարոն.
 150 Ձի՞...
 էսպես ձի՞...
 Չե՛մ տեսել երբեք ես.
 Մեր ձին կենդանի էր:
 Մեր ձին խոտ էր ուտում:
 155 Ներեցե՛ք, մեր ձին—գեղեցի՛կ էր.
 Ավտո՞.
 Հա.
 Ավտոն դեռ էլի հասկանում եմ...
 Բայց ներեցե՛ք պարոն.
 160 Ավտոն չէր թռչում—նա գնում էր.
 Ի՞նչ.
 Թռչե՞նք.
 Ես, գիտե՞ք, մի քիչ վախենում եմ.
 Ո՞նց.
 165 Սրա՞ն.
 Հենց ես փոքրի՞ն.
 Հենց ես գնդացրի՞ն...

- Որ ջրի՞...
 Թոցնի՞...
 170 Չվախենա՞մ...
 Հավ:
 Ես պատրաստ եմ:

 Նստեցինք զնդացրին,
 Գնդացիրը--զնաց:

 175 Թռավ
 Թռավ,
 Թռավ,
 Մնացին ներքևը--արևը,
 Հուսինը,
 180 Մարսը,
 Սատուրնը —
 Մոլորակներ...
 Տակից —
 Ելնում էր դեպի վեր,
 185 Գալիս էր դեպի մեզ,
 Բարձրանում էր,
 Սահում էր,
 Թռչում էր ինչ որ գունդ ահագին...

 Գնդացիրը թռչում է:
 190 Նա ինձ մոտ է:
 Նստել է հտեկից:
 Խրել է միտքը մեջս.
 Երևի քննում է.
 Կարդում է միտքս.
 195 Հետևում է...
 Ինչքան ուզում է հետևի...—

- Սա գիտեմ, որ միտքն անքննին է...
 Թուշում է գնդացիորդ:
 Նա ոնց որ խոսում է.
- 200 — Ի՞նչ.
 Հի՛նը.
 — Հի՛նը չկա:
 Սանահի՞ն...
 Օ, կարծեք հրազո՛ւմ եք.
- 205 Հիմի կուզեք սվին:
 Ամաչեցե՛ք պարոն.
 Ի՞նչ թնդանոթ...
 Տեսնո՞ւմ եք
 Վարը —
- 210 Աշխարհը —
 Կոմուն է ընդհանուր.
 Հի՛նը —
 Քնե՛լ է.
 Հի՛նը չկա:
- 215 Ի՞նչ.
 — Այստեղ եղել է Երսովնարկումը,
 Այստեղ—Երուտրիբունալը,
 Այստեղ—Երչեկան.
 Կենտրոնը —
- 220 Նյու-Յորքն էր.
 Հետո—Միչիգանը.
 Հիմի չկան:
- Մոտեցանք:
 Աշխա՛րհն է...
- 225 Նա է:
 Դեռ հեռվից ճանաչում եմ:
 Ահա Ատլանտյան օվկիանը.

Ահա Ամե՛րիկան:
 Ահա Խաղաղականը:
 230 Ահա Իտա՛լիան, ոնց որ կոշիկ...
 Բայց ի՞նչ է.
 Ոնց որ ուրագա՛ն է.
 Ոնց որ փոշի...
 Մշուշ է:
 235 Չէ.
 Ապակի՛...

Ու ապակու տակից — երկիրը, երկրագունդը...

Ո՛ւր.
 Երևա՞ն...
 240 Ծիծաղում է:
 Մորուքը քսվում է ուսիս:
 Մոտեցանք:
 Ոնց որ լողանում ենք:
 Իջնում ենք հյուսիսից:
 245 Թռանք հարավ էլի:
 Ահա իջանք:
 Էն ի՞նչ են.
 Ինչո՞ւ են թևավոր.
 Ասո՞ւմ եք՝ մա՞րդ են.
 250 Խա՛-խա՛-խա՛ —
 Նման են հավերի...

Երևանն է...
 Ծերո՛ւկ, խաբեցի՛ր ինձ:
 Ոնց որ Նյու-Յորք լինի,
 255 Ոնց որ Սան-Ֆրանցիսկո —

(Մի բան որ չեմ տեսել երկուսն էլ) —
Նայես՝ ի՞նչ կա հիմի մեր թաղումը...

Դնում ենք մի կողմ գնդացիքը:
Վնցնում ենք փողոցով:
260 Ծիծաղում են:

Մտածում եմ՝ հայեր են.
Կհասկանան գոնե.
է՛յ,
ի՞նչ է էստեղ.
265 Մոտենում են:

Շարվում են շուրջս:
Ասում եմ անունս:
Գուցե հիշեն...
— Չարենց.

270 — Չարենց.
— Չարենց —
Հեռանում են...

Ախ,
Կբռնե՛մ հիմի.
275 Ծերո՛ւկ, ծերո՛ւկ, ծերո՛ւկ.
Միթե սա— Երեա՞նն է.
Սո՛ւտ է.

Լսո՞ւմ ես. Երեան չե՛ս բերել դու ինձ.
Երեանն— ավան էր.

280 Երեանը— Վանի պես քոսոտ էր.
Ծ՛շում եմ:
Փնշում եմ:
Կանչում եմ ծերուկին:
Ուղեղս սղոցում է դողը:

- 285 է՜յ
 Մերո՛ւկ,—
 Երևա՞նն է ասում ես.
 — Դէ ցո՛ւյց տուր Մասիսը, թե կարող ես.
 Մասի՞սը.
- 290 նա՞.
 Աբա ձյո՞ւնը...
 Լսո՞ւմ ես,
 է՜յ,
 — Ձյո՛ւնն եմ ուզում—սպիտա՛կը...
- 295 Ի՞նչ շենքեր են էնտեղ,
 էն ի՞նչ բուրգեր են ապակի...
 էն ի՞նչ է բարձրանում...
- Սողում է հողը:
 Փախչում է իմ տակից:
 300 Իմ հոգին ոնց որ կաշկանդել են:
 էյ,
 Մերո՛ւկ, ծերո՛ւկ, ծերո՛ւկ —
 Չկա:
 Չքացել է,
 305 Ես—ցնդել եմ.
 Վազում եմ քաղաքով:
 Մարդիկ,
 Մարդիկ,
 Մարդիկ...
- 310 Մարդի՛կ են վերջապես, թե ուրո՞ւ են...
 Նայում եմ՝
 Մոտ են.
 Մտնում են մեջս.
 Թռչում են իմ միջով —
- 315 էլ չե՛ս բռնի.
 է՜յ—է՜յ—

էլ հեռու են...

է՛յ,

Դուք,—

- 320 Ո՛րտեղ եմ—ասացե՛ք խնդրեմ.
Ասացե՛ք խնդրեմ—ո՛րտեղ եմ ես,
Նայում են երեսիս —
Ծիծաղում են.
Հուռ են.

- 325 Կամ իրենք են խուլ վերջապես,
Կամ ես ինքս—խուլ եմ...
Վազում եմ էդտեղից.
Ոնց որ ինձ են վազում.
Ես անշարժ եմ.

- 330 Մի բան վազում է մեջս.
Ես ինքս—վազք եմ:
Եվ ո՛չ մի ծանոթ:

Ծերո՛ւկ—ծերո՛ւկ—ծերո՛ւկ...

Ոնց որ չի է՛լ եղել:

- 335 Ոնց որ հրաշք էր:
Փախչում եմ խուճապով:
Ուղեղս սղոցում է դողը:
Աչքերս պայթում են սարսափից:
Փախչում եմ:

- 340 է՛յ,

Մարդի՛կ,

Մի խո՛սք լուկ,

Մի շշուկ.

Հասկանո՞ւմ եք՝ ցն-դում եմ.

- 345 — Ա՛ղա-չո՞ւմ եմ...

Տեսնո՞ւմ եք՝ հասնում է մահս.

Ահը գրկել է ինձ.

- Մարդի՛կ,
 Խնդրո՞ւմ եմ ձեզ,
 350 Ամեն ինչ ձեզ կանեմ:
 Կօզնեմ ամե՛ն բանով...
- Անցնում են:
 Խուլ են:
 Ամբողջ տիեզերքում—և ո՛չ մի ծանոթ:
- 355 Փախչում եմ քաղաքով:
 Մտնում եմ հրապարակը:
 Այն ի՞նչ է.
 Մոտենում է...
 Ինձ մոտենում է մեկը.
- 360 Ես նրան կարծես ճանաչում եմ.
 Տեսել եմ...
 Կարծես դեռ երեկ էր...
 — Ախ,—
 Մոտեցավ...
- 365 Մոտեցավ...
 Բայց ի՞նչ է.
 Աշտարա՞կ է.
 Մա՞րդ է...
- Վերջապես...
- 370 — Ռակետ էր ակնթարթը:
 Վերջապես գտա:
 Սա ծանոթ է:
 Ինձ կպատմե ողջը:
 Ձի պահի ո՛չ մի բան.
- 375 Կնստի մոտս.
 Հետս կլինի...

- Ահա ժպտում է նա,
 Ելնում է դեմս.
 Նա ի'նքն է,
 380 Ծանոթը,
 Հարազատը...
 Մոտենում եմ.—
 — ԲՅՈՒՍՏՆ է լենինի...
 Նա' է,
 385 Իլիւշը...
 Է՛յ,
 Լսեցե՛ք.
 Շուրջս եկե՛ք,
 Հավաքվեցեք մոտս.—
 390 Ես նրան ճանաչում եմ,
 Նա ինձ ծանոթ է.
 Է՛յ,
 Դուք,
 Եթե կաք.
 395 Ես—գիտե՞ք—աշխարհի՛ց եմ.
 Իսկ սա աշխարհ է,
 Ի՞նչ է.
 Գուցե պլանե՛տ է մոտակա.
 Է —
 400 Մե՛կ է,
 Մե՛կ է,
 Մե՛կ է.
 Է՛յ,
 Դո՛ւք,
 405 Խուրդա-մոսրդա՛...
 Հասկանո՞ւմ եք՝ նրան ես տեսել եմ:
 Ապրե՛լ ենք մի դարում.
 Ծ՞քք էք.

Ոնց որ դեռ երեկ էր...
410 Հասկանո՞ւմ եք՝ նրան ես լսել եմ...

Ակնթարթը —
Ի՞նչ էր...
Հասկանո՞ւմ եք՝ էդքա՛ն տարի հետո,
Աշխարհում, որ փոխվել է —
415 Հանդիպում ենք—ես և... Իլիշը...
Նա ինձ նայում է ժպիտով.
Ինձ ճանաչում է նա տարիների տակից...
— է՞յ, ժամանակ,
Դո՛ւ գեթ,
420 Խինդս դո՛ւ ընդունիր դարերից,
Ճիշտ,
Խնդությունս ռակետ...

Տ Ի Ր Ա Պ Ե Տ Ո Ղ Ե Ն Ր Ի Դ Ե Մ Ք Ը

Սատիր ագիտ

C. C. C. P.

U. S. A.

R. F.

D. R.

C. C. C. P.

(Մեզ մոտ)

(Միևնույն ժամանակ պրոլոգ)

Հնթերցո՛ղ,

Մենք,

Ես ու դուք,

Ապրում ենք C. C. C. P. -ում:

5 *Խորհուրդների երկրում:*

Այսինքն՝ երկրում մի,

Ուր տեր են բանվորն ու գյուղացին:

Տեր են ո՛չ թե էնպես,

Խոսքով, —

10 *Բառացի:*

Ինձ ու ձեզնից բացի —

C. C. C. P. -ում ապրում են 150 միլիոն:

- Օ՛ր,
 Զարմանում եք միայն:
 15 Բայց մեր տերիտորիան —
 Բռնում է աշխարհի վեցերորդը:
 Ի՞նչ.
 Ուզո՞ւմ եք նոր «օ» էստեղ.
 — Ավելորդ է:
 20 Թողնենք դեռ եղ «օ»-ն:
 Մտնում եք մի հիմնարկ պետական:
 Ասենք Զագսը:
 Պատից կախված է Մարքսը:
 Պատից — Իլլիչը...
 25 Մեր զինանշանն անգամ —
 Պարզից պարզ է՝
 «Մուրճ ու մանգաղ»:

 Ամեն տեղ — բանվորն է:
 Ամեն տեղ — գյուղացին:
 30 Վերցրե՛ք մեր դրամը:
 Վրան՝
 «Պրոլետարներ բոլոր երկրներին — միացե՛ք»:
 էսպե՛ս է:
 Բայց թողնենք դեռ է՛ս էլ:
 35 Մտնում եք գործարան:
 Կամ հանք մի, ձեր տեղում թե կա:
 Հարցնում եք՝
 — Ո՞ւմն է.
 Այսինչ — այնինչի՞նը:
 40 — Չէ՛.
 — Խորհրդայի՛ն է:
 Պարզ՝ պետական:
 Դուք նորից զարմանում եք:

Զարմանքից դուք ընկնում եք հալից,
 45 Ոնց որ ուտո՛ւպիա է,
 Ոնց որ երազ,
 Որ շի էլ երազել դեռ ո՛չ մի դեմոկրատ —
 սոցիալիստ:

էսպե՛ս է:
 է՛ս է:
 50 Հավ է, թե վատ —
 Հենց էս է, որ կա:

Իսկ հիմա—թողենք էՍ-էՍ-էՍ-էՌ-ը,
 Գնանք Ամերիկա: —

U. S. A.
 (ԱՄԵՐԻԿԱ)

Ամերիկան որ կա —
 Ոնց որ լսել եք,
 Ոնց որ գիտեք —
 Գտնվում է աշխարթի տակին:
 5 Ամեն ինչ մեծ է էնտեղ,
 Ամեն ինչ—ահագին:
 Եվ էն էլ—էնքա՛ն ահագին,
 Որ ասեմ—վախենամ ցնդեք:
 Մեկ էլ —
 10 (Խնդրում եմ չվախեք) —
 Ամեն ինչ—երևակայո՞ւմ եք—թարս է էնտեղ:

Ամե՛ն ինչ:
 Այո՛:
 Անգամ օրացույցը:

15 Երբ էստեղ շաբաթ է —
էնտեղ կիրակի՛ է.
Երբ գիշեր է էստեղ —
էնտեղ լույս է...

(Բայց, ասենք, էս բոլորը — դեռ հեշտ
20 Զարմանալի չեն էնքան էլ:
Մանրուք են:
Սովորական բաներ:
Արյունը զարմանքից կխփի ձեր գանգին —
Երբ անցնենք հասարակական էյանքին):

25 Կարդացել եք:
Լսել եք երևի:
«Ամե՛րիկա...»,
«Դեմոկրա՛տիա...»,
«Դրախտ...»,

30 «Եղեմ...»:
— Դրախտ է, իհարկե —
Միլիարդեր եք եթե...

Միլիարդեր եք եթե —
Երևակայո՞ւմ եք.

35 — Ա-մե՛ն — բան — կա...
Ձերն են՝
Թե Սպիտակ Տունը,
Թե Նյու-Յորք Սի՛տին,
Թե — բանկը:

40 Հենց որ Նյու-Յորք մտաք --
Միլիարդեր եք եթե —

Կհանդիպի ձեզ ինքը—միստր Դոլլարը:
 Իսկ էդ միստրը էնտեղ
 Մարդ չէ՞ հո հասարակ —
 45 Պրեզիդենտ է:

Օ, միստր Դոլլարը պրեզիդենտ է թեկուղ,
 Բայց անշափ բարի՛ է,
 Խոնարհ է,
 Հասարակ է —
 50 Միլիարդեր եք թե դուք...

Միլիարդեր եք եթե —
 Երկինքն էլ որ ելնեք —
 Դժվար թե հանդիպի ձեզ էնտեղ
 Էդպիսի մի քեռի-ջենտլմեն:

55 Օ, միստր Դոլլարը—իսկական հոգի՛ է:
 Մանոթ-անծանոթ նա չունի:
 Ձի ճանաչում ոչ ազգ, ոչ կրոն:
 Ձի նայում ոչ դեմքիդ, ոչ անունիդ:
 Դուք մեկ եք,

60 Մարդ եք,
 Հավասար եք նրա աչքերում —
 Ընդամենը—երեւակայո՞ւմ եք—մի՞ մի՞-լի՞-արդ
 թե ունիք...

Զարմանո՞ւմ եք էլի:
 Ավելի՛ն:
 65 Միստր Դոլլարը—իսկական բարեգործ է,
 Գործը՝
 Հենց է՛դ է, ծառայելն է հենց սրան-նրան:
 Թեկուղ պրեզիդենտ է —
 Բայց հետդ է.

70 Հետդ է—ուր էլ որ գնաս...

Մտնում եք ռեստորան —

Նա՛ է:

Բանկ եք մտնում —

Նորի՛ց:

75 Միլիարդեր եք եթե —

Հետդ է մյուզիկ-հոլլում, ցիրկում,

Պառկում եք քնելու —

Հետդ է.

Աղջիկ է մի չքնաղ.

80 Ռոմանսներ է երգում...

Բա՞ս:

Էսպես է էս դենդին:

Ռուսը կասեր՝ не!

Ոնց որ տեսնում եք՝

85 էս

Պրեզիդենտը —

Ո՛չ միայն զուրկ է փառքից,

Այլ—արխիդեմոկրատ է...

(Զե՞ք հավանում:

90 Ինչի՞:

Էս բոլորը չկա՞ հո մեզ մոտ...

Մեզ մոտ,

Որ հյուր էլ գնայիք Իլիչին —

Շատ-շատ հյուրասիրեր... դեռ չեկած

կոմունիզմով..

95 Ավելի՛ն:

Միստր պրեզիդենտը —

Ինչ էլ տաք՝ կլիզի:

Մի բանից է զզվում.

— Իմ պերիալիզմից...

100 Ձե՞ք հավատում:

Ասում եք՝ խեղճ եմ:

Իմ պերիալիզմն ինչի՞ն է մի միստրի,
Որին, ոնց որ տեսաք, թե խրճիթ, թե սալոն:

Հիշո՞ւմ եք.

105 Հենց

էս

Պրեզիդենտն էր,

Որ— 14 պունկտ ներկայացրեց Վերսուլում...

Ձե՞ք հավանում—ի՞նչ է:

110 Դժգո՞հ եք էս երկրի պրեզիդենտից...

— Աբա՛ ամբողջ էս-էս-էս-է՛ռիայում

Գտեք էդպիսի մի դենդի...

R. F.

(ՅՐԱՆՍԻԱ)

Հիմի գնանք Եվրոպա:

Փարիզ:

Հենց որ եկաք Փարիզ —

Դեռ կուպեում գուցե,

5 Կհանդիպի ձեզ— ինքը պ. Պուանկարեն:

— Բարև՛:—

Կերկարե իր ձեռքը:

Ձեռքը կարմիր է թեկուզ —

Բայց ոչինչ.

10 Չվախենաք.

Ձեռքը ձեռք է:

- Պ. Պուանկարեն գալանտ է:
 Ոնց որ ամեն ֆրանցուզ:
 Ձեզ կտա իր թևը՝
 15 Կանցնեք դուք թևանցուկ:
 Պ. Պուանկարեն էդպես ձեզ կտանի —
 Կնստացնի օթո:
 էնտեղ,
 Ներքևում,
 20 Կհեռ մի անիվ:
 Կթռչեք փողոցներով, ոնց որ օդով:

- էսպես գալանտ, թեթև,
 Պ. Պուանկարեն ձեզ կտանի օթել:
 էդտեղ մի փոքր կմանժեք:
 25 Հետո կտանի ձեզ կաֆե —
 «Դե զաֆեր էտրանժե»:
 Կաֆեում —
 Պ. Պուանկարեն ձեզ կտա մի դոզ կաֆեին:
 Կառաջարկե ֆիֆի:
 30 Ֆիֆի չէ, ֆրանսական փերի:
 Չմերժե՛ք:
 Չմերժեք եթե —
 Տանու մարդ եք արդեն:
 Անգամ՝
 35 Կստանաք օրդեն.
 Կդառնաք—«Լե գրան աֆերիստ»...

- Որ դարձաք՝
 Ժամը շորսին
 Կկանչե ձեզ որսի:
 40 (էդ ժամին նա սիրում է որսալ):

Կնստացնի օթո —
Կտանի Վերսալ:

Վերսալում —
Կտեսնեք դուք մի պալատ-սալոն:

- 45 Ամեն ինչ կա:
Բացի էն, որ պետք է որսալու...
Բայց Վերսալում դուք որս չտեսնեք էլ թեպետ —
Ոչի՛նչ.
Կհամբերե՛ք:
50 Օ, հին վարպետ է պ. Պուանկարեն:
Ո՛րս է ձեզ պետք.
— Երկնքից կճարե...

Մեկ էլ.
Մի փոքրիկ հանգամանք շմոռանաք երբեք.

- 55 — Պ. Պուանկարեն սիրում է իրավունքը:
Սոցիալիստ չէ թեպետ,
Բայց
Առանց իրավունքի
Չի հանի ոչ ձեր աչքը, ոչ ունքը...

- 60 Օ, ո՛չ,
Ո՛չ մի դեպքում:
Ամենից առաջ—իրավունք:
Ամե՛ն ինչ—իրավունքով:
Իրավունքով—թեկուզ

- 65 էդ
Պաշտելի
Իրավունքը —
Մարմնացնի հենց ինքը, կամ ժեներալ Դեգուտ...

էսպես է պ. Պուանկարեն:

- 70 Պ. Պուանկարեն —
Չի՛ խանհարի երբեք ուրիշի հանգիստը:

Անարխիստ եք.

— Դե՛ աչքերից հեռո՛ւ:

է՛դ է պատճառը հենց, որ զզվելի են մուսյոյի
աչքերում —

75 Առաջինը —

Գերմա՛նիան,

Երկրորդը —

Կոմունիստը...

Բայց —

80 Պ. Պուանկարեն դեմ չէ բացառությանց:

Օր.

— Կոմունիստների վերաբերյալ — ո՛չ մի
բացառություն:

Այնինչ գերմանացուն —

Կարող է և սիրել, ոնց որ իր կնոջը,

85 Ոնց որ, երևակայո՞ւմ եք, իր հարազատ կեսին...

Ինչո՞ւ չէ.

Յր. —

— Հուզո

Ստիննեսին...

90 Եվ մեկ էլ,

Որպեսզի ճշմարտությունը չզառնա զուռնա,

Պետք է ասել, որ նա —

Ճիշտ է, զզվում է սոցիալիզմից, ոնց որ գլխաւից,

Բայց —

95 Երևակայո՞ւմ եք —

Դեմ չէ —

է՛րերտին —

Սոցիալիստին...

էս բոլորի մասին գեկուցելուց հետո —

100 Պ. Պուանկարեն ձեզ կժպտա փութով —

Ու
Սեղանի տակից —
Կհանի մի փութ թուղթ...
Կկարդա՝

105 «Վերսալի դաշնագիր»:

Կետ—կետ,
Պունկտ առ պունկտ
Կհաստատի նա ձեզ,
Որ ունի .. որսալու իրավունք:

110 Ինքը:

Կարող եք—և դուք:
Որսացե՛ք —
Թե կուգեք որսալ:
Կեսը ձեզ —

115 Կեսը —

Կբերեք Վերսալ...

Զարմանքից կծու և եք ձեր շրթունքը:
Թե մի աչք ունեիք--արդեն չորս է:
Չե՛ք հասկանում.

120 էդ

Դեռ

Իրավունքը.
— Բա ո՞րսը...
Մտածում եք՝

125 — Ինչի՞ս է իրավունքը,
Մի թուղթ է, թե որ սին...

էստեղ երկրորդ անգամ
Կկծեք ձեր շրթունքը.
Շրեակայո՞ւմ եք.

130 Պ. Պուանկարեն —
Կողմնակից է մի՛-մի՛-այն—զուտ—երեկ-
նա-յին—որ-սի...

Բա՛ս:

Պարոն Պուանկարեն —
Կատարյալ ջենտլմեն է:
135 Զի՛ զարկի ձեզ երբեք —
Եթե դեմն եք:
Որսին սիրում է զարկել —
Մի-մի-այն երկնքում:
Իսկ թե դեմն է —

140 Երբե՛ք:
Ո՛չ մի դեպքում:

Հենց էս է պատճառը,
Որ պ. Պուանկարեն —
Մի աչքը—Աջա՛րիա,

145 Մյուսը—Մոսուլ է հառել...

էսպես է Պուանկարեն:
Ասպետ է:
Խոսքի տե՛րն է:
է՛դ է պատճառը հենց,

150 Որ սիրած որսն է իր —

Մեր

Հեռո՛ւ

Շ. Շ. Շ. Ք...ը...

P. S.

Մոռացանք պ. Պուանկարենի «ուրուքը»—

155 Ռուբը:

Պ. Պուանկարենի պարծանքը:

Պարոնի կարծիքով՝
էդպիսի չաղ մի որս —
Զի տեսել ոչ ինքը, ոչ աշխարքը:

160 Ռուրում —

Ածուխ է, ոնց որ գիտեք:
Իսկ ածուխը—թանկ է, քան ոսկին, կամ փղոսկրը:

Բայց
էլի —

165 Զհավատաք:

Պ. Պուանկարեի ձեռքում —
Ածուխն էլ—ծուխ է լոկ,
Կամ. —
Խոսք է:

170 Ռուրում —

Ուր որ նայեք՝ ծուխ է,
Վառվում է ամեն ինչ:
Բայց ոչ—ածուխը:
Թաց է:

175 Կարմիր է մի քիչ էլ:

Եթե իրեն մնար —
Ձեզ կզիջեր...

D. R.

(ԳԵՐՄԱՆԻԱ)

Հիմի գնանք Գերմանիա:

Գերմանիան,

Ոնց որ գիտեք —

Սոցիալ-դեմոկրատական դրախտ է:

5 Ի՞նչ եմ ասում.

Դրախտը բանտ է Դոյշլանդի հանդուր...

Փա՛ստ.—

— Առավոտից-գիշեր հարսանիք է էլետել...

Հենց որ իջաք Բեռլին՝

10 Կտեսնեք.

— Փողոցի միջով

Վազում է մի չքնաղ ֆրեյլին:

Վազում է.

Չէ՛.

15 Թռչում է.

Թռչուն է ոնց որ էդ ֆրեյլինը.

Ինքը սավառնում է,

Հետո՛ էլ զարնում է թևին —

Իսկ

20 Ամբողջ

Բեռլինը —

Վազում է ետևից...

Ամեն ոք աշխատում է բռնի:

Վազում է ամեն ոք ետևից:

25 Կանչում է,

Տենչում է,

Որն էլ փչում է հոգին,

Աղաչում է որն էլ սալոնային ունով —

Ու չի բռնում ոչոք...

30 Օ, դրախտի փերի՛ է էդ ֆրեյլինը:

Չափազանց նուրբ:

Չափազանց փուխր:

Նայում եք—կին է ոնց որ:

Աչք եք ածում մեկ էլ —

35 Ձկա.

Ոնց որ ցնորք էր,

Ոնց որ ծովի էր:

Նայում եք —

Հիանում եք՝

40 էգպիսի մի փերի չի տեսել դեռ աշխարհը:

Անո՞ւնը.

— Գերմանական Մարկ է.

Անունը,

Ոնց որ տեսնում եք —

45 Պոետիկ չէ էիքան էլ:

Բայց ինչնի՞ս է անունը.

Հո չեք կշտանա անունով:

Այնինչ ամեն գերմանացի

Կրկնում է էդ անունը,

50 Ոնց որ տերտերը «հանուն հոր»:

Իրեն տված պատվին —

Իհարկե, արժանի է էդ կնիկը.

Երևակայո՞ւմ եք.

էդ տիկնոջ շնորհիվ —

55 Ո՛չ միայն Բեռլինում,

Այլ Դոյչլանդում ամբողջ զոր-գիշեր—

հարսանիք է:

Ինքը,

Ոնց որ ասինք,

Կարծեք ցնորք է մի անգույն

60 Բայց,

Չնայած դրան,

Զոր-գիշեր թռվում է:

Պարում է:

Սիրում է, մասնավորապես, ամերիկական
պարեր:

65 Մասնավորապես—ուսնստեպ կամ տանգո:

Պարում է, բառացի, ամեն վայրկյան ու ժամ...

Պարում է ամեն տեղ:

Իր համար—թե խրճիթ,

խտրություն չգիտե:

70 Թե սալոն,

Թե Բեռլինի բիրժա:

Մոտենում եք.

Կարծում եք միտինգ է:

Բայց չէ՛:

75 էլի նա՛ է՛:

Ֆրեյլինը:

Ինքը զարնում է թևին,

Մարդիկ—ետեից:

Ֆրեյլինի հմայքին ենթակա՝

80 Բարձրանում են պատով.

Ուզում են նվաճեն երկինքը:

Անդամ լեզե՛նդ կա.

Ասում են՝

Մի անգամ,

85 Տկլոր,

Ոնց որ Ադամը,

Վազել է ֆրեյլինի ետեից —

Ինքը Հիլֆերդինգը...

Եվ նա՛ էլ,

90 էդ փառքը,

Պարծանքը,

էդ պայծառ ականածանքը սոցիալ-
դեմոկրատական Բեռլինի—

Երևակայում եք՝

Զի

95 Կարողացել

Բռնի —

էդ —

Լիրբ —

Ֆրեյլինին...

100 Բայց էդ չէ էականը:

էականն հետևյալն է:

Այն է.

Երևակայում եք.

Զնայած սոցիալ-դեմոկրատական

սիրո էդ անշափ շափերին —

105 Ասում են —

էդ

Բեռլինյան ֆրեյլինը—

Սիրում է ...հասարակ շխբերի:

Մեկ էլ

110 (Ասում են)

Օլկիանոսի վրով

Հյուր է գալիս նրան —

Իր

Պառավ

115 Ամերիկական քեռին...

.

Դոյշլանդի հաջորդ պարծանքը —

Դոյշլանդի պրեզիդենտն է:

էքերտը:

120 Ամբողջ սոցիալ-դեմոկրատական Բեռլինը
պաշտում է էբերտին, ոնց որ կաթոլիկը
պապին:

Օ, ֆրեյլինի նման
էբերտն էլ—մի հրաշք է,
Բայց... հակառակ տիպի:

էբերտը,
125 Ոնց որ գիտեք —
Սոցիալ-դեմոկրատական մի բերդ է:
Անառիկ է ավելի, քան բերդը:
Շուրջը փոխվում է ամեն ինչ —
Ինքը կա:

130 էբերտ էր,
էբերտ էլ մնացել է,
էբերտ է:

էբերտը —
Բերդ է ամեն բանով:
135 Օր.—անշարժ է, ոնց որ բերդը:
Ինքը նստած է անգործ —
Ուրիշն է բան անում:
Անշարժ է, իհարկե, հանուն սոցիալիզմի:
Մի բան է լուրջարժու —

140 Լեզուն:
էն էլ երբեմն, երբեմն,
Որ Ստիննեպին լիզի...

Պ. էբերտը,
Թե կամենաք հատուկ,
145 Թե ուզեք՝ հոգսից բարակած —
Ձեզ տուն էլ կտանի,

Ծվ էն էլ—ո՛չ թե հասարակ,
Այլ—հասարակաց...

Զվախենաք իսկի:

150 Տանո՛ւմ է —

Գնացե՛ք:

Զքաշվե՛ք—լսո՛ւմ եք— ոչոքից:

Մեկ է —

էնտեղ

155 Ոչ աղջիկ կտեսնեք, ոչ կին:

էդ տունը —

Տուն չէ՞ հո

Դրախտ է մի հատիկ:

Ճամփին —

160 Ոնց որ քրիզանթեմ է ցանած:

Ներս մտնելուց առաջ —

Վերը —

Դրախտի ճակատին —

Կլարդաք՝

165 *II ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼ*

Կրկնում եմ՝

Դուք էնտեղ

Ոչ աղջիկ կտեսնեք, ոչ բոզ կին:

Դի՞մ ներս շատած —

170 Ձեզ կգրկե Նոսկեն:

Զվախենաք:

Թեկուղ —

Հենց առաջին պահին —

Կտեսնեք մի նստուկ, մի կուզ:

175 Նոսկեն էդպե՛ս է հենց:

Մեջքը դժվար է շտկում:

Թեկուզ գլուխ շունի —
 Բայց ունի... նստուկ:
 Զարմանալի մարդ է էդ նոսկեն:
 180 Խոսելիս նա լիզում է իր թուփը:
 Խոսելիս
 Մարդ պե՛մքն է խոսակցին դարձնում,
 նոսկեն—նստուկ:

նոսկեի էդ նստուկը —
 185 Սկսվում է կուզից.
 Իջնում է մինչև տակը:
 Տափակ է:
 Վրան —
 Ոնց որ միս են թակել:

190 Չե՛ք հասկանում,
 Խեղճը —
 Դե շա՛տ է վաստակել:

Բայց շնայած դրան —
 նստուկը դեռ թարմ է:
 195 Թեկուզ ինքը —
 Լինելու է, կարծեմ, հիմա ծեր:
 Վաստակել է թեկուզ—թե կուզ, թե պատիվ:

Զարմանում եք՝
 Խեղճը
 200 էդ ո՞նց է դիմացել —
 Թե էբերտին իրան,
 Թե Ստինենսին Հուզո,
 Թե—պրոլետարիատին...

Նոսկեին ուր տեսաք —
 205 Կարող եք դուք ներս չգնա՛լ էլ,
 Միևնույնն է՝ չեք գտնի գեղեցիկը,
 էդ բախտավոր դրախտում
 Գեղեցիկը թե կա —
 էլի նա՛ է

210 Իր դժբով դեմը թե մրցի —
 էն էլ —
 Շեյդեմանը գուցե,
 Բայց կուզո՞ւմ.
 — Զի՛ հասնի երբեք էլ:

215 Մնացածը —
 Մեկ է:


ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Տեսա՞ք —
 Ներեցեք արտահայտությանս —
 Նրանց «դժբը»:
 Եվ էն էլ —
 5 Լրիվ չէ՛ էս սե՛րիան ղեռ:

Դե ասեք.— ո՞նց է մեր տանը.

Օ, երկի՛ր իմ.
 էս-էս-էս-էսիս.
 C. C. C. P.

1924



Մեռել է
Հուգո
Ստիննեսը,
Ես —

5 Բալչևիկ — արիբուն —
Ընչի՞ եմ փչում էդ մասին
էս տողերիս տրուբեն —

— Որպեսզի լա՛վ դնքսենք մենք
էդ գելի քեռուն ու փեսին —

10 Լսեցե՛ք.

Ես
Պատմեմ ձեզ —
Ստիննեսի մասին:

էստեղից է ահա, որ լսելո՛ւ նք:—

15 Ստիննեսի հանճարը —

Ավելի քան բարդ էր:

Լսե՛ք,

Լսե՛ք,

Լսե՛ք,

20 Ահա՛ թե ինչո՞վ էր հանճարեղ —

«այդ մարդը»:—

Ստիննեսը —
 Կապիտալիստ էր:
 Պարզ՝ սպեկուլյանտ:
 Բայց ո՛չ թե խուրդա-մուրդա,
 25 Ոնց որ մեր վանեցի շարին —
 Այլ ամբողջ աշխարհում առաջինը:

Գերմանիայի կեսը —
 Ստիննեսի գրպանում էր:
 Գերմանիայի օձիքը —
 30 Ստիննեսի ձեռին:
 Թոկը ձգել էր օձիքին —
 Քաշում էր ձիգ:
 Մի ծայրից ինքը,
 Մյուսից — մուսյո Պունկարեն,
 35 Այսինքն — էլի ի՛նքը, կամ իր ֆրանսական

քեռին:

Ինքը —
 Մարդ էր, ոնց որ ամենքս:
 Մեզ ամենքիս նման —
 Լոկ մարմին ու միս էր:
 40 Մի բան էր Ստի՛ննեսին
 Տարբերում ուրիշից —
 էդ նրա,
 Հուգոյի
 Եզան վիզը:

45 Օ, Ստիննեսի հանճարը — ավելի քան բարդ էր.
 Հանճարի տարօրինակ օրինակ էր այդ մարդը:

Եդ մարդու հանճարը —
 Ո՛չ թե ուղեղում էր,

Այլ —

50 Դուրսը.

Օրինակ Ռուրում:

Կամ Յեյլոնում գուցե:

Մի խոսքով—ուր որ կուզեք,

Միայն թե—ո՛չ թե գանգում,

55 Այսինքն՝ սովորական տեղում:

Ինքը նստած իր տեղում

Ուտում էր ուտորից:

Իրա տեղը աշխատում էր —

Ծանր ինդուստրին:

60 Ինքը նստած էր մեջտեղում,

Ուղեղը — հեռուն:

Ուղեղն էլ—ուղ չէ՞ր հո հասարակ.—

Թելե՛ր.—

Եվ է՛ն է՛լ—ո՛չ թե հեռագրա,

65 Այլ

Ոսկեղե՛ն:

Այլ —

Ա՛կցիա,

Կամ —

70 Բա՛նկ.

Մի խոսքով —

Ոսկի.

— Մարկ,

— Դոլլար,

75 — Ֆրանկ:

Դեռ 901-ին

Ստիննեսը միլիոնե՛ր էր:

Ունե՞ր —

1.000.000 մարկ:

- 80 Իսկ 910-ին —
Արդեն 60 միլիոն,
Քիչ անց —
100...
(Իսկ դու գիտե՛ս, բանվոր.
- 85 Բանվո՛ր, գիտե՛ս դու երևի,
Բարիքը —
Ձի ծնվում ինքն իրեն,
Ոչ էլ ընկնում է արևից.
Բարիքը —
- 90 Ի՛նքդ ես շինում,
Մեկ էլ ընկերդ —
Քեզ պես բանվոր.—
Իսկ դու ոչի՛նչ չունես,
Դոյլանդում ընկերդ դեռ կաղում է անոտ:
- 95 Բարիքը —
Քո՛նն է,
Քո՛նն է, բանվո՛ր,
Քո՛նն է՝ ինչ կա բարդած:
Ձե՛ս հասկանում.
- 100 Խելո՛ք,
Վերցրու Մարքսը կարդա)...

Ստիննեսը միլիոններ էր,
Երբ պայթեց պատերազմը:
Պատերա՞զմ է.
- 105 Լա՛վ.
— Ստիննեսը պատրա՛ստ է:

(Օ, Ստիննե՛սը գիտե՛ր.
Ստիննեսը հենց ինքն էր պատրաստել
պատերազմը):

Պատերազմ է...

110 է՛յ-յ՛յ՛յ՛...

Բարձրացի՛ր էլ —

Բանվո՛ր,

Քշի գնա՛.

Բեր —

115 Բե՛լգիան:

Միացրու Ռուրին:

Թքա՛ծ թե գնով քո մսի.

Ռուրը — հարկավո՛ր է,

Հարկավոր է — Հուգո Ստիննեսի՛ն...

120 Ի՞նչ.

Արնաքա՛մ է աշխարքը.

Օ, էդ ոչինչ.

— Ստիննեսը հանգի՛ստ է.

Անգամ ուռչում է ինքը,

125 Անգամ շահում:

Պատերազմը քանդո՞ւմ է.

Ո՞ւմ.

Բուրրի՞ն.

— Ինչքան ուզում է, թող քանդի.

130 — Ստիննեսը հրճվում է.

— Ստիննեսը ճախրում է Դոյլանդից անդին:

Է՛յ,

Բանվո՛ր,

Ռումբ բեր,

135 Բեր բումբ,

Բեր — թնդանոթ.

Ստիննեսը ուզում է ֆրանսական լոթարինգը.

— Փարածուխ պլյուս կոքս՝

Պլյուս երկաթ,

140 Պլյուս պղինձ,

Պլյուս չուգուն —

էս բոլորն հարկավոր է—Ստի՛ննեսին Հուզո՛ւ,
է՛յ,

Բանվոր,

145 Շտապիր դե —

Դեպի Վերդեն:

Շուտ,

Բե՛ր

Ռումբեր:

150 Պատերազմը բիրտ է,

Պատերազմը բերդ.

Օ, շտապի՛ր դե,

Օ, բեր թոփեր:

Ի՞նչ.

155 Բանվորը քիչ է.

— Քշե՛լ լիեծից:

— Անտվերպենի՛ց հանել:

— Թքած թե արյուն կթքեն.

— Դատարկ բաներ:

160 Ստիննեսը ուզում է,

Ստի՛ննեսը...

— Ա՛խ:

— Թր—ախկ:

— Չեղա՞վ...

165 — Հեղափոխութ՜յն... —

Ոչինչ:

Ստիննեսը կսպասի՛ դեռ:

Ստիննեսը գիտե.—

— Ոնց որ կան բոզ կիներ —

170 Կան

Նոսկեններ.

Կա

Շիյդեման.

Կա

175 է՛բերտ.

Իսկ էբերտի բերդում Ստինենսը ասլա՛ն՝վ է,

Ո՞վ է,

Որ դնելու է թաթը Ստինենսի վզին.

Ի՞նչ.

180 Ոմն

Լեվինե՛...

Օ, նոսկեն կենդանի է,

Նոսկեն, ոսկի՛ է էդ բանում —

Ստինենսը գիտե՛...

185 ...եվ ընկավ Բավա՛րիայում

Եվգենի

Լեվինեն...

է՛բերտը նստեց:

Նստեց նոսկեն:

190 Ու իր թաքուն թուղով

է՛բերտին բրթեց էլ Ստի՛նենսը Հուզո:

Ու հալում էր մարկը —

Ստինենսը ուռչում էր.

Ու գնում էր Ստինենսը,

195 Ինչ որ չունեի:

Հանք:

Քարածուխ,

Կոքս:

Տրա՛նսպորտ:

200 Կոֆե՛ է հարկավոր —

Կգնե Մարո՛կկոն:

Միլիոն բանվոր:
Միլիոնավոր ճորտեր:
Ի՞նչ.

205 Մամուլի կարծի՞ք.

— Թքած վրեն:

Հուզոն —

Կգնե մամուլը.

— Տվե՛ք դես պրես-բյուրոն:

210 Ռազիո-տրեստ:

Պրես-ընկերություն:

Թերթ:

Գազեթ:

Թուղթ:

215 Էլ մեռի՛ր, Գերմա՛նիա,

Հուզոն հո կա՞.

Հուզոն կլակի՛ դեռ

Քո բկին չոքած:

Բանվորը բողոքո՞ւմ է.

220— Ինչքան ուզում է թող բողոքի:

Բանվորին

Կտա նա —

Մի տաք կողինք:

Բանվորին —

225 Հողե անկողին:

Ի՞նչ.

Ինչ-որ Կոմ-Կո՞ւա.

Կոմկուսից կուզի՛ նա—արյան տոկոս:

Կոմկուսին կկապի նա ռա՛յխսվերի թոկով:

230 Ի՞նչ.

— Բանվորը ուզում է դեռ ուտի՞.

— Դե թող աշխատի նա.

— 8-ի տեղ 10 ժամ կամ շատ.

— Ով շունի—փոշի՝ է Ստիննեսի ոտին,

235 — Բանվորը —

Գիտե՞ հո,

Որ սով է ներկայիս:

Բանվորին— էբե՛րտը.

Թող համոզի՛ նա,

240 Եթե ոչ—կթռչի՛ իր գահից՝

Եթե ոչ

Ստի՛ննեսը կշարժի իր ձեռը —

Կշարժվի ռայխսվերը.

Կդողա իր տակը —

245 Ռայխստագը.

Ձլսեց՝ մեկ թե —

Կհանի Սեկտեր.

Կամ —

Կյուդենդո՛րֆ կա,

250 Կամ կա—ֆաշիզմ:

Կքերթե՛ ֆաշիզմը է՛բերտի կաշին...

.

.

Ստիննեսը չկա՛ էլ,

255 Ստիննեսը մեռավ,

Բայց դեռ կա իր թաթը

Դոյշլանդի վրա:

Էնտեղ

Էսօր էլ կան դեռ —

260 Անթիվ բանտեր:

Բանտերում—անթիվ կոմունիստ:

Էնտեղ դեռ կենդանի է —

Ստիննեսի փեսան,

Կամ,
265 Որ միևնույնն է —
Ստիննեսի քեռին:

է՛յ,
Դոյլանդի ընկե՛ր,
Կամ չարդի՛ իր ունիւր,
270 Կամ կովով մեռի:

Դու դրանց վիզը
Հալ
Ուորի՛.
Ստիննեսը քեռի՛ն էր

275 էդ
Բուլորի.
Ստիննեսը խելո՛ք էր,
Եւ յոյ՞ —
Մոռացել էր

280 Մեզ
Բուլորիս:
Ստիննեսը չգիտե՛ր դեռ
Դոյլանդի բանվորին:

է՛յ,
285 Ստիննեսի փեսա.
Չմոռանա՛ս նրան դու
Հսո՛ւմ ես՝
Քեզ —
Մեմորանդո՛ւմ. —


290 — Մենք —
Դեռ կգա՞նք:
Կհիշի՛ քեզ դեռ —

Մեր
 Կոմիտեներնը,
 295 Միլիոն կյանքերի
 Կերե՛լ ես:
 Դո՛ւ:
 Եվ էդ էլ—դեռ դեն:
 Բա Լեվինե՞ն,
 300 Բա —
 Ռոզա
 Լյուքսեմբուրգը:
 Լիբկնեխտն աբա՞...

է՛յ,
 305 Պրուետա՛ր,
 Հիմա լսի՛ր.
 — Չմոռանա՛ս երբե՛ք դու —
 Հուզո
 Ստիննեսի՛ն.
 310 Ստիննեսը—մեղ դե՛մ էր,
 Բայց Ստի՛ննեսը—հեշ.
 Էականն է—սխտեմը,
 Էականն է — է՛դ:
 Էլ սրանից հետո
 315 Ինչքան բուրժո՛ւյ տեսնես դու—
 Դեմքին կարդա՛.—
 Աստ
 Հանգչի աճյուճը
 Հուզո Ստի՛ննեսի:

320 է՛յ, պրուետար—
 Չմոռա՛նա՛ս նրան,
 Քանի կա կապիտալիզմը դեռ երկրի երեսին:

1926



I

Ապրում ես, շնչում ես, դու դեռ կաս — բայց ամեն
վայրկյան դու ա՛յլ ես.
Անցյալ է դառնում քո ներկան — ու ամեն վայրկյան
դու ա՛յլ ես.
Բայց ներկան քո — հո՛ւնտ է գալիքի՝ մեռնելով —
նա սնում է գալիքը,
Եվ այսպես — տեում ես դու երկար, — ու ամեն
վայրկյան դու ա՛յլ ես:

II

Քո ամեն ակնթարթը մի սերմ է,
Որ կրում է իր մեջ իր մահը.
Բայց հոգին քո — խնդուն ու անահ է
Եվ մի՛շտ խանդավառ է ու ջերմ է:

III

Նա թե՛ կյանք է, թե՛ մահ. — ակնթարթը.
Անհատնում հատնում է, վառք է. —
Եվ այսպես՝ մշտատև է աշխարհը.
Անդադար թարթում է — ու անթարթ է:

IV

Նա հոսում է, ալիք առ ալիք,
Եվ ամեն վայրկյան — այն չէ՛.

Եվ ամեն մի վայրկյանը — հնչեղ
Ներկա է, անցյալ — ու գալիք:

V

Ես քեզ ո՞նց, քեզ ո՞նց հասկանամ,
Ես քեզ ո՞նց ամփոփեմ ուղեղում իմ,
Երբ չեկած՝ դու արդե՛ն իսկ չկաս,
Բայց հա՛ր դու լինում ես — ու տեսնում ես:

VI

Անցնում է, հոսում է, վարար է,
Ելնում է, սուզվում անդադար.
Մշտապես մեռնում է — ու հար է:
Մշտապես ու հար — անկատար:

VII

Օ, խմի՛ր, խմի՛ր դու ազահ.
Օ, խմի՛ր քնդադար այս հատնումը.
Կորածը — իրեն նա գտնում է,
Եվ իր այդ գտնումով — չկա:

VIII

Այս գետը, — նայի՛ր. — նա հոսում է,
Քեզ թվում է թեկուզ անփոփոխ:
Իսկ քո փառքը, հիմար, երազում է —
Հավերժական կոթող:

IX

էյ, դո՛ւ, իմաստո՛ւն վարպետ,
Որ տաշում ես, տաշում այդ քարերը.
Քո ամե՛ն մի, ամե՛ն մի զարկին
Իր նիշը արդեն նա դրել է:

X

Նա կրկին ասում է.— «Գարունը
Ծաղկելու է էգուց վարդերով իր»:
Սակայն ո՞ր արևն է հուրհուրում այդ
Եվ ո՞վ է այդ նո՞ր արտևորը...

XI

Վերցնում ես քարը — մտածում ես.
«Հետքեր է կրում նա ջրի» —
Բայց չէ՞ որ այդ նո՞ւյն վայրկյանին հենց
.իր վրա դու քո ձեռքը դրիր:

XII

Մի անցորդ անցավ քաղաքից այս
Ու գնաց, ու շեկավ նա ետ:
Եվ քաղաքը — կրկին գեղեցիկ է,
Նայում եմ նրան — թեև ե՛ս:

1 XIII

Դու ամե՛ն վայրկյան քեզ ժխտում ես
Ու այդպես ժխտելով՝ հաստատում.
Պարտըվում ես դու քեզ ու հաղթում ես,
Սակայն մի՛շտ՝ այդ դո՛ւ ես — ու դո՛ւ:

XIV

Անտառը թափում է իր սաղարթը,
Անտառում հատնում է ու վատնում.
Բայց նայի՛ր — ինչքա՞ն նա զվարթ է,
Ինչքան նո՞ր է — ու մի՛շտ անհատնում:

XV

Դու ոսկի գրիչ ունես, դու այնպես իմաստո՛ւն ես.
 Ինքդ քեզ հրաժեշտ ես ասում, ինքդ քեզ կրկի՛ն
 քնդունում ես—
 Գիտես, որ՝ լինելով է լինում, հատնելով է անհատնում
 այս առնօր —
 Եվ մի՛շտ ծիծաղկուն է հոգիդ ու սիրտդ՝ մշտապե՛ս
 խնդո՛ւն է։

XVI

Թե կտոր տեսնես մի ամպի — ասա՝ սա ուրի՛շ է
 արդեն,
 Թե նստես, թե իջնես թամբից — ասա՝ սա ուրի՛շ է
 արդեն,
 Վերադարձը դարձ չէ այլևս և ո՛չ էլ կրկնություն հնի,
 Քո անցած ամե՛ն մի ճամփին ասա՝ սա ուրի՛շ է արդեն։

XVII

Նա գնաց ու կրկին եկավ — երեկվա իմ սիրած
 սիրեկանը,
 Բայց տեսա, որ արդեն չկա — երեկվա իմ սիրած
 սիրեկանը։
 Կանգնած է մի երրո՛րդը դեմս.— այդ նա չէ՛ այլևս,
 նա չէ՛.—
 Եկած է — ու կարծես չեկած — երեկվա իմ սիրած
 սիրեկանը։

XVIII

Երկնքից թռչում է մի թռչուն.— քո ներկա՛ն է այն,
 բարեկա՛մս.
 Ինքն իրեն ժխտող մի հնչյուն.— քո ներկա՛ն է այն,
 բարեկա՛մս.

Նա գնաց — ու կրկին դարձավ. — այդ նա՞ է արդյոք,
 Թե ուրիշը...
 Դու նրան էլ չի՛ս ճանաչում... քո ներկա՛ն է այն,
 բարեկա՛մս:

XIX

Դու մի օր աչքերդ կփակես, որ ուրիշը քո տեղ գոյանա.
 Կգնաս, կանցնես աշխարհից, որ ուրիշը քո տեղ
 գոյանա:
 — Այն դո՛ւ ես, իմաստո՛ւն, այն դո՛ւ,— բայց արդեն
 դարձած մի ուրիշ.
 Հաստատեց, ժխտելով, նա քեզ, որ ուրիշը քո տեղ
 գոյանա:

XX

Ինչ թո՛ւնդ է քո գինին, իմաստո՛ւն. նրանից իմ հոգին
հարբում է.
Դա գինի՞ է, թե խո՞սք է ազդու. նրանից իմ հոգին
հարբում է.
Պմեկո՛ւ ես, մահո՛ւ՛մ իմ սերած, խմելու ես դու
է՛լ այս գինին,
Ճթե այս պարտեզը գաս դու.—նրանից իմ հոգին
հարբում է.

XXI

Դու քսում ես հոնքերիդ սուրմա — դու անհո՛գ ես.
 Ինչո՞ւ է տրտնջում զուր նա — դու անհո՛գ ես.
 Պս գիտեմ թե՛ տրտունջը նրա, թե՛ քո այդ պայծառ
 խնդությունը.
 Տո՛ւր դու ինձ մանկություն, տուր մա՛ր,— դու
 անհո՛գ ես:

XXII

Դու ինքդ քո մեջ միասիրտ.— ինչ որ կաս՝ նա կա
ու այդպե՛ս է։
Դու տրվում ես մեզ մի՛շտ միասին.— ինչ որ կաս՝
նա կա ու այդպե՛ս է։
Բացվում ես, լինում, գոյանում — հառնելով հենց
ի՛նքդ քո դեմ՝
Պատմում ես դու մի՛շտ քո մասին.— ինչ որ կաս՝
նա կա ու այդպե՛ս է։

XXIII

Ախ, նայե՛ք, այդ մարդը, այդ հիմարը.— նա տեսնում է։
լուկ այն, ինչ տեսնում է։
Հավատում է նա, որ սա քար է. նա տեսնում է լուկ
այն, ինչ տեսնում է։
Դու ծաղրի՛ր նրան, իմաստո՛ւն. դու տեսնում ես
աճումն ու ընթացքը
Եվ գիտես, որ ընթացք է աշխարհը,— նա տեսնում է
լուկ այն, ինչ տեսնում է։

XXIV

Այդ կապիկը՝ ձեռքին հայելի — նա կարծում է՝
արդեն իմաստուն է։
Ժպտում է հայելուն նայելիս — նա կարծում է՝
արդեն իմաստուն է։
Ախ, նայե՛ք՝ ինչպե՛ս է սեղմել նա փայլուն ապակու
այդ կտորը,
Իր միրաժն է տեսել նա էլի — և կարծում է՝ արդեն
իմաստուն է։

XXV

Այդ դերվիշը — տեսե՛ք՝ նա նստած ուզում է ըմբռնի
 ու հասնի.
 Իր մտքի թևերին վստահ՝ ուզում է ըմբռնի ու հասնի.
 Նա կարծում է, որ փոխվում է ամբողջը, և իր միտքն է
 միայն, որ կայուն է,—
 Եվ այդպես՝ անշարժ ու հաստատո՝ նա ուզում է
 ըմբռնի ու հասնի...

XXVI

Դու ասիր՝ նայել, հասկանալ, ու սուղվել, ու դառնալ
անէ.—
Նա ասաց՝ լինել, կատարել, ներծծել հուրեր ու շողեր:
Դու ասիր՝ ամփոփել ամբողջը, հաշտըվել ու
խաղաղ լինել,—
Նա ասաց՝ ամբողջի՛ն տիրանալ, որպեսզի ամբողջը —
փոխել:

XXVII

Դու ասիր՝ անէ՛ք է ամբողջը, աշքերիդ իշած մի շղա՛րշ է .
Դու գերի՛ ես, մա՛րդ, ուղեղիդ, ուղեղիդ անէ
վանդակին:—
Նա անդուլ պնդում համարեց թե ուղեղը այդ,
թե շղարշը —
Եվ ելավ, որ փոխի այդ շղարշը — և մահին խնդաց
խնդագին:

XXVIII

Նա կուզեր, որ լինի անէ,
Որ Բվա լոկ, լոկ լինի հարց.

XXXII

Մի հարուստ է անցնում փողոցով,— ախ, նայե՛ք՝ նա
 ինչքա՛ն ինքնագոհ է.
 Մի ժպիտ կա դեմքին խոցող,— ախ, նայե՛ք՝ նա
 ինչքա՛ն ինքնագոհ է.
 Նա կարո՞ղ է հասկանալ, այդ հիմարը, որ շուրջը
 ուռճանում է իր մահը
 Եվ տեսնել այդ ձեռքը սղոցող,— ախ, նայե՛ք՝ նա
 ինչքա՛ն ինքնագոհ է:

XXXIII

Մտե՛լ են տոնական դռներից — և դրախտ են կարծի
 այս տունը.
 Սահմանված ձեռքով մի վերին՝ անխա՛խտ են կարծի
 այս տունը: —
 Ետևի դռներից մենք մտանք՝ քանդելով սյուներն ու
 հիմերը —
 Եվ գիտենք՝ ձեռքերով ձեր շինված մի զնդա՛ն է
 անձև այս տունը:

XXXIV

Մի հարուստ դերվիշ էր եկել. նա ասում էր, թե
 ցնո՛րք է կյանքը.
 Անիմաստ, անգո մի տեսիլ, երկնային մի շնո՛րհք է
 կյանքը.
 Դու շարժե՞լ ես արդյոք բազուկներդ, վաստակե՞լ ես
 արդյոք ու հոգնել,—
 Ուրեմն գիտե՛ս դու անշուշտ, թե ինչո՞վ է, որ նորք է
 կյանքը:

XXXV

Դու հարուստ չե՛ս եղել երբեք,— դու կյանքում միայն
 աշխատել ես.
 Դու ունեւ մկանուտ ձեռքեր,— դու կյանքում միայն
 աշխատել ես,
 Դու փոխում ես նյութը, բնությունը, դու գիտես,
 որ ամե՛ն ինչ փոխվում է.—
 Կհնձե՛ս դու մի օր կյանքի բերքը — դու կյանքում
 միայն աշխատել ես:

XXXVI

Ապրեցիր դու ըմբոստ մի դարում — և ոչինչ քեզ հար
 չթվաց,
 Դու տեսար մոտիկն ու հեռուն — և ոչինչ քեզ հար
 չթվաց.
 Դու տեսար փլուզումն ու զարթնումը, անսասան
 հիմերի կործանումը—
 Եվ, բացի պայքարից, աշխարհում քեզ ոչինչ հար
 չթվաց:

XXXVII

Դեռ երեկ քո միտքը խավար էր,— իմաստուն ես
 արդեն հիմա դու.
 Դու տեսար վիթխարի այս արարը,— իմաստուն
 ես արդեն հիմա դու.
 Դու տեսար պատմության խոհանոցը, միացիր
 ճենճերում դու նրա —
 Եվ գիտես, թե ո՛վ է խոհարարը... Իմաստուն ես
 արդեն հիմա դու:

XX XVIII

XXIX

XL

XLI

Նա զվարթ ժպտում է ծովին, նա սիրում է հոսուն
այդ՝ անհունը —
Բայց ահա հեռանում է անդարձ. — այդ դո՛ւ Կա գուցե,
իմաստո՛ւն:

XLII

Նա ուզում է գտնել մի կշիռ — ու չափել նրանով
ամբողջը,
Ունենալ անխախտ մի հաշիվ — ու չափել նրանով
ամբողջը.
Նա սիրում է «հավերժը» միայն. ախ, նայե՛ք՝ նա
փնտրում է «կայունը» —
Եվ գտնում է մի... գինու շիշ — ու չափում նրանով
ամբողջը:

XLIII

Նա կուզեր, որ ողջը նրան միանգամ ընդմիշտ տրվի,
Որ կյանքի իմաստը հուրհուրան միանգամ ընդմիշտ
տրվի.
Դու գիտես, որ ընթա՛ցք է աշխարհը, գոյանում է ու
լինում անվերջ —
Եվ գուցե քեզ մա՛հը միայն միանգամ ընդմիշտ տրվի:

XLIV

Ծնվում է, աճում է մի բան յուրաքանչյուր վայրկյան
կյանքում.
Մեռնում է, կորչում է մի բան յուրաքանչյուր վայրկյան
կյանքում.
Բայց ծնվողը — ծնվում է պայքարով, պայքարո՛ւ՜լ է
մեռնում և մեռնողը, —
Եվ այսպես — կոփվում է ապագան յուրաքանչյուր
վայրկյան կյանքում:

1922-1925



Ք Ա Ք Ո Ւ

Այստե՛ղ է ապրում Կրակը:
Ու Ոսկին, տա՛ք Ոսկին հոսում է հուր-հուր,
Հոսում է վառվռուն —
Վարը,

5 Զղուտ երկրի երակների միջով:

Վարը,
Հողի ծոցում,
Եփվում է թեթ Ոսկին:
Ոսկին ծփում է հորդ, օվկիանի նման:

10 Ու նժույգներ բոցե,
Որ չեն մեռնում իսկի —
Վարը, երկրի խորքում, վրնջում են հիմա:

Բաշերը խփում են հողին,
Վարից ձգտում են վեր
15 Ու փնտրում են ելքի՛, ազատության ուղի:
— Կարմի՛ր, կարմի՛ր ձիեր.
Զիեր Կյանքի՛, Կամքի, Ազատության, Ուժի՛,
Ժամանակի՛ ձիեր...

Խելապտույտ՝ երկրի զնդաններում կորած,
20 Երկրի անհուն բանտում —

Նրանք ձգտում են վեր, որ աշխարհի վրա
Փռեն կարմիր խնդում:

Նրանք ձգտում են վեր,
Հավաքվում են երկաթ վիշկանների ներքո,
25 Որ վրնջան գվարթ և լույս աշխարհ հանվեն —
Աշխատանքի հզո՞ր բանականների ձեռքով...

Ինչքա՞ն է դեռ անցել այն օրերից մռայլ,
Երբ դեռ Ոսկին՝ հանված բանվորների ձեռքով —
Դեղնություն էր թափում նրանց գլխի վրա
30 Ու ճնշում էր նրանց իր սև կամքի ներքո:

Երբ դեռ Ոսկին դեղին,
Ստրկության Ոսկին
Հոսում էր վեր՝ երկաթե վիշկանների միջով —
Եվ իրեն կյանք տվող բանականների գլխին
35 Վառվում էր սև մաղձի դառնության բոցով:

Ոսկի՞ն, Ոսկի՞ն դեղին,
Որ դաժան կամք դարձած տարիների ցանցում —
Նրանց, որ դուրս բերին իրեն կրծքից հողի —
Երականներն էր վառում ու աչքերը խանձում:

40 Երբ դեռ Բաքուն, Կասպից հոնդալից ափով
Ու երկաթե դաժան ժանիքներով իրա
Բացվել էր սև, որպես բազմություններ լափող
Մի վիթխարի բերան,

Երբ, երկաթե իր սև ծնոտներով խոնավ
45 Նա քրտինք էր ուտում ու մկաններ ծամում —
Ու թքում էր հևոտ, դեղին խորիւի նման
Նրանց — Կասպյան ճղճիմ, թարախահամ
բամուն...

Աշխատանքի հսկա բանականների հանդեպ
նա իր հսկա ու սև վիշկաններն էր սրում —
50 Բայց փոթորիկն անցավ, տիեզերքնհրճանդեց—
Ու կանգնել է հիմա նա, կարմրավառ ու վես,
Դրոշակի նման—ու նայում է հեռուն...

Եվ հիմա՛ էլ, ինչպես այն օրերում մռայլ,
Հողի ահեղ ճնշման ու ծանրության ներքո
55 Ոսկին տնքում է սև կապանքներից իրա,
Ուզում է վե՛ր ելնել հաղթանակի երգով:
Տիեզերքներ շինող հսկանների նման,
Մի մութ կամքով երկրի զնդանները բերված —
Երկրի խորքում հիմա
60 Հռնդում են նավթի վուլկանները գերված:
Վրնջում են, ցնդած նժույզների նման,
Ահեղ ցնցում են սև գլուխները գազն —
Ուզում են դո՛ւրս թռչել ու արշավել հիմա
Քաղաքներից-քաղաք ու եզերքից-եզերք...

65 — Հանե՛ք նրանց հիմա,
Հանե՛ք նրանց երկրի զնդաններից մռայլ,—
Եվ թող վառվե՛ն նրանք, արևների նման,
Խավարներում կորած քաղաքների վրա.

Նորի՛ց նրանք թող՝ մութ զնդաններից ելած՝
70 Կայարանում կանգնած գնացքներին լծվեն,
Մեքենաներ շարժեն,
Տարիների թողած հոգնությունը լվան
Եվ այգերի՛ նման հոգիներում բացվեն:

Ոսկի՛ն, կարմի՛ր Ոսկին
75 Թող հորդահոս հոսի —

Ու հուրհրա՛ հեռուն, որպես բախտի նշան.
Կամքի՛ նման թող մեր երակներին խոսի
Ամեն վայրկյան ու ժամ:

Հանե՛ք Ոսկին հիմա,
80 Հանե՛ք Կրակը թեժ,—
Ինչպես առյուծը՝ ձեր երակներում կարմիր —
Ոսկի՛ն, կարմի՛ր Ոսկին
Թող աշխարհից-աշխարհ ու եզերքից-եզերք
Արևավա՛ռ վառվի:

85 Աշխատանքի՛, Կամքի՛, ո՛վ բանականեր հսկա,
Վաղվան Արև-հույսի ու հաղթության երգով—
Հանե՛ք գալիք կյանքի ու խնդության Ոսկին
Եվ աշխարքի վրա թափե՛ք զվարթ ձեռքով...

Հանե՛ք, հանե՛ք ցմահ,
90 Եվ թող ձեր բյո՛ւր հոգում
Նվիրական ապրի՛, դրոշակի նման —
Բաքուն...
— Կարմի՛ր Բաքուն...

1922

* * *

Ընկեր գյուղացի

էսօր

Դու.

Ի՛նքդ պիտի

5 Տեր կենաս դաշտիդ ու հացիդ...

էսօր

Քո

Բերքը տուր —

Մի շնչին մասը բերքիդ,—

10 Որ

Վաղը —

Եկող աշնան —

Քո դաշտը շնկշնկա՛, երգի՛...

էսօր

15 Թե

Ընկեր գյուղացի

Գնեցիր մի «աբլիզաց» —

էկող աշունքվա քո հացին

էլ ո՞վ,

20 Ո՞վ

Մոտ կգա:

էսօր
Ի՞նչ պիտի տաս,
Քո դաշտին, գութան ու մաճիկ
25 Որ վաղը ավելի խնդա,
Քո սիրտը—և արտդ աճի:

1922

Հ Ր Ա Վ Ե Շ Տ Ի Պ Ո Ն Ձ

1

Երևա՛ն,

Քեզ

Իմ խապոտ ճի՛շը էսօր.—

Ես

5 Թողնում եմ մի տարով
Փողոցներդ նեղ ու քոսոտ:
Գնում եմ

Նորից

Հյուսիս.

10 Գնում եմ — Մոսկով,

Ռուսեթ:

Թող

Ձանգուն

Ձնգալով հոսի —

15 Թող խոսի ինչքան կուզես,

Ինձ

Ի՞նչ...

Ի՞նչ Արովին.

Մեզ, որ տանն ենք լուսնի՝ վրա էլ:

20 Էնտեղ —

Մի ուրիշ երգ կթովի

Մեր հոգին խենթ ու ջահել:

էնտեղ —
Գիտե՛ս, Երեա՛ն,—
25 Մարդու սիրտը դառնում է դճուլ...

Թռի՛չք կուզես.
— Կտա՛,
հենթությո՞ւն.—
— Բո՛ւ...

30 էնտեղ
Մարդ
Կարող է թամբել
Իր թռիչքը, որպես ձի մի խելառ:
էնտեղ

35 Օրերը
Բոթում են անհամբեր.
Տալիս են,
— Ա՛ն...

Բայց
40 էլի
Ցը —
տեսություն...
Բայց էլի —
Մնաս բարո՞ւլ...

45 Չգիտե՛ս,
Որ
Ճա՛նճն է՛լ է խայթում,
Եթե սիրտը լցված է շաքարով...

Ինչքան էլ տագնապով
50 էնտեղ
Ինձ քշեն օրերը ոսկի —

Մի'րտս,
Մի'րտս շաբարե
Կհիշե, անգի'ն իմ, քեզ էլի...

- 55 Հնվատա,
Զքնաղ իմ,
Խոսքիս...
Երևա'ն,
Հոգիս,
60 Սիրելի'ս...

1922

Ծ Ո Վ Ա Փ Ի Ն

(Ծեր ձկնորսը և երկու կարմիր արմեյցիներ)

Ծփծփում է ծովը:

Սրթսրթում է:

Արևը ելնում է զնգոցով:

Ծտևում —

5 *Հայրենի՛քս է՝*

Մեր

Հզոր

Միությունը:

Դեմը ծով:

10 *Ծտևից —*

Բարձրանում է արևը:

էնտեղից, ուր թողի, որ գնամ:

էնտեղից, ուր բանվորը հաստատել է

իր դիկտատուրը հիմա:

15 *Ելել է էնտեղից պրոլետարը*

Ու ոնց որ արևը հուր ու շողք՝

Փռել է վառ բառեր պայքարի

Մոսկովից՝ Նյու-Յորք:

Իսկ դեմը —
20 Եվրոպան է:
Անժանոթը:
Պահվել է ծովերից անդին:
Ու պահել է բանտերում անգութ իր —
Պրոլետարներ անթիվ:

25 Շոթենկել է էնտեղ, ծովից դենը.
Սնդմել է իր քար թաթերով —
Հռոմը,
Ռուրը,
Բեռլինը —

30 Ամենուր—մե՛րոնց...

Ինչո՞ւ—
Մտածում է գանգս —
Մեր հզոր հողմերի թափից—
Մեր հզոր հողմերի արձագանքը
35 Չքանդեց բերդերն է՛ն ափի:

Մտածում ու նայում եմ ծովին:
Իսկ կողքիս—ծեր մի ձկնորս
Երկաթե, վարժ ձեռքով իր
Նետում է իր կարթը դեպի ծով:

40 Նրա մոտ կանգնած են լուռ
Երկու ռուս կարմիր արմեյցի.
Նայում են աչքերով լուրթ —
Ձկնորսին,
Ծովին,

45 Ինձ:

Ձկնորսը նետել է դեպի ծով
Իր կարթը. սպասում է որսի:

Ու խոսում է:
Կարմիր արմեյցիք
50 Հսում են զրույցը ձկնորսի:

Ձկնորսը — թեկուզ ծեր — սակայն
Եղել է բանակում Կարմիր:
Բայց պատմում է նրանց հիմա նա
Ձկնիկի մասին մի առ մի:

55 — Առաջին ձուկն աշխարհում —
Ֆորելն է — ասում է — հայերի,
Ֆորելից լավ ձուկ — չիք,
— Իսկ հայերը...
— Մարդ են: Ոչինչ...

60 Հարցնում է էստեղ արմեյցին.—
— Կովո՞ւմ են—ասում են—հայ ու թուրք...
Ձկնորսը.—
— Շիշտ է,
Առաջ:

65 Իսկ հիմա—ապրում են, ոնց որ դուք...
— էդ առաջ էր, այո, երբ ցանցեր
Ու թակարդ էր դնում թագավորը...
Ամենայն.—
Ուրեմն նրանց է՛լ

70 Հաշտեցրեց բանվորի դիկտատորը...

Ասաց—ու նայեց դեպի ծովը:
Ձկնորսը՝ աչքը կարթին:
Ու տիրեց լոռիթյուն:
Խշշացող
75 Ծովային լոռիթյուն խրթին:

- Աչքը միշտ հեռուն—ծովին,
Աչքերում կարոտ մի հրձիգ՝
Հարցրեց հնչուն ձայնով իր
Մի պահ անց երկրորդ արմեյցին.—
- 80 — Էնտեղ է՛լ կան անթիվ մարդիկ,
Եվրոպում... բանվորին—էնտեղ բա՛նտ է...
Բայց ընչի՞ մեր գցած կարթին
Մոտ չեկավ, չընկավ եվրոպա՛ն դեռ...
— Խե՛-խե՛-խե՛—
- 85 Ժպտաց ծեր ձկնորսը.—
Եվրոպան հիմա—ոնց որ ձուկը.
Դեռ փորձում է...
Երկար կփորձի՛ դեռ...
Դեռ կտցում է...
- 90 Սպասի՛ր.
Եվրոպի բուրժույզ
Որքան էլ արգելքներ բարդի —
Միևնույնն է —
էգուց ընկնելու է՛
- 95 Մեր ծերուկ Իլլիչի կարթին...
Ասաց—ու ժպտաց ծեր ձկնորսը,
Արմեյցիք նայեցին ծովին:
Աչքերում —
Եվրոպա՛ն էր —
- 100 Հեռու որսը թովիչ:
Բարձրանում է արևը:
Ու երկար
Դեռ նայում էին դեպի ծով
Երկու ռուս արմեյցի երկաթ
- 105 Ու ծերուկ,
Ռուս մի ձկնորս:

- Մտնում էր ծովը:
 Աղմկում էր:
 Ու ծովի ծփանքից հերսոտ
 110 Իմ հոգուն երկա՞ր դեռ խոսում էր—
 երկաթե,
 Մեր մի ձկնորս.—
 — Սպասի՛ր.
 Եվրոպի բուրժույզ
 115 Որքան էլ արգելքներ բարդի —
 Միևնո՛ւյնն է՝
 Էգուց ընկնելու է
 Մեր ծերուկ Իլիշի կարթին:

1924

Դ Ե Պ Ի Ս Տ Ա Մ Բ Ո Ղ

1

Ճեղքում է ջուրը ճղփոցով
«Բուկովի՛նա» նավը:
Վերևում — երկինքը:
Դեմը ծով:

5 Վերևում — ներքևում — խոնավ է:

Ոնց որ դեղին կատու՝
Բաթումը մեր ափից
Թարթում է աչքերը:
Չափում է աչքերով հեռուն:

10 Պատրաստ է ցատկելու.

Ո՛ւր:
— Մինչև ջրերը էն ափի,
Մինչև Ստամբուլ:

Կծկվել է, պիրկ, իր ափին,
15 Լարել է մկաններն ամեն,
Որպեսզի թափը չխաբի
Վճռական ժամին:

Ճեղքում է ջուրը «Բուկովի՛նան»:
Հեռանում է Բաթումը:

20 Սուզվում է ջրերում քիչ-քիչ:
Դիմացից բարձրանում է հիմա հինը —
Կորչում է Բաթումն աչքից:

Դեռ նոր ենք հեռացել մեր ափից —
Եվ ուրիշ է արդեն հիմա շուրջս.
25 Մոտենում է ահա—մի օսլայած կապիկ,
Եվ ահա՛ իր զրույցը.—

— Դիտե՛ք որ Տրո՛ցկին իր զորքով
Գնում է Մոսկվայի վրա:
Լռում է հայացքիս ներքո:
30 Խոժոռած՝ նայում ենք իրար:
— Դուք ճի՞շտ եք ասում,
— Իհա՛րկե:

Վկա է ձեր հոգին անմահ:
Հասկանո՞ւմ եմ:
35 Հանում եմ գլխարկս:—
Մտնում ենք —
«Արտասահման»:

2

Ճեղքում է ծովը ճղփոցով
«Բուկովի՛նա» նավը:
40 Վերևում—երկինք է:
Դեմը ծով:
Վերևում—ներքևում—խոնավ է:

Շուրջս հնչում են ստար բառեր:
Շուրջս ջրերը,
45 Մարդիկ,
Իրերը

Խռիվ՝
Հռեկ են.
Ելել է հինը ու կյանք առել:

50 Այս ի՞նչ է.
Նայում եմ շուրջս —
Խլրտում են սինյոր ու մուսյու:
Որն ուրախ,
Որը զուսպ,

55 Որը լուրջ է —
Ու բոլորն էլ գոհ են էդպիսով:

Բոլորը զվարթ են,
Բոլորը գոհ:
Եվ միայն մի մարդ է,

60 Որ քաշվել կանգնել է մի կողմ:

Կանգնել է, մեռակ, նա մի կողմ
Ու աչքերը հեռուն, ծովին՝
Մտածում է, թերևս, որ շուտով
Դժվար թե լինի... Մոսկովում:

65 Դժվար թե դառնա էնտեղից,
Ուր տանում է իրեն «Բուկովի՛նան»:
Դժվար թե ափերում է՛ն դեղին
Նա գտնի իր թողած տղին
Եվ գգվի նրան նրա կինը:

70 Նրա դեմքը սառն է, ոնց որ քար:
Անտարբեր է դեմքը:
Թեպետ —
Սառել է դեմքին թրքական —
Մի ինքնակամ ժպիտ:

75 Իւ ֆեսը՝ երեկ արդուկած,
 Ու մորուքը ներկած, ու ակնոցը —
 Ինձ մի քիչ անծանոթ են թեկուզ —
 Բայց գիտե՛մ ես այդ թուրք ընկերոջը:

Եվ գիտեմ, որ նա
 80 Հիմա —
 Արխադաշ Սուբխու ճամփով,
 Արխադաշ Սուբխու նման —
 Գնում է Ստամբուլ:

3

Ճեղքում է ծովը ճղփոցով
 85 «Բուկովի՛նա» նավը:
 Վերևում—երկինքն է:
 Դեմը ծով:
 Վերևում—ներքևում—խոնավ է:
 Ներքևում ջրերը պարող
 90 Լեղի են երևի, ոնց որ մաղձը:

Դեմս երկու պարոն
 Զրուցում են քաղցր:

— Դուք տեսա՞ք սավանները...
 Եվ դրանք —
 95 Ուզում են աշխարհին տիրեն...
 — է՛ն-Կա՛-Պե՛...
 Ծ՛ր-
 րորդ Ի՛ն-տե՛ր-նա՛-ցիո՛-նա՛լ...
 — Օ, ոչի՛նչ.
 100 Թող քիչ համբերե՛ն...

— Շրջում է արդեն Չեմբերլինը.
էսօր չէ էգուց—կերգեն...
Կպարե՛ն Մոսկվան ու Քեռլինը...
Ու լիզում է շրթունքը իր գեր:

- 105 Ժպտում է,
Ճարպը կապտած.
Հոսում է,
Հասնում է մինչև հոնքը:
Եվ ասում է.—
110 —Մասնավոր կապիտալ,—
Ահա ա՛յս է կյանքի սկզբունքը:

Ես լարված լսում եմ զրույցը
Եվ հանկարծ տեսնում եմ —
Քիչ հեռուն

- 115 Կանգնած է—
Վաղուց գուցե —
Ու լսում է ընկերը էն թուրք:

Նայում է աչքերիս նա լուռ,
Ժպտում է.

- 120 Ժպտացող աչքերում
Ես տեսնում եմ—Ստամբուլի հեռուն,
Ու կռիվ,
Ու պայքար,
Ու ուռմբ:

- 125 Օ, մենք —
Հասկանում ենք իրար:
Ավելի՛ն.—
Իրար գիտենք:

Եվ գիտենք՝ աշխարհի վրա
130 Դեռ երկա՛ր պայքարենք պիտի:

Նայում է մի պահ նա միայն —
Բայց էդ պահը մեր մեջ—ոնց որ դարը:
Հասկանում ենք, անխոս, մենք իրար
Ավելի,
135 Քան եթե բառեր:

Հասկանում ենք, որ դեռ նո՛ր պիտի գան
Օրերը, որոնց դեմ անհամբե՛ր ենք,
Որ դեռ դեմն են կռիվ ու պայքար
Ու դեռ դեմն է մեր մեծ Հոկտեմբերը...

140 Թող նրանք մտնեն ռեստորան,
Ուր աղմուկ է, ժխոր ու քրքիչ է:—
Մենք գիտենք՝
Մեզ այնտեղ սպասում են նրանք,
Որ ամբո՛ղջ աշխարհի վրա
145 Թե նրան, թե ինձ—արնակի՛ց Լի...

1924

Բ Ե Լ Գ Ի Ա-Լ Ի Ե Փ

(Համափորձական տետրակից)

Առավոտ կանուխ արթնացա ես.
Գնացքը սահում էր դանդաղ —
Ու փովում էր աչքերիս դիմացը
Երկաթե ծառերի մի անտառ:

5 Բլուրներ էին մոխրագույն,
Կողերին՝ երկաթե ռելսեր.
Կամարներ կորգիծ ու բեկուն —
Եվ ամբողջը, ամբողջը ռելսե: —

Իսկ հետո—մարգեր մուգ-կանաչ
10 Եվ ամեն մի մատնաշափն այնտեղ —
Մարդկային մատներով բանած
Ծաղկանկար հանդեր...:

Ու նորից՝ տներ բետոնե,
Վիթխարի դռներ ապակի,
15 Մի կամուրջ հսկա, մի թունել
Ու կամարներ կրկին...

Ու նորից գործարան ու մարգ,
Շառաչուն երկաթ ու կանաչ

*Սահեցին, ձգվեցին երկար
20 Իմ աչքերի առաջ:*

*Եվ թվում էր ինձ, թե տեսնում եմ
Ես իմ դեմ—մեր վաղուց երազածը...
Թե այստեղ բռնկվի ցասումը —
Այնպես հեշտ է հետո—մնացածը...*

*25 Այնպես հեշտ է հետո... Օ, դեմս
Երկաթի խնդում էր ու հիացք էր...
Ու բոլորը թողած իր ետևը,
Սահելով հեռանում էր գնացքի:*

1925

1923 - 1930





Ն. ԱԳՆԻՎՅԵՎ

Հ Ե Ք Ի Ա Ք Կ Ո Մ Ի Ն Տ Ե Ր Ն Ի Մ Ա Ս Ի Ն

1

*Խաղալիքների,
Կարկանդակնե՛րի,
Փոքրիկ ու չնչին
Բաների համար*

5 *Ծածեւով իրար,
Գղելով իրար,
Միշտ տխուր ու չար,
Ինչպես իսկական
Փոքրիկ գաղաններ*

10 *Կային-չկային
Վեց երեխաներ:*

2

*Եվ նստել էին սյուների մոտին
Սյուները կպած իրենց ճակատին
Այդ լավ տղերքը, ինչպես հիմարներ*

15 *Վեց երեխաներ:*

3

*Իսկ այդ սյունե՞րը
Հասարակ հո՞շեն.*

Նայեցե՛ք հապա.
Դրանք սյուներ են
20 Պինդ,
Սահմանապահ...

4

Եվ այսպես ահա
Հետե՛ք հիմա.
Ֆրանսիացի տղան՝
25 Անունը ժակ՝
Ուտում է մի հսկա
Կարկանդակ...

5

Իսկ անգլիացի
Երեխա Ջոնը—
30 Բոյը թիզ ու կես —
Մեծ ախորժակով
Ուտում է ահա
Իսկական բիֆշտեկս...

6

Նայեցե՛ք Ֆրիցին.
35 Այս գերմանացին
Ուտում է կրուպայով ապուր,
Իսկական
Գերմանական
Կերակուր...

7

40 Իսկ շնչին երեխա
Զիու-Չաո-Չին-Չուն-Չեյը —

Հանգիստ մի կողմ նստած
հմում է իր թեյը...

8

Իսկ մեր ոուս Գավրյուշը,
45 Որքան պատում է ուժը —
Կրծում է սև բոքոն,
Որ անշափ անուշ է:

9

Իսկ Տոմը սև,
Քանի որ չկար
50 Մի ալլ բան համեղ —
Տխուր ու շվար
Ուտում էր
Դառը
Մանանեխ...

10

55 Այդպես դեմ ու դեմ
Սյուների ետև
Նստոտած նրանք
Աղմուկով, ծեծով,
Հարայ-հրոցով
60 Անցող-դարձողին
Համոզում էին,
Որ հնուց,
Վաղուց
Հիմա ու առաջ
65 Այս արևի տակ —
— «Իմ հայրենիքն է ամենից անուշ,

Ես հերոս եմ քաջ,
Իսկ դու ալլանդակ...»:

11

- Եվ նրանցից հենց որ մեկի
70 Քիթը մի քիչ հարևանի
Կողմը թեքվե՛ր,
Հենց որ մեկը հարևանի
Կողմը նայե՛ր —
Ռուսը լինե՛ր,
75 Գերմանացին,
Թե չինացին —
Մյուսն իսկույն
Հարայ կտար,
«Կա՛ց» կկանչե՛ր,
80 Կծղրտա՛ր:

12

Եվ հարևանն հարևանին,
Որպեսզի նա սյունից չանցնի,
Իրար անցած ու շտապով —
Ճիշտ ճակատին կտար թափով:

13

- 85 Կովում էին տղերքն այս մեր
Թեկուզ հաճախ, սակայն ծածուկ.
Մեկը հանկարծ եղբոր գլխին
Կտար— ու պո՛ւկ:
Մյուսն էլ, դե,
90 Իրա հերթին
Կտար սրա
Քթին-մոթին,

Հետո կրկին
Կլոեին:

14

- 95 Բայց մի անգամ,
Ա՛յ, իսկական
Կռիվ եղավ, այնպես կռիվ,
Որ էլ փախի,
Որ էլ թռի...

15

- 100 Տվին իրար,
Տվին իրար,
Իրար քթի,
Իրար մոթի,
Իրար աչքի,
105 Իրար մեջքի,
Վզի, դնչի,
Ամեն ինչի —
Ջարդոտեցին
Ատաթ ու կող
110 Տարածեցին
Սարսափ ու դող...

16

- Ու նորից —
Թրա՛խկ — իրար փորի,
Դնչին — բո՛ւհ,
115 Ականջին — ո՛ւհ,
Վզին — թրա՛խ,
Ուտին — ա՛խ,
Ստամեներին —

Տո՛ւր, տըռըրի,
 120 Դրա քունքին,
 Դրա փորին,—
 Տալիս իրար, ո՛նց են տալիս—
 Բռունցքներ են գնում-գալիս...

17

Շուրջը նրանց —
 125 Աղմուկ ու լաց,
 Ողջը թափած,
 Իրար անցած,
 Մեծ ու կոխվ,
 Ճիշ ու կական —
 130 Ձեռ հասկանում էլ ո՛չ մի բան.
 Ամեն մեկը, սակայն, իրա
 Ուժն է գովում —
 Ամեն մեկի քիթը թեկուզ
 Փշրվում է, արյունոտվում:

18

135 Իսկ երբ արդեն
 Չափից անցան,
 Բոլորն էլ լավ
 Մեծ ստացան,
 Բոլորի էլ
 140 Քթին, դնչին
 Կապտած տեղեր
 Երևացին —
 Քիչ էր մնում մեկը մեռնի —
 Հնչեց հանկարծ
 145 Ոտնաձայնը
 «Կոմիտերնի»...

19

Եվ նա ասաց

Ձայնով հնչուն.

— Է՛իս, դուք տղերք,

150 Ինչո՞ւ, ինչո՞ւ

Ինչո՞ւ. եք դուք, այդքան հիմար,

Իրար հանդեպ ոխից վառվում—

Այդ սյուների համար կռվում....

20

— Ինչո՞ւ, ինչո՞ւ:

155 — Որովհետև

Այդ սյուները, հնուց եթե

Ձեզ իրարից չզատեին —

Էլ դուք ինչո՞ւ պիտի հիմա

Իրար այդպես զզգզեիք...

21

160 — Ինչո՞ւ, ինչո՞ւ:

— Որովհետև

Դուք սկզբի օրից եթե

Այդպիսի կարգ սահմանեիք —

Հիմա հո դուք մի ընտանիք

165 Կկազմեիք,

Կկիսեիք թե խաղալիք,

Թե կարկանդակ —

Այն ժամանակ

Ձեիք կռվի արևի տակ:

22

170 — Ինչո՞ւ, ինչո՞ւ:

— Որովհետև

Ամեն մեկդ այն ժամանակ
 Կունենար շատ
 Թե խաղալիք, թե կարկանդակ:
 175 Կլինեիք դուք հավասար.
 Չէ՞ որ ոտից մինչև գլուխ
 Դուք նման էք, տղերք, իրար:

23

Դրա համար շուտով վառեք
 Այդ սյուները ամենուրեք,
 180 Այն ժամանակ
 Դուք կունենաք
 Ձեր հայրենի փոքրիկ գյուղի,
 Կամ խրճիթի, խարխուլ խուղի —
 Ձեր նեղ
 185 Տան տեղ
 Դուք կունենաք աշխարքը ողջ.
 Երկիրն ամբողջ —
 Ու կդառնա աշխարհն ազատ
 Ձեր հայրենիքը հարազատ:

24

190 Տղերքն այստեղ
 Միատեղ
 Վրա տվին այն սյուներին:
 — Էլ չենք դառնա մենք ձեր գերին:
 Եվ պոկեցին
 195 Դրանք իսկույն,
 Չթողեցին
 Էլ ոչ մի սյուն:

25

Իսկ հետո,

Վեց հոգով

- 200 Այդ նույն տեղում սեղան բացին,
 Եվ առաջին անգամ կյանքում
 Միասին
 Նստեցին հացի:

26

«Առաջինը» ապուր էր —

- 205 Կրուպայով ապուր —
 Իսկական
 Գերմանական
 Կերակուր:

27

Որպես երկրորդ —

- 210 Տե՛ս մի, տե՛ս —
 Տրվեց անգլիական բիֆշտեկս:

28

Ա՛յ քեզ ճաշ,

էլ ին՛չ ճաշ է, էլ ին՛չ ճաշ —

Ո՛չ բոքոն կա, ո՛չ լավաշ...

29

- 215 Բայց որտեղի՞ց

Գտնեն հաց.

Գավրյուշն այստեղ՝

«—Կա՛ց տո, կա՛ց.—

Կերեք, տղերք,

- 220 Ռսի հաց...»:

30

Սակայն տղերքն,
Այդ ճաշին
Երբ նստեցին
Միասին —
225 Մանանեխն էլ եկավ պետք:
Բիֆշտեկսի հետ մանանեխ —
Ախ, ինչքա՛ն է նա համեղ...

31.

Բոլոր համեղ բաներն այս
Կերան նրանք հազիվ-հազ.
230 Բոլորն հո այդ շէ՛ր սակայն:
— Կերեք, տղերք,
Էս էլ ձեզ —
Պիրոժնիկներ ֆրանսիական...

32

Եվ այստեղ էլ —
235 Լցրո՛ւ դե,
Քեֆն ուզում է
Քո եթե —
Խմի՛ր շինի
Անուշ թեյ...

33

240 Եվ առաջին
Անգամ նրանք
Հարց տվեցին
Իրար ուրախ,
— Հրա՞շք էր այս,
245 Զարմա՞նք էր այս.

Հացն ու կոխվն էլ ո՞ւր մնաց՝
Բոլորը կուշտ,
Բոլորը հաշտ
Ու քթներն էլ անվնաս...

34

250 Ահա և բոլորը՝

«Լ Ե Ն Ա».

1912 թ. ապրիլի 4

(Թանվորենի գեղականաբույր Լենայում):

Փարված իր փոքրիկ երեխաներին՝

Մարդուն է ահա կինը սպասում:

— Օ, մի՛ սպասի՛ր, նա ետ չի՛ գալու,

Թշնամու գնդակն հատու էր ու սուր:

5 Նա ընկավ դաշտում, և ո՛չ թե մենակ.

Քո ավագ որդին, մեռած աչքերով,

Դաժան թշնամու հարվածների տակ

Իր բանվոր հոր հետ պառկել է խռով:

Եվ շուրջը նրանց—ընկեր, բարեկամ

10 Ընկել են՝ կազմած ա՛լ հողաբուր.

Եվ տաք վերքերից բանվորի արյան

— Հեղեղն է հոսում կարմիր ու հուրհուր:

Փայլում է գարնան արևը պայծառ.

Զի՛ պատժի աստված չարագործներին...

15 — Եղբայրնե՛ր, օ՛հ, թո՛ղ անիծվի՛ նա հար,

Ով որ մոռանա այս օրը խավար,

Ով այս արյունը թշնամուն ների:

Գ. ԳԱԼԻՆԱ

ԱՆՏԱՌԸ ԿՏՐՈՒՄ ԵՆ...

Կտրում են անտառի դալարուն ծառերը,
Իսկ պառավ սոճիները, խոհերով լեցուն,
Անբարբառ օրորում են զառամյալ գլուխները
Եվ նայում են սառը երկնքի հեռուն:

5 Անտառը կտրում են... Գուցե ա՛յն պատճառով, որ
Զարթոնքի կանչե՛ց նա վաղ արշալույսին,
Որ մատաղ սաղարթո՛վ իր համարձակ երգում էր
Ազատության ու պրևի մասին:
Անտառը կտրում են... Բայց հողը պահում է
սերմերը.

10 Կանցնեն տարինե՛ր, և—կյանքի նոր ուժով
հրահրան՝

Կրկի՛ն պարիսպի՝ պես բարձրացած ծառերը
Կխշշան եղբայրական շիրիմի վրա...

Ը Ն Կ Ե Ր Ն Ե Ր Ը

Նրանք փոքրիկ էին՝ երեխան ու կատուն,
Մեկտեղ խաղում էին տախտակների վրա,
Մինչև մութը իջներ, մինչև հայրը գար տուն
Ու հողագույն հացով կերակրեր նրանց:

- 5 Հայրը բանվոր էր: Միշտ, առավոտվա ծեփին,
Նա գործարան կերթար ու ետ կգար մութին՝
Հաց կբերեր իրա երեխային մի քիչ,
Երեխան էլ կտար՝ կեսը կատուն ուտի:

- էսպես ապրում էին: Հայրը նրանց մեկ-մեկ
10 Բան կպատմեր դրսի, հարուստների մասին,
Որ կուշտ են միշտ նրանք, բայց չեն հոգնում
երբեք,—
Եվ «Մարսելիեզ» կերգեր, որ երեխան լսի:

- Ու կպատմեր, որ միշտ ի՛նքը հոգնի պիտի,
Պիտի արյուն թքե, որ չոր փշրանք գա տուն:
15 Ու լռությամբ դարձած՝ իրիկնային մութին
Կլսեին նրան երեխան ու կատուն...

Բայց մի օր—մի օր կարմիր—
Գործարան չգնաց էլ հայրը.
Աչքերում վճիռ կար մի,
20 Ժպիտը հաստատ ու անծայր էր:

Փողոցում—մարդիկ, մարդիկ,
Դրոշներ ավելան, կարծես տոն էր...
Ու նման էր մայիսյան վարդի
Օրերում այդ—հոր խնդությունը:

25 Եվ մի օր համբուրեց զավակին
Բանվոր հայրը՝ ձեռքին հրացան.
Համբուրեց աչքերը կատվի
Ու դնաց անձայն...

Բայց դարձավ դռնից բանվոր հայրը.
30 Համբուրեց նրանց վերստին.
«—Հասկանո՞ւմ եք,—ասավ,—ժամանակն է՝
Զարկելու ենք էսօր հարստին»:

Ու ելավ: Փողոցում կրակոց էր:
Փողոցում շոքեց բանվոր հայրը:
35 Զորքերով լեցուն էր փողոցը.
Փողոցում կռիվ ու պայքար էր:

Զարկեցին... Ճչաց բանվոր հայրը.
Հարվածը կրծքին էր, հատու:
Բայց հառաչը խոր ու անծայր այն
40 Լսեցին երեխան ու կատուն...

Վազեց, վազեց փողոց փոքրիկ երեխան.
Կատուն վազեց հետքից իր ընկերոջ փոքրիկ.

Նրանց գլխին—կարկուտ, կարմիր զնդակ տեղաց,
Եվ երկուսն էլ ընկան հայր-բանվորի կողքին:

- 45 Զխաղացին նրանք էլ հատակի վրա,
Զսպասեցին էլ՝ դուր, որ հայրիկը գա տուն.
Նրանք փոքրիկ-փոքրիկ նահատակներ եղան —
Երեխան ու կատուն...

Ք Ա Ռ Ա Ս Ո Ւ Ն Ք

1

Փշում են, փշում են կործանման փողերը:
Ին՞չ անենք, ին՞չ անենք մենք հիմա
Ճամփաների կոխկրտված կողերին:

Բավակա՛ն է դունչերիդ հեղությունը:
5 Հաճելի է կամ չէ—վերցո՛ւր:
Լավ է, երբ վերջալույսը բարկանում է
Եվ ձեր հաստ նստուկին խփում է
Արնոտած ավելով իր ցուրտ:

Շուտով եղյամը սպիտակ կնստի
10 Գյուղակի վրա՛ այն և այս դաշտում:
Ո՛չ մի տեղ չեք փախչի դուք կորստից,
Ո՛չ մի տեղ չեք փախչի թշնամուց դուք:

Ահա՛, ահա՛ նա, երկաթե փորով,
Զգում է իր թաթը դաշտերի բլին,
15 Հոտոտում է օդը ալյուրոտ քթով
Ու սրել է ականջը ջրաղացը հին:

Եվ ուղեղը տված հորթերին,
լռակյաց, հեզ եզր բակում
Քսեմով իր լեզուն մսուրին՝
20 Դաշտերին վտանգ է զգում: —

2

Ախ, այդ չէ՞ պատճառը, որ գյուղում
կալիս է հարմոնը աղիողորմ.
Տա-լյա, լյա-լյա, տի-լի-լի-գոմ,
Կախվում է ճերմակ պատուհանում:
25 Եվ դեղին, դեղին քամին աշնան
Այդ չէ՞ պատճառը, որ ծառերից,
Զոր տերևներ է քերում թոշնած,
Ինչպես քերում են ձիերին:
Գալի՛ս, գալի՛ս է զարհուրելին,
30 Քանդում թավուտը երկաթ թաթով —
Եվ մեր երգերը է՛լ ավելի
Դառնում են դառը ու դառնաթով:
Օ, արշալո՛ւյս դու էլեկտրական,
Ծխնելույզի ու փոկի խուլ մարտ.
35 — Փայտյա որկո՛րն է խուղերի այն
Ցնցում տագնապը, տենդը պողպատ:

3

Տեսե՛լ եք դուք արդյոք,
Ո՞նց է վազում դաշտով,
Մշուշե լճերում կորած՝
40 Երկաթե պնչերից փնչալով,
Զուգունե թաթերով գնացքը:
Իսկ նրա ետևից,

Խոտերի միջով,
ինչպես ձիարշավի տոներին ուրախ,
45 Ծառսելով ոտները իր շոր՝
վազում է կարմրաբաշ մի քուռակ:

Օ, քնքո՛ւշ, քնքո՛ւշ իմ խելառ...
Ախր ո՞ւր է, ո՞ւր է նա արշավում.
Նա չգիտե՞ արդյոք, որ ձիերին հիմա
50 Հաղթել է պողպատե ձիախումբը:

Նա չգիտե՞ արդյոք, որ դաշտերում այս ցուրտ
Ձի դառնա հինը իր վազքից,
Երբ մի ձիու դիմաց պեղնեգը հարուստ
Տալիս էր մի զույգ ուսու կին:

55 Այլ գույներ է բախտը շուկայում քսում,
Այլ գույնով է ներկում ծանծաղուտը մառ,—
Եվ ձիու հազա՛ր փուլթ կաշիով ու մսով
Առնում են հիմա մի շոգեկառք:

4

Սատանա՛ն քեզ տանի, վա՛տ հյուր:
60 Մեր երգը չի՛ հաշտվի քեզ հետ:
Ափսոս որ, ինչպես դույլը հորում,
Չկորար սկզբիցնեթ:

Նրանց հե՛շտ է կանգնել՝ շուրթերը
Թիթեղե համբույրով ներկել.
65 Միայն ի՛նձ է վիճակվել կյանքում
Իմ երկրին ալելու երգել:
Սրանի՛ց է, որ աշնան թենին
Դուրսը ցանկապատին տվել՝

Ջախջախվել է կարմիր մորենին,
70 Իր պտղի արյունով ողողվել:
Սրանի՛ց է, որ թախծով լցվեց
Զրբնգուն երգը գյուղի —
Եվ հարդոտ, հարդահոտ մուժիկը
Ճաշակեց դառնահամ օղի:—

.

Գ. ԼԵՄՈՆՏՈՎ

Մ Ե Ռ Ն Ո Ղ Գ Լ Ա Դ Ի Ա Տ Ո Ր Ը

*Ցնծում է Հոռմն ահեղադողորդ: Ու հանդիսավոր
Ծափերի ձայնից թնդում է հսկա կրկեսը մոլի:
Եվ ընկած է նա լուռ ու միայնակ, կրժքից*

վիրավոր

Ով խարխափում են ծնկները փոշոտ ու

արյունալի:

5 Եվ իզուր է նա պղտոր հալացքով գթություն

հայցում,

*Արյունոտ արքան և սենատորը նրա շողոքորթ
Սովոր են ծափել՝ Հավասարապես թե՛ իսառ,*

թե՛ անկում:

Ի՞նչ փուլթ ամբոխին մեռնող մի ստրուկ, մի

ըմբիշ խոցոտ:

Անարգված է նա, որպես խեղկատակ, մոռացված

արդեն,

10 Հոսում է կրժքից արյունը կարմիր—վայրկյանը

վերջին...

Քայց ահա լուսե մի հիշողություն ուղեղում

զարթնց,

Հոսում է ահա Դունայն հայրենի իր հոգու միջից...

Եվ տե՛սնում է նա երկիրն հայրենի, իր կյանքը
 ազատ,
 Տե՛սնում է նրանց, որ թողե՛ց մի օր ռազմի
 գնալիս:
 15 Տեսնում է հորը՝ դողդոջ ձեռքերը դեպ իրեն
 պարզած
 Կանչում է իրեն ձայնով մտերիմ, տխուր,
 անձկալի...
 Տեսնում է սիրած երեխաներին, փոքրերին
 պաշտած.
 Բոլորն էլ իրա դարձին են նայում, ավարին,
 փառքին...
 Բայց իզուր ահա որպես մի ստրուկ, մի զազան
 սաստած,
 20 Մենում է նա լուռ, ամբոխին ի տես, շվայտ
 հաճույթի
 Առարկա դարձած մի վայրկենական...
 Մնա՛ս բարով, Հռո՛մ, մնա՛ս բարով երկիր
 իմ հայրենական...

ՓՈԹՈՐԻՒՆ, ԻՄ ԸՆԿԵՐ

(Գրված բանտում)

- Փոթորի՛կ, իմ ընկեր,
Ես լսում եմ քո կոչն անվեհեր,
Կրակոտ՝ ձգտում եմ դեպի քեզ,
Բայց երկաթ շղթաներ ունեմ ես։
- 5 Փոթորի՛կ, քո մասնիկն եմ ես,
Պայքարում ես նման եմ քե՛զ։
Բայց կգա մի օր, երբ ես
Կփշրեմ, կքանդեմ շղթաներս,
Կնետվեմ անսահման հեռուները,
- 10 Մրրկոտ՝ կթռչեմ լեռներում,
Կպայթեմ դաշտերում, ծովերում,
Կխնդամ բազմության սրտերում,
Զբաւո՞ր մարդկության գանգերում,
Կսուրամ փոթորկոտ ու հատու,
- 15 Փոթորի՛կ, ինչպես դո՛ւ։

Ն. ԿԼՅՈՒՆՎՃ

Ե Ր Պ

*«Որպես ճորտ անլեզու
ես շիրիմ կմտնեմ,
Փայտե ցուրտ խաչի տակ
իմ բախտը կգտնեմ»:*

5 *Այս երգն էր միշտ երգում
Հայրս սև կյանքի դեմ,
Մեռնելիս պատվիրեց,
Որ ես այն ավարտեմ:*

*Սակայն երգս հայրերի
10 Հառաչով չի՛ հնչի,
Այլ հողմի շաշյունով
Աշխարհից կթռչի:*

*Ո՛չ որպես հլու ճորտ,
Այլ ազատ արծվի պես
15 Կյանքի երգը հզոր
Կսովարտեմ հիմա ես:*

2. ՀԱՅՆԵ

Ջ Ո Ւ Լ Հ Ա Կ Ն Ե Ր Ը

Նրանց աչքերին արտասուք չկա.

Նրանք կրճտում են աստամները քար.

«— Գերմանիա, պատանք ենք գործում քեզ
Համար,

Նրան մենք հյուսում ենք մեր անեծքը վառ,

5 Գործում ենք անվերջ, անդադար:

Անեծք աստծուն, որին աղոթքով

Այնքան աղերսել ենք, դիմել ենք մտքով:

Իզո՞ւր, չհասավ նա օրին մեր դժվար,

Իզո՞ւր, նա խաբեց մեզ, թողեց մեզ շվար —

10 Գործում ենք անվերջ, անդադար:

Անեծք և նրա՛ն, կուշտերի արքային,

Որ մեզ միշտ ճնշել է, մատնել է մահի.

Վերջին մեր կոպեկը խլել է նա հար,

Արճիճ ու զնդակ է թողել մեզ համար —

15 Գործում ենք անվերջ, անդադար:

Անեծք քեզ, և քե՛զ, մեր երկիր ստորաքարչ,

Ուր տիր է ամոթը, անարգանքն արքա,

Ուր լավը մեռնում է անլույս, ցրտահար,
Ուր կուշտ են որդերը և սարդերը չար —
20 Գործում ենք անվերջ, անդադար:

Սահում է մաքորը, զնգում մեքենան՝
Անդուլ աշխատում ու երգում են նրանք.
«—Հին Գերմանիա, պատանք ենք գործում
բեզ համար,
Նրան մենք հյուսում ենք մեր անեծքը վառ —
25 Գործում ենք անվերջ, անդադար:

Ն. ՀԻՔՄԵԹ

ԱՐԵՎԵԼՔ ԵՎ ԱՐԵՎՄՈՒՏՔ

«Ասրար,
Հեղություն,
Ճակատագիր,
Ճաղաղարդ պատուհան,

5 Կարավան

Շատրվան,

Արծաթե ափսեներում պար եկող սուլթան:

Իշխան, փաղիշահ,
Հազարամյա մի շահ,

10 Մինարեններից կախված սադափե նալըններ,

Ռունգերը հինայած կիներ

Ոտներով գորգեր են նկարազարդում,

Քամիների հանդեպ կանաչամորուս իմամներ

ազան են կարգում...

Ահավասի՛կ ֆռանգ շահիրների տեսած Արևելքը:

15 Ահավասի՛կ,

Յուրաքանչյուր վայրկյան միլիոններով թխվող

Գրքերի Արևելքը:

Սաիայն —

- Ո՛չ այսօր, ո՛չ վաղը, ոչ երեկ
 30 Այսպիսի Արեւելք
 Զի՛ լինելու,
 Զկա՛:
 Արեւելք —
 Մերկ,
 25 Քաղցած գերիների
 Դու սովամահ եզերք:
 Արեւելքուց բացի բոլորին
 Բաժին դարձած աշխարհ,
 Ուր սովը մեռնում է սովից,
 30 Մինչև կոկորդ հացով լեցուն ամբար —
 Եվրոպայի ամբարը: —
 Ասիա՛,
 Ամերիկյան դերդնստուների սյուններից
 Զինացիները քո
 35 Դեղին մոմերի նման
 Երկար մազերից իրենց
 Կախված են խեղդամահ:
 Հիմալայի է՛ն բարձր,
 Է՛ն ցից,
 40 Է՛ն ձյունոտ գագաթին
 Բրիտանական սպաները նվազում են ջազբանդ.
 Իրենց սևեղունգ ոտներն են սուզում
 Փայլուն, սպիտակատամ դիակներով լեցուն
 Գանգեսում:
 45 Անատո՛լիա, դու ծայրեծայր
 Ամստրոնգի շաշուն ումբերին
 Հրապարակ դարձար:
 Ասիայի կոկորդը լցվեց:
 Արեւելքը
 50 Էլ չի՛ կարող տանել:

- Արևելքը զլվեց:
 Թե ձեզանից մեկը
 Անգամ հարություն տալ ուզի
 Մեր սովամահ եզին —
- 55 Եթե բուրժույ է նա
 Թող մեր աչքից կորչի:
 Անգամ դո՛ւ,
 Դո՛ւ
 Պյեր Լոթի: —
- 60 Մեր դեղին մաշկի վրայով
 Մարմնից-մարմին անցնող
 Ոջիլն անոթի
 Մեր սրտին՝ ավելի՛ է մոտիկ,
 Քան դու, ֆրանսիական սպա՛,
- 65 Պյեր Լոթի:
 Դո՛ւ, ֆրանսիական սպա՛,
 Այս խաղող աչքերով աղջկան
 Ազիադեին
 Պոռնիկից շո՛ւտ մոռացար, Պյեր Լոթի:
- 70 Ձեր ձեռքով սրտում մեր տնկած
 Ազիադեի շիրմաքարը
 Մի փայտյա նշանի նման
 Կապեցիր թնդանոթի:
 Չիմացողները թող իմանա՛ն.
- 75 Դու ոչի՛նչ ես—շառլատանից բացի:
 Ֆրանսիական փտած ապրանքները
 Հարյուրին հի՛նգ հարյուր օգուտով
 Արևելքին ծախող
 Պյե՛ր Լոթի:
 Ի՛նչ խոզուկ բուրժույն ես եղել, գիտե՛ս...
- 80 Հավատալի եթե
 Հոգուն՝ նյութից բացի —

Արևելքի ազատագրման օրը

Քո հոգին

Կամուրջի էն գլուխը կբարձրացնեի ցցի՝

85 Ու դիմացը կանգնած՝ կծխեի:

Ձե՛զ ենք մեկնել ձեռքերս,

Ողջագուրե՛ք դուք մեզ,

Օ, Եվրոպայի սանքլուտոներ:

Կողք-կողքի թող թռչե՛ն կարմիր ձիերը:

90 Կայարանը մոտ է.

Նայեցե՛ք.—

Ազատագրման ժամերն հաշվված են արդեն:

Կարմիր թաշկինակով ծածանում է մեր դեմ

Արևելքի ապստամբության օրը:—

95 Մեր կարմիր նժույգները սմբակում են արդեն

Իմպերիալիզմի փորը:

ԱՆԱՏՈՒԹԱՅԻ ՌՈՄԱՆՏԻԿԱՆ

...Մենք չէինք շրջում,

Որպես անրջում,

Օ, ո՛չ: —

Չէինք ուղարկում

5 Գարունքին ողջուն,—

Օ, ո՛չ,

Օ, ո՛չ,—

Ո՛չ նրա համար, որ հինը ծամենք —

Անցանք ծայրեծայր այս երկիրը մենք:

10 Մենք անցնում էինք

Աղբի մութ փոսեր—

Թող դրանց երբեմն

Քաղաքներ ասեն:

Թող նրանք, որ այստեղ չեն եղել երբեք —

15 Որպես վառ ոռոմա՛նտիկա՝ այդ աղբը երգեն:

Նեղ, քթները կախ, հողագույն տներ,

Փողոցները—մութ, խլուրդի բներ,

Տները տվել են ճակատ-ճակատի

Պւ անվերջ ծխում են քթների տակից:

20 Ծնկները ծալած նստել է խանութում՝
լիմոնե չալմայով մի մարդ.
Փողոցի եռուզեռն է դիտում
Ժպիտով մեղմ ու հանդարտ:

Հաստավիզ ժանդարմը
25 Ձի ուզում ձրի
Իր շնչին ոռճիկն ունենալ —
Պուրակից նա քշում է
Այն ցուփ զույգերին,
Որ այնտեղ ցանկացել են շնալ:

30 Կալյանի թմբիրը մշուշած վրա՛ն էր՝
լուռ, խաղաղ նիրհել է կիսամութ սրճարանը:
Անկյունում մի ծերուկ, մորուքը դճղին,
Հիացքով նայում է ծառայող տղին: —

Իր զառամ հասակից, թե կրքից —
35 Կաթում է թուքը շրթունքից, —
Եվ զառամ շրթերով մոմում է նա.
— Լահուֆ-լյու-վալլահ,
Լահուֆ-լյու-վալլահ,
Վալլահ... վալլահ...

40 Սակայն տեսնելով զույգերին,
Որոնց քշում է ժանդարմը —
Թքում է նրանց երեսին
Այդ զառամ պառավը:
Թքում ու —

45 Ժպտում է գոհ. —
«Ամեն ինչ — պապական օրենքով».

Մազաչափ անգամ անփոփոխ
Գլորվում են օրերը...
Այս քաղաքը—նեխած մի փող,
50 Ուր բուրում են թթու երազները...:

Հողագույն դեմքով այս ծեր գյուղացին
Դառնությամբ ասում է, որ հայր է:
Այս ծերուկ գյուղացին ունեցել է որդի,
Բայց մենակ է վարում իր արտը:—
55 Քանի որ որդու կրծքի խորքում
Կռվում ստացած զնդակն է երգում:
Ծերուկ գյուղացին ունի աղջիկ,
Բայց նա էլ անկարող է օգնել նրան,
Քանի որ հարկահավաքը շրջիկ
60 Իր վախը թափել է նրա վրա:
Գյուղացու դաշտը—մի ափ է լուկ,
Բայց չի բաժանվի իր հողից նա,—
Ծերուկի շրթունքները չեն ստում, յո՛ք,—
Թե մահը գալու է—այստե՛ղ թող գա...

65 Բոբիկ ոտներով, տրեխով հողե,
Ծայրեծայր մենք անցանք այս երկիրը,
Եվ գիտենք կարոտը ջրի ու հողի
Այս երկրում, որին վիշտը գրկել է:
• • • • •
70 Ինչպես որ կինը
Սպասում է մարդուն
Անքուն գիշերին,—
Ինչպես այս դաշտերը

- Գդվանքն են խնդրում
- 75 Մեքենաների:
Այնպի՛սի մեքենա՛ է հողը երազում,
Որ անգամ երբ խրում է ճանկերն իր սուր —
Քնքշությամբ փարվում է, գերում նրան,
Ինչպես սուր թիակը՝ ջրի վրա...
- 80
է՛յ,
Դուք,
Որ խռպում եք, ինչպես նարգիլե,—
Որ զվարթ թռչում եք
- 85 Մեր երկրով անոթի,—
Որ կույր,
Հաշմանդամ գյուղացիներին
Նետում եք հառաչանքը
Պյեր Լոթու,—
- 90 Ի՞նչ է՝ վարդագույն երազներով ձեր
Հրամայում եք —
Արտե՛րն հնձել...
Չափազանց շուայլ է
Գրիչը ձեր,
Բայց մենք իմանում ենք
- 95 Ձեր թափը սանձել,—
Սովալլուկ դաշտերից այս
Անցե՛ք, անցե՛ք...
Ձեզ չե՛ն սպասում
Երկրում այս մութ,—
- 100 Ձեր երազները
Տվեք քամուն...
Հերի՛ք է, ինչքան
Կորանք հնում...
Այստեղ մենք նեխո՛ւմ ենք

105 Կենդանի-կենդանի.

Որտեղի՞ց

Ռոմա՛նտիկա

Այստեղ լինի...

Խ Ա Վ Ա Ր Ո Ւ Մ

(Հին աշխարհը)

- Կանգնի՛ր, ալիք. ետ նահանջիր, դեպի ե՛տ.
 Հորձքդ երբեք չի ծառացել այդքան խենթ,
 Այդքան խիզախ... Ինչո՞ւ, ալիք դու աղի,
 Այդքան պաղ ես, մոլեգին ու կատաղի:
- 5 Եվ ինչո՞ւ է կես գիշերի այս ժամին
 Ունոցդ ահեղ, հեղեղատդ ու քամիդ:
 Որպես հրաշք մի ահալո՛ր, հողմ ու ջուր,
 Ո՞ւր ես այդպես դու թռչում ու մոնչում:
 Կանգնի՛ր, ալիք. լսի՛ր դու ինձ ու մնա՛.
- 10 Սա է վերջին քո սահմանը էլ հիմա.
 Մի՛ կործանիր գրոհներով քո մոլի
 Օրենքները, սովորություններն անցյալի,
 Թշվառության, մոլեգնության լուծը սև,
 Վաղուց նիրհած մտքի հետքերն այդ նսեմ,
- 15 Ուր հանգչել են ցանկություններն ապարդյուն,
 Անցած կյանքի սին հուզումներ ու խնդում...
 Օ, մի՛ քանդիր ստրկության այն շղթան,
 Որ ճնշում էր կնոջը սև ծանրությամբ:
 Եվ թող, ալի՛ք, խնճուղքը մեծ, ուր չունին
- 20 Խեղճերը տեղ,—ուր մոլուցքն է լարյունի...
 Օ, մի՛ դիպչիր, կանգնիր. սուրբ են մեզ դրանք՝

- Հին, զորավոր պատնեշները այն մռայլ,
 Որ կանգնեցրի ես շուրջը ողջ մարդկության...
 Բայց դու վազում, դու ելնում ես ավելի,
 25 Ու տանում ես ողջը քեզ հետ դու, ալիք:
 Ահա մաշված մի ձեռագիր, օրհնագիրք,
 Ահա ահեղ մոնշյունով մի անհատ
 Մովը գցիր մի արյունոտ կառափնատ...
 Ահա գահույքն արքայական... Թող, աստված...
 30 Գահընկեց է արդեն նա էլ, սնարկված —
 Եվ նրա հետ գահավիժել են արդեն
 Պատարագի վերջին քուրմերն ահադեմ:
 Դատավորներն ահա.— կանգնի՛ր. դրանք սև
 Նժդեհներ են կառափնատան մի վսեմ...
 35 Բա՛վ է. կանգնի՛ր, էլ մի՛ վազիր դեպի վեր.
 Աղի՛ ալիք, եղիր հանդարտ՝ անավեր...
 Բայց դու նորից բարձրանում ես, դու նորից
 Մակընթացով քո թռչում ես ծնկներին,
 Խուժում ես ներս մենանոցը իմ բարի...

Ալիք

- 40 — Մակընթաց ես կարծում ինձ:— Ես հեղեղն եմ
 աշխարհի՛....:

Վ. ՄԱՅԱԿՈՎՍԿԻ

ՄԻ ՔԱՆԻ ԽՈՍՔ ԻՄ ԿՆՈՋ ՄԱՍԻՆ

Անհայտ ծովերի հեռավոր ափով

Անցնում է լուսինը —

Իմ կինը:

Իմ շիկահեր սիրուհին:

5 Իր կառքի հտեից, թափով

Ձգվում է համաստեղությունների երփներանգ

ամբոխը:

Պսակվում է ավտո-գարաժի՝ հետ,

Համբուրում է թերթի կիսակները,

Իսկ շլեյֆի կաթն-ծիրը, որպես նաժիշտ,

10 Զարգարված է շնչին զարդերով:

Իսկ ե՞ս:—

Իմ ծարաված սրտին քո հոնքերի կեռով

Քո աչքերի հորից բերում էիր դուլլեր:

Կախվում էիր լճի մետաքսներում,

15 Սաթե ջութակների՝ պես երգում էին կոնքերդ:

Այնտեղ, ուր իշխում են դժնի տանիքները —

Չե՛ս նետի ցուլքը քո դու:

Բուլվարներում խեղդվում եմ՝ դեմքիս թախիժ
փռած:

Ախր դա դո՛ւստրն է քո —
20 Իմ երգը —
Աժուր շուքիներով —
Կաֆեների առաջ:

. •

«ՎԼԱԳԻՄԻՐ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ» ՏՐԱԳԵԴԻԱՅԻ ՊՐՈԼՈԳԸ

Կարո՞ղ եք
Դուք
Հասկանալ,
Թե ինչո՞ւ ես

5 Հանգիստ

Հոգի՛ս եմ փսեռել տանում
Գալիք օրերի ճաշին:
Փողոցի շափրած դեմքից
Հոսելով, ինչպես արցունք —

10 Ես,

Գուցե,
Պոեստն եմ վերջին:

Նկատե՞լ եք.
Ճոճվում է

15 Քարե ալեյներում

Զուլավոր կերպարանքը ձանձրույթի, որ մեռել է.
Իսկ վազող ջրերի
Սալնափրփուր վզին
Կամուրջներն են ծալել երկաթե ձեռները:

20 Երկինքը լալիս է

Անզուսպ,

- Քարձրածայն,
 Իսկ ամպի կնճռոտ շրթունքին
 Խեղկատակ գրիմա՛ս կա:
- 25 Կարծես թե մանկիկ է երազել մի կին,
 Իսկ աստված պարզենել է մի իդիոտ երեխա:
 Շեկլիկ ու մազածածկ,
 Գիրուկ մատներո՛վ իր
 Ձեզ գուրգուրել է արևը՝ բոռի՛ պես աներես.
- 30 Ձեր հոգում ճորտ կա պառկած:
 Իսկ ես,
 Անվախ,
 Ատելությամբ լցված դեպ ցերեկվա լույսերը՝
 Երկաթե լարերի նման
- 35 Իմ հոգի՛ն ձգել եմ —
 Ես—լամպերի արքա:
 Եկե՛ք բոլորդ մոտս,
 Ով ծվատում էր լռությունը,
 Ով ոռնում էր, քանի՛ որ
- 40 Յերեկների հանգույցը ձիգ է.
 Խոսքերով, որ պարզ են
 Ինչպես բառաշյունը —
 Ես կբանամ ձեզ ձեր հոգիները՝
 Դժժացող, ինչպես հեռագրասյունը...
- 45 Ես ձեր գլխին միայն
 Կդիպչեմ մատներով —
 Եվ կբուսնեն շրթեր—հսկայական
 Համբույրների համար,
 Եվ կունենաք լեզու, որ հարադատ է,
- 50 Տիեզերքին համայն:
 Իսկ ես,
 Կաղլիկ հոգով,
 Կքայլեմ դեպի գահս,
 Որի հիմ

55 Գմբեթներին

Գան աստղային ծաղեր՝

Կպառկեմ, լուսավոր,

Սուրբյան շորերով,

Իմ փափուկ անկողնում, որ իսկական թրթի՛ց է,—

60 Եվ անշա՛փ կամացով,

Շպալների ծնկները գգվելով,

Շոգեկառքի անիվը կհամբուրե իմ վիզը...

ՂԱՎ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ ԴԵՊԻ ՁԻԵՐԸ

Դոփեկով, սմբակները
երգում էին կարծես.

— Գրիբ.

— Գրաբ.

5 — Գրոբ.

— Գրուբ:

Քամուց լիզված,

Սառցոտ

Սահում էր փողոցը:

10 Ձին

Հանկարծ

Սայթաքեց —

Հավաքվեցին նրանք

Եվ ընկավ հրհույսը:

15 Նրանք, որոնք անգործ

Թրև էին տալիս —

Հավաքվեցին:

Ծիծաղ:

— Ձի՛ն ընկավ:

20 — Ձի՛ն:

Ծիծաղում էր փողոցը.

Միայն ես

Ձխառնեցի իմ ձայնը այդ ոռնոցին անձուկ:

Մոտեցա ու տեսնում եմ.---

25 Ձիու աչքերը...

Փողոցը շրջվել է —

Հոսում է նրանցում...

Մոտեցա ու տեսնում եմ. —

Կաթիլ առ կաթիլ

30 Արցունքը

Հոսելով մոռութից

Թաքնըվում է բրդում:

Եվ ինչ-որ ընդհանուր

Անասնական թախիծ

35 Իմ մեջ ծփաց հանկարծ

Եվ հորդեց դուրս

«— Ձի',

Հարկավոր չի'.

Մտի'կ տվեք ինձ.

40 Ինչո՞ւ եք դուք կարծում, որ վատ եք

նրանցի'ց էլ:—

Մանկի'կս,

Բոլո՞րս էլ

Ձիեր ենք մի քիչ.

Մեզանից ամեն'ն մեկը իր տեսակի մի ձի է»:

45 Կարելի է

Ծեր ձին

Կարիք է'լ շուներ դայակի.

Կարելի է խոսքե՛րս իսկ

Տափակ թվացին նրան,—

50 Ձին

Սակայն

Կանգնեց հանկարծ ոտքի,

Խրխնջաց —

Ու զնուց:

55 Խաղացնում էր պ'ղն:

Մանկան պես ուրախ էր,
 Ուրախ մսուրն հասաւ,
 Պոչը շարժեց:
 Եվ թվում էր նրան,
60 Թե ինքը—բուռակ է.
 Արժե ապրել կյանքում
 Եվ աշխատել արժե:

Ա՛ 3 Ք Ե Ձ

*Մի ժամ անց—այստեղից դեպ մաքուր նրբանցքը
Կհոսի ձեր ճարպը լույծ, բաժին-բաժին.
Իսկ ես բացի ձեր դեմ այնքա՛ն երգեր-գանձեր,
Ես—անգի՛ն խոսքերի վատնիչ ու տրանժիր:*

- 5 Ա՛յ, դուք—տղամարդ եք: Ձեր բեխերին նստել է
Թափթփած մնացորդը լավ չ՛ներած բորշի:
Իսկ դուք ահա, որ կին եք—այդ ինչքա՛ն եք
քսել:

Ոստրեի պես նայում եք դուք իրերի որշից:

- Բոլո՛րդ էլ պոետի սրտի թիթեռնիկին*
10 *Կոխոտում եք, կեղտոտ, ու կեղտոտում միջինը:*
Ամբոխը, զայրացած, կբարձրանա ոտքի,
Կգալարե ոտները բլուրոտանի ոջիլը:

- Իսկ հթե ես այսօր չցանկանամ քծնել,*
Եթե կոպիտ հոնիս համբերությունն հատնի —
15 *Ես կքրքչամ, ուրախ, ու կթքե՛մ,*
Կթքեմ դեմքի՛ն ձեր,
Ես—անգի՛ն խոսքերի տրանժիր ու վատնիչ:

ՊԱՏՆՐԱԶՄ ԵՎ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ

(Պրոլոգ)

Հեշտ է ձեզ.

Ննջեցյալք ո՛չ ամաչեն:

Մեռած մարդասպանների հանդեպ

Ոխըդ մարի՛ր:

5 Մաքրագործող ջրով մաքրվում է արդեն

Մեղքը հոգու,

Որ թռել է այս աշխարհից:

Հեշտ է ձեզ:

Իսկ ե՛ս

10 Այս շաշյունի,

Այս բիրտ շառաշյունի միջից

Ի՞նչպես տանեմ

Սերը

Դեպի մարդը:

15 Ընդունում եմ.

Սիրո

Փշրա՛նքն անգամ վերջին

Այս ամեհի ծխում

Խեղդըվել է արդեն:

20 Նրանց,
Որ դառնում են —
Ինչի՞ն է նրանց հարկավոր
Ձեր տխրությունը, կամ
Ձեր երգերի օրորը:

25 Նրանք,
Որ պիտի մի կերպ
Կաղալով
Մթնացնեն օրը:

Վախկո՞տ եմ:

30 Վախում եմ — սպանե՞ն:
Իսկ այսպես
Կարող եմ դեռ մի դար ճորտանման աճե՞լ:
Սո՛ւտ է:

Ընդունակ եմ ես ևս

35 Առաջի՛նը լինել
Հերոսության,
Մարտի շառաշում:

Այն ո՞վ է,

Ո՞վ է

40 Որ —
Քանդիչ տարիների այս նաբաթով կանչած —

Չի՛ լինի խիզախ ու արի:

Իսկ ես

Աշխարհում

45 Միա՛կն եմ —

Գալիք օրերի մարգարե:

Այսօր հրճվում եմ ես:

Առանց թափթըփելու

Հոգին իմ
 50 Կարողացա բերել:
 Օ,
 Միակ մարդկայինը —
 Այս ոռնոցի միջին
 Բարձրացնում եմ
 55 Ձայնս
 Հրես:

 Կուզեք —
 Կապեք սյունին,
 Կամ դեմ տվեք պատին.
 60 Կարծում եք՝ վարանե՞մ գուցե:—
 Ուզո՞ւմ եք —
 Տուզը
 Փակցնեմ ճակատիս,
 Որ նշանը պայծառ ցոլա ձե՛զ...

ՄԱՅՐԻԿԸ ԵՎ ԳԵՐՄԱՆԱՑԻՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ
ՍՊԱՆՎԱԾ ԵՐԵԿՈՆ

Սև փողոցներում սպիտակ մայրերը
Տարածվեցին, ինչպես սև դագաղի գլազեթ.
Հաղթանակի մասին կանչողներին ասին.
«Ախ, փակեցե՛ք, փակեցե՛ք գազեթների աչքերը»

5 Նամակ:

Մայրի՛կ, բա՛րձր:

Ծուխ:

Ծուխ:

Ծուխ:

10 Էլ ի՞նչ եք, մայրի՛կ, երկարում:

Տեսնո՞ւմ եք —

Օդն ամբողջ քարած է

Քեժ ումբերի ուժից դրդացող քարով:

Հենց հիմա բերեցին վիրավոր երեկոյին.

15 Երկար դիմադրում էր՝

Անհարթ,

Մռայլ,

Կուզիկ.

Եվ հանկարծ,

- 20 Յնցելով ամպե ուսերը —
Արտասվեց՝ փաթաթվելով Վարշավայի վզին։
Կապույտ շապիկ հագած ոսկեաչք աստղերը
Ճշացին.
«Սպանված է
- 25 Մեր անգին,
Թանկագինը»:
Եվ մահիկն իր մի աչքը սարսափահար հառեց
Աբոյմը պինդ սեղմած, մեռած, սառած
ձեռքի՛ն ալն։
Վազեցին տեսնելու լատվիական գլուղերը,
- 30 Թե ինչպես, հաշմանդամ դարձած,
Արցունքներով ոսկե կաստեղների աչքերը
Կոտրատում է Կովնոն փողոց-մատներն
անժայռ։
Իսկ երեկոն ճշում է —
Անձեռ,
- 35 Անոտ.
«Սո՛ւտ է,
Կարող եմ դեռ —
Զնգացնելով պարում շպորներըս —
Բեղըս ոլորել»:
- 40 Զանգ են տալիս։
Մայրի՛կ։
Ի՛նչ պատահեց.
Լսի՛ր։—
Սպիտակ է, ինչպես սև դագաղի գլազեթ։
- 45 «Թողե՛ք.
Հեռագիր է
Սպանվածի մասին։
Ախ, փակեցե՛ք, փակեցե՛ք գազեթների աչքերը»:

Ռ Ո Ւ Ս Ա Ս Տ Ա Ն Ի Յ

Ահա քայլում եմ ես —
Անդրծովյան ջայլամ —
Հանգով ու վանկով փետրաղարդ:
Աշխատում եմ

5 Հիմարըս

Գլուխս թաքցնել՝
Թաղելով փետրում երգաձայն:

Քոնը չե՛մ ես, երկի՛ր հայրենի.
Խո՛րը

10 Հոգի՛ս

Փետուրներում թաղվի՛ր —
Եվ կբացվի ուրի՛շ մի հայրենիք
Հրկիզված հրով հարավի:

Շոգ ու տապի կղզի:

15 Արմավներով պճնած:

«Է՛յ,
Ծանապարհ տվե՛ք»:
Անրջանք եմ հյուսում:
Եվ կրկին

30 Մինչ մյուս օազիսը
Հյուսում եմ նոր հետքեր վայրկյանների փոշով:

Ոմանք փախչում են.

— Երևի կծում է:

Ոմանք

25 Ստոր

Քծնում,

«Մայրի՛կ,

Ա՛, մայրիկ,

Ածո՛ւմ է նա ձուռ:

30 «— Զգիտեմ, հոգյա՛կս,

Երևի ածում է»:

Վրնչում են էտաժները:

Փողոցները դժժում:

Շնչում են ջրի ցրտություն:

35 Ամբողջովին խոցված մատներով ու ծխով՝

Անցնում են տարիներս ցուրտ:

Դե, ի՞նչ. — խեղդի՛ր հիմա ինձ գգվանքով զազիր.

Փետուրներս խուզի՛ր քո ցուրտ քամու ձեռքով:

Թող կորչեմ,

40 Օտար ու սառնասիրտ,

Բուլոր ձմեռներիդ մրրիկների ներքո:

**ԱՆՕՐԻՆԱԿ ԱՐԿԱՄ, ՈՐ ՏԵՂԻ Է ՈՒՆԵՑԵԼ ՎԼԱԳԻՄԻՐ
ՄԱՅԱԿՈՎՍԿՈՒ ՀԵՏ ԱՄԱՌԸ ԴԱՋԱՅՈՒՄ**

- Հարյուր քառասուն հսկա
Արևների ուժով
Հուրհուրում էր ամռան
Մայրամուտը:*
- 5 Հուլիսին էր, շոգին,
Հոսում էր շոգը շոգ,
Դաշայում էր —
Տոթ էր:
Փոքրիկ լեռան ներքևը —*
- 10 Ակո՛ւլինո սարի —
Ընկած էր գյուղը
Տեղը
Տանիքների պարի:
Գյուղի ետևը — փոս էր,*
- 15 Եվ այդ քոսոտ ոռջում
Ամեն անգամ
Արևը
Իջնում էր ու կորչում:
Իջնում էր նա, որ վաղը*
- 20 Կրկին ելնի, վառվի,
Որ ողողի*

- Աշխարհը
 Իր շողերով կարմիր:
 Եվ ամեն օ՛ր
- 25 Նա նո՛ւյնը,
 Ու ճշտությամբ
 Խստիվ —
 Եվ այս ամենը
 Ինձ
- 30 Բարկացրեց սաստիկ:
 Մի օր այնքա՛ն հս
 Բարկացա,
 Որ գոնատվեց սարսափըս,
 Եվ գոռացի հս.
- 35 «— Իջի ցա՛ծ,
 Բավակա՛ն է տապես»:
 Եվ գոռացի հս.
 «— Զրիակե՛ր,
 Դու այդտեղ—քնքշացել հս.
- 40 Իսկ հս այստեղ
 Ամառ-ձմեռ
 Ներկում եմ պլակատներըս»:
 Եվ գոռացի հս.
 «— Սպասի՛ր,
- 45 Լսի՛ր, ոսկեճակա՛տ,—
 Անգործ շրջում հս,
 Է,
 Լավ չէ՞ —
 Ինձ մոտ թեյի թե գաս»:
- 50 Ես ի՞նչ արի...
 Օ, հս կորա...
 Ինձ մոտ,
 Հոժար կամքո՛վ իր,

- Ահա արևը հուրհուրան
 55 Դաշտով գալիս,
 Քայլում է...
 Ուզում եմ
 Վախս
 Թաքցրենեմ,
 60 Գնում եմ ես ետ-ետ,
 Բայց պարտիզում է նա հրեն,
 Դալիս է
 Նա
 Արդեն:
 65 Մտնում է դուռ ու պատուհան,
 Թափվում է ներս —
 Անհասը.—
 Մտավ —
 Եվ շունչ առավ մի պահ,
 70 Հետո հնչեց իր բասը.—
 «— Քշում եմ
 Ետ
 Շողերբս
 Ես այս անգամ թեպետ ---
 75 Սակայն
 Դու ինձ
 Կանչել ես.—
 Պոե՛տ,
 Դե թեյը բե՛ր...»:
 80 Եվ,
 Քրտինքի մեջ լողալով,—
 Օ, շոգն հոգիս վառել էր,—
 Ես,
 Ինքնաեռը ցույց տալով,
 85 Ասի՝

- «— Նստի՛ր, արև՛ըս...»:
 Ո՞ր սատանան էր՝ ինձ դրդեց,
 Որ ես
 Կանչեմ նրան,—
- 90 Բայց, քաշվելով, ես նստեցի,
 Որ չխնդա վրաս:
 Ու լուսավոր մի պարզություն
 Հորդում է նա —
 Եվ վախըս
- 95 Ես մոռանալով
 Նրա հետ
 Խոսում եմ —
 Եվ
 Ուրա՛խ եմ:
- 100 Խոսում եմ
 Ես
 Դեսից-դենից,
 Ասում եմ.
 «— Շատ է գործս»:
- 105 Իսկ նա ասում է.
 «— Պա՛րզ նայիր
 Կյանքին —
 Դեռ դու անփո՛րձ ես:—
 Կարծում ես
- 110 Հե՞շտ է
 Արևել.
 Հապա գնա՛,
 Փորձի՛.
 Բայց դե —
- 115 Ես պե՛տք է արևեմ,
 Ես չե՛մ փախչում գործից...»:
 Այսպես

- Խոսում ենք երկուսով,
 Կորչում է մութի հետքը.
 120 էլ ի՞նչ
 Գիշեր.
 Արդեն դու-յով
 Խոսում ենք իրար հետ մենք,
 Քիչ անց արդեն՝ես՝
 125 Մտերիմ՝
 Խփում եմ իր ուսին.
 Իսկ նա.—.—
 «— Նո՛ւյն բախտն է վիճակված,
 Պոե՛տ, մեզ երկուսիս:
 130 Գնանք, պոե՛տ,
 Գոռա՛նք,
 Երգե՛նք,
 Խրվենք կյանքի գորշ խորքը.
 Ես իմ
 135 Շողերը կցրեմ,
 Դու քոնը —
 Երգերո՛վ քո»:
 Էլ ո՛չ ստվեր կա,
 Ո՛չ խավար,
 140 Ընկավ մութի պատնեշը.
 Հիմա երգի՛ր դու
 Ու շողա՛ —
 Էլ լույսն ու երգն անվե՛րջ է:
 Երբ նա հոգնի,
 145 Ուզի պառկել
 Գիշերն՝ այդ բուր՝ քնկոտը,—
 Ես իմ շողերը կարձակեմ,
 Եվ գիշերի՛ մեջ

Կժառանգ

150 Իմ լույսն ու առավոտը՝
 Հուսեի ընդմիջտ,
 Ծրագի անվե՛րջ.
 Մինչև սառչի լեզո՛ւն քո,—
 Հուսեի —

155 Ա՛յ սա է արևի
 Իմ իմ
 Միակ
 Հոգունգը...

Ն. ՆԵԿՐԱՍՈՎ

Ե Ր Կ Ա Թ ՈՒՂԻՆ

Վաճյալ.—Ո՞վ է շինել այս ճանապարհը:

Հայրը.—Կոմս Կլեյնմիխելը, սիրելի՛ս:

Օ, բարի՛ հայրիկ, ինչու եք խաբում

Ձեր որդուն խոսքով այդ նսեմ,—

Թույլ տվեք լուսնի ցուլքերի ներքո

Ես նրան ճիշտը ասեմ:

5 Լեշատանքն այդ, Վա՛նյա, սոսկալի դժվար էր.—

Զէ՛ր կարող շինել դա մի մարդ:

Աշխարհում մի արքայ կա, այդ արքան

անողո՛ք է,—

Սո՛վ է անունը նրա:

Նա բանակներ է վարում, ծովերում նա

10 Շարժում է նավերը, դաշտում

Քշում է գութանը և անդու՛ հսկում է,

Ուր աշխատանքն է իշխում:

Հենց նա՛ էլ քշել է այստեղ մասսաները,

Շատերը դաժան պայքարում,

15 Կյանքի կոշիլով անպտուղ այս շուրթը —

Մեռել են այս գորշ քարերում:

Ճանապարհն ուղիղ է. նեղլիկ բլուրներ են,
Կամուրջներ, ռելսեր ու սյուներ,—
Իսկ երկու կողմերիցը, նայի՛ր՝ ոսկորներ են...
20 Հասկանո՞ւմ ես, Վա՛նյա,— ինչքա՛ն են ընկեւ...

Լսո՞ւմ ես, լսո՞ւմ ես ահա՛վոր կանչերը.
Ի՞նչու՞մ են, ատամ կրճըտում,—
Տեսնո՞ւմ ես՝ ամբո՛խ է, անթի՛վ մեռելներ են...
Ինչքա՛ն են, ինչքա՛ն են—իմանո՞ւմ ես դու...

25 Նրանք մերթ կտրում են երկաթ ճանապարհը,
Վազում են, ուզում են հասնել.
Լսո՞ւմ ես՝ երդո՞ւմ են.— «Լուսնյակ գիշերո՛վ այս
Սիրում ենք մեր գործը տեսնել:

Մենք այսուեղ տառապել ենք ցրտի ու հո՛ւվի դեմ,
30 Հավիտյան կորված մեջքերով,
Ապրել ենք խուղերո՞ւմ ցուրտ, պայքարել
սովի՛ դեմ,
Ո՛րսել ու թրջվել օրերով:

Մեզ թալանել են տասնապետ-գիտունները,
Մեծել են տերերը, կարիքը ճնշել,
35 Ամեն ի՛նչ մենք տարել ենք, բայց հավետ
մենք եղել ենք
Խաղաղ վաստակի զավակներ:

Նղբայրեն՛ր, վայելում եք դուք հիմա մեր
պտուղը,
Իսկ մենք մոխրանում ենք հողում,—
Դուք արդյոք մեզ հիշո՞ւմ եք, մեզ արդյոք դեռ
հիշո՞ւմ եք,

40 Թե մոռացե՛լ եք վաղուց...»:

Զարսափե՛ս դու ամեհի երգից այդ.—

Մեր երկրի բոլոր ծայրերից

Հավաքված այդ խմբերը քո հալալ

եղբայրեն՝րն են՝

Անտուն ու զրկված գյուղացիք:

45 Ամո՛թ է. ինչո՞ւ ես հեռացնում հայացքդ.

Դու արդեն մեծացել ես, փո՛քր հո չե՞ս.

Տեսնո՞ւմ ես՝ կանգնած է հաղթանդամ

գյուղացի՛ մի—

Նա տենդից հյուծվե՛լ է այնպես:

Շրթունքներն անարյուն են, կռպերը ընկել են,

50 Զեռքերին վերքեր չորացած.

Ոտքերը ուռել են՝ նա այդպես աշխատել է—

Հավիտյան ջրում կուացած:

Նրա կուրծքը փոս է, այդ կրծքով նա բահը

Շարունակ սեղմել է, հավիտյան հրել.—

55 Դու նայի՛ր նրան, Վա՛նյա, ուշադիր նայի՛ր դու՝

Դժվար է այդ մարդը իր հացը ճարել:

Դու նայի՛ր՝ այդ մեջքը, որ հիմա կուացած է,

Զի շտկել նա դեռ իր օրում.

Լուռ կանգնած՝ աշխատում է, ժանգոտած

բահո՛ւ վ իր

60 Նա հողն է փորում ու փորում:

Նրանից այդ սերը դեպի աշխատանքը

Մեզ է՛լ է հարկավոր սովորել.

Դե օրհնի՛ր դու, Վանյա, այդ ազնիվ

աշխատանքը,

Սովորի՛ր մուծիկին սիրել:

65 Եվ մի՛ վհատիր մութիկի համա՛ր դու.
Ինչքա՛ն շարշարանք է արդեն նա կրել, —
Կրել է նաև այս երկաթ ճանապարհը,
Եվ ինչքա՛ն է, ինչքա՛ն է կրելու նա դեռ:

Կկրի նա ամբողջը, — և կրծքով իր համա՛ր նա
70 Կհարթի ճանապարհ լուսագես, —
Բայց ափսո՛ս որ, Վա՛նյա, գեղեցիկ կյանքին այդ
Զենք հասնի ոչ դու և ոչ ե՛ս:

Ե Ր Ե Խ Ա Ն Ծ Ր Ի Լ Ա Ց Ը

Անտարբերությամբ երբ լսում եք դուք
նզովքը կյանքում պարտված խեղճերի,
Դրա ետեից չե՞ք լսում արդյոք
Գանգատն ու լացը երեխաների:

- 5 «Մանուկ հասակում ամեն աքարած
Ապրում է առանց ծանր զրկանքի,
Զի տեսնում երբեք աշխատանք ու լաց՝
Ու խինդ է քաղում իր մանուկ կյանքից:
Միայն մեզ կյանքում, ա՛խ, չվիճակվեց՝
10 Շրջել ոսկեծուփ, դալար դաշտերում:
Մենք անիվներ ենք դարձնում անվերջ,
Ամբողջ օրերով գործարաններում:

- Զուգունե անիվը դառնում է արագ,
Դղրդում, քամի՛ փչում դեմքերիս,
15 Պտույտ է գալիս մեր դուխը տաք,
Պտույտ է գալիս շուրջը ամեն ինչ՝
Քիթը սնողոք, դաժան պառավի,
Ո՛ր մեզ է նայում ականցի տակից,
Դուռ ու պատուհան, ճանճերը պատի:
20 Եվ տախտակները խոնավ հատակի,

Պտույտ է գալիս ամեն ինչ,— և մենք
Արձակում ենք խոր, հուսահատ մի ճիչ.—
— Օ, կա՛նգ առ, պտույտ անողոք ու նենգ,
Թույլ տուր հավաքենք մեր ուշքը մի քիչ:

25 Այս գերության մեջ հոգնած, շարշարված՝
էլ սի՛րտ կմնա ցատկել-խնդալու,—
Թե մեզ թողնեին հիմա դաշտը բաց —
Կընկնեինք խկույն խոտում—քնելու:
Մենք ուզում ենք շուտ տուն վերադառնալ,—

30 Թեկուզ իզուր ենք տներս գնում.
Այնտեղ չենք կարող վիշտը մոռանալ —
Կարի՛քն է այնտեղ մեզ դիմավորում:
Այնտեղ հոգնատանջ գլուխները մեր
Դնելով մեր մոր չոր կրծքի վրա,

35 Դա՛ռը կսկիծով հեկեկում ենք մենք
Ու սլատառոտում խեղճ սիրտը նրա...»:

Ք Ա Ն Կ Ի Ր

Նամակներով ծածկված գրասեղանի առաջ,
Թիկնաթոռում թաղված, դողդոջուն ու մռայլ,
Նա գրում է ճերմակ թղթիկների վրա՝
Միտքը հեռու-հեռուն՝ երկրի ծայրերն հառած:

5 Տեսնում է նա Կափը, Յեյլոնը ու Ճավա՛ն,
Եվ օվկիանոսն Հնդիկ, ուր իր նավերն հազար
Դեպի չորս կողմն հողի, դեպի հազար կայան,
Առաջատները բաց՝ նավարկում են ազատ:

Կայարաններն իրա ու ռելսերը կարմիր,
10 Որ ուղարկե պիտի անապատներն անթուխվ,
Ուր արևն է միայն շարժվում մեռյալ տոթում —
Երենոսի, սաթի աշխարհները անծիր:

Իր հանքերը, նավթի շատրվաններն անթիվ,
Իր բանկերի մոլի եռուղեքը հնչուն,
15 Որ խեղդում է, լափում, զառանցանքով տանջում
Եվ իր տենդը նետում օվկիանոսից անդին:

Ժողովուրդներ, որոնց սենատները դահիճ
Եվ օրենքները խեղճ հպատակ են իրեն —

Նա կարող է մատնել նրանց հողմին հրե,
20 Թե օգտակար լինի հաշիվներին դա իր:

Պատերազմներ, արյուն, մոլեգնություն ու ոխ,
Որոնց միակ արքան—ինքը—կրծում է հար
Պաղ թվերի անկիրք ատամներով—հազար
Հանգույցներ ու հարցեր՝ արյունոտ ու այրող:

25 Եվ նա գիտե, որ հին թիկնաթոռում բազմած,
իր մատյանում երբ նա խժրժում է գողգոթ —
իր քաղթենի ոգուն կապում է կյանքը ողջ,
Ուր տիրում է թախիժ ու սպիտակ սարսափ:

Օ, ոսկի՛ն, իր ոսկի՛ն, որ ցանում է հեռու,
30 Բազմապատկում այնտեղ—մոլի քաղաքներում,
Այնտեղ—խրճիթներում ու խուցներում տխուր,
Ու լույսներում, օդում, ամենո՛ւր:

Իր թևավոր ոսկի՛ն, հեռուներով հարբած,
Իր սավառնող ոսկի՛ն, իր գիշատիչ ոսկի՛ն,
35 Ոսկի՛ն՝ շնչող ու վառ,—
Ոսկի՛ն:
Իր ոսկի՛ն, որով փայլում են բորբ ամեն
քամի ու հով,

Իր ոսկին, որ հողն է ծծում
Թշվառության անթիվ շրթունքներով:
40 Իր ոսկի՛ն՝ հուրհրատող, իր ոսկի՛ն՝ խորամանկ,
խաբող՝ առա՛նց խոսքի,
Հույսի ու արևի բեկոր—իր ոսկի՛ն:

Նա չգիտե ինքն էլ, թե ինքն ի՞նչի է տեր,
Բայց իր դիզած ոսկին ավելի է եթե,
Քան բուրգերը հսկա, աշտարակները ցից —

45 Նա սիրում է խորհել, պաղարյուն ու հանգիստ,
Խորը, զգաստ սիրով,
Որ ինքն ունի արդեն, որպես բարիք ու գանձ —
Իսկական ակն հողի՝ զրնգան ու զնգան:

Ամբոխն ատում է իրեն, բայց պատկանում է
նրան:

50 Նախանձում են բոլորն էլ. ոսկին պսա՛կն է նրա:
Ցանկությունը երկրային, հրդեհումը նրա կեղ
Լափում է սիրտը նրանց, ինչպես իր սիրտը
լափեց:

Ինքը — նա՛ է, որ տալիս է ուզածին

Դյուծիչ վաստակը հացի:

55 Ի՞նչ հոգ, որ նա կեղեքում է բոլորին.—
Ով իր դռնից հեռացավ—նա դառնալու է նորից:
Որպես հսկա ջրապտույտ, որպես հորձանք,
Թավալվում է ուժը նրա ահեղաձայն.

Փրփրում է, եռում ու քաշում է իր մեջ

60 Տերևներ ու ճյուղեր և քարեր ու սերմեր,—
Կարողություն, հասույթ, տնտեսություն ու կայք
Եվ կոպեկնե՛րն անգամ,
Որ խուղերի մթում, գիշերն ամեն ծառա
Համարում է ծածուկ իր ճրագի առաջ:

65 Այսպես ահա, հսկա իր դեզերով փողի
Թիկնաթոռում թաղված, դողդոջուն ու մռայլ,
Նա տիրում է բոլո՛ր արքաների վրա
Ու վճըռում բախտը ծովերի ու հողի:

Կ Ի Ն Ը Ճ Ա Մ Փ Ա Մ Ի Զ Ի Ն

Քաղաքում այս ոսկե,
Երենոսյա,
Կի՛ն սևազգեստ, ճամփամիջին կեցած,
Օրը օրին,
5 Նորից ու նորից,
Ի՛նչ ես ուզում դու—ասա՛:

- Ահա հույսերը սե՛սև շների նման՝
Կաղկանձեցին նորից, հուսահատ ու մռայլ,
Իմ բիբերի նսեմ լուսինների վրա,
10 Որ երբեմն լուսե՛ն խավարել են հիմա:
Այնպես երկա՛ր-երկա՛ր կաղկանձեցին նրանք
Իմ բիբերի նսեմ լուսինների վրա...
Ինչպես ոսկի ու սուգ—իմ մազերի հյուսկեն
Խենթանում է, հուզում ոհմակներին այդ սև,
15 Ու մեղավոր, մաքուր իմ մարմնի ոսկին
Երազներ է ցրում խելագար ու լուսն:

- Կի՛ն սևազգեստ, ճամփամիջին կեցած,
Օրը օրին,
Նորից ու նորից,
20 Ի՛նչ ես ուզում դու—ասա՛:

— Առագաստները բաց՝ ո՞ւր է թռչում, գիտե՞ք,
իմ կուրծքը գիրգ ու գեր,— դեպ ի՞նչ անեղ հրդեհ,
Դեպ ինչպիսի՞ հուշեր ու դրախտներ խավար:
Ի՞նչ ոգիներ են խենթ, կամ նժույգներ հրե,
25 Եվ ի՞նչ, և ի՞նչ, և ի՞նչ՝ մորթիկներ են վառել
իմ շրթունքներն այսօր հուրհրատող ու վառ:

Ախ, ի՞նչ հրդեհ է.— օ հս հրե՛ հմ,
Որ միշտ լիզում են տարփանքս կեց:
Եվ ի՞նչ թովիչ հմ, որ այդ շնները
30 Տենչում են մահը, որ կա իմ մեջ:

— Կի՛ն տևազգեստ, նորից ու նորից,
Օրը օրին,
Ի՞նչ հս ուզում դու այդպես:

— Ես ա՛յն հմ, ում գգվանքը թույն է.
35 Ես ում հպում հմ դողդոջուն —
Նրան տալիս հմ մեղկությունս.
Ես կործանում հմ ու կորչում:

Շրթերս ա՛լ են, արնոտ են, ձիգ են,
Բոսոր, փայլում են նրանք անահ.
40 Անցորդ, մահո՛ւ պես գեղեցիկ հմ
Եվ ամենի՛նն հմ, ինչպես և նա:

Ինձ մոտենում է, ով ուզում է.
Թաղման ջահեր է վառում արթուն:—
Ու էլ թողնում է իր հուզումը
45 Եարմնիս փարթամ այս դիտկառքում:

Տալիս հմ գիրկն իմ ամենքի՛ն հս,
Տաճար է գիրկն իմ չգոցած:

Իմ սերն անհ'ծք է երկնքի՝ դեմ՝
Ջահի պես վեր է նա ցցած:

50 Ես վեհ կեցած մի աշտարակ եմ՝
Համակ երկաթ ու դարերից,
Ձեզ զազրելի է իմ կրակը,
Բայց ընդունում եք ինձ էլի:

Օ, ես նրանցն եմ, ով անսեր է,
55 Ում սիրտը բիրտ է ու հիվանդ,
Ով որ սիրում է, որ իր սերը
Եվ թուրք քաղցր ինձ թվա:

Նրանք սիրում են, որ իմ սերը
Մնում է մութ այս անդունդում,
60 Ուր ալ դրո՛շ է անիծելը՝
Փռված միգում այս ու տենդում:

— Կի՛ն սևազգեստ, ճամփամիջին կեցած,
Օրը օրին,
Նորից ու նորից,
65 Ո՛ւմ ես ուզում դու — ասա՛:

— Ահա՛ արևը հին՝ փախած մթի լսայթից՝
Ոսկիներ է ցրել իրիկնային մայթին,
Եվ ձգվել է ահա, որպես հսկա մի օձ,
Հսկա քաղաքը — տե՛ս. փակուղի ու փողոց
70 Կայծկլտում են այնտեղ կրակների տվից,
Ուր կանչում է, որպես հավերժական մազնիտ
Կի՛նը. — կեցել է նա մայրամուտին մուսլլ,
Որպես հպարտ արձան, հորիզոնի վրա:

Ոհմակը շնե՛րի,

- 75 Անհոսության, մահու ոհմակները այդ սև,
Կաղկանձեցին նորից լուսիններին նսեմ,
Սև բիբերիս խոշոր լուսիններին նսեմ,
Որ գիտեին այնպես բորբոքել ու կիզել:
Այնքան երկար-երկար կաղկանձեցին նրանք
- 80 Սև բիբերիս խոշոր լուսինների վրա:
Այդ ի՞նչ կրակ է բորբ, այդքան աւագ, արագ
Իմ կոնքերից հոսում դեպի մարտինս հրի.
Եվ ի՞նչ փայլում է խոլ կուրծքս մթնում վառած,
Որ ցնդել են այդ սև ոհմակները էլի:
- 85 Ի՞նչ ոգինե՛ր խելառ, ի՞նչ մորիկներ հրի
Օրորեցին վառվող շրթունքներս նորից:
Ու մազերս կրկին, առագաստներ դրած,
Ո՛ւր են թռչում ասա՛. ի՞նչ դժոխքներ մուսլ:

— Կի՛ն սեւազգեստ, ճամփամիշին կեցած,

- 90 Օրը օրին,
Նորից ու նորից,
Ի՞նչ ես ուզում դու — ասա՛:

— Ես երազում եմ նրա՛ գալուստը,

Ում պետք է ահս գգվի ազահ:

- 95 Նա խոստացե՛լ է, նա գալո՛ւ է.
Այսօր ուզում եմ—և նա կրգա՛:

Օ, տանջանքո՛վ խոր, որ ձեզ խորթ է,

Նա կենդանի է՝ լցված սիրով

Դեպի կոնքերը անհագուրդ իմ,

- 100 Դեպի մարմինն իմ անդարձ գերուղ:

Ո, ձեռքերի՛ն այն, որ արնոտ են,
Տալիս եմ քաղցր մարմինս Կս.
Ծս — նա՛ եմ, վախն ում անծանոթ է,
Նետված է բա՛րձր իմ ամոթը,
Ճ05 Որպես մեղսանք մի—միշտ ու անվերջ:

էլ ո՞վ կառնի ինձ—հենց այս պահուս —
Մութ պանդոկում մի թեկուղ մահու:

— Կի՛ն սևազգեստ, ճամփամիջին կեցած,
Ո՞ւմ ես ուզում դու—անհագ:

Ճ10 — Ով տա ինձ արնո՛տ մի դանակ:

Լ Ո Ն Դ Ո Ն

Այն — Լո'նդոնն է, ցնորք շուգուն ու երկաթի.
Այնտեղ հեծում է հանքն ահագնազարկ մուրճից.
Այնտեղից են մեկնում նավերը — ո՛վ գիտե՝
Դեպ ի՞նչ անլույս ծովեր ու արկածներ վերջին:

5 Կայարաններ տխուր, ուր կարոտի բույրով
Դողդողում են գազի լապտերները կորզիծ,
Ուր ձանձրույթի ահեղ հրեշներ են հշում
Վեստմինստերյան դաժան ժամացույցի զարկից:

Ու լապտերներ, Թայմզի երկայնքն ի վար շարած,
10 Որ անձրևի կաղմած լճակներում լեղի
Օրորվում են, որպես ջրահեղձ ու մեռած
Նավազների զարհուր ուրվականներ դեղին:

Եվ հարբածի երգեր, ու պոռնիկի քրքիշ,
Ու պանդուկի ոլատին — բախտանման գրեր,—
15 Եվ հանկարծ — մա՛հն ահա, որպես մի հյուր
անկող...
Այն — Լո'նդոնն է՝ ցնորք, որ կրում ես քո մեջ:

Դ Ե Կ Տ Ե Մ Ք Ե Ր Ը

— Բացե՛ք, մարդի՛կ, ինձ.— տխուր ժամին այս
Բախում եմ դուռ ես ու պատուհան:
Բացե՛ք, մարդիկ, ես— ձմռան քամի՛ն եմ,
Մեռած տերեւ եմ հագեւլ ահա:

5 — Մտի՛ր ազատ դու, քամի, մեր տունը,
Ապրի՛ր ձմեռը ծխնելույզում.
Դու մեզ ծանոթ ես, քեզ ընդունում ենք,
Օ, ցուրտ քամի, քեզ— ողջո՛ւյն, ողջո՛ւյն:

— Բացե՛ք, մարդի՛կ, ես— երկար ու մանր
10 Անձրեւն եմ՝ թե՛ն մի հագուստ հագած.
Ինձ միշտ ծածկում է հեռվում տումանը
Ու շուրջս մերկ է, տերեւ չկա:

— Մտի՛ր ազատ դու, անձրեւ, մեր տունը,
Մտի՛ր, օ ցո՛ւրտ դու, մտիր հատու:
15 Ազատ մտնեն թող մշուշն ու թոնը —
Հազար ծակեր կան խոնավ պատում:

— Բացե՛ք, մարդի՛կ, ձեր դռան փեղկիհրը,
Բացե՛ք, ես ձյունն եմ ճերմակ ու ծեֆ:

Քամին շարդել է բոլոր ճյուղերը։ —
20 Ես ծածկելու եմ նրանց ու ձեզ։

— Մտի՛ր ազատ, թող ճշա մրրիկը.
Փռի՛ր թերթերդ, վարդերդ ցուրտ.
Յանի՛ր թերթերդ մինչև տանիքը,
Մինչև կտուրը, ճերմակ դու ձյուն։

25 Մտե՛ք ազատ, ձյուն, անձրև, քամի՛, թեն.
Մտե՛ք, ձմռան դուք ճերմակ ճուտեր։
Մենք ձեզ սիրում ենք, դուք մեզ ծանոթ եք.
Ձեր տխրությամբ, որ մեզ էլ դուլթեց։

Ս. ՏՐԵՏՅԱԿՈՎ

Մ Ռ Ն Չ Ա Չ Ի Ն Ա Ս Տ Ա Ն

ԳԻՏԵՄ

Օրը կգա:

Կգա վաղ թե ուշ:

Դուրս կհորդի

Ոխը իր մորթուց:

5 Ա՛լ արե ոնց որ՝ կտա՝ աչքերին:

Էդ ժամին ո՞վ կքնի...

Ո՛չ մի սվին,

Ո՛չ մի մետաղ էլ

Ձի փրկի

10 Կրկին

Եվրոպական թաղը:

Ինչ որ արել եք,

Թե չոր, թե թաց —

Ձեր կաշո՛ւ քաշով

15 Գինը կտաք:

Եվ ֆնտեղ, ուր զնգում էր «Սի՛լվան» ձեր,

Եվ շրշում էր շոգ ֆոկստրոտը —

Կո՛ւլին կգա,

Կո՛ւլին կառեանգե...

20 Կպատռե բռունցքով ձեր ծնոտը...

- Եվ էնտեղ, ուր թորում էր դապեթը
 Խեղդող թույն —
 Կծծե ֆայանսը գլազեթի
 Ո՛չ թե մեզ —
- 25 Մարդկային արյուն:
 Իսկ երբ դանակը հագնեա,
 Ազգերի դրոշները թափե ցած —
 Կեղնե արևը,
 Կարևի
- 30 Զինաստանի վրա:
 Ծ՞րբ.
 — Տարիներ անց...
 — Երբ կուլինեք միլիոն,
 Առած ոխ,
 35 Առած սվին —
 Կքայլեն տեքստիլ գործարաններից,
 Կշարժեն հանք ու ձուլարան:
 Եվ աշխատանքին —
 Կլինի նոր գին.
- 40 Զի փոխվի կրկին լացի նա:
 Եվ աշխատանքին —
 Կլինի նոր գին. —
 Ոչ թե կռպեկ կրկին,
 Այլ —
- 45 ԿԱՐՄԻՐ ԻՆՏԵՐՆԱՅԻՈՆԱԼ...

Մ Ե Ր Օ Ր Ե Ր Ը

էլ ջնջված են սահմանները՝ արքաների ձեռքով
 Եվրոպայում քաշած.
 Ժողովուրդն ի՛նքն հիմա կքաշե իր ուղած
 սահմանները:
 Դեռ երբեք հասարակ մարդը չի՝ եղել աստվածներին
 այնքա՛ն հավասար,
 Որքան հիմա.—

5 Ամենո՛ւր է նա հիմա՝ երկրում, օդում և ջրի վրա.
 Նա կապել է, նա ձուլել է ի մի բոլոր երկրները,
 ամբողջ երկրագունդը.

Ամենո՛ւր, ամենո՛ւր ցրված
 նավերով, հեռագրով, թերթերով և գործարաններով:
 Այդ ի՞նչ շշուկ է, երկրնե՛ր, վազում ձեր միջով,
 հուզում ծովերի ջրապտույտը.

10 Բոլոր ժողովուրդները զրույցի՞ են նստել: Մի սի՞րտ
 է արդյոք ծնվում երկրագնդի կրծքում:
 Մարդկությունը մի մարմին է դարձել և մի
 ժողովուրդ:
 Դողում են բռնակալները, հալչում են նրանց
 թագերը միրաժների նման:

Ո՛վ կասի՝ ի՞նչ կըլինի վաղը... Օրերն ու գիշերները
գալիքներով են բեղմնավոր
Օ, իմաստուն, մարգարեական տարիներ...

15 Վաստակներ, դեռ գլուխ չբերած, իրեր, դեռ
չստեղծված, հորդում են դեպ ինձ
(Ես տեսնում եմ դրանք տենդագին երազում),
Նրանք հորդում են ինձ վրա, ճնշում են ինձ,
թափանցում են ներսս,—
Եվ իմ աչքերի առաջ, ահա՛,—ո՛չ Ամերիկա,
ո՛չ Եվրոպա,—
Բոլոր անցածն ու կատարվածը նահանջում է ետ,
դեպի խավարը.

20 Շարժվում է հսկա Գալիքը, գալիս ու գալիս է
դեպի ինձ:
Տեսնում եմ՝ ետ-ետ է գնում հորիզոնը՝
Տեսնում եմ Ազատությունը, փառքով զրահավորված,
որպես տրիումֆատոր,
Եվ իր հետ, կողք-կողքի, հաղթական երթի են ելել
Խաղաղությունն ու Աշխատանքը:

Ե Վ Ր Ո Պ Ա

- Ճորտի խեղդող որջից
Շանթի պես նա թռավ՝ ինքն իրմով հիացած.
Ոտքերով նա կոխոտում է մոխիրն ու ցնցոտիները,
Իսկ ձեռքերով սեղմում կոկորդն արքաների:
- 5 Օ՛, հույս և սպասում:
Օ՛, տանջանքը քշված ազատասերների, որ
մաքրում են իրենց ըմբոստ հոգին
օտար հեռաստաններում,—
Օ՛, որքա՛ն սրտեր կան հիմա տխրությունով հիվանդ-
վերադարձե՛ք այսօր ձեր տները, թող նոր կյանք
բացվի ձեզ համար:
Իսկ դուք, որ ոսկի էիք առնում, որպեսզի
ժողովրդին արատավորեք,
10 Իմացե՛ք, ստախոսներ և վաշխառուներ, որ
ձեր բոլոր կառափնատների, ձեր մոլության,
նվ նրա համար, որ դուք որպես որդեր,
ծծում էիք միամիտ ու բարի
մուրացկաններին,
նվ նրա, որ, խոստանալով, խաբում էին
շուրթերն արքայական
Ով, դրժելով երգումը, քրքշում էին —

Այս բոլորի համար ներումով կպատժե ձեզ
 ժողովուրդը. նրան պետք չեն ձեր գլուխները-
 15 Զգվելի՛ք է նրան դաժան ռեսակալությունն արքաների:
 Բայց հեզ ներողամտությունը ծնում է կորուստ
 անողոք,— և սարսափահար արքաները
 ահա դառնում են ետ —
 Անցնում են հսկարտ ու հանդիսավոր, և ամեն
 մեկին շրջապատում է
 շքախումբը.— տերտեր, բռնաբարող,
 դահիճ, բանտապետ, դատավոր,
 վաճառական, զինվոր ու լրտես:
 Իսկ բոլորի ետևից, տե՛ս, ինչ-որ ուրվական է
 սողում գաղտագողի, ինչպես մառախլապատ
 գիշեր-
 Ամբողջովին կարմիր, ճակատը, գլուխը և
 մարմինը արնավառ ծալքերով ծածկւած:
 20 Չեն երևում ո՛չ դեմքը, ո՛չ աչքերը:
 Բայց իր այդ ալ-կարմիր զգեստների տակից,
 որ վեր են բարձրացվում
 ինչ-որ անհայտ ձեռքով,
 Ահավասի՛կ մի մատ, որ ցույց է տալիս հեռուն,
 հորիզոնները —
 Գալարվում է, ինչպես օձի գլուխ:
 Իսկ թարմ գերեզմաններում պառկած են,
 արնաթաթախ, երիտասարդ մարմիններ,
 25 Եվ ձգված են պարանները կախադանների, և
 շաշում են տերերի գնդակները,
 Եվ բռնակալները քրքջում են բարձր—բայց այս
 ամենը կտան պտուղներ, և առատ կլինի
 նրանց հունձքը:
 Այդ դիրքը պատանիների,
 Այդ ճահատակները, օղակներից կախված, գորշ
 արճիճով ծածկված այդ սրտերը,—

Նրանք անշարժ են և պաղ, բայց և այնպես
ապրում են նրանք հավիտյան, և անհնարին
է նրանց սպանելը:

30 Նրանք ապրում են, օ՛ւ արքանե՛ր, մնացած իրենց
պես ջահել սրտերում,

Մնացած եղբայրներում են ապրում նրանք,
նրանցում, որ պատրաստ են ձեր
դեմ կրկին ապստամբելու,

Նրանք մաքրվեցին, սրբացան նրանք մահով, մահը
մեծացրեց նրանց և իմաստավորեց:

Ազատության համար ամեն մի մեռածի վրա,
ամեն մի գերեզմանից կծլի ազատության
սերմը, իսկ նրանից—նորը:

Հեռո՛ւ-հեռո՛ւ կտանեն քամիները նրան՝ գալիք
սերունդների համար,

35 Կգուրգուրեն նրան անձրևներն ու ձյուները:
Օ՛, ամեն մի հողի, որ թողել է մարմինը՝ բռնակալ
դահիճներից զարկված —

Անտեսանելի ճախրում է աշխարհի վրայով,
շշնջում է, կանչում, հսկում:

Ազատությո՛ւն. թող հուսալքվեն ուրիշները. ես
չեմ հուսալքվի երբեք:

Ի՞նչ, Այս տունը գամվա՞ծ է. տերը տե՞ղ է գնացել.—

40 Ոչի՛նչ. շուտով նա կգա. սպասեցե՛ք նրան:

Պատրաստվեցե՛ք դիմավորելու նրան.— արդեն
գալիս են նրա համբավաբերները:

Ժամօրագրութիւնք
ն^ախնայք
նախքէն յսկիւնք



Ե. Զարենցի Երկերի ժողովածուի III հատորում զետեղված գործերի մի մասի համար հիմք են հանդիսացել բանաստեղծի 20-ական թվականների սկզբներին հրատարակած առանձին գրքերը:

Պոեզոգուոնգա—1922 թ., Մոսկվա, ծանոթագրություններում և տեքստային տարբերություններում՝ ՊԶ:

Կռվամանախ — 1924 թ., Մոսկվա, ծանոթագրություններում և տեքստային տարբերություններում՝ ԿԱ:

Քրվածքների երկրորդ խմբի համար հիմնական տեքստ են ծառայել բանաստեղծի Երկերը (1932 թ., Երևան). ծանոթագրություններում՝ Երկեր, տեքստային տարբերություններում՝ Երկ համառոտագրություն: Երկերից է տպագրվում նաև «Քարգմանություններ» ժամում զետեղված գործերի զգալի մասը: Նպատակահարմար է համարվել Զ-ի կատարած բանաստեղծական թարգմանությունները (1923—1930 թթ.) ներկայացնել հեղինակների անվան այբուբենական կարգով, որի հետևանքով, բնականաբար, խախտվել է ժամանակագրական կարգը:

ԺԳ-ն 1927 թ. Թիֆլիսում հրատարակված պոեմների ժողովածուն է:

III հատորում զետեղված երկերի մյուս խումբը (ինքնուրույն, ինչպես և թարգմանական) տպագրվում է մամուլից:

Հատորում կիրառված է առանձին ժողովածուների, ձեռնարկների, հանդեսների, ամսագրերի ու լրագրերի անունների հետևյալ համառոտագրությունը.

Ավ — Ավանգարդ, լրագիր, Երևան:

ԳԴ — Գրական դիրքերում, ամսագիր, Երևան:

ԽՀ — Խորհրդային Հայաստան, օրաթերթ, Երևան:

ԿԱԽ — Կալմիկ աստղ, օրաթերթ, Թիֆլիս:

Կռ — Կոմունիստ, օրաթերթ, Բաքու:

ԿԱ — Կարմիր արև, ձեռնարկ, Երևան:

- Մակշ — Մարտակոշ, օրաթերթ, Քեֆլիս:
 ՆԵՔ — Նմուշներ եվրոպական գրականությունից, ձեռնարկ, Երևան:
 ՆՌԳ — Նմուշներ ռուսական գրականությունից, ձեռնարկ, Երևան:
 ՆԲ — Նորք, հանդես, Երևան:
 ՆՈՒ — Նոր ուղի, ամսագիր, Երևան:
 ՊԲ — Պայքար, «Խորհ. Հայաստանի» գրական հավելված, Երևան:
 ՊԿ — Պատկոմ, ամսագիր, Երևան:
 St — Standard, ամսագիր, Մոսկվա:
 ՎԲ — Վերելք, ամսագիր, Երևան:

Հատորում օգտագործվող առ համառոտագրությունը նշանակում է առաջ (նշված տողից):

Խմբագրական կոլեգիան նպատակահարմար է գտել ներկա հրատարակության մեջ չղեկներին բանաստեղծի «Ռոմանս անսեր» պոեմը, որ առանձին գրքով լույս է տեսել 1922 թվականին Մոսկվայում:

ՊՈՆԶՈՋՈՒԹՆԱ

(էջ 5)

Շարքը բաղկացած է տասնհինգ բանաստեղծությունից,
երկերում «Պոնզոճոճնա» գրքից զետեղված բանաստեղծություն-
ները 2-ը թվագրել է 1921—1922 թթ. թվում է՝ սխալվել է. շարքն
ամբողջովին գրել է 1922-ին, «Երեքի դեկլարացիայից» հետո
(1922 թ. հունիսի 14),

Պոնզը առնված է ռուս ֆուտուրիստ բանաստեղծ Իգոր Սևեր-
յանինից (1887—1942). «Երեքի դեկլարացիայի» շրջանում Սևեր-
յանինի հետևություններ բանաստեղծության փոխարեն պոեզ բառն
էին գործածում Չարենցը և Գ. Աբովը (ծնվ. 1897),

«Տեսե՛լ է՛ք դուք երբե՛կ» — Գրել է 1922 թ. ամռանը Երևանում,
Առաջին անգամ տպագրվել է 1922 թ. № 193, Զետեղվել է ՊԶ.
տպագրվում է գրքի 2-ի սեփական օրինակից:

Զուռնայի Ալեֆ — Հավաքական իմաստ ունի՝ զանգվածների
երգառաց:

ՏԵՔՍՏՍԹԻՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԽՀ 10 Սքտեռով չար ու տանջող —

16 Որ սիրում եմ կոպենկոց սիրով

29—31 Երգել է,

Երգել է —

Նա...

63 Երգերից իմ՝ հուր ու լուսն...

65 Որ կարող է կյանքը փոխվել

«Հ. Ս. Խ. Հ.» — Գրել է 1922 թ. ամռանը Երևանում, Առաջին անգամ տպագրվել է ՊՁ. տպագրվում է գրքի Զ-ի սեփական օրինակից, սրտեղ Զ-ը բանաստեղծությունը մշակել է հավանաբար Երկերում զետեղելու մտադրությամբ:

Հ. Ս. Խ. Հ. — Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային հանրապետության անվանման սկզբնատառերն են:

Նոյն էր մինչև երեկ նստել վերը՝ ծյունն Արաբաթի գլխին—նոյն նահապետն է, որ Սուրբ գրքի ավանդությամբ մարդկության կործանման մեծ ջրհեղեղին տապանով (ընտանիքով ու կենդանիներով) ապաստանել է իբր Արարատի գագաթին:

ՏԵՔՍՏՍՑԻՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՊՁ 61 Նայիրի

«Արևի ճառերն ֆռնին» — Գրել է 1922 թ. ամռանը Երևանում, Տպագրվել է ՊՁ. տպագրվում է գրքի Զ-ի սեփական օրինակից:

«Աղբիկը» — Գրել է 1922 թ. հունիսի սկզբներին Երևանում: Առաջին անգամ ընկ. Շաղունցին նվիրումով տպագրվել է ԽՀ 1922 թ. № 132: Ջետեղվել է ՊՁ. տպագրվում է գրքի Զ-ի սեփական օրինակից:

Շաղունցը — Սովետական Հայաստանի պետական-կուսակցական գործիչ Սուրեն Շաղունցն է (1888—1938). 1922 թ. Երևանի քաղաքային գործադիր կոմիտեի նախագահ էր. աշխատել է Հայաստանի հողագործության ժողովմատում, ապա պատասխանատու պաշտոնով փոխադրվել Միջին Ասիա:

Գյուղի կոմբըիլը ղրկել էր աղջկան համագումարի — Ակնարկում է Հայաստանի կոմունիստական երիտասարդական միության II համահայկական համագումարը, որ տեղի է ունեցել 1922 թ. հունիսի 2—5-ը, Երևանում:

ՏԵՔՍՏՍՑԻՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ



ԽՀ 9 Հաղիվ ունենար նա—տասնուք տարի:

27 Կրծքի մեջ

30 Կրծքի մեջ — աղմուկը տափնապի

«Քեզ» — Գրել է 1922 թ. հունիսի վերջերին Երևանում: Առաջին անգամ տպագրվել է 1922 թ. «Յ» բյուլետենի № 1-ում: Զետեղվել է ՊԶ. տպագրվում է նույնից:

«Է-Կա»-ն — Երևանի կոմիտեի կրճատ անվանումն է. 2-ի այդ տարիները գրական բարեկամ Գ. Աբովի վկայությամբ բանաստեղծուհի Նվիրված է կոմիտեի քարտուղարուհուն (Սիրուշ անունով), որ մի շատ եռանդուն ու գործունյա կին է եղել:

«Գյումրի» — Գրել է 1922 թ. օգոստոսի 21-ին Երևանում (օգոստոսի կեսերին Ալեքսյովում «Յ»-ի, ավելի ճիշտ՝ 2-ի և Գ. Աբովի, տված շեփորահանդեսներից հետո): Առաջին անգամ տպագրվել է 1922 թ. № 189, Զետեղվել է ՊԶ, ապա Երկերում. տպագրվում է վերջինից:

Արտաշես Տեր-Մարտիրոսյան — (1892—1937) — Բանաստեղծ. 2-րդ պարողիկ ձևով ակնարկում է նրա բանաստեղծություններում արտահայտված թախծի ու տխրության տրամագրությունները:

...«Ապոլլա» սինեման — 20-ական թվականներին կինո-թատրոն Ալեքսանդրապոլում (Լենինական):

...Գյումրեցի Վաղոն — Գործածվում է հավաքական իմաստով:

ՏԵՔՍՏԱՅԻՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

102 Վերնագիրն առնված է շակերտների մեջ:

23 Կհեզենե դաբրեշի Վաղոն

«Մրիզը» — Գրել է 1922 թ. մոռանը Երևանում: Տպագրվել է ՊԶ և Երկերում. տպագրվում է վերջինից:

«Ռանգի», «Մասնաշրջան» — Պարեր են:

...Մեր վաճառք — Գործածվում է հին երգասաց, ծերացած երգասաց հավաքական իմաստով:

ՏԵՔՍՏԱՅԻՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՊԶ 31 Լավ է և կորչել անհետ,

33—34 Թե ուզեն — Եվագիր «Ռանգի»,

Թե ուզեն — «Մասնաշրջան» ...«Մասնավեց»

«Օրերի շեկ վիտրինում» — Գրեկ է 1922 թ. ամռանը Երևանում:
Տպագրվել է ՊԶ. տպագրվում է գլխի Զ-ի սեփական օրինակից:

...Կիկոն մասխարա — Հավաքական իմաստ ունի:

«Ընկերը» — Գրեկ է 1922 թ. աշնանը Մոսկվայում: Զետեղվել է
ՊԶ, ապա Երկերում. տպագրվում է վերջինից:

Կարա — Հավանաբար որոշակի անձնավորություն չի եղել. բա-
նաստեղծական մտահղացում է:

Ես հիմա եկել եմ Մոսկվա — Զ-ը 1922 թ. Երևանից մեկնել է
թգոստոսի վերջերին. շուրջ քսան օր թիֆլիսում մնալուց հետո Մոսկ-
վա է հասել ռեպոնտների վերջերին:

ՏԵՔՍՏԱՑԻՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՊԶ 31 ՈՆԵ ար մի Հազա անտրեխ

«Երևան» — Գրեկ է 1922 թ. ամռանը Երևանում: Զետեղվել է
ՊԶ, ապա ե Երկերում. տպագրվում է վերջինից: Ավ. Իսահակյանի
արխիվում Զ-ի ինքնագրով պահպանվել է բանաստեղծության սկիզբը
(ինքնագիրը հայտնաբերել և ԳԱԹ է հանձնել գրականագետ Ա. Ին-
ճիկյանը. տե՛ս ԶՖ):

Որպես հին մի, բեկված թերփղես — Հոմերոսի «Իլիականի»
հայտնի Թերսիդեսն է՝ ճնշված ու բողոքող:

Գաղթական Շողեր — Գործածված է հավաքական իմաստով:

«Էնգելի» — Արևելյան պար:

Ինչպես մեր այն հին ճեփաբում — Ակնարկվում է «Սասունցի
Ծավիթ» հայկական էպոսը:

ՏԵՔՍՏԱՑԻՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՊԶ 22 Թե կուզե՞ք՝ կույր աղի՛քս թեքել
57—60 Դու գիտե՞ս, ասում է, Փարիզում
Այնպես լավ է, խաղաղ ու հանգիստ...
Փայլում է, կոշիկի պես սրբած,

Փարիզը լամպերի լույսից.

63 Շարեւ է իրա գիտներին

65 Ախ, գիտե՛ս, նա կի՛ն է հիստերիկ,

68 Ծա ուզում եմ նրա պե՛ս լինեմ...

76 Որ քի՛ղ ...աշտարակ բուսնի...

78 Եվ նայում ես այդ բո՛լ լուսին...

81 Կիսամուկ ասողների քե՛ֆում

«Շոգնեցումս» — Գրեկ է 1922 թ. օգոստոսի վերջերին Երևա-
նում: Զետեղվել է ՊԶ, ապա Երկե՛րում. տպագրվում է վերջինից:

Որպես նոր մի Ռոբերտ Օուեն (1771—1858) — Անգլիական
ուտոպիստ սոցիալիստ. Զ-ն օգտագործել է ընդգծելու համար իր
երազանքի շափը:

Պոետ Արնաուտի — Նկատի ունի Ա. Տեր-Մարտիրոսյանի «Աշ-
նուտ» (Տխրության հյուսկեն) բանաստեղծությունների գրքույկը, որ
լույս է տեսել 1912 թ. Ալեքսանդրապոլում: Զ-ն ակնաբեկում է գըր-
քույկի թափոռտ տրամադրությունները. ինչպես՝

ձոռնավ դաշտերում սարսափ է ու մու՛թ,
ծուրձերն են տխրում դաշտերում մենակ.
Օրերն անցնում են այնպես անօգուտ,
Ամեն ինչ գունա՛տ, անգո՛ր, դժգունակ,
Ամեն ինչ այնպես տխո՛ւր է, աշնո՛ւտ...

ՏԵՔՍՏՍՑԻՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՊԶ 48 Որ վաղա՛ց մի շոր Մեքենա.

58 Հաղթելու է շոր Մեքենան:

60 Ու արյան երգի փոխարեն

63 Ու սրտի փոխարեն — շոգին,

«Իմ մեղ է ձեր իլեանը» — Գրեկ է 1922 թ. ամռանը Երևանում:
Տպագրվել է ՊԶ. տպագրվում է գրքի Զ-ի սեփական օրինակից:

Պարոտը — Յրիգրիխ Պարրոտն է (1791—1841). Դորպատի
համալսարանի պրոֆեսոր, Խ. Աբովյանի տուուցիչն ու հովանավորը.
Աբովյանի հետ վերելքը Արարատ՝ 1829 թ.:

«Հասկանում եմ՝ եկավ հզոր» — Գրեկ է 1922 թ. ամռանը՝ Երե-
վանում: Տպագրվել է ՊԶ. տպագրվում է գրքի Զ-ի սեփական օրի-
նակից, որտեղ Զ-ը բանաստեղծությունը մշակել է:

ՏԵՔՍՍՍՑԻՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՊՁ 1—2 Հասկանա՞ւմ եք՝ եկա՛վ, քոստ,
Քորելով մեջքը վաստակած
18—20 Երբ հասնի՛ եա Հինգ ու Զիւն —
Պիտի բո՛ւր Հիսուսեն՝ Ե Ժենն
Նրա մե՛կ, մե՛կ ուղից...

«Ջանգուն ու Արաբը սեզ» — Գրեւ է 1922 թ. ամռանը Երևանում, Տպագրվել է ՊՁ. տպագրվում է գրքի Զ-ի սեփական օրինակով:

ԱՍՊԵՏԱԿԱՆ

(էջ 39)

Գրեւ է 1922 թ. օգոստոսի 1—3-ը Երևանում: Առաջին անգամ տպագրվել է 1923 թ. Նոյեմբերի 11. ղեկավարել է Երկերում: Տպագրվում է վերջինիս Զ-ի սեփական օրինակից (Երկերի այս օրինակը, որ բանաստեղծը նվիրել է իր դստերը՝ Արփենիկ Չարենցին, պահպանվում է Զ-ի դստեր մոտ):

ԳԱԹ ՉՅ պահպանվում է պոեմի մեքենագրված՝ հավանաբար ՆԻ-ին ներկայացրած տեքստը:

«Ասպետականի» մասին Մ. Գևորգյանը մանրամասնություններ է պատմում իր հուշերում, որը կրճատումներով է տպագրվել «Հիշողություններ Եղիշի Չարենցի մասին» գրքում — Պետհրատ, Երևան, 1961 թ.: Հուշերի լրիվ տեքստը տե՛ս ԳԱԹ ՉՅ Մ. Գևորգյանի հուշերի բնագիրը:

Մ. Գևորգյանի (1879—1962) անձնական արխիվում Զ-ի ձեռագրով պահպանվել է «Ասպետականից» երկու պատճառի: Դրանցից մեկը ռադիոգիայի առաջին տարբերակներից է՝ «Երկու կրակ» վերնագրով:

ԵՐԿՈՒ ԿՐԱԿ

[Երկու աղջիկ էին նրանք,
Երկու կրակ՝ ճերմակ ու սև,
Երկուսն էլ վա՛ռ ու հուրհրա՛ն...
Երկու աղջիկ էին նրանք:

Նրանք երկուսն էին — լսի՛ր, ընթերցող,—
Երգս թող ավլան հոսի՛, ընթերցող:

Մեկը արև էր [վառ] սև,
Մեկը — ճեբմակ՝ երկնի լուսին, ընթերցող,
Մեկի իրանն էր սեգ սուլթանի մեշեգ,]

Այստեղ պատված է, և ընթերցելի են հաջորդ երկու տողի վերջին բառերը միայն.

[սուրբ սոսի, անթերի
անկար նամազի,]

Պատառիկի հաջորդ երեսի վրա եղած տողերը վերաբերում են XII, XIII, XIV օկտավներին, տարբերակ են կամ մտել են վերջնական տեքստի մեջ.

Մեկը սեգ քայլում էր թեթև,
Բեղվիկի նժույգի նման սեգ.
Մյուսի քայլերը

Երկու բոց՝ սպիտակ ու սև,
Երկու վառ արև ավլան,
Երկու վառ հրաշքներ լուսե...

[Երկնամերձ մեշեգ էր մի]
Մեկի բոյը՝ սեգ միևարեթի
Մյուսինը սև մի

այստեղ պատված է, և շկան վերջին երկու տողի վերջին բառերը:

Նույն պատառիկի վրա պահպանվել է ռապսոդիայի մի այլ վեր-նագիր՝ «Ասպետին» (ռապսոդ):

Մյուս պատառիկը ամբողջական մի էջ է, որի մի երեսին ռապ-սոդիայի VII և VIII օկտավներն են՝ մեքենագրված. դրա վրա 2-ի ձևագրով պահպանվող տողերը վերաբերում են XLI օկտավին.

Այդ վայրկյանը [հրի,] հուր-արյունի
Ջառանցանք էր՝ խո՛ւ միտերի —
Ու հոսում էր [հուր] ալ մի դինի
Դեպի սիրտս նրանց զխտերից

Պոեմի բանաստեղծական հյուսվածքում 2-ն օգտագործել է եռաչափաց արշավանքների (1096—1270) ժամանակներին բնորոշ բառ ու բան, խոսվածքային ուշ վերածնության բանաստեղծ Տորկվատո Տաուտի (1544—1595) «Ազատագրված Երուսաղեմ» պոեմի համեմատությունները, գույներն ու հակադրությունները:

Խաչակիր — Անվանելով իր հերոսին Չ-ն ընդգծում է նրա տառապանքի, կարոտի և սիրո խորութիւնը այն համեմատութեամբ, ինչ կարող էր ունենալ Երուսաղեմում մարտնչած ասպետը՝ արշաւաճեցից վերադառնալիս:

Սուրբ փառաբեր — Երուսաղեմն է, որտեղ քրիստոնեական ավանդութեամբ իբր խաչվել է Քրիստոսը:

Պիլիգրիմ — Լատիներեն բառ է՝ օտարական. օգտագործված է թափառական ուխտավոր իմաստով (այդպես էին անվանվում խաչակրաց ասպետները):

Մավրեր — Արեւմտյան Եվրոպայում անտիկ ժամանակներից սկսած մավրեր են կոչվել Աֆրիկայի հյուսիսի (Նիգիլոսից բացի) բնիկները: Հիշատակվում են խաչակիրների հակառակորդների շարքում. անվանումը անորոշ է և հնացած:

Բեղվիներ — Կոչվել են Արաբական թերակղզու և Հյուսիսային Աֆրիկայի հսում թափառիկ և կիսաթափառիկ արաբները. ակնարկվում է թափառելու և խարույկներ վառելու նրանց ատվորութիւնը:

Արշավում էր դեպի Դամասկ — Կարելի է ենթադրել, թե նկատի է ունեցել սարացիին Արմիզայի սիբուց հեռավոր Դամասկոս արշավելու խաչակրաց անվանի ասպետների խանդոտ պատրաստակամութիւնը Տասսույի պոեմում:

Կարմիր փառաբեր — Երուսաղեմն է, որտեղ իբր հոսել է Քրիստոսի արյունը:

Սարացիներ — Անտիկ հեղինակների վկայութեամբ անվանվել են Արաբիայի հարավի և արեւմուտքի բնակիչները. վաղ միջնադարից այդպես են կոչվել արաբներն ամբողջովին, ավելի ուշ անվանումը տարածվել է իսլամ դավանող բոլոր ժողովուրդների վրա: Տասսույի պոեմում սարացիները խաչակիրներին թշնամի ցեղերից ամենախարդախն են ու նմենակատաղին. նույն այս իմաստով էլ օգտագործում է Չ-ը:

Ջառացանք էր՝ խալ միստերի—Նկատի ունի 14—16 դդ. արեւմտաեւրոպական ռեալիստական թատերական միստերիա ժանրը՝ կրոնական սյուժեներով և կենցաղային կոմեդիական տեսարաններով: Այդ բառով ընդգծվում է կուլյաների մոլեգնութեամբ մոլեռանդ ու կրմիկական բնույթը միաժամանակ:

ՏԵՔՍՏԱԾԻՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- ՆԲ 1—5 Ես հիմա հոգնած մի տրուբադուր,
 Օրերի անգույն ճամփեքին
 Երգում եմ հարվածը հատու,
 Մահացու հարվածը իմ տեգի:
 Երգում եմ նրանց երգը լուսն,
 7—8 Երգում եմ սե՛րը նրանց սև
 Ու վերքիս արյունն ավվան:
 9—10 Երգում եմ կարոտն իմ արթուն,
 Երգում եմ ամո՛թը այն սև,
 13 Ուխտավա՛ր, լսի՛ր հիմա դու.—
 15 Երգում է հեգ մի տրուբադուր
 Երկ 91 Երկու խուլ արև ավվան
 387 Երկու խուլ արև ավվան
 ՆԲ 418 Օրերի անգույն ճամփեքին

Կ Ա Պ Կ Ա Ձ

(էջ 59)

Գրել է 1923 թ., հավանաբար գարնան ամիսներին, Երևանում:
 Առաջին անգամ տպագրվել է. առանձին գրքույկով — 1923 թ.,
 թիֆլիս, Կարո Հալաբյանին նվիրումով և վճ. Մայակովսկու
 «150 000 000» պոեմից առնված բնաբանով.

Небольшое примечание:

Художники
 Вильсонов,
 Ллойд-Джорджев,
 Клемансо
 Рисуют —
 Усатые,
 Безусые рожи —
 И напрасно:
 Все
 Это
 Одно и то же.

Զետեղվել է ԺՊ և Երկերում. տպագրվում է վերջինից,

«Կապկազը» ավարտվում է ֆրանսացի բանաստեղծ Էժեն Պոայի (1816—1887) «Ֆետերնացիոնալով», որ Զ-ը թարգմանել է նույն թվականին, հավանաբար, ուսերեն թարգմանությունից՝ համեմատելով ֆրանսերենի հետ։ Այնուհետև հիմեր Զ-ի թարգմանությամբ տպագրվել է մամուլում, գետնդվել ժողովածուներում, դասագրքերում։

Կարո Հալաբյան (1879—1959) — Նշանավոր ճարտարագետ։ Զ-ի մտերիմ ընկերն ու բարեկամը, ձևավորել է «Կապկազը» (1 հրատարակություն), «Կոմսամանախը»։

Ղադա — Ադրբեջաներեն բառ է՝ սև, գործածվում է սևագործ մշակ, սևագործ բանվոր հավաքական իմաստով։

Բավական է ինչքան ձեզ խաղան Անտիգոնե, Նամուս, Օրբլլո, Քին — Արտահայտվել է Զ-ի «Երեքի գեկլարացիայում» ձեռնարկով՝ ժխտողական վերաբերմունքը դասական մշակույթի հանդեպ։

«Դառաառաքներ» — Դ. Դեմիրճյանի (1877—1956) դրաման է, որ Երևանի Պետքատրոնում (ներկայիս Գ. Սունդուկյանի անվան) բեմադրվել է 1922—1923 թթ. թատերաշրջանում։

«Զանգ ջրասույզ» — Գեորգիանյանի (1877—1956) դրաման է, որ Երևանի Պետքատրոնում (ներկայիս Գ. Սունդուկյանի անվան) բեմադրվել է 1922—1923 թթ. թատերաշրջանում։

Փափազը — Սովետական Միության ժողովրդական դերասան Վահրամ Փափազյանն է (ծնվ. 1888)։

Օրին — Ժողովրդական դերասան Օրի Բունիաթյանն է (ծնվ. 1895)։

Կնյազ — Ռուսերեն՝ իշխան։

Իերյ — Ռուսերեն՝ չկա։

Ցոխուս — Ադրբեջաներեն՝ չկա։

Ցաշատը — Ադրբեջաներեն կեցցե բառն է։

...Մեր բառուներ պետական. ի՞նչ էր առաջ — Պետական թատրոնը 1923 թ. տեղավորված էր ներկայիս Երաժշտական կոմիտեի թատրոնի շենքում. նույն շենքում 1918—1920 թթ. տեղավորված էր Դանիսեղյան կառավարության պառլամենտը։

Ղառազյոզ — Ադրբեջաներեն բառ է. այստեղ նշանակում է գեղեցիկ։

...Թագավոր Կոլին բացրել են թախտից — Ակնարկում է Նիկո-
լայ 11 ցարի տապալումը 1917 թ. փետրվարին:

Ընտրված է ժամանակավոր կառավարություն — Ակնարկում է
իշխան Լվովի գլխավորությամբ ժամանակավոր կառավարության
առեղծումը 1917 թ. մարտին:

Մենշևիկ — Մենշևիկները մարքսիզմ-լենինիզմին թշնամի օպոր-
տունիստական խթանումում էին նախահեղափոխական Ռուսաստանի
բանվորական շարժման մեջ: Այստեղ ակնարկվում են վրաց մեն-
շևիկները:

Ընտրվել ենք էստեղ Սաճմանադիր ժողով — Համառուական
առհմանադիր ժողովը, որ պիտի գումարվեր ժամանակավոր կառա-
վարության օրերին, կեղծ խոստում էր, ձգձգվում էր անընդհատ, բոր-
բոքելով նախընտրական մեծ պայքար: Սահմանադիր ժողովի ըն-
տրությունները անց են կացվում 1917 թ. նոյեմբերից. Անդրկովկա-
սում գործող յուրաքանչյուր կուսակցություն ներկայացրել էր թեկ-
նածուներ ջուլցակ, որն ուներ իր համարը:

Փետա — Բառացի՝ շագանակ: Զ-ը ժաղրում է մենշևիկների
նախընտրական խոստումները:

Ջայն տվեք Ռ առաջինին — Սա անդրկովկասյան մենշևիկներին
թեկնածուների ջուլցակն էր:

Ամրաճադեթ-շվենի — Վրացերեն ընկերներ ու մեր բառերն
են. ուզում է ասել մենշևիկներն ասում էին՝ քվեարկեք մեր ջուլցակի
օգտին:

Մուսավար — Հակահեղափոխական բուրժուական-կալվածատի-
րական ազգայնական կուսակցություն Ադրբեջանում: Գործել է 1912
թվականից:

Կադետ — Կադետներ են կոչվել 1905—1917 թթ. Ռուսաստանում
գործող իմպերիալիստական բուրժուազիայի կուսակցության՝ սահ-
մանադրական-դեմոկրատներին, ներկայացուցիչները:

Յուլաշլար — Ադրբեջաներեն՝ ընկերներ:

Իք — Ադրբեջաներեն բառ է՝ շուն. ակնարկում է նախընտրա-
կան բորբոքված պայքարը Անդրկովկասի ազգայնական կուսակցու-
թյունների միջև:

Հուրիաք — Ադրբեջաներեն բառ է՝ ազատութիւն:

Աղալար — Ադրբեջաներեն բառ է՝ բարերար, բարեգործ:

Միլլաք — Ադրբեջաներեն բառ է՝ ժողովուրդ:

**Դաշնակ — Հայ բուրժուա-ազգայնական կուսակցութեան՝ դաշ-
նակցութեան ներկայացուցիչը:**

**Ձայն տվեք Ռ շուրին — Սա դաշնակցութեան ներկայացրած
թեկնածուների ցուցակն էր Սահմանադիր ժողովի ընտրութիւն-
ներին:**

Բայդալ — Ադրբեջաներեն՝ գրոշ:

**№ 5 ախիւնք բոլշեիկ — № 5-ը Անդրկովկասյան բոլշեիկների
ներկայացրած ցուցակն էր Սահմանադիր ժողովի ընտրութիւններին.
բոլշեիկները մասնակցում էին ընտրութիւններին մերկացնելու Սահ-
մանադիր ժողովի և Ժամանակավոր կառավարութեան կեղծիքը:**

Դալոյ — Ռուսերեն՝ կորչի:

Գամուարչորաս — Վրացերեն՝ կեցցե:

Լա-իլ-Պան-ուլ-Ալլան — Մահմեդական կրոնում գիմում աստծուն:

**Հիմնում եմ կառավարութիւն — Սեյմ — Պետական իշխանու-
թեան օրգան Անդրկովկասում՝ ստեղծված մենշեիկների, դաշնակցու-
թեան և մուսավաթականների ներկայացուցիչներից: Գոյութիւն է
ունեցել 1918 թ. փետրվարից մայիսը:**

**Ես նախագահ, երկուսդ օգնական — Սեյմի նախագահն էր Գե-
գեկորին. նախագահը ունէր մինիստրներ հիմնականում մենշեիկնե-
րի, դաշնակցութեան և մուսավաթականների կուսակցութիւններից:**

**Կարս բուրժին տվին, Բաքումն էլ ետեից — Թուրքական զոր-
քերը Բաքում են մտել 1918 թ. ապրիլի 1-ին, Կարս՝ ապրիլի 11-ին:**

**Ձխնկելին Պոլիս գնաց, ծախեց Բաքումը — Ակնարկում է Ան-
դրկովկասյան Սեյմի պատվիրակութեան մեկնումը, այսպէս կոչված,
թուրք-անդրկովկասյան խաղաղութեան կոնֆերենցիային: Պատվիրա-
կութիւնը գլխավորում էր Սեյմում արտաքին գործերի մինիստր,
մենշեիկ Չխնկելին: Կոնֆերենցիան սկզբում տեղի էր ունենում Տրա-**

պիղոնում (1918 թ. մարտի 18—ապրիլի 8). նույն օրերին էլ թուրքական զորքերը գրավում են Բաթումը:

Այդ առթիվ պատմաբան Լեոն (Առաքել Բաբախանյան, 1860—1932), որ մասնակցել է կոնֆերենցիային որպես խորհրդատու և վերադարձել Թիֆլիս՝ Փոթիի վրայով, — գրում է. «Սամտրեդի կայսրանումն ենք, Ժողովրդական մեծ հավաքումներ կան: Դատում, խոսում են մեծ անցքի—Բաթումի գրավման մասին: Այս աղետը վաղուց հասունացած էր, ամեն մեկն էր զգում նրա անխուսափելիությունը: Մի առաջնակարգ բերդ չէր կարելի մի բուռն մարդկանցով պաշտպանել: Բայց արի՛ տես: Վրացի գյուղացիները չիրուխին զոռ են անում և նրա ծխի հետ նոր ու նոր հայտնություններ են հանում իրանց փորձից: Բաթումը, ասում են, չէր ընկնի, Չխենկելին է նրան տվել թուրքին, մեծ կաշառք ստանալով: Չիրուխի ծուխը կաշառքի չափն էլ հանեց գյուղական փորձերից, կարծես 30 թե 40 հազար մանեթ...» (Լեո — «Անցյալից», 1925 թ., Թիֆլիս, էջ 392):

Է՛լս Կարճիկյան, է՛դ ուր զը-նում ես — նկատի ունի Սեյմում ֆինանսների մինիստր Խ. Կարճիկյանին (1882—1918), որը, սակայն, չի մասնակցել թուրք-անդրկովկասյան կոնֆերենցիային ինչպես Տրապիզոնում, նույնպես և Բաթումում (ապրիլի վերջերին):

Մտնում է փաշա, ապա գեւմանացի սպա — Ակնարկում է գերմանա-թուրքական գերիշխանությունը Անդրկովկասում 1918 թ. գարնան ու ամռան ամիսներին:

Վա՛ս մախեն զի — Գերմաներեն՝ ի՛նչ եք անում դուք:

Ջեյո գուք — Գերմաներեն՝ շատ լավ:

Ալզո, ճե՛ռռ — Գերմաներեն՝ ուրեմն, պարոն:

Դուք էլզուց Սեյմը կցրեք, կդառնաք տեղաբնիկ երեւ — Ակնարկում է թուրք-անդրկովկասյան, այսպես կոչված, խաղաղության կոնֆերենցիայում գերմանա-թուրքական կողմի առաջարկությունը անգլիկոսական «անկախ» հանրապետություններ կազմելու վերաբերյալ, որ ընդունում և վավերացնում են մենչեիկները, մուսավա՛թականները և դաշնակցության ներկայացուցիչները առանձին-առանձին (Չխենկելի, Խան-Խոյսկի, Խատիսյան) 1918 թ. մայիսի վերջերին Բաթումում:

Իսկ մենք՝ զալիս ենք — զնանք Բաբու — Ակնարկում է թուրքական զորքերի առաջխաղացումը Բաթվի ուղղությամբ 1918 թ. ամռանը:

Դաշնակը... էզուց — Այսպես կոչված «ամեկախության» դաշնագիրը դաշնակցության ներկայացուցիչը ստորագրել է մենչելկինների և մուսավաթականների հերկայացուցիչներից մեկ օր հետո:

Կափառ — Գերմաներեն՝ վերջ, չիհի, չախշավի:

Աուֆ վիդերգեբեն — Գերմաներեն՝ ցտեսություն:

Ջոխ ռալամաթ — Ադրբեյջաներեն՝ շատ բարի, շատ լավ:

Բափշիրաշև — Մուսավաթների կուսակցության գործիչներից:

Հորիզոն — Հասարակական, գրական, քաղաքական օրաթերթ՝ հրատարակությամբ Հ. Հ. դաշնակցության, Հրատարակվել է 1909—1918 թթ. Թիֆլիսում. 1918 թ. № 20-ից վերանվանվել է «Նոր հոքիզոն»:

Սաֆարվիլ — Հասարակական-քաղաքական օրաթերթ, վրաց ազգային-դեմոկրատների օրգանը. լույս է տեսել Թիֆլիսում:

Մշակ — Գրական-քաղաքական լրագիր. հրատարակվել է 1872—1920 թթ. Թիֆլիսում:

Թուրքեր հասել են Ղարաֆիլիսա — Տեղացիների շորսօրյա համառ դիմադրությունից հետո թուրքական զորքերը Ղարաֆիլիսա (այժմ Կիրովական) են մտել 1918 թ. մայիսի 28-ին:

Բալշեկները Գանձակ...—Ակնարկում է Բաքվի կոմունայի հեղափոխական ուժերի մարտերը 1918 թ. մայիսին Գանձակի (այժմ Կիրովաբադ) ուղղությամբ:

Գերմանացիք շարգվել են վերդենի տակին — Ակնարկում է Ֆրանկո-անգլիական զորքերի հաջողությունները գերմանացիների դեմ 1918 թ. հուլիսի կեսերից Մարնա գետի ափերին մղած ճակատամարտերում:

Վեշերեն — Ռուսերեն՝ երեկոյան. այստեղ՝ երեկոյան թերթեր:

Լեհաստանի նոսան Զիշերինին — Նկատի ունի լեհ-սովետական հարաբերությունները 1918 թ. ամռանը, երբ լեհական հարցը իմպերիալիստական տեղությունները օգտագործում էին սովետական երկրի դեմ: Գ. Վ. Զիշերինը (1872—1936) Սովետական Միության արտաքին գործերի կոմիսար էր 1918 թ. մայիսի 30-ից (մինչև 1930 թիվը):

Բալշևիկները բողոք են բաժում — Ակնարկում է Բաքվի կոմունայի անկումը 1918 թ. սեպտեմբերին:

Բիշլեռխով Լազր — Գնդապետ, սպիտակ-խեռական ուժերի հրամանատար Անդրկասպիայում, Մասնակցել է Բաքվի անգլիական ներխուժմանը 1918 թ. աշնանը, 1919 թ. հակահեղափոխական ուժերի գլուխն անցած ստեղծում է, այսպես կոչված, կովկասահասպյան կառավարություն:

Համազասպ — Դաշնակցական զինվորական գործիչ:

Այսլու — Մենշևիկ, Բաքվի կոմունայի օրերին մենշևիկյան կոմիտեի նախագահ. մեծ դեր է կատարել մենշևիկներին, դաշնակցության ու ևսեռների բուկի ստեղծման գործում՝ Բաքվի կոմունայի դեմ, նրա անկման օրերին:

Պերեմիշյե — Խոսքը վերաբերում է 1918 թ. նոյեմբերի 11-ի Կոմպենյան զինադադարին՝ Գերմանիայի և Առաջին համաշխարհային պատերազմում նրա հակառակորդներին—ԱՄՆ-ի, Անգլիայի, Ֆրանսիայի և դաշնակից մյուս տերութույնների միջև:

Անարեյմանը զենում է Վերսալլ... — Խոսքը վերաբերում է գրող, դաշնակցական գործիչ Ավետիս Ահարոնյանին (1866—1948), որ գլխավորում էր դաշնակցության Ազգային խորհրդի արտասահմանյան պատվիրակությունը Վերսալի (1919 թ. հունվար-հունիս) և Փարիզի (1919—1920 թթ.) խաղաղության կոնֆերանսիայում:

Փաշազնունին պրեմյեր — Հովհաննես Փաշազնունին «անկախ» Հայաստանի վարչապետ է եղել 1918 թ. մայիսից-նոյեմբերը:

Режис — Ռուսերեն՝ կտրի՛ր:

Վուր — Ադրբեջաներեն՝ խփի՛ր:

— Անգլիացիք մտել են Բաքու՛ում... — Ակնարկում է անգլիական և ամերիկյան միսիայի ժամանումը Բաքում 1918 թ. դեկտեմբերին:

— Վերլապես հա-սա ես իմ մուրազին... — Մարդում է դաշնակցության սպասելիքները Անգլիայից:

Փնյղամբար — Իսլամության մարգարեն՝ Մուհամմեդը:

Օ տեմպուս, օ մոսես — Լատիներեն բացազանություն՝ ո՛վ ժամանակներ, ո՛վ բարքեր:

Շագամարշ—Ռուսերեն՝ шагом марш-ն է՝ քայլով առաջ
Արարիս — 'կրացերեն՝ շկա:

ՏԵՔՍՏԱՅԻՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- I տպ, ժպ 206 հտ աղան—մելիք և այդուհետև ամեն տեղ նույնը
285 առ —մուսաֆաթ մոլլա
I տպ 300 առ աղան—մելիք շարշի մոլլա
I տպ, ժպ 317 հտ ...կնյազը, գյուղացին՝ մի խոսքով
I տպ 361 հիմնում ենք կառավարություն անուր — Սելմա
512 Ծա — Քարքվելիա՝,
546 Հայտարարում եմ Քարքվելիայի կառավարություն,
554 Ուրեմն, զա՛ումարջոս Քարքվի...
I տպ, ժպ 775 հտ Հիմի կերթան կովի,
I տպ 820 «Գաումարջոս Քարքվիլի՛»
I տպ, ժպ 864 հտ կացա՛փ

ՍՆՈՈՒԴԻՆ ԱՄՈՒՍԻՆՆԵՐ ԿԱՄ ԻՆՔՆԻՐԻՆ ԿՈՄՈՒՆԻՋՄ

(էջ 107)

Գրել է 1923 թ. սեպտ. 22-ին Քիֆլիսում, Երևանից—Մոսկվա
մեկնելու ճանապարհին: Տպագրվել է Մտկշ 1923 թ. № 174.
տպագրվում է նույնից:

Կինո-ֆելիետոնը արձագանք է այն մերկացումների, որին ար-
ժանանում էր անգլիական լեյբորիստների կուսակցության նախընտ-
րական գործունեությունը 1923 թ. ամռան ու աշնան ամիսներին:
1924 թ. հունվարի 24-ին լեյբորիստները անցնում են իշխանության
գլուխ: «Իզվեստիա» լրագրից բերված հաղորդման մեջ հիշատակ-
վող Ֆիլիպ Սնոուդենը (1864—1937)—լեյբորիստների առաջնորդ-
ներից, որ նախընտրական օրերին ամեն կերպ սիրաշահում էր բան-
վոր դասակարգին,— նշանակվում է ֆինանսների մինիստր:

Միսիս Սնոուդենը (էջել) — Ֆիլիպ Սնոուդենի տիկինն է. նա
սովետական երկրի է այցելել 1920 թ. մայիսին և, լիբադառնալով,
հրապարակել գիրք՝ սովետական երկրի դեմ:

Մակդոնալդ Զեմս Ռամսեյ (1886—1937)—լեյբորիստների կու-
սակցության հիմնադիրներից և առաջնորդներից. լեյբորիստների

կառավարության վարչապետը, շարունակում էր իր նախորդներին՝ պահպանողականների, արտաքին և ներքին քաղաքականությունը:

Ձալի Ձալիե (Չարլզ Սպենսեր — ծնվ. 1889) — Աշխարհա-հաշակ կինոդերասան և ռեժիսոր:

«Քայմա» — Անգլիական պաշտոնական օրաթերթ. հիմնադրվել է 1785 թ., հրատարակվում է լոնդոնում:

Հայդ-պարկ — լոնդոնի խոշոր զբոսայգիներից. քաղաքական միտինգների, տոնակատարությունների ավանդական վայր:

Սիւտի — լոնդոնի կենտրոնը, որտեղ տեղավորված են ամենա-խոշոր բանկերը:

Դոգ — Անգլերեն բառ է՝ շուն, այստեղ աղնվացել:

Սոցիալիստական բոմբեղ — Սոցիալիստական վերնախավ. Չ-ն երգիծում է լիբերալիստների «սոցիալիստական», «բանվորական» հորդորումը:

Սոցիալիստական էկիվոկ — էկիվոկը ֆրանսերեն բառ է — երկ-խմաստ ակնարկ. Չ-ը երգիծում է՝ սիրիային երկխմաստ ակնարկնե-րը անվանելով սոցիալիստական:

Ք. Շ. Փ. Շ. Ք.—Ռուսաստանի Սովետական Ֆեդերատիվ Սո-ցիալիստական Հանրապետության սկզբնատառերն են՝ ռուսերենով:

Բոա — Այստեղ՝ օձի թանկարժեք մորթ. ակնարկում է տիկին Սնոուդենի Վեբստոների շքեղությունը:

Վրայից սռնում է ոչիլը — Ակնարկում է էջել Սնուդենի գրքի հակասովետական բովանդակությունը:

Դալոյ — Ռուսերեն բառ է՝ կորչի:

Դենիկին — Ցարական զինվորական գործիչ. քաղաքացիական կռիվների տարիներին սովետական երկրի դեմ հարձակվում էր հա-րավից. ջախջախվում է 1920-ին:

Կոլչակ — Ցարական ծովակալ. 1918—1920 թթ. գլխավորել է Վսիտակ գվարդիական հակահեղափոխական էլույթները Ուկրաինա-յում, Սիրիում, Հեռավոր Արևելքում:

— Ուրվական է րափառում Եվրոպայում—կոմունիզմի ուրվա-կանը — «Կոմունիստական մանիֆեստի» հայտնի տողերն են, փոքր ինչ վերափոխված:

Լյուրյանկա—Այսպես է կոչվել Մոսկվայի ներկայիս Ձերժինսկոս հրապարակը՝ շրջակայքով:

Ձերժինսկի Ֆ. էդ. (1877—1926) — Սովետական պետության և բուլղերիկյան կուսակցության ականավոր գործիչ:

Յուդենիչ—ծարական զինվորական բարձրաստիճան պաշտոնյա, 1919 թ. գլխավորում էր հակահեղափոխական ուժերի հարձակումը Պետրոգրադի վրա:

Սկոռոպադսկի—Գերմանական գաղութարարների դրածոն 1918 թ. Ռկրախեյում:

Աստոծենկա — Բաղաժաս Մոսկվայում. 20-ական թվականներին այդտեղ էր գտնվում գլխավոր պրոֆեսուրա՝ կոչվող ուսումնական հաստատությունը, որտեղ դասախոսություններ էր կարդում նաև Ա. Վ. Լոնաչարսկին: Նարկոմպրոսը (հապավում ռուսերենով՝ Լուսավորության ժողովրդական կոմիսարիատից) այդ տարիներին տեղավորված է եղել հարևան այլ թաղամասում:

Լուեաչարսկի Ա. Վ. (1875—1933) — Սովետական պետական գործիչ, սոցիալիստական կուլտուրայի ականավոր շինարար: Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո մինչև 1929 թ. Ռուսաստանյան Ֆեդերատիվ Հանրապետության լուսավորության ժողովրդական կոմիսար:

ИЛН—ИЛН — Ռուսերեն է. նշանակում է՝ կամ-կամ:

Պեզաս — Հին հունական դիցաբանության մեջ թևավոր ձի:

Ագեսը — Օդեսան է՝ ժարգոնացված:

Համայնճների պալատ — Անգլիական պառլամենտի ստորին պալատը:

Հենդերսոն Արտուր (1863—1935) — Անգլիական քաղաքական հետադեմ գործիչ, լիբերիստների առաջնորդներից: Լիբերիստների առաջին կառավարության մեջ (1924 թ.) ներքին գործերի մինիստր:

Գեորգը — Անգլիայի թագավոր Գեորգ V-ն է (1865—1936). գահակալել է 1910—1936 թթ.:

ԿՈՄԱԼՄԱՆԱՆ

(լզ 135)

Գիրքը երկու բաժնից է՝ բանաստեղծություններ (թվով հինգը) և երկրորդ բաժին՝ «Ծն և Իլիշը» պոեմն ու «Տիրապետողների դեմքը» սատիրա-ադիտը:

«Թուր պոետներին» — Գրել է 1923 թ. մայիսին Երևանում:

Տպագրվել է 1924 թ. № 97, ապա ԿԱ գրքում. շարքի այս և հաջորդ գործերը տպագրվում են գրքի 2-ի սեփական օրինակից:

ՏԵՔՍՏԱՅԻՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

№ 55—59 չկան

«III Ինտերնացիոնալ — Р. К. П.» — Գրել է 1923 թ. մայիսին Երևանում:

Տպագրվել է 1923 թ. ՊԲ Մ 9, ղեկավարել է ԿԱ:

III Ինտերնացիոնալ — Կոմունիստական ինտերնացիոնալ — միջազգային պրոլետարական կազմակերպություն. ստեղծվել է 1919 թ. և գոյություն ունեցել մինչև 1943 թ.:

Р. К. П. — РКП(6) — Российская Коммунистическая партия (большевиков) — Ռուսաստանի կոմունիստական կուսակցություն (բուլշևիկների) սկզբնատուներն են՝ ռուսերենով:

«Կապիտալ» — Գիտական կոմունիզմի հիմնադիր Կարլ Մարքսի (1818—1883) աշխատությունը:

Սովետական կարգեր + էլեկտրիֆիկացիա — Վ. Ի. Լենինի հայտնի պատգամն է 1920 թ. գեկտեմբերին Սովետների VIII համագումարում աված զեկուցման մեջ («Կոմունիզմը—դա սովետական իշխանությունն է պլյուս ամբողջ երկրի էլեկտրիֆիկացիան»):

Հազար Փեղզանի թող զա — Ակնարկում է անգլիական քաղաքական հետադեմ գործիչ, 1919—1923 թթ. Անգլիայի արտաքին գործերի մինիստր Զորը Փեղզանի (1859—1925) ոտնձգությունները Սովետական Ռուսաստանի դեմ, նրա զրպարտչական հուշագիրը՝ ներկայացված սովետական կառավարությանը 1923 թ. մայիսին:

Նալ — Հապավում Новая экономическая политика—նոր տնտեսական քաղաքականություն — բառակապակցությունից: Նէպը

պրոլետարական դիկտատուրայի տնտեսական քաղաքականությունն էր անցման շրջանում՝ սկսած 1921 թվականից: Ակնարկվում է դրա որոշ նահանջողական բնույթը նախորդ շրջանի՝ Ռազմական կոմունիզմի, համեմատությամբ:

ՏԵՔՍՏՍԵԻՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Պֆ 30 Մեր դեմ—զալիքը Մարքսի գծած,

ԿԱ 66 Հազար Դոն

Պֆ 82 Մեր դրոշն է ԵՐԻՈՂ Ինտերնացիոնալը,

«Անտառտին—մենք» — Գրեկ է 1923 թ. ապրիլին Երևանում:
Եպագրվել է 1923 թ. Մտկչ Ձ 108. զետեղվել է ԿԱ:

Անտառտա — Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի խմբերիստական բուկն Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին՝ Եռյակ միության (Գերմանիա, Ավստրո-Հունգարիա և Իտալիա) դեմ: Հակամարտության հեղափոխությունից հետո միջազգային բանվորական շարժմանը և սովետական պետությանը թշնամի երկրների խմբակցություն:

Զգո՛ւմ ես կամքը ճգնած Ռուրի — Ակնարկում է Ռուրի օկուպացումը ֆրանկո-բելգիական զորքերի կողմից 1923 թ. հունվարին, գերմանական բանվոր դասակարգի ելույթները նվաճողների դեմ, որը մարզի արդյունաբերական կենտրոն էսսենում 1923 թ. մարտի վերջերին վեր է ածվում բանվորների ու զորքերի արյունահեղ ընդհարման: Ֆրանսիական զորքերը Ռուրը թողնում են 1925 թ. հուլիս-օգոստոսին:

Հիլֆերդինգ — Ակնարկում է գերմանական սոցիալ-դեմոկրատների և II ինտերնացիոնալի պարագլուխներից մեկի՝ Ռուդոլֆ Հիլֆերդինգի (1877—1941) հատուկ եռանդը, այսպես կոչված, պետական ժողովրդավարական կապիտալիզմի» տեսության պրոպագանդաման գործում:

Վելս — Ակնարկում է գերմանական աջ-սոցիալիստ Օտտո Վելսի (1873—1939) ծառայությունները բուրժուազիային, թշնամաբեր բանվոր դասակարգի հանդեպ:

Ստինենս Հուգո (1870—1924) — Գերմանական ֆինանսական վերնախավի ամենախոշոր ներկայացուցիչը Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակաշրջանում:

Յուր Ներդիւնան (1851—1929) — Յրանսիրական զինվորական գործիչ, 1918 թ. դաշնակից տերութիւնների գործերի գլխավոր հրամանատար և ապա բարձրագոյն զինվորական խորհրդի նախագահ, Ռուսիի օկուպացիայի ոգեշնչողներից մեկը:

Բնութիւնի քողը — Այսինքն՝ գերմանական բուրժուազիան:

ՏԵՔՍՏԱՅԻՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մտիչ 7 Ոնց որ ոխ խեղդած բանվորի՝

20—21 Լսո՛ւմ ես՝ կամ քուր կամ սա,

Կամ կռիւմ, կամ քաւե կոշիկ,—

27 Թող հուր քեզ մնա,

28—29 չկան

30 Կփռվի կգուց, հացի նա.—

41 Կա միլիոն,— արիլիոն Լաւա-Իվան-Հարք:

55 Գիտե՛ս դու նրանց

«Լենին» — Գրել է 1924 թ. հունվարի 23-ին Մոսկվայում: Տպագրւել է 1924 թ. ապրիլին Վէ Պ 2—3. ղեկագրւել է ԿԱ:

«Չարենցի հետ» հուշերում Զ-ի մտերիմ բարեկամ ճարտարապետ Միքայիլ Մազմանյանը (ծնվ. 1899) գրում է. «...Լենինը հիվանդացած: Առաջնորդի առողջական վիճակի մասին ամեն օր մի քանի անգամ բուլետեն էր փակցվում Օխոտնի ուլադի վրա գտնվող Հեռագրական գործակալութան պատերին...»

Չարենցը չէր հեռանում բուլետենների մոտից: Տագնապալից ապրումներ ունէր, ինչպես և բոլորս...»

Հունվարի 21-ին հավիտյան փակվեցին սիրելի առաջնորդի աչքերը: Այդ լուրը Չարենցն իմանում է անմիջապէս բուլետենից ու վազում անուն՝ հաղորդելու ինձ...»

Չարենցը մեծ դժվարութիւններ թույլտւութուն ոտացավ ներկա գտնվելու Արմիութիւնների տան սյունազարդ դահլիճում, Լենինի դռագաղին մոտիկ, Նրկար-երկար դիտել էր Չարենցը հավիտյան ննջած առաջնորդի լուսավոր դիմագծերը՝ այն սերունդների համար պահպանելու, Լենինի կերպարը իբրև գալիքի գրող կերտելու համար: Այդ օրերի ապրումների անմիջական արտահայտութիւնը եղավ «Լենին» բանաստեղծութիւնը...»:

(Տե՛ս «Հիշողութիւններ Յդիշ Չարենցի մասին», Հայպետհրատ, Նրեան, 1961, էջ 67—68):

Կոսմովիլը — Անգլիական բուրժուական հեղափոխության գործիչ
Օլիվեր Կոսմովիլն է (1599—1658),

Գանդին — Հնդիկ քաղաքական գործիչ, գանդիական ուսմունքի
հիմնադիր Մոխանդաս Կարմչանդ Գանդին է (1869—1948),

Ռոկֆելլեր — Խոշոր դրամատերերի ընտանիք ԱՄՆ-ում,

Մորգան — ԱՄՆ-ի միլիարդատեր ընտանիքներից,

Սովնարկով — Ժողովրդական կոմիսարների խորհուրդի ռուսե-
րեն կրճատ անվանումը (լրիվ՝ Совет Народных Комиссаров),
Սովետական երկրի գործադիր և օրենսդիր բարձրագույն օրգանը
մինչև 1946 թ. վ. Ի. Լենինի գլխավորությամբ ստեղծվել է Խորհրդ-
եերի համառուսական II համագումարում 1917 թ. հոկտեմբերին:

ՏԵՔՍՏՍՑԻՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

վթ 6	Ճիշը
12 հա	Դուր
19	Եվ էդ
23—24	Լե'նին
23—24	Լե'նին
38	Կերտել է Իլլիչին
51	Դար-դարի հոսկից
52	Հյուսիս է գառակարգը —
60—62	Չէ,
	Պրոկտոր,
	Իլլիչը—մեզ է,
	Իմ մեջ է

«Մարշ աշխարհա» — Գրել է 1923 թ. մայիսին Երևանում: Տպա-
գրվել է ԿԱ, որտեղ սխալմամբ թվագրված է 1920. V:

«Ես ե Իլլիչը» — Գրել է 1923 թ. հունիսին Քիֆլիսում:
Տպագրվել է 1924 թ. Նո գիրք IV. գետեղվել է ԿԱ:

ԳԱԹ ՉՑ պահպանվում է պոեմի մեկ ինքնագիրը:

Մամիկոն Գևորգյանին հասցեագրած մի նամակում (1923 7/IX,
Քիֆլիս) Չ-ը պոեմի մասին գրում է. «...Ես այն քեզ ցույց տված իմ
նյութերից «Ես ե Իլլիչը» տվեցի «Նորքի» № 4-ի համար... Հիմա ես
ուզում եմ մի անհավան փոփոխություն մտցնել նրանում,— հետև.

յալը պոեմի սկզբից ճաննել — «էյ, դուք, որ գալու եք էգուց» մինչև «գեպի ժամանակը» տողերը, не включительно, այսինքն՝ բաց թողնել սկզբից այդ տողերը և պոեմն սկսել հետևյալ տողից, որ կլինի. —

«Դեպի ժամանակը:
Մկան չկա հոգնած,
Ծա էլ,
Նա էլ,
Դու էլ
Սղոցում է օդը,
Տարիները
Կամքս մեքենա,
Միտքս Ուելս:

և այլն մինչև վերջ» (տե՛ս Պատմա-բանասիրական հանդես, 1964, № 1, էջ 156—167):

Ուելսի ժամանակի մեքենայով — նկատի ունի անգլիական դրող, ֆանտաստիկ վեպերի հեղինակ Հերբերթ Ուելսի (1866—1946) «Ժամանակի մեքենան» վեպը (1895), որի հերոսը «Ժամանակի մեքենայով» ճանապարհորդում է 802701 թիվը:

В. Ч. К. — ВЧК — Всероссийская Чрезвычайная Комиссия — Համառուսական արտակարգ հանձնաժողովի ռուսերեն կրճատ անվանումն է:

Տեսնո՞ւմ եմ գլխադիւ. վրան աստղ է — Կարմիր աստղով (մեղադրված ու մանգաղ) գլխարկ կրելը սովետական կյանքում լայնորեն ընդունված էր առանձնապես 20-ական թթ.:

Կամիլ Ֆլամարիոն (1842—1925) — Ֆրանսիական աստղաբաշխ. ուսումնասիրել է Մարսը, Լուսինը, հայտնի է աստղաբաշխական գիտա-մասսայական գրքերով:

(Ես նրան մի զբոսով կադղացել եմ) — Ակնարկում է Ուելսի նույն վեպը, որտեղ մեր օրերի մարդկանցից ապագայի մարդիկ անհամեմատ փոքր կազմվածք ունեն և հասակ:

Երգովմարիամ, Երեւորիբունալ, Երչեկա — Հայաստանի ժողովրդական կոմիսարների խորհրդի, Հեղափոխական տրիբունալի և Արտակարգ հանձնաժողովի կրճատ անվանումներն են ռուսերենով: Բանաստեղծական բարեհնչունության համար, թերևս, 2-ը Հայաստանի փոխարեն օգտագործել է Երևանը:

ՏԵՔՍՏՍԹԻՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ինքն 1 առ [է՛]

Դուք

Որ գալու եք էգուց:

Տեսնում եմ ձեզ էսօր:

Իմ դեմ է ահա ձեր եղեմը:

Էլեկտրական դրախտը:

Տեսնում եմ ձեր հոգին,

Ձեր բախտը:

Տոկ է հոգիս [էսօր] նորից—

Ռադիո-ստենդն է

Ի՞նչը կդիմանա.

— Աշխարհը էս թևում կթողնի —
կանցնի դեմը:]

Նր 1 առ Դուք

2

Մկան շնա հոգնած:

Ինքն 2 հա [է՛]—է՛] —

Ո՞վ կա էդտեղ,

Ո՞վ որ կա—թռչի —

Թող ու գնալ]

3—5

[Նա էլ]

Դու էլ

Նա էլ

Ինքն, Նր 13 Անցնում են տարիները—բառն, հիսուն,
հարյուր

23

Ինչպե՞ն տարի հետո

26

Ներքեում —

29—30

Հետո է օդը:

Օդը ոնց որ թև է:

32

Կարծես ինձ պահում են:

Ինքն 37 հա [Թևում է դեռ]

Ինքն, Նր 42—43

Բարձրանում է — արևը,

Աշխարհը—

47

Բարձրանում է արևը:

48

Նլնում է, ելնում է, ելնում է,

62—64

Պետք է դառն լինեն:

- Բայց ի՞նչ է,
 Ի՞նչ է,
 Ի՞նչ է
 Ճո՞ղջ է.
 65—66 — Քրա՛խկ.—
 Կանգնել եմ:
 Շնչում եմ:
 68 չկա
 71 Երևի Մոսկվան է:
 75—76 Հավաքվել են շուրջս:
 Զգույ՛շ շնչում են:
 Ոնց որ չկամ խնդի:
 81 հա Զլինել չի՛ կարող.—
 Միծաղում են:
 — էյ,
 Ընկեր —
 Վախում եմ ինձանից...
 88 Ոչի՛նչ, որ ծակ է կոշիկս.
 107 Վերեից իջնում է մի քաղաք.
 111—112 Մտնենում է ինձ մեկը.
 Կարծես ծեր է.
 Ինճ 113 [Ես հրան մի գրում կարդացել եմ]
 134 (էն, որ կարդացել եմ)
 Ինճ, նա 164 չկա
 185 հա Մեծանում —
 187 Քոչում էր անագին
 196 Ինչքան ուզում է քող հետևի.
 198—199 չկա
 201—205 Կարծեմ երազում էք.
 Ի՞նչ.
 Քնդանո՞ր...
 216—219 — Այնտեղ հղել է Երսողնարկումը,
 — Հետո—Երուսրիբունալը.
 Առա՛ջ.
 — Երչեկան:
 223 հա Իշանք:
 225 չկա
 226 հա (Ոնց որ Մայակովսկու «Человек»-ում
 լինեմ) —

- 227 Ահա Աստանտական օվկիանը:
- 229 հտ Նորից Աստանտականը:
- 230 հտ Թռչում է.
Դառնում է.
Պտտում է.
- 250 Խա-խա —
- 257—258 փխ Հողը—ոնց որ դողում է:
- 296—297 էն ի՛նչ է բարձրանում.
էն ի՛նչ բուրգեր են ապակի.
- 300 Մոգի պես իմ հոգին կաշկանդել են.
- 311 Նայում են —
- 312 հտ Մոտենում են.
Ջեն նկատում.
- 318—319 Ի՛նչ.
Ո՛նց.
- 338—339 Սողում է հողը —
Թռչում եմ ինքս, կամ փախչում եմ:
- 347 Անը գրկել է.
- 349 չկա
- 353 Լուռ են:
- 361 Ես տեսել եմ...
- 372 Նա ծանոթ է:
Ինձ կպատմի՛ նա:
- 391 չկա
- Ինքն 405 [Խուրդա-մուրդա]
- Ինքն, նր 407 Ապրել ենք միասին
- 410 Հասկանո՞ւմ եք՝ նրա հետ ես խոսել եմ.
.
.
.
.
.
.
.
.
.
.
- 415 Հասկանո՞ւմ եք՝ էսֆա՛ն տալի հետո,

«Տիրապետողների ղեմփը» — Գրել է 1923 թ. ամռանը Երևանում:
Տպագրվել է ԿԱ:

Զագս — Հասկանում՝ Запись актов гражданского состоя-
ния (Փաղաքացիական կացության ակտերի գրանցում) ռուսերեն
բառակապակցությունից:

Սպիտակ տուներ — ԱՄՆ-ի վարչապետների նստատեղիին վա-
շխեգտնում:

Նյու-Յարք Սիտի — Քաղաքի ֆինանսական կենտրոնը:

Ha tel — Նշանակում է ա՛ն եք, տեսեք. ուսանրեն արտահայտություն է:

Էս պրեզիդենտն էր, որ 14 պուեկտ ներկայացրեց Վերսալում— Ակնարկում է 1913—1931 թթ. ԱՄՆ-ի վարչապետ Վուդրո Վիլսոնի (1856—1924) 14 կետից բաղկացած դեկլարացիան ուղղված ամերիկյան կոնգրեսին (1918 թ. հունվարի 18), որ համարվում է Վերսալի դաշնագրի քաղաքական նախապատրաստումը:

Պուանկարե Ռայմոն (1860—1934) — Բուրժուական գործիչ, 1913—1920 թթ. Ֆրանսիայի վարչապետ, 1922 թ. հունվարից— 1924 թ. հունիսը՝ պրեմիեր-մինիստր:

«Դե զաֆեր էտրեմե» — Երեկ պետք է լիներ «Կաֆե դե Էտրեմե». ֆրանսերեն է՝ օտարականների սրճարան:

Կմանժեֆ — Ֆրանսերեն մանժե՝ ուտել բայից. կուտեք:

Ֆիֆի — Ֆրանսերեն բառ է՝ մանկիկ, սիրունիկ, թռչնակ. գործ է ածված հասարակաց տան կին արհամարհական իմաստով:

«Լե գրան աֆերիստ» — Ֆրանսերեն արտահայտություն է, նշանակում է մեծ խաբեքա:

Վերսալ — Նախկինում ֆրանսական թագավորների նստատեղին, հետագայում մեծապես ռազմական քաղաք:

Վերսալում դուք որս չտեսնեք էլ քեպեա... — Ակնարկում է 1919 թ. հունիսի 28-ին ստորագրված Վերսալի հայտնի դաշնագիրը և դաշնագրով Ֆրանսիային տրված իրավունքները, որի հիման վրա Պուանկարեն աշխատում էր ապահովել Ֆրանսիայի գերիշխող դերը Եվրոպայում: Նմանօրինակ քայլ էր նաև գերմանական մարզերի (Ռուրի) օկուպացումը, որ ակնարկում է 2-ը հաջորդ տողերում:

Փենեւալ Դեզուտ — 1919 թ. հոկտեմբերից 1924 թ. հունվարը ֆրանսական օկուպացիոն զորքերի հրամանատար Ռեյնի մարզում (Գերմանիա), գերմանական պրոլետարիատի ելույթների ճնշողներից մեկը 1923 թ. հունվարին Ռուրում:

Գլիստ — Ռուսերեն բառ է՝ ճիճու:

Էրեւտ Ֆրիդրիխ (1871—1925) — Գերմանական աշ-սոցիալիստ-ների պարագլուխներից. 1919—1925 թթ. Գերմանիայի վարչապետ:

Դոյլշեդը — Գերմանիան է՝ գերմանացիների անվանումով:

Ֆրենլին — Գերմաներեն բառ է. աղբիկների համար պատաս-
կան դերք, պաշտոն կայարուհու, թագուհու կամ իշխանուհու շքա-
խմբում: Այստեղ՝ աղբիկ այդ շքախմբից:

Ոնց որ Ազամբ վազել է ֆրենլին եռեքց — ինքը Հիլֆեր-
դինգը — Ակնարկում է վերջինիս շահատակությունների և «կազմա-
կերպված կապիտալիզմի» տեսության քարոզի մերկությունը:

Շիրեր — Գերմաներեն բառ է՝ սպեկուլյանտ:

II Ինտերնացիոնալ — Սոցիալիստական կուսակցությունների մի-
ջազգային միավորում. հիմնադրման օրից (1889 հուլիսի 14) գաղա-
փաբանական ղեկավարել է Ֆ. Էնգելսը. Էնգելսի մահից հետո ունեցել է
սպորտունիստական ուղղություն:

Նոսկե — Ակնարկում է գերմանական աջ-սոցիալիստ, էքսերտի
կառավարության ռազմական միևիստր Գուտտադ Նոսկեի (1868—
1946) ստորագրաշունչությունը բուրժուազիայի առջև:

Շեյդման — Նկատի ունի գերմանական աջ-սոցիալիստների
պարագլուխ Ֆիլիպ Շեյդմանի (1865—1939) դավաճանական գոր-
ծունեությունը:

ՍՅՒՆՆԵՍԻ ՄԱՍԻՆ

(էջ 291)

Գրել է 1924 թ. ապրիլի կեսերին Մոսկվայում:

Նախապես տպագրվել է միայն պոեմի վերջին հատվածը (252
տողից սկսած) — St № 1, 1924 թ. մայիսին — հետևյալ ծանոթությամբ.
«Այստեղ բերվածը մի փոքրիկ հատված է նույնանուն պոեմից, որ
ամբողջովին լույս կտեսնի «Վերելքում»: Պոեմն արդեն ուղարկված
էր, երբ ձեռնարկեցինք «Ստանդարտի» հրատարակության, Զետե-
ղում ենք այստեղ որպես արտասովորություն «Վերելքից» — ցույց տալու
համար ագիտ-բանաստեղծության ինքնուրույն մի նմուշ:

Պոեմն ամբողջովին տպագրվել է ՆՖ 1925 թ. դերք V—VI. տպա-
գրվում է վերջինից:

ԳԱԹ ԶԾ պահպանվում է պոեմի մեկ ինքնագրից:

Հուզո Ստինենս — Պոեմը գրված է գերմանական այդ հայտնի
դրամատիկոս մահվան առիթով: (1924 թ. ապրիլի 10):

Գերմանիայի օծի՛ք Ստինենսի ձեռքին — 1924 թ. ապրիլի 12-ին Ստինենսի մահվան առթիվ շրջվեստիստ»-ն գրում էր. «Ստինենսին անվանում էին Գերմանիայի անթափազիթ թագավորը»:

Մյուսից—մուսո Պուանկարեն — Ակնարկում է ժամանակի ֆրանսական վարչապետ Ռալմոն Պուանկարեի նվաճողական քաղաքականությունը, գերմանական Ռուրի շրջանի ֆրանսական օկուպացումը:

Պառնեղավ է — Ակնարկում է Առաջին համաշխարհային պատերազմը, Ստինենսի ֆինանսական ուժեղացումը պատերազմի տարիներին:

Ստինենսը ուզում է ֆրանսական Լոթարինգը — Ակնարկում է Գերմանիայի նվաճողական ձգտումները Առաջին համաշխարհային պատերազմում:

Հեղափոխություն — Ակնարկում է Գերմանական բուրժուական հեղափոխությունը 1918 թ. նոյեմբերին և ապա՝ բանվոր դասակարգի ղեկավարը 1919 թ. հունվարին:

Նոսկենե՛ր — Գերմանական աջ սոցիալիստ Գուստավ Նոսկեի անունից. նկատի ունի նրա մասնակցությունը Բեռլինի բանվոր դասակարգի և նրա առաջնորդների արյունոտ դատաստանին 1919 թ. հունվարին:

Շեյդեման Ֆիլիպ — 1919 թ. փետրվար-հունիսին գլխավորել է գերմանական կառավարությունը, արյան մեջ խեղդել բանվորական շարժումները:

...Եվ ընկավ Բավարիայում Եվգենի Լեվինեն — Ակնարկում է Բավարական սովետական հանրապետության անկումը 1919 թ. մայիսին. հետադիմական ուժերի հաշվահարդարը բավարական հեղափոխության առաջնորդ Եվգենի Լեվինեի հետ (ծնվ. 1883):

Էրեւոթը նաեւց, նաեւց՝ Նոսկեն — Ակնարկում է գերմանական, ալյապիս կոչված, սոցիալ-դեմոկրատական կառավարության կազմվելը 1919 թ. փետրվարին. կառավարության մեջ վարչապետ էր ժողովրդը, ռազմական մինիստր՝ երկրորդը:

Ռալիսովս — Վերսալի դաշնագրի համաձայն 1919 թ. ստեղծված Գերմանիայի ռազմական ուժերը՝ բաղկացած հետևակից ու նավատորմից:

Ռայխստագ — 1871 թվականից գերմանական կայսրության պառլամենտը. ակնարկում է Ստիննեսի, ֆինանսատերերի վճռական դերը սոցիալ-դեմոկրատական կոշված պառլամենտում:

Լյուդենգորֆ երիս (1865—1937) — Գերմանական իմպերիալիզմի ուղղական գաղափարախոսը. Առաջին համաշխարհային պատերազմից հետո ֆաշիզմի ոգեշնչողներից մեկը: Պոեմի ստեղծման օրերը համընկնում են ռայխստագի նախընտրական օրերին Գերմանիայում. ֆաշիստական կուսակցությունից թեկնածու էր և ընտրվում է Լյուդենգորֆը:

Կոմիտեերն — Ակնարկում է Կոմունիստական կամ Ներքող ինտերնացիոնալը:

Բա Ռոզա Լյուսեմբուրգը, Լիբկեխտն Խբա՝ — Ակնարկում է գերմանական բանվորական շարժման ականավոր գործիչներ Կարլ Լիբկեխտի (ծնվ. 1871) և Լյուսեմբուրգի (ծնվ. 1871) սպանությունը 1919 թ. հունվարի 15-ին:

ՏԵՔՍՏԱՑԻՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԽՆԲՆ 141 հտ էս բոլորն հարկավա՛ր է,
263 Ստիննեսի [Բեռլին յհեսեն
Տt 310—313 շկան

Ռ Ո Ւ Բ Ա Յ Ա Թ

(էշ 205)

Գրել է 1926 թ. հոկտեմբեր-նոյեմբերին Երևանում: Առաջին անգամ տպագրվել են I, XXX, XXXIII, XLII ուրբային՝ Մակշ, 1927 թ., № 62: Բացառությամբ՝ XXXIV, XXXV, XXXVI, XXXVII և XLIV ուրբային, տպագրվել է առանձին գրքուկով՝ Ռուբայաթ, 1927 թ., Թիֆլիս: XLIV ուրբային թվագրված՝ 1926. XI. Երևան, առաջին անգամ տպագրվել է ԳԴ 1928 թ. № 2-ում, հետևյալ ծանոթությամբ. «1927 թ. Թիֆլիսում հրատարակված «Ռուբայաթ» գրքուկից տեխնիկական պատճառներով՝ դուրս են մնացել մի շարք բառյակներ, որոնցից մեկն է այս քառյակը: Ե. Զ. »:

Ամբողջությամբ, ներառյալ առաջին անգամ տպագրվող XXXIV, XXXIII Մակշ 2 երկնային ձևով մի տրված — անխախտ են է վերջինից:

Իսթյանդար — Այդպես է անվանվել Ալեքսանդր Մակեդոնացին
(մ. թ. ա. 356—323) նախապես արարերենով և ապա մուսուլմանա-
փան աշխարհում:

ՏԵՔՍՏԱՅԻՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

XXX մտկչ 3 Դու գիտե՛ս շարժումն ու ընթացքը գիտես՝
չլիներ թե ընթացքը —
XXXIII Մտկչ 2 Երկնային ձեռքով մի տրված — անխա՛խտ են
կարծել այս տունը.
3—4 Ետևի դռներից մենք մտանք ըստդեղով ճիմերն
ու սյունները.
Նվ գիտենք, որ ձեռքով ձեր շինած մի զնդա՛ն է
անձև այս տունը:
XLII Մտկչ 1—2 Նա կուգեր գտնել մի կշիռ—ու չափել
նրանով ամբողջը.
Անփափախ, անխախտ մի հաշիվ—ու չափել
նրանով ամբողջը.
4 Բայց ...գտնում է մի գինու շիշ—ու չափում
նրանով ամբողջը:

ԽԱՌՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թ Ա Ք Ո Ի

(էջ 221)

Գրել է 1922 թ. մայիսի 18-ին Բաքվում: Տպագրվել է նույն թվին
ԿԱՍՏ Ձ 116. տպագրվում է նույնից:

ԸՆԿԵՐ ԳՅՈՒՂԱՑԻ

(էջ 225)

Գրել է 1922 թ. օգոստոսի 7-ին Երևանում. տպագրվել է հաջորդ
օրը՝ ԽՀ Ձ 178. ԽՀ-ի այդ համարը նվիրված էր պարենատուրքի շա-
բաթին Երևանում և զավառում: Տպագրվում է նույնից:

Արլիզաց — Ժարգոն է՝ փոխառություն տոմս:

ՀՐԱԺԵՇՅԻ ՊՈՅՁ

(էջ 227)

Գրել է 1922 թ. օգոստոսի, հավանաբար 10-ին, Երևանում, Տպագրվել է նույն թվին ԽՂ Պ 181, տրտեղ սխալմամբ բանաստեղծությունը թվագրված է 18 օգոստոսի <1> 922, Երևան, Տպագրվում է նույնից:

Բանաստեղծությունը երկու մասից է. երկրորդ մասը պատկանում է Գ. Աբովի գրչին:

Ծ Ո Վ Ա Փ Ի Ն

(էջ 230)

Գրել է 1924 թ. նոյեմբերի 20-ին Բաթումում, արտասահմանյան ճանապարհորդության ժեկնելու նախօրյակին: Տպագրվել է նույն թվին ԽՂ Պ 273. տպագրվում է նույնից:

Արմեյցիե — Բանակայի՜ն՝ ուսերենով:

Յուրել — Իշխան ձուկն է՝ ուսերենով:

ԴԵՊԻ ՍՏԱՄԲՈՒ

(էջ 235)

Գրել է 1924 թ. նոյեմբերի 21—22-ին Բաթումից—Կոստանդնուպոլիս ճանապարհին, Տպագրվել է ՆԲ 1926 թ. գիրք II. տպագրվում է նույնից:

Սինյոր — Պարոնն է՝ իտալերենով:

Մուսյա — Պարոնն է՝ ֆրանսերենով:

Արխագաշ Սուրխու ճանապարհով — Խոսքը վերաբերում է Թուրքիայի բանվորական շարժման, ականավոր գործիչ Մուստաֆա Սուրխիին (1883—1921):

ԲԵԼԳԻԱ—ԼԻԵՍ

(էջ 241)

Գրել է 1925 թ., հավանաբար, մարտի վերջին Փարիզից—Բեռլին ճանապարհին: Տպագրվել է ԽՂ-ի երկշաբաթյա հավելվածում՝ 1926 թ. Պ 1. տպագրվում է նույնից:

Լիեժը — Փաղաք ու ամրոց է Բելգիայում:

ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(էջ 243)

«Հեֆթաբ կամփաեբնի մաթեն» — Սովետական բանաստեղծ Նիկոլայ Ազնիվսկի (1888—1938) մանկական այս պոեմը Զ-ը թարգմանել է 1929 թ. հրատարակվել է նույն թվականին առանձին գրքով (Հայպետհրատ, Երևան), Տպագրվում է նույնից:

«Լենա» — Սովետական բանաստեղծ Դեմյան Բեդնու (1883—1945) բանաստեղծությունը Զ-ի թարգմանությամբ Տպագրվել է 1929 թ. ՆՌԳ պրակ Գ: Զետեղվել է Երկերում, որտեղ թվագրված է 1925. տպագրվում է վերջինից:

«Անտառը կտրում են» — Ռուս գրող Գլաֆիրա Ադոլֆովնա Գալի-նայի (1873—1930) բանաստեղծությունը Զ-ի թարգմանությամբ տպագրվել է 1929 թ. ՆՌԳ պրակ Գ: Զետեղվել է Երկերում՝ թվագրված 1925. տպագրվում է վերջինից:

«Շնկերները» — Սովետական բանաստեղծ Սերգեյ Շանինի (1895—1925) «Շնկերը» Զ-ը փոխադրել է 1923 թ., տպագրվել է նույն թվին՝ Պկ № 1. զետեղվել է Երկերում. տպագրվում է վերջինից:

«Փառասունեք» — Թարգմանությունը X. X. ստորագրությամբ տպագրվել է ՆՖ 1926 թ. գիրք I. Զ-ի գրական և անձնական բարեկամ Մկրտիչ Արմենի (ծնվ. 1906) վկայությամբ թարգմանությունը կատարել են Զ-ը և ինքը Շանինի ինքնասպանությունից (1925 զեկտ. 26) անմիջապես հետո: Տպագրվում է ՆՖ-ից:

«Մեռնող գլադիատորը» — Ռուս բանաստեղծ Միխայիլ Լեոմոնտովի (1814—1841) բանաստեղծությունը Զ-ը թարգմանել է 1923 թ., տպագրվել է նույն թվին ԿԱՐ (6-րդ տարի). տպագրվում է նույնից:

«Փոքորի՛կ, իմ ընկե՛ր» — Գերմանական բանվորական շարժման ակաեմիոր գործիչ Կարլ Լիբկինխաուսի (1871—1919) բանաստեղծությունը Զ-ը թարգմանել է 1929 թ.. տպագրվել է նույն թվին Ուլ № 12, Տպագրվում է նույնից:

«Երգ» — Ռուս բանաստեղծ Նիկոլայ Կլյունի (1887—1937) բանաստեղծությունը Զ-ի թարգմանությամբ տպագրվել է 1929 թ. ՆՌԳ պրակ Գ: Զետեղվել է Երկերում՝ թվագրված 1925. տպագրվում է վերջինից:

«Զուլակներ» — Գերմանական բանաստեղծ Հայնրիխ Հայնեի (1797—1856) բանաստեղծությունը 2-ր թարգմանել է 1923 թ. տպագրվել է նույն թվին՝ ԿԱԵ (5-րդ տարի)։ Տպագրվում է նույնից։

«Արեւիկե և արեւմուտ» — Թուրք բանաստեղծ Նազիմ Հիքմեթի (1902—1963) բանաստեղծությունը թարգմանել է 1927 թ. տպագրվել է նույն թվին՝ ԿԱԵ № 274—Հետեւյալ ծանոթությամբ. «Նազիմ Հիքմեթը երիտասարդ թուրք կոմունիստ պոետ է, թուրքական հեղափոխական պոեզիայի առաջնակարգ դեմքերից մեկը։ Նա առաջինն է, որ թուրքական բանաստեղծության մեջ մտցրեց ազատ տալաչափություն»։ Տպագրվում է նույնից։

«Անատոլիայի ռոմանտիկան» — Թարգմանել է 1928 թ., տպագրվել է նույն թվին ԳԴ № 7—8։ Տպագրվում է նույնից։

«Խավարում» — Ֆրանսիական բանաստեղծ և վիպասան Վիկտոր Հյուգոյի (1802—1885) բանաստեղծությունը 2-ր թարգմանել է 1923 թ., տպագրվել է նույն թվին ԿԱԵ (6-րդ տարի)։ տպագրվում է նույնից։

«Մի ֆանի խոսք իմ կնոջ մասին», «Վաղիմիր Մայակովսկի» Տրեգեդիայի աղբյուրը», «Լավ վերաբերմունք դեպի ձիերը» «Այնեզ», «Պատերազմ և խաղաղություն» (Պրոլոգ), «Մայրիկը և գերմանացիները կողմից սպանված երեկոն», «Ռուսաստանին», «Անտի-նեպ արկած, որ տեղի է ունեցել Վաղիմիր Մայակովսկու հետ ամառը դաշայում» — 2-ր թարգմանել է Վ. Մայակովսկու ինքնասպանությունից (14 ապրիլի 1930 թ.) անմիջապես հետո։ Տպագրվել է նույն թվին ՆՈՒ № 4—5, Զետեղվել է Երկերում. տպագրվում է վերջինիս 2-ի սեփական օրնակից։

Վ. Մայակովսկու «Երկերի լիակատար ժողովածու» (13 հատորով) I հատորի ծանոթագրություններում «Война и мир» պոեմի վերաբերյալ կարդում ենք. «В заглавии поэмы слово «мир» писалось через «і», т. е. «вселенная» (տե՛ս էջ 444)։ այսինքն պոեմի վերնագիրն է «Պատերազմ և տիեզերք»։

ՏԵՔՍՏՍԻՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Պատերազմ և խաղաղություն»

Երկ 80 է՝ 8 պիեթի արդյոք վառանմ։

64 Որ լավ տեսնեմ նշանը...

«Անօրինակ արկած...»

ՆՈՒ 84 Սամովարը ցույց տալով,

151 Շողալ բնդմի՛շտ,

154 Շողալ —

«Երկարուղին» — Ռուս բանաստեղծ Նիկոլայ Նեկրասովի (1821—1877) «Երկաթուղին» պոեմի II գրուված 2-ի թարգմանությունը տպագրվել է 1929 թ. ՆՈՒ պրակ Գ: Զետեղվել է Երկերում՝ թվագրված 1925. տպագրվում է վերջինից:

«Երեխաների լացը» — Թարգմանել է 1929 թ., տպագրվել է նույն թվին ՆՈՒ պրակ Գ: Տպագրվում է նույնից:

«Բանկիր»—Բելգիական բանաստեղծ էմիլ Վերհարնի (1855—1916) բանաստեղծությունը («Ապստամբ ուժեր» շարքից) 2-ը թարգմանել է 1923 թ. հունիսին. տպագրվել է նույն թվին ՆԲ գիրք III: Զետեղվել է ՆԵՎ պրակ Դ և ապա Երկերում: Տպագրվում է վերջինից:

ՏԵՔՍՏՍՈՒՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՆԲ 27 Իր քաղաքին հագումն կապում է կյանքը ողջ,

31 Այնտեղ—խրճիթներում ու խաղերում տխուր.

39 Թշվառություն իր բյուր շրթունքներով:

Նեգ, Երկ 61 Կարողություն, հասույթ, տնտեսություն ու կյանք

«Կիներ ճամփամբին» — («Սև ջահեր» գրքից). թարգմանել է 1923 թ. հունիսին կամ հուլիսին. տպագրվել է նույն թվին Մտկ: Ձ 130 — «Իտխազությունն Ե. Չարենցի» ստորագրությամբ: Զետեղվել է Երկերում. տպագրվում է վերջինիս 2-ի սեփական օրինակից:

ՏԵՔՍՏՍՈՒՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Երկ 169 Ում ես ուզում դու աճում

«Անգլոն»—(«Երեկոներ» գրքից). թարգմանել է 1923 թ. հունիսին կամ հուլիսին. տպագրվել է նույն թվին Մտկ: Ձ 133—«Վոխադրեց Ե. Չարենց» ստորագրությամբ: Զետեղվել է ՆԵՎ պրակ Դ, ապա Երկերում: Թվագրված 1925. տպագրվում է վերջինից:

ՏԵՔՍՍՏՑԻՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մտկշ 6 Փողփողում են գազի լապտերները կորզիծ,
Մտկշ, ՆեՊ 9 Ու ֆանառներ, Թայմզի երկայնքն ի վար շարած,
Մտկշ 10 Որ անձրևի կազմած լճակներում տեղի

«Դեկտեմբեր» — («Օրացույց» գրքից). թարգմանել է 1923 թ.
Հունիսին կամ հուլիսին. տպագրվել է նույն թվին Մտկշ № 133 —
«Փոխադրեց Ե. Զարենց» ստորագրությամբ, Տպագրվում է նույն
եկից:

«Մոնչա Զինատան» — Ռուս գրող Սերգեյ Տրետյակովի (1892 —
1933) պոեմի վերջաբանը Զ-ը ճարտարապետ Մ. Մազմանյանի վկա-
յությամբ թարգմանել է 1924 թ. մայիսին Մոսկվայում: Տպագրվել
է նույն թվին Տt № 1, հետևյալ ծանոթությամբ.

«Լեֆ»-ի այս տարվա № 1 (5) — ում տպված է Ս. Տրետյակովի
«Рыцарь Кутаис» պոեմը, որից թարգմանաբար տալիս ենք մի հատ-
ված: Այդ պոեմը, ոչ այլ ինչ է, եթե ոչ շինական աշխատավոր մաս-
սաների էլեկտրականացած բողոքը եվրոպացի բռնակաճնրի դեմ,
շինական աշխատավոր մասսաների ատելության ու դիմադրության
Պոեմի վերջաբանում հեղինակն ասում է՝. այնուհետև տպագրված է
«Գիտեմ» վերջաբանը:

«Մեր օրերը» — Ամերիկյան բանաստեղծ Ուիտ Ուիտմենի (1819 —
1892) այս բանաստեղծությունը Զ-ը թարգմանել է 1923 թ. հունի-
սին. տպագրվել է նույն թվին Մտկշ № 102, Տպագրվում է նույնից:

«Նվրոպա» — Թարգմանել է 1923 թ. հունիսին, տպագրվել է
նույն թվին Նվ գիրք III — էմ. Վերհարնի «Բանկիրի» թարգմանու-
թյան հետ միասին, հետևյալ ծանոթությամբ. «Մույն թարգմանու-
թյուններն արված են բնագրից կատարված բառացի թարգմանու-
թյուններից, աչքի առաջ տենենալով ոչ միայն բնագրի տաղաչափու-
թյունը, պատկերները, նախադասությանց ստուգաբանական կազմու-
թյունը — այլև ուրիշ, հանգրի հաջորդականությունը և այլն: Այ-
նուամենայնիվ չեմ կարծում, որ նմանությունը բնագրիին տառացի
լինի, մանավանդ իսկականի հետ համեմատելուց հետո վալերի
Իրյուսովի և Շենդելի բուսերեն թարգմանությունները, որոնց մեջ
անգամ կան շատ և շատ շեղումներ: Գեղարվեստական երկի նույնար-
մեք թարգմանությունը, մեր կարծիքով, հավասար է ինքնուրույն
ստեղծագործության, իսկ եթե թարգմանությունն արվում է մի ավել-

վի զարգացած լեզվից — ավելի քան զժվար է, եթե ոչ անհնարին։
Ուստի և թող հասկանալի լինեն վերեւ բերված թարգմանությանց
աննշան շեղումները բնագրից, եթե այդպիսիները կան։ Ը. Ճ.

Ձեռնգրվել է ՆԵՊ պրակ Դ և ապա Երկեւում. տպագրվում է վեր-
ջինիս 9-ի սեփական (գստեր մոտ պահպանվող) օրինակից։

ՏԵՔՍՏԱՅԻՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ձեզ, Երկ 3 0, հույս է սպասում,

ՆՖ 14 Այս ամենի համար ներումով կպատժեն ձեզ ժողո-
վուրդը.

17 Անցնում են հպարտ ու հանդիսավոր, և ամեն մեկին
չըջապատում է իւր շքախումբը.—

22 Ահա վասի՛կ մի մատ, որ ցույց է տալիս երկինքը—

Ժրկ 23 Երեւում է, ինչպես օձի գլուխ։

ՆՖ 25 Եվ սեղմ են պարանները կախաղանների, և շաշում են
տերերի գնդակները,

41 Պատրաստվեցե՛ք դիմավորելու նրան.— արգեն երեւում
են նրա համբավաբերները։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՊՈՆՁՈՁՈՒԹՅԱՆ	6
ՅԲԲ դուր արնոտած	7
Տեսե՛լ եք դուք երբեք	9
Հ. Ս. Խ. Հ.	11
Արևի նարեջե ֆոնին	11
Աղջիկը	15
Փեղ	17
Գյումրի	19
Սրինգը	21
Օրերի շեկ վերադարձ	23
Ընկեր	24
Երևան	26
Շոգեզալուստ	30
Իմ մե՛ջ է ձեր իշխանը	35
Հասկանո՞ւմ եք՝ եկա՞մ հզոր	36
Ջանգուն ու Արաթսը սեզ	37
ԱՍՊԵՏԱԿԱՆ	39
ԿԱՊԿԱԶ	59
ԽՆՈՌԻԿԵՆ ԱՄՈՒՍԻՆՆԵՐ ԿԱՄ ԻՆՔԵՐԵՆ ԿՈՄՈՒՆԻՉՄ	107
ԿՈՄԱՆԴԱՆԱՆ	135
Ք Բուրդ պոետներին	137
✓ ՃԼ Խնտերնացիոնալ P. K. Ո.	141
✓ Անտանտին—մենք	145
✓ Զենին	148
✓ Մարշ աշխարհա	152
Փո և Իլիլը	154
Տիրապետողների դեմքը	169
ՅՏԻՆՆԵՍԻ ՄԱՍԻՆ	191

Ապրում ես, շնչում ես, դու գեռ կաս—բայց ամեն վայրկյան	
դու ա՛յլ ես	207
Քո ամեն ակնթարթը մի սերմ է	207
Նա թե՛ կյանք է, թե՛ մահ.—ակնթարթը	207
Նա հոսում է, ալիք առ ալիք	207
Ծա քեզ ո՛նց, քեզ ո՛նց հասկանամ	208
Անցնում է, հոսում է, վարար է	208
Օ, խմի՛ր, խմի՛ր դու ազա՛հ	208
Այս գետը,— նայի՛ր.— նա հոսում է	208
էյ, դո՛ւ, իմաստո՛ւն վարպետ	208
Նա կրկին սառում է.— զարուհ	209
Վերցնում ես քարը — մտածում ես	209
Մի անցորդ անցավ քաղաքից այս	209
Դու ամեն վայրկյան քեզ ժխտում ես	209
Անտառը թափում է իր սաղարթը	209
Դու ոսկի գրիչ ունես, դու այնպես իմաստո՛ւն ես	210
Թե կտոր տեսնես մի ամպի—ասա՛՛ սա ուրի՛շ է արդեն	210
Նա կտայց ու կրկին եկավ — երեկվա իմ սիրած սերնկանը	210
Ծրկնքից թռչում է մի թռչուն.— քո ներկա՛ն է այն,	
բարեկա՛մս	210
Դու մի օր աչքերդ կփակես, որ ուրիշը քո տեղ գոյանա	211
Ինչ թո՛ւնդ է քո գրնին, իմաստո՛ւն. նրանից իմ հոգին	
հարբում է	211
Դու քսում ես հոնքերիդ սուրմա—դու անհո՛գ ես	211
Դու ինքդ քո մեջ միասիրտ.— ինչ որ կաս՝ նա կա ու	
այգպե՛ս է	212
Ախ, նայե՛ք, այդ մարդը, այդ հիմարը.—նա տեսնում է	
լուկ այն, ինչ տեսնում է	212
Այդ կապիկը՝ ձեռքին հայելի—նա կարծում է՝ արդեն	
իմաստուն է	212
Այդ գերվիշը—տեսե՛ք՝ նա նստած ուզում է ըմբռնի ու հասնի	213
Դու ասի՛ր՝ նայել, հասկանալ, ու սուզվիլ, ու դառնալ անէ	213
Դու ասի՛ր՝ անէ՛ է ամբողջը, աչքերիդ իշած մի շղա՛բշ է	213
Նա կուգի, որ լինի ամէ	213
Թե արևը այրում ու կրկում է—նա ասում է՝ ո՛ւր է իմ կամքը	214
Ասում են՝ վիթխարի հերոս, հանճարեղ է եղել Իսքյանդարը	214

Հետեա՛նք ես դու, իմաստո՛ւն,— այս մեկը դու լա՛վ իմացիր	214
Մի հարուստ է անցնում փողոցով,— ախ նայե՛ք՝ նա ինչքա՛ն	215
Ինքնագո՛հ է	215
Մտե՛լ են տոնական գոներից— և գրախոս են կարծել այս տունը	215
Մի հարուստ գերվիշ էր եկել. նա ասում էր, թե ցնո՛րք է	215
կյանքը	215
Դու հարուստ չի՛ս եղել երբեք,— դու կյանքում միայն	216
աշխատել ես	216
Ապրեցիր դու բմբուս մի դարում— և ոչինչ քեզ հար չթվաց	216
Դեռ երեկ քո միտքը խավար էր,— իմաստուն ես արդեն	216
հիմա դու	216
Քեզ տրված է կյանքը, տր լինես— ու ոչինչ երազ չթվա	217
Աշխատի՛ր, տոկա՛ անդադար, ստեղծի՛ր անդու՛—	217
դա կամուրջ է	217
Ընթացի՛ր դու, մա՛րդ, անդադար, որ ոչինչ քեզ երազ չթվա	217
Մովափին նստած է մի մարդ.— այդ դո՛ւ ես գուցե,	217
իմաստո՛ւն	217
Նա ուզում է գտնել մի կշիռ— ու չափել նրանով ամբողջը	218
Նա կուգեր, որ ողջը նրան միանգամ ընդմիշտ տրվի	218
Սնվում է, աճում է մի բան յուրաքանչյուր վայրկյան	218
կյանքում	218
 ԽԱՌՆ ԲԱՆԱՍՏԵՂՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ	 219
Բաքու	221
Ընկեր գյուղացի	225
Հբաժնուի պոեզ	227
Մովափին	230
Դեպի Ստամբուլ	235
Բեկդա— Լիեժ	241
 ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ	 243
Եղնիվյե Ն.— Հեքիաթ Կոմիտեերնի մասին	245
Բեգնի Դ.— Ելենա	256
Գալինա Գ.— Անտառը կտրում են	257
Նսնին Ս.— Ընկերները	258
Քառասունք	261

Քերմոնեստով Մ.—Մենոնդ գլագիատորը	265
Հիբկենեստ Կ.—Փոթորի՛կ, իմ ընկե՛ր	267
Կլուե Ն.—Երգ	268
Հայեն Հ.—Ջուլհակները	269
Հիբմեթ Ն.—Արեելք և արեմուտք	271
Անատոլիայի ումանտիկան	275
Հյուզո Վ.—Խավարում	280
Մայակովսկի Վ.—Մի քանի խոսք իմ կնոջ մասին	282
• «Վլադիմիր Մայակովսկի» տրագեդիայի պրոլոգը	284
Հավ վերաբերմունք դեպի ձիերը	287
Ա՛յ քեզ	290
• Պատերազմ և խաղաղություն	291
• Մայրիկը և գերմանացիների կողմից ապանված երեկոն	294
• Ռուսաստանին	296
Անօրինակ արկած, որ տեղի է ունեցել Վլադիմիր Մայակովսկու հետ ամառը դաշայում	299
Նեկրասով Ն.—Երկաթուղին	304
Երեսանների լացը	308
Վերհարն էմ.—Բանկիր	310
Կիւր ճամփամիջին	313
Լոնդոն	318
Դեկտեմբերը	319
Տրետյակով Ս.—Մռնչա Չինաստան	321
Ուիտմեն Ուոտ—Մեր օրերը	323
Եվրոպա	325

ԵՂԻՇԵ ՁԱՐԵՆՑ
ЕГНШЕ ЧАРЕНЦ
ԵՐԿԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ
Քառոր III

Տպագրվում է Հայկական ՍՍՌ
ԳԱ գրականության ինստիտուտի
գիտական խորհրդի հանձնառությանը

Հրատ. խմբագիր Ա. Ա. ՀՈՎԱԿԻՍՅԱՆ
Նկարչական ձևավորումը Լ. Ա. ՍԱԴՈՑԱՆԻ
Ցեխ. խմբագիր Հ. Լ. ԳՈՐՈՑԱՆ
Յրբագրիչ Ա. Գ. ԱՎԱԳՅԱՆ

Գառվեր 25 է., Հրատ. № 2395, ԽՀԽ 900, տպաքանակ 11000

Հանձնված է տրամադրության 12/V 1964 թ., ստորագրված է
տպագրության 15/XII 1964 թ., տպագր. 23.5 մամուլ + 4 ներդիր;
Հրատ. 12,7 մամուլ, թուղթ 84×108¹/₃₂,
Գինը 1 և. 26 Կ.

Հայկական ՍՍՌ ԳԱ Հրատարակչության տպարան, Երևան,
Բաքիկամության 24,

ՈՒՂՂՈՒՄ

**Յ62 էջի ներքևից երկրորդ տողը կարդալ՝ XXXV, XXXVI, XXXVII հու-
թային, ղետեղվել է Յրկերում. տպագրվում**

